

ISSN 1829-0531

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

---

---

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
№ 2 (32)**

**ԵՐԵՎԱՆ - 2016**

---

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
АРМЕНОБЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ  
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ 286.210.04777

*Խմբագրական խորհուրդ՝*

**Ռ. Կ. Միրզախանյան (նախագահ),**

Մ. Գ. Գիլավյան (**գլխավոր խմբագիր**),

Կ. Ա. Ավագյան, Ա. Ա. Ավագյան, Ս. Գ. Դանիելյան,

Ա. Գ. Դոլուխանյան, Լ. Կ. Եզեկյան, Ա. Կ. Եղիազարյան,

Լ. Մ. Խաչատրյան, Հ. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան,

Լ. Շ. Հովհաննիսյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,

Ա. Սեֆերձյան (Բեյրութ), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), Ս. Ադամյան (Ֆրանսիա)

Ա. Հ. Հարությունյան (**պատասխանատու քարտուղար**)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն վերադարձվում:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

«Հայագիտական հանդես» ամսագիրն ընդգրկված է թեկնածուական և դոկտորականատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ԲՈՀ-ի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում (12.05.06թ. 133-01):

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-26)

Էլեկտրոնային փոստ՝ [philology@armspu.am](mailto:philology@armspu.am)

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ  
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
ՀՏԴ 811.19

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** տարբերակ, բառական, քերականական, քանական, նախադրություն, գերադաս բաղադրիչ, անվանողական կառուցատիպ, հաղորդակցական կառուցատիպ:

**Ключевые слова и выражения:** вариант, словесный, грамматический, квантитативный, предлог, доминирующий компонент, номинативный тип, коммуникативный тип.

**Key words and phrases:** variant, wordy, grammar, quantitative, preposition, dominating, component, nominative type, communicative type.

Պատկերավոր կայուն կապակցությունները (ՊԿԿ) լեզաոճական որոշակի արտահայտություններ են և, որպես պատրաստի վերարտադրելի կառույցներ, լեզվի դարձվածային ֆոնդի մեջ զգալի կշիռ ունեն: ՊԿԿ-ների հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որը, իբրև փոխաբերության մի տեսակ, արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ առարկաների և նրանց հատուկ ընդհանուր հատկանիշի հարաբերության միջոցով: Մասնագիտական գրականության մեջ այս կարգի կապակցությունները կոչվում են նաև համեմատություն դարձվածային միավորներ կամ համեմատություն-դարձվածային արտահայտություններ<sup>1</sup>:

ՊԿԿ-ները գործառական լայն հնարավորություններ են դրսևորում մեր լեզվի բոլոր շրջաններում. գրաբարում հանդես են գալիս ինչպես Աստվածաշունչ մատյանում, դասական և հետդասական հայերենի գրաբարվեզու մատյաններում: միջին հայերենի գրական հուշարձաններում, արդի գրական հայերենում՝ բնութագրվելով ոճական որոշակի դերով:

<sup>1</sup> Հմմտ. Խ.Բաղդիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջք 126-127, 140, 260-263: **А. Г. Назарян**, Фразеология современного французского языка, М., 1987, էջք 111-125, 194-199: Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., 1990, էջ 50-51:

Այդօրինակ կապակցությունները միջին հայերենում բնութագրվում են յուրահատուկ իմաստներով, որոշակի տարբերակներով ու կառուցատիպերով, որոնք ընդհանրություն ունենալով հայերենի տարբեր շրջանների համանման կառույցների հետ, միաժամանակ բնութագրվում են որոշակի տարբերակիչ գծերով: Այդ կառույցների բաղադրիչները միջին հայերենում միավորվում են հետևյալ նախադրություններով՝ զերդ // զերթ, զանչ, զէտ // զէդ, զինչ, իբրև // իբր, չափ, ի չափ, որպէս, պէս, քան, նման, քանց և այլն:

Ընդ որում, այդ նախադրությունները կապակցում են ինչպես անվանողական, այնպես էլ հաղորդակցական ՊԿԿ-ներ: Հմմտ.

**ա) անվանողական ՊԿԿ-ներ.**

*մաքուր որպէս հայելի, խաղաղ իբրև գորախտ, կեղծաւոր զանչ  
զատտանայ, քաղցր // անուշ զերդ զշաքար, անյաջող զերդ զգերի, պայծառ  
քան զքաֆուր վարդ և այլն:*

**բ) Հաղորդակցական ՊԿԿ-ներ.**

*շողշողել(իմ) որպէս զլոյս, ճեմել(իմ) որպէս իշխան, նստել(իմ) որպէս  
արքայ, գունատվել զէտ զգաֆրան, երևալ զինչ զհրեշտակ, զերդ կուպր եռալ  
և այլն:*

Այս կարգի բաժանումով միաժամանակ կարելի է բնութագրել ՊԿԿ-ների կառուցատիպերը:

Միջին հայերենի ՊԿԿ-ները կարելի է ենթարկել նաև կառուցվածքային քննության: Ըստ այդմ, ի հայտ են գալիս նախադրությամբ ու որևէ հոլովով ձևավորված միագագաթ կառույցներ (զինչ առիւծ, զերթ գագան), ինչպես նաև նախադրությամբ կառույցով և ածական կամ բայ գերադաս բաղադրիչով ձևավորված (եկգագաթ) ստորադասական կապակցություններ (սեաւ իբրև զհնդիկ, զինչ մում հալել (իմ)): Նրանցում տարբերակվում են ինչպես չձավալված, այնպես էլ ձավալումով միավորներ:

ՊԿԿ-ները բնութագրվում են նաև բառին ու բառակապակցությանը հատուկ քերականական հատկանիշներով, ուստի կարելի է խոսել ինչպես նրանց բառիմաստային հատկանիշների և ձևաբանական արժեքների, այնպես էլ տարբերակների ու կառուցատիպերի մասին:

Ընդհանրապես տարբերակայնությունը լեզվի զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է: Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, «պատմականորեն տարբերակայնությունը, զուգաձևությունը առաջանում են որպես լեզվական հեղաշրջման հետևանք,

որպես լեզվի մյուս գոյաձևերի ազդեցության արդյունք, որպես ներլեզվային երևույթների բազմաբնույթ փոխհարաբերությունների հետևանք»<sup>2</sup>:

Միջին հայերենում ևս, ինչպես գրաբարում, ՊԿԿ-ների տարբերակները կարելի է ներկայացնել բառային, քերականական և քանակական ենթախմբերով, ինչպիսի բաժանումով հանդիպում են գրաբարում:

### **I. Բառային տարբերակներ**

Բառային (հոմանշային) տարբերակները ձևավորվում են բաղադրիչների հոմանշային միավորների փոփոխություններով:

Դրանք կարող են ի հայտ գալ համեմատության իմաստի նախադրությունների և համեմատելի հատկանիշի բաղադրիչների տարբերակներով:

*ա) Բառային տարբերակներ հոմանիշ նախադրություններով.*

**քան** կաթն սպիտակ // **զինչ** կաթն սպիտակ (շատ սպիտակ)

**քան** զնուռն // **զինչ** զնուռն (շատ կարմիր)

**քան** զգայլոյ // **զերդ** զգայլոյ (ագահաբար)

**քան** զառիւծոյ // **զերդ** զառիւծոյ (խիզախաբար)

**քան** զձիոյ // **զինչ** զձիոյ (ծանր աշխատանք կատարելով)

**քան** // **քանց** զլատիֆոյ աղվոր (շատ զեղեցիկ)

**քան** զմում հալել(իմ) // **զինչ** զմում հալել(իմ) (1. մեկի նկատմամբ նվիրվածություն ցուցաբերել, 2. նիհարել, հյուժվել) և այլն:

Հանդիպում են միաժամանակ նախադրությամբ և հետադրությամբ կազմված ՊԿԿ-ներ, որոնք միայն հետադրություններով կազմված միավորների նկատմամբ հանդես են գալիս որպես փոփոխակներ: Հմմտ.

**խելի պէս** // **զէտ խելի պէս** (հիմարաբար)

**ոչխարի պէս** // **զէտ ոչխարի պէս** (անօգնական կերպով)

**գարնան նման** // **զինչ գարնան նման** (1. խիստ պայծառ, 2. պայծառորեն):

*բ) Բառային տարբերակներ գերադաս անդամների փոփոխություններով.*

**պարզ** որպէս հայելի // **մաքուր** որպէս հայելի (շատ մաքուր՝ պարզ)

**քաղցր** զերդ զշաքար // **անուշ** զերդ զշաքար (շատ քաղցր՝ հաճելի):

Կան ՊԿԿ-ների հոմանշային տարբերակներ, որոնց կախյալ անդամի դերում հանդես են գալիս բառային այնպիսի միավորներ, որոնք իրենց բառարանային նշանակությամբ հոմանիշներ չեն, սակայն միննույն հատկության՝ որակի կրողներն են, հմմտ.

զերթ կարկուտ **պաղ** // զերթ կարկուտ **սպիտակ**:

---

<sup>2</sup> Տե՛ս Չ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 114, 116

Տվյալ դերքում **պաղ** և **սպիտակ** բառերը կապակցությունների շրջանակներում դիտվում են բնագրային հոմանիշներ:

գ) *Բառային տարբերակներ բառային-բառակազմական զուգահեռներով.*  
արև նման **շողշողել(իս)** // **շողշող տալ** (խիստ պայծառանալ՝ գեղեցկանալ):

Հմմտ. բառային տարբերակների կիրառությունը խոսքային միջավայրում.

**Արեգական նման պայծառ** Երեսդ լոյս էր կամար (ՀԹ, 161): **Նման արեգական է գեղեցիկ** որ լոյս կու տայ (ԿԵ, 234): Ո՞ւր էիր, ուսկի՞՞ եկար, **Քան զամեն ծաղիկ** դու **պայծառ** (ՆԲ, 22): **Պայծառ** ես **քան ըզբաֆուր վարդ**, որ հոտով զաշխարհս է լըցեր (ն. տ., 162):

դ) *Բառային տարբերակներ նախադրությունների խնդիրների փոփոխություններով.*

**քան զձիոյ // քան զջորոյ** (ծանր աշխատանք կատարելով) և այլն:

## **2. Քերականական տարբերակներ**

Այդօրինակ տարբերակներ ստեղծում են ՊԿԿ-ների բաղադրիչները, երբ հանդես են գալիս տարբեր բառաձևերով կամ ունենում են շարադասական փոփոխություններ:

Քերականական տարբերակները լինում են ձևաբանական և շարահյուսական:

**Ա. Ձևաբանական տարբերակներ:** Այդ կարգի տարբերակներ ստեղծում են ՊԿԿ-ների բաղադրիչները, որոնք հանդես են բերում հոլովական, թվակազմական և առման զուգաձևություններ: Դրանք արտահայտվում են՝

**ա)** Հոլովների (ինչպես նաև հոլովիչների) փոփոխություններով, հմմտ. հայցական/սեռական հոլովներով ձևավորված քան **զգայլ // զգայլոյ** (ագահաբար), գերդ **զառիւծ // զառեւծոյ** (քաջաբար), խելքդ պակաս քան **զերելխայ // զերելխոյ** (հիմար, անմիտ, պարզամիտ) տարբերակային ՊԿԿ-ներ:

ՊԿԿ-ների ձևաբանական տարբերակներում հայցական հոլովը կարող է հանդես գալ **ի** նախդրով և առանց դրա. **ի ծով // ծով նման** (շատ-շատ), **ի լիմոնն // լիմոնն նման** (վառ դեղին), **յարև // արև նման** (1. շատ պայծառ, 2. պայծառ կերպով):

Երբեմն ՊԿԿ-ների ձևաբանական տարբերակներ են ձևավորվում հոլովիչների փոփոխությամբ. **ամպոյ // ամպի նման** (1. մթնած, 2. մթնելով):

**բ)** Թ՛վի փոփոխությամբ.

**ի յալի** (ի + հայցական հոլով) // **յալեաց** (ի + տրական հոլով) **նման** (դեստուդեն զարնվելով, ալեկոծվելով):

**գ)** Որոշյալ // անորոշ առումներով.

ձեմել(իս) որպես **զիշխան // իշխան** (մեծամտորեն՝ տիրաբար քայլել)

նստել (իմ) որպես **գարքայ // արքայ** (վեհորեն՝ տիրաբար նստել՝ բազմել)  
շողշողել(իմ) որպես **զլոյս // լոյս** (պայծառ՝ երջանիկ տեսք ունենալ,  
փայլատակել)

քան **գնացեալ // սնացեալ ամս** ցօղալ (խիստ զայրանալ՝ բարկանալ՝  
մթնել)

զերդ **զլուսին // լուսին** սուրաթ բոլոր (չափազանց գեղեցիկ):

Ջուգահեռ այսօրինակ ձևերում, ինչպես տեսնում ենք, որոշյալի և  
անորոշի կարգը քերականորեն չեզոք է. **զ** նախդիրը հանդես չի գալիս  
որպես քերականական նոր իմաստի (որոշյալության) արտահայտման  
միջոց:

Հմտ. նաև առումների որոշյալ-անորոշ հակադրությունը ն հողի  
դեպքում.

**ծովին // ծովի** չափ, **սարին // սարի** չափ (շատ-շատ):

ՊԿԿ-ներում ուշագրավ տարբերակներ են ձևավորվում դ ստացական  
հողի առկայությամբ և բացակայությամբ. **թուխ ամսի // ամսիդ** նման (շատ  
մտալ՝ զայրացած՝ մթնած), դեղնել **խնկի // խնկիդ** նման (խիստ դեղնել) և  
այլն:

Հմտ. ձևաբանական տարբերակների կիրառությունը խոսքային  
միջավայրում. Վարսերդ **ի յալի նման**, որ քամին կ'անէ տարուբեր (ՆՔ, 22):  
Կենցաղս էր **յալեաց նման** (ՀՀՄԲՔ):

**Բ. Շարահյուսական տարբերակներ.** Այդ կարգի զուգաձևությունները  
կազմվում են ՊԿԿ-ների բաղադրիչների **շարադասական**  
փոփոխություններով. հմտ.

նման վարդի // վարդի նման (1. շատ գեղեցիկ, 2. խիստ բարվոք՝  
սպահովված վիճակում)

արեգական նման պայծառ // նման արեգական պայծառ (խիստ պայծառ՝  
լուսավոր՝ գեղեցիկ):

Շարահյուսական տարբերակներում բաղադրիչների շարադասական  
դիրքից բացի կարևորվում են նաև նախադրությունների  
փոփոխությունները. հմտ.

շան պէս ուրանալ // ուրանալ որպես զշուն (անամոթաբար հրաժարվել՝  
ուրանալ)

արևի նման շողշող տալ // շողշող տալ իբրև զարև (պայծառորեն փայլել,  
զվարթ՝ պայծառ տեսք ունենալ):

### **3. Քանակական տարբերակներ**

Քանակական տարբերակները ձևավորվում են ՊԿԿ-ների  
բաղադրիչների քանակային կազմի փոփոխություններով: Հմտ.

քան զմարգարիտ // քան զմարգարիտ պայծառ շարած (շատ գեղեցիկ)

պայծառ քան զվարդ // պայծառ քան զքաֆուր վարդ (շատ պայծառ՝ գեղեցիկ):

Այսպիսի տարբերակներում հավելական բաղադրիչները տարբեր իմաստային նրբերանգներ են հաղորդում տարբերակայնան ՊԿԿ-ներին: Այս դեպքում ՊԿԿ-ների ծավալային կազմը փոփոխվում է՝ դրսևորելով մասի և ամբողջի, մասնավորի և ընդհանուրի, վերացականի ու կոնկրետի փոխհարաբերություններ:

ա) Քանակական տարբերակները դրսևորվում են ընդհանուրի ու մասնավորի, վերացականի ու կոնկրետի իմաստներ.

քան զոսկի // քան զփորձած ոսկի (թրծված՝ փորձառու)

քան զծաղիկ // քան զամեն ծաղիկ // քան զամեն ծաղիկ պայծառ (շատ գեղեցիկ)

զետ դազել դողալ // զետ աշնան դազել դողալ (խիստ մրսել)

քան զաղքատ // քան զանզետ աղքատ (շատ պարզամիտ, անտեղյակ)

քան զսերն // քան զսերն քաղցրիկ (շատ քաղցր՝ հաճելի)

քան զխնձոր // քան զկարմիր խնձոր (շատ գեղեցիկ)

քան ամպ // քան սևացեալ ամպ (խիստ գայրացած)

զինչ կայծակն // զինչ գարնան կայծակն ի յամպեն (անսպասելիորեն)

քան զգայլ // զքանասար գայլ ոչխարի (գիշատիչ՝ անգութ կերպով):

բ) Որոշ տարբերակները դրսևորում են ամբողջի և մասի փոխհարաբերություն, ինչպես **քան զվարդ // քան զթերթ վարդի**:

Դիտարկենք քանակային տարբերակները միջինհայերենյան բնագրերում.

Կարմիր երես **նման վարդի**, Ինչպես ծաղիկ ծաղկազարդի, Ուշ ու խելք կու տանեն մարդի՝ Վրաստանայ գոգալներն (ՆՀ,181): Շողեղեն պատկեր քան զթերթ վարդի (ՎՔ,33):

Այսպիսով, միջին հայերենում ՊԿԿ-ների տարբերակները բնութագրվում են որոշակի կառուցատիպերով, որոնք բաժանվում են հետևյալ տեսակների՝ բառային (հոմանշային), քերականական և քանակական: Բառակապակցական տարբերակների ձևավորման գործում զգալի դեր ունեն ինչպես գերադաս բաղադրիչների, այնպես էլ կախյալ անդամների բառաքերականական հատկանիշները: Տարբերակային ՊԿԿ-ների ձևավորման գործում զգալի դեր ունեն նաև նախդիրների կապակցական հնարավորությունները:

Ձևավորվելով գրաբարի համանման կապակցությունների կառուցվածքային կաղապարներով՝ միջին հայերենի տարբերակային ՊԿԿ-ները, որոշ առումով, հիմք են հանդիսացել նաև ժամանակակից հայերենի համարժեք սերող կաղապարների համար:

Լ.Խաչատրյան

**Պատկերավոր կայուն կապակցությունների տարբերակները միջին  
հայերենում  
Ամփոփում**

Պատկերավոր կայուն կապակցությունների տարբերակները միջին հայերենում բնութագրվում են որոշակի կառուցատիպերով, որոնք բաժանվում են երեք խմբի. *բառական* (պարզ որպես հայելի // մաքուր որպես հայելի, *քերականական* (զերդ **զառիւծ** // զերդ **զառեւծոյ**) և *քերականական* (քան **զիւնծոր** // քան զկարմիր **իւնծոր**):

Այս տարբերակների ձևավորման գործում զգալի դեր ունեն ինչպես գերադաս և կախյալ բաղադրիչների բառաքերականական հատկանիշները, բաղադրիչների շարադասությունը, այնպես էլ նախդիրների կապակցական հնարավորությունները:

Л. Хачатрян

**Варианты образных устойчивых сочетаний  
в среднеармянском языке  
Резюме**

Варианты образных устойчивых сочетаний в среднеармянском языке характеризуются конкретными моделями, которые разделяются на следующие подгруппы: *словесный* (պարզ որպես հայելի // մաքուր որպես հայելի), *грамматический* (զերդ **զառիւծ** //զերդ **զառեւծոյ**), *квантитативный* (քան **զիւնծոր** // քան զկարմիր **իւնծոր**).

В плане образования таких вариантов важную роль играют способы выражения доминантного компонента, грамматические признаки зависимого члена, расположение элементов сочетания, а также связывающие особенности предлогов в планах выражения и содержания структуры.

L. Khachatryan

**The variants of image-bearing set-combinations in Middle Armenian  
Summary**

The variants of image-bearing set-combinations in Middle Armenian are characterized by specific models, which are divided into the following groups: wordy (պարզ որպես հայելի // մաքուր որպես հայելի), grammar (զերդ **զառիւծ** //զերդ **զառեւծոյ**), quantitative (քան **զիւնծոր** // քան զկարմիր **իւնծոր**).

In terms of the formation of these variants the ways of expression of dominant component play important role the grammatical features of a dependent member, layout combinations, as well as binding characteristics of prepositions in the plans of expression and content structure.

**ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԻ ՊԱՐԶ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ  
ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈՆԵՄՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** դիմավոր բայ, ստորադասական, սահմանական, հրամայական եղանակի բայաձևեր, լեզվամտածողություն, ապաշխարելու ճանապարհ, աստվածամեծարում, փրկության և մաքրման ճանապարհ, ներման արժանանալ, հուսալ, հավատալ, փրկվել:

**Ключевые слова и выражения:** личный глагол, формы глаголов сослагательного, изъявительного, повелительного наклонения, лингвистическое мышление, путь к покаянию, богопочитание, путь спасения и очищения, удостоиться прощения, надеяться, верить, спастись.

**Key words and phrases:** personal verb, subjunctive, indicative, imperative verb forms, linguistic thinking, the way to repentance, worship of God, the path of salvation and purification, worthy of forgiveness, to hope, to believe, to be saved.

Գր.Նարեկացին իր սրտի խոսքն Աստծուն ուղղեց մարդաճանաչման այն դժվարին պահին, երբ բացահայտեց մարդկային էության մեղսալի պատկերը. կանգ առավ մի պահ՝ փրկություն որոնելով, քանի որ շատ էր սիրում մարդուն: Երկնչեց մարդու համար, բայց չվարանեց իր հավատի մեջ, ցավեց, բայց հուսաց ու խավարի մեջ տեսավ աստվածային լույսի շողը:

Նարեկացին ուներ երկու կարևոր խնդիր՝ մարդուն հասցնել ինքնաճանաչման և Աստվածաճանաչման: Ինքնավերլուծության միջոցով մարդկային էության բացահայտումը ուղղված էր մարդուն մաքրելու, մեղքերից ազատելու ձգտմանը և նպատակին:

Մեծ «Մարդագետը»<sup>1</sup> մարդուն ներկայացնում է դրական և բացասական գծերի ամբողջական նկարագրով: Հեղինակը քաջ գիտակցում է, որ մարդուն ինքնաճանաչման բերելով միայն կարող է հասցնել զոջման և ապաշխարելու միջոցով մաքրվելու և Աստվածային լույսին հասնելու կարևորության և անհրաժեշտության գաղափարին:

<sup>1</sup> Ասողիկ Եպիսկոպոս, Մեղքի և փրկության գաղափարը Գր. Նարեկացու «Մատյան որբերգության» մեջ, Էջմիածին, 1996, էջ 6:

Նարեկացին Աստծուն դիմեց աստվածաշնչյան լեզվով: Դասական գրաբարը Նարեկացու գրչի տակ ոչ միայն երևաց լեզվական նորմերի և բացառությունների իր ամբողջ հարստությամբ, այլև հանդես եկավ միայն Նարեկացու լեզվամտածողությանը բնորոշ լեզվաոճական այն առանձնահատկություններով, որոնք պոեմի հաղորդում են ներազդման մեծ ուժ:

Աստվածաշնչի կողքին «Նարեկը» դարձավ ժողովրդի Հավատի և Հավատամքի առհավատյան<sup>2</sup>:

Դասական գրաբարի բայական համակարգը իր դրսևորումների բոլոր հնարավորություններով պոեմում հանդես է գալիս առանձնակի հետաքրքրություն ներկայացնող նկարագրով:

Դիմավոր բայը դասական գրաբարում ուներ սահմանական, ստորադասական և հրամայական եղանակների պարզ և սահմանական եղանակի բաղադրյալ (անցյալ և ապառնի դերբայների և օժանդակ բայի խոնարհված ձևերի միջոցով ձևավորվող միավորներ)ժամանակաձևերի հարացույցներ:

Նարեկացու «Մատենում» նրանք ունեն քերականական գլխավոր և երկրորդական իմաստներով գործածությունների հարուստ նկարագիր:

Դիմավոր բայի գործառական նկարագիրը պայմանավորված է յուրաքանչյուր գլխի և նույնիսկ ենթագլխի բովանդակությամբ, ուստի բայաձևերի կիրառական դաշտը ներկայացնող որոշակի ընդհանրական կառույցների առանձնացումը պիտի համարել պայմանական: Քանի որ Նարեկացու լեզուն չափազանց ճկուն է, և գրիչը՝ աստվածատուր, յուրաքանչյուր գլխում դիմավոր բայն ունի կիրառությունների ինքնատիպ դրսևորումներ: Բայաձևերի՝ գլխավոր և երկրորդական քերականական իմաստներով գործառույթները որոշակի կաղապարներով կարող ենք ներկայացնել նախադասության կառուցվածքով պայմանավորված՝ կիրառություններում միայն, բայց բովանդակությամբ պայմանավորված՝ բայաձևերի ընտրությունը և գործածությունը անկաղապարելի է և փոփոխական ողջ պոեմի ընթացքում: Համեմատենք դիմավոր բայերի գործածությունները տարբեր գլուխներում:

Այսպես ԽԱ-ԽԵ գլուխներում, որոնցում Նարեկացին ամենաբժշկող Արարչին խնդրում է ընդունել իրեն ի շարս այն հիվանդների, որոնք կարիք ունեն ազատվելու հոգեկան ախտից և փրկվելու, հեղինակը խնդրանքներն առ Աստված կառուցում է բուն և ստորադասական եղանակի բայաձևերով,

---

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Խաչատրյան Պ., Գր. Նարեկացին և հայ միջնադարը, Էջմիածին, 1996, էջ 23:

վերջիններին համար դրանք երկրորդական իմաստով գործառույթներ են: Օրինակ՝ ԽԸ գլուխը կառուցված է այդ բայաձևերի համադրմամբ: Ա ենթագլխում այս իմաստով ունենք ստորադասական երկրորդ ապառնու դրական խոնարհման 4 և ժխտական խոնարհման 7 կառույց, բուն հրամայականի՝ 5 կառույց: Անշուշտ ստորադասականի բայաձևերն արտահայտում են հորդորի, խնդրանքի իմաստ և ընկալելի են ավելի շատ արդի հայերենի ըղձական ապառնու իմաստով: Կամ ՂԵ գլխում, որտեղ հեղինակը վստահ է, որ Աստվածային ներման լույսի շողը կմաքրի մարդկային ողբերգության բոլոր գորշ կողմերը, քանի որ

«Ձի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ,  
Աստուած եւ տէրդ բոլորեցուն,  
Ո՞րչափ հաճեսցիս առաւել եւ այժմ  
Վտանգաւորս կրից կարեկցել» (էջ 639)<sup>3</sup>,

ստորոգումներն արտահայտված են հիմնականում ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերով, որոնք գործածված են իրենց գլխավոր իմաստներով(22 բայաձև):

«Եկեսցեն գթութիւնք կամողիդ,  
Եւ պարգեւողիդ կենաց ամենից,  
Ծագեսցի՛ լոյսդ, արագեսցէ փրկութիւնդ  
Հասցէ աւգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ...  
Ծաղկեցուսցէ՛, պտղաբերեսցէ՛  
Բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ...» (էջ 440):

ԽԲ գլխում պայմանահետևանքային իմաստ արտահայտող բարդ համադասական նախադասություններում ստորոգումները կառուցված են հրամայական եղանակ + ստորադասական եղանակի բայաձևերով. օրինակ

«Կամեա՛ ց, տէր, եւ փրկեցայց,  
Ակնարկեա՛ միայն գթութեամբ՝ արդարացայց,  
Ասա՛ բանիւ՝ եւ վաղվադակի անարատ գտայց,  
Մոռացի՛ր զթիւս չարեացն՝ եւ անդստին համարձակեցայց,  
Առատաձեռնեա՛՛ եւ արդէն ի քեզ իսկ պատուաստեցայց,  
Փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս»: (էջ 413)

Ժխտական ձևայթի՝ բայաձևից հեռացնելը ոճավորման՝ Նարեկացու պոեմում հաճախ հանդիպող միջոցներից մեկն է: Նշված ենթագլխում «մի՛ տրոհեսցես», «մի՛ փակեսցես», «մի՛ պահեսցես», «մի՛ կնքեսցես», «ո՛չ գրեցայց» բայաձևերի կողքին հեղինակը մեծ վարպետությամբ մի՛ ձևայթը

---

<sup>3</sup> Բնագրային նյութերի համար տե՛ս Գր. Նարեկացի, Մատենան ողբերգության, Եր., 1985 թ.:

հեռացնում է բայաձևից՝ խոսքը դարձնելով ավելի տպավորիչ, քանի որ նման կառույցներում ընդգծվում է ժխտման ձևային և բայաձևի միջև ընկած հատվածը ևս: Դիտենք օրինակները.

«Մի՛ տրոհեցես ի բազմականացո՞ւ եւ  
ի բարեացո՞ք զրկեցես» (էջ 431)

«Մի՛ երկարս ինձ զվեր մեղացս ի  
յախտալից մարմնիս ծածկեցես,  
Մի՛ զփթութիւն նեխութեան

ցաւոցս ինձ տնկակից մահու մնացուցեն»: (էջ 431)

ԽԱ գլխի Ա ենթագլխում պայմանահետևանքային իմաստի ինքնատիպ կառույցներով է հեղինակը ցույց տալիս Ամենակարող Աստծու ամենահզոր ուժը: Ստորագումներն այստեղ արտահայտված են ստորադասականի (համարժեք արդի հայերենի ըղձական եղանակի ապառնուն) ապառնու իմաստ արտահայտող ներկայի բայաձևերով: Այս իմաստով հեղինակը գործածեն է ներկայի 23 բայաձև:

«Որդի աստուծոյ կենդանւոյ, արհնեալ յամենայնի,

Հաւրդ ահաւորի անքնին ծնունդ,

Որ տկարանայ առ ի քէն եւ ոչ ինչ,

Որ ի ծագել անստուեր նշողից ողորմութեան քո փառաց

Հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք,

Խզին կապանք, խորտակին շղթայք,

Կենդանածնին մահացեալք, բժշկին հարուածք,

Ողջանան վերք, բառնին ապականութիւնք...» (էջ 410)<sup>4</sup>:

Ներկայի բայաձևերը, ներկայի իմաստ են արտահայտում՝

ա) մեջբերումներում, օրինակ՝

«Որպէս եւ կանխաւ իսկ գրեաց իմաստունն, Եւ դարձեալ՝ Տիրելո՞ք ու, ասէ, ամենեցուն» (էջ 431):

բ) ներկայի ժամանակային տիրույթում կատարվող գործողություն արտահայտող նախադասություններում, օրինակ՝

«Եւ զոր առաքեալ ցուցանէ զթիւս բանից սարսափելեացն  
կշտամբողաց» (էջ 422):

գ) հաճախ նաև ժամանակային սահմանափակում չունեցող կառույցներում, օրինակ՝

---

<sup>4</sup> Տե՛ս Վ. Գևորգյանի թարգմանությունը. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, Մատյան ողբերգության, թարգմանություն Վազգեն Գևորգյանի, Ե, 1979, էջ 245-246:

«Եթե որք զայսպիսիսն գործեն եւ կամ կամակից են, արժանի են մահու» (Էջ 422):

Անցյալ անկատարի բայաձևերը անցյալ կատարյալի բայաձևերի հետ արտահայտում են անցյալի տիրույթը ներկայացնող գործողություններ, որոնցում կերպային տարբերությունը չի զգացվում, ինչպես ստորադասական առաջին և երկրորդ ասպանիների գործառույթում: Համեմատենք՝

«Թե եւ առ մի նուազ բիրս մեղիցեմ,  
Բայց ոչ գրեցայց համայն մեղուցեալ» (Էջ 431):  
«Եւ առակ խորհրդոյ արբահամեան պատարագին,  
Զփրկութիւն թշուառացելոյս  
Ի կամաց կեցուցիչոյ յառաջագոյն նկարագրեք» (Էջ 417):

Անցյալի գործողությունները արտահայտված են նաև անցյալ դերբայով արտահայտված բաղադրյալ ժամանակաձևերով, օրինակ՝

«Եւ որ հասեալ են, ասէ, յԱստուծոյ իրաւանցն վերայ» (Էջ 422):  
«Իսկ թարգմանութիւնք սոցին տեսութեան ի քեզ են նկարեալ...» (Էջ 424):

Նարեկացին բայաձևի ընտրության հարցում ազատ է, օրինակ՝ ԽԶ գլխի Ա և Բ ենթագլուխներում հռետորական հարցում արտահայտող նախադասություններում հեղինակը ստորոգումներն արտահայտում է կատարյալի բայաձևերով, օրինակ՝

«Ով հիմար, զի՛ արդ քեզէն կորացար յերկիր,  
Զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս՝  
Ընդ ցիռս անապականս համարեցար» (Էջ 424):

Բայաձևերի ընտրության համար որոշակի դեր են կատարում երեք կարևոր հանգամանքներ.

1. Ասելիքի բարդությունն ու խորությունը, ինչը հեղինակին տանում էր դասական գրաբարի բայաձևերի գործածությունների հաճախ անկադապարելի տիրույթը:
2. Նարեկյան Աստվածատուր տաղանդը և դասական գրաբարի բոլոր նրբերանգների ոչ միայն իմացությունը, այլև նորովի վերհանումը:
3. Նարեկացու լեզվամտածողությունը, որը խիստ կարևորվում է քերականական ցանկացած իրողություն արժևորելիս: Դիտենք մի ակնհայտ փաստ. պոեմում ունենք հորդորական հրամայականի երկու բայաձև միայն<sup>5</sup>, ինչը բացատրվում է ոչ միայն այդ բայաձևերի համար բուն հրամայականի բայաձևերի գլխավորն

---

<sup>5</sup> Տե՛ս՝ Աշխ. Յուզբաշյան, Հրամայական եղանակը հին հայերենում, Ե., 2010թ. Էջ 117:

ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերի երկրորդական իմաստներով (իբրև հորդոր, խնդրանք) գործածությամբ<sup>6</sup>, այլև Նարեկացու լեզվամտածողությամբ. Նարեկացին 10-րդ դարի լեզվամտածողության կրողն էր, երբ հորդորական հրամայականի բայաձևերը մատենագրության մեջ արդեն խիստ հազվադեպ էին:

«Մատենանում» դիմավոր բայի պարզ ժամանակաձևերը իրենց գլխավոր և երկրորդական քերականական իմաստներով հանդես են եկել հետևյալ հաճախականությամբ՝

ա) Սահմանական ներկայի 387 բայաձև, որոնցից ներկայի իմաստով՝ 176, ստորադասական ապառնու իմաստով՝ 60, այլ իմաստներով (ընդհանրական ներկա, մեջբերումներ Ավետարանից և այլն) 250 բայաձև:

բ) Հրամայական եղանակի 466 բայաձևերից 2-ն են միայն հորդորականի կառույցներ, 70 բայաձևեր արգելական հրամայականի կառույցներ են, որոնցով արտահայտվում են հորդոր-խնդրանքներ և աղերսներ, օրինակ՝ ԺԷ գլխի Ա ենթագլուխը կառուցված է արգելական հրամայականի բայաձևերով, որոնցում խնդրանքներ են առ Աստված (մի՛ խոցեր, մի՛ տանջեր, մի՛ գլորեր և այլն) (էջ 306-307). ենթագլուխն ավարտվում է հրամայական կառույցի 4 նախադասությամբ, որոնցում խնդրանք-հորդորն արտահայտված է ստորադասական երկրորդ ապառնու բայաձևով՝ մի՛ վարեցես (էջ 308), վերջին 3 նախադասություններում *մի՛* ժխտական ձևույթն է գործածված միայն:

«Մի՛ ուժգնապէս վարեցես առ հողս  
Մի՛ սաստկապէս՝ առ մոխիրս,  
Մի՛ անաչառապէս՝ առ ստեղծուածս,  
Մի՛ ահարկութեամբ՝ առ փոշիս» (էջ 307):

գ) Ստորադասական եղանակի բայաձևերից տիրապետող են երկրորդ ապառնու բայաձևերը, ըստ որում հիմնականում ըղձական ապառնու իմաստով: Այսպես՝ երկրորդ ապառնու 1000 բայաձևից 568-ը ըղձական ապառնու իմաստով են: Տիրապետող են նաև հրամայականի իմաստով կառույցները. 125 բայաձև արտահայտում է հորդոր-խնդրանքի իմաստ: Առաջին ապառնու բայաձևերը փոքրաթիվ են, ընդամենը՝ 62 բայաձև, որոնցից 36-ը ըղձական ապառնու իմաստով և 8-ը՝ հրամայականի:

Սահմանական եղանակի անցյալ կատարյալի բայաձևերը հիմնականում ցույց են տալիս ավարտուն կերպի գործողություններ և գործածված են իրենց բուն քերականական իմաստով: Անցյալ անկատարի բայաձևերը սակավադեպ են: Ակնհայտ է այն իրողությունը, որ բայաձևի ընտրությունը

---

<sup>6</sup> Աշխ. Յուզբաշյան, նշվ. աշխ. էջ 95-115:

և հաճախականությունը պայմանավորված է տվյալ գլխի բովանդակությամբ, օրինակ գլուխ Ե-ում տիրապետող են կատարյալի բայաձևերը, իսկ գլուխ Գ-ում՝ ստորադասական ապառնու բայաձևերը:

Պոեմն ունի համամարդկային հնչեղություն: Նարեկացին արժևորում է մարդուն ընդհանրապես առանց տարածական ու ժամանակային սահմանափակման: Այնքան հզոր և խորն է երկի բովանդակությունը, որ 21-րդ դարում Նարեկացին դասվեց տիեզերական վարդապետների շարքը:

**Ա. Յուզբաշյան**

**Դիմավոր բայի պարզ ժամանակաձևերի գործածությունները**

**Գր. Նարեկացու «Մատենանոցի բարեգութեան» պոեմում**

**Ամփոփում**

Աշխատանքը նվիրված է Նարեկացու «Մատենանոցի բարեգութեան» պոեմում դասական գրաբարի դիմավոր բայի պարզ ժամանակաձևերի գործածությունների քննությունը: Ներկայացնում ենք վիճակագրություն, որը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ պոեմում բայաձևերի գործառական ընտրությունը պայմանավորված է հիմնականում տվյալ գլխի բովանդակությամբ:

**А. Юзбашян**

**Использование простых временных форм личного глагола**

**в поэме Гр. Нарекаци «Книгаскорбных песнопений».**

**Резюме**

Работа посвящена критике использования простых временных форм личного глагола классического габара в поэме Гр. Нарекаци «Книга скорбных песнопений». Представляем статистику, которая в очередной раз показывает, что выбор форм глаголов обусловлен в основном содержанием этой главы.

**A. Yuzbashyan**

**Using simple tense forms of the personal verb in the poem**

**of Gr. Narekatsi "Book of Lamentations".**

**Summary**

The work is dedicated to the criticism of the use of simple personal verb tense forms of classical Grabar in Narekatsi's poem "Book of Lamentations", we present statistics, which once again shows that the choice of verb forms is due mainly to the content of this chapter

**ՍՈՒՍԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ԵՊՀ հայոց լեզվի պատմության  
ամբիոնի դոցենտ  
ՀՏԴ 81'373.61

**ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ  
ՖՐԱՆՍԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՑԱԼ ՀԻՄՔԵՐՈՎ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** կաղապար, հաղորդակցում, լեզվական կառուցվածք, ածանցում, բառապաշար, բարբառ, գրական լեզու, միջնորդավորված և անմիջական փոխառություն, հիբրիդային կազմություններ:

**и выражения:**

**Key words and expressions:** pattern, communication, linguistic structure, affixation, dialect, literary language, direct and indirect borrowing, hybrid formations.

Որևէ օտար լեզվի ազդեցությունը այս կամ այն լեզվի վրա բնական և անխուսափելի լեզվական երևույթ է և պայմանավորված է քաղաքական, տնտեսական ու մշակութային մի շարք գործոններով: Այս տեսակետից միջին հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում գրավոր և բանավոր ճանապարհով մուտք գործած անմիջական և միջնորդավորված փոխառությունները ֆրանսերենից: Պետք է նշել, որ հայերենագիտության մեջ ընդհանրապես եվրոպական, մասամբ նաև ֆրանսիական փոխառությունները բավականաչափ ներկայացվել են: Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 2-րդ հատորում արձանագրված է ֆրանսիական 70 փոխառություն: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատությունում ֆրանսերենից փոխառյալ բառամիավորների թիվը 96 է: Այս բառացանկերը լրացրին Ռ. Ղազարյանը և Հ. Ավետիսյանը «Միջին հայերենի բառարանում» (այսուհետ՝ ՄՀԲ)՝ արձանագրելով մի շարք նոր բառեր ու բառաձևեր և դրանց թիվը հասցնելով 106-ի: Տարիներ անց Ռ. Ղազարյանը հրատարակեց «Միջին գրական հայերենի բառապաշարը» մենագրությունը, որտեղ նույնպես քննեց միջին հայերենի՝ լատիներենից, ֆրանսերենից, լեհերենից, հունարենից և այլ լեզուներից փոխառյալ բառերը: Որոշ թվով փոխառություններ կան նաև Նորայր Բյուզանդացու արժեքավոր

բառարաններում<sup>1</sup>: Մ. Ղազարյանի «Եվրոպական փոխառությունները միջին հայերենում» թեկնածուական ատենախոսության մեջ արձանագրված է ֆրանսերենից փոխառյալ 145 բառ:

Միջին հայերենում ֆրանսիական փոխառությունների գերակշռող մասը հատուկ է կիլիկյան հայերենին (12-14-րդ դդ.), քանի որ այս ժամանակահատվածում հայ-ֆրանսիական հարաբերություններն ավելի սերտ են եղել բուն երկրից դուրս, որտեղ Բագրատունիների թագավորության անկումից հետո ստեղծվել էր հայկական ինքնուրույն պետություն, և նրա պաշտոնական լեզուն դարձել էր կիլիկյան հայերենը: Կիլիկիայի հայ իրականության մեջ հատկապես մեծ է եղել ֆրանս-հայկական շփումը, որի արդյունքում զգալի թվով բառեր ֆրանսերենից ներթափանցել են կիլիկյան հայերեն՝ իրենց կնիքը դնելով միջին հայերենի բառապաշարի վրա:

Միջին հայերենը համընկնում է հին և միջին ֆրանսերենի ժամանակաշրջաններին, սակայն միջին հայերենի ֆրանսիական բառափոխառություններում աչքի են ընկնում ֆրանսերենի՝ հատկապես հին շրջանից ներմուծված բառամիավորները (9-14-րդ դդ.): Դրանց մի մասը ներթափանցել է գրական լեզվի միջոցով, իսկ մյուս և ավելի մեծ մասը անմիջական շփման հետևանքով մուտք է գործել ժողովրդախոսակցական լեզվի միջոցով, որի ապացույցն է դրանցից շատերի հնչյունափոխված ձևերի առկայությունը, ինչպես՝ **բուրճէս** (պուրճէս, պուռճէս, պոռճէս)-քաղաքացի, **գունդ** (գոնթ)-կոնս, **ըմբրուր** (ումբրուր)-կայար, **ըսսպիտալ** (ոսպիտալ, ոսբիթալ) -հյուրանոց, հոսպիտալ, **ջամբրոլայ** (ջամբոյ, գամբեռլին, ջամուլահ, ջամուռլայ, ջամբլ)-սենեկապետ, **վիստեռ** (վեստեռ, վեստառ)-գանձատուն, ավանդատուն: Իհարկե, այս տարբերությունները կարող են պայմանավորված լինել նրանով, թե դրանք հատկապես որ բարբառից են փոխառվել, երբեմն կարող են լինել նաև սխալագրության հետևանք: Բացի այդ՝ տարբեր լեզուներից կատարված փոխառությունների մեջ կան նաև կրկնակ փոխառություններ, երբ արդեն փոխառված բառը լեզվի զարգացման այս կամ այն փուլում կարող է նորից փոխառվել կամ կարող է փոխառվել տարբեր լեզուներից՝ կազմելով կրկնակներ, ինչպես՝ **ֆրեռ** (կրոնավոր)-ֆրանս., **ֆրա**-իտալ., **տամուժել** (ազնվական օրիորդ)- ֆրանս., **տամոջել**-իտալ., **դուկ**(դուքս)-ֆրանս., **դուճ**-իտալ., **տուկատ** (ոսկեդրամ)-ֆրանս., **դուկատ**-իտալ. և այլն: Ինչ վերաբերում է ֆրանսիական փոխառությունների խոսքիմասային պատկանելությանը՝

<sup>1</sup> Ն. Բիզանդացի, Բառգիրք ի գաղղիերեն լեզուի, Կ. Պոլիս, 1884: Բառգիրք ստորին հայոցի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց, Ժնն, 2001:

պետք է նշել, որ դրանք հիմնականում գոյականներ են: Եվ դա պատահական չէ, քանի որ գոյականները իրականության առարկաների, երևույթների հասկացությունների արտահայտությունն են, իսկ վերջիններս ավելի շուտ են փոխառվում: Կարևոր չէ, թե հիմնականում որ սեռի գոյականներ են փոխառվում, քանի որ հայերենում դրանք, բացառությամբ անձ ցույց տվող գոյականների, կորցնում են սեռի քերականական կարգը: Ի տարբերություն գոյականների՝ փոքր թիվ են կազմում բայերն ու ածականները:

Մույն հոդվածում մենք անդրադարձել ենք ֆրանսերենից փոխառյալ հիմքերով բառակազմական կաղապարներին: Փոխառությունները, փոխատու լեզվից վերցվելով իրենց ինքնուրույն արժեքով և հնչյունական ձևավորմամբ, փոխառու լեզվում հետագայում կարող են ենթարկվել ածանցման և բառաբարդման: Փոխառյալ բառով և լեզվի սեփական միջոցներով կազմությունները հիմնականում հայ լեզվաբանության մեջ համարվում են սեփական բառակերտումներ: Ֆրանսերենից փոխառված բառամիավորները, ենթարկվելով հայերենի բառակազմական կանոններին, կազմել են նոր բառեր՝ հարստացնելով միջին հայերենի բառապաշարը: Ներկայացնելով դրանց բառակազմական հիմնական օրինաչափությունները՝ փոխառյալ հիմքերով կաղապարները բաժանել ենք 2 խմբի՝ բառաբարդման և ածանցման կաղապարների: Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ բառաբարդմամբ առաջացած կաղապարները ներկայացրել ենք հարադրական կամ վերլուծական և համադրական տեսակներով: Ֆրանսերենից փոխառյալ բառերով ստեղծվել են մի շարք հարադրավոր բարդություններ. այսպես՝ *մայն, օմաճ, սայզայ, ջալունջ* փոխառյալ գոյականները *դնել, տալ, այնել, անել* բայերի հետ կազմել են *մայն դնել (պաշտպանել), ջալունջ այնել* (բողոք ներկայացնել), *սայզայ անել* (բռնագրավել), *սայզայ տալ* (արգելք դնել ունեցվածքի վրա), *օմաճ այնել* (մեծարել) հարադրավոր բարդությունները: Նշված հարադրավոր բայերից երկուսն ունեն իրենց պարզ համարժեքները՝ *սայզայ անել*- սայզել, *ջալունջ այնել*-ջալընջել:

Համադրական բարդությունները նպատակահարմար ենք համարել բաժանել հոդակապավոր և անհոդակապ տեսակների՝ դրանց մեջ առանձնացնելով նաև հնչյունափոխված բաղադրիչներով կառույցները: Ֆրանսերենից փոխառյալ հիմքերով կազմված հոդակապավոր բարդություններ են՝ *պարոնապապ (սկեսրայր), պարոնամայր (սկեսուր), պարոնացավ* (հողատապ), *պարոնադուստր* բառերը, իսկ անհոդակապ բարդություններն են՝ *պարոնորդի, պարոնպապ, պարոնտէր*: Բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությամբ դրանք բոլորը կազմված են գոյական խոսքի մասերից: Պետք է նշել, որ

Ֆրանսերենից փոխառյալ հիմքերով բարդ բառերը քանակով զիջում են ածանցավորներին: Ածանցման կաղապարները ներկայացրել ենք երեք ենթախմբով՝ նախաձանցավոր, վերջաձանցավոր և բայաձանցավոր կաղապարներ: Նախաձանցման կաղապարով ստեղծված բառերն են՝ **-ան** ժխտական նախաձանցի միջոցով **լիճ** և **անսիզ** գոյականներից կազմված **անլիճ** և **անսիզուր** ածականները, **ջալունջ** գոյականից՝ **անջալունջ** մակբայը: Մյուս նախաձանցներով կազմված բաղադրություններ չեն հանդիպել: Նախաձանցման ժամանակ շեշտի փոփոխություն, հետևաբար նաև շեշտափոխական հնչյունափոխություն տեղի չի ունենում, և սրանցում պահպանվում են մաքուր հիմքերը:

Մի շարք փոխառյալ գոյականներ՝ **-ութին, -ուհի, -ուր, -ցի** վերջաձանցների միջոցով կազմել են նոր գոյականներ՝ **անդալուսցի, գայլիացի, գորնցի, դամբլցի, գանգլերութին, գունդութին, ընբրուրութին, լճութին, մարաջախտութին, մարզիգութին, պալլութին, պարոնութին, պատրոնութին, տուկութին, քիթելութին, քիթութին, մարզիգունի, պարոնուհի**։

Պետք է նշել, որ ֆրանսերենից փոխառյալ արմատներով բարդ և ածանցավոր բառերի մեջ ամենաարգասավորը **պարոն** (իշխան) բառն է, քանի որ այն տարբեր ածանցների և արմատների միջոցով կազմվել է 11 նոր բառամիավոր՝ **պարոնութին, պարոնանալ, պարոնորդի, պարոնիկ, պարոնապապ//պարոնպապ(սկեսրայր), պարոնամայր (սկեսուր), պարոնացավ (հողատապ), պարոնուհի, պարոնադուստր, պարոնացնել, պարոնտեր** (հարգական տիտղոս):

Հայերենում, ինչպես հայտնի է, «բայական բառույթը միշտ բաղադրյալ է՝ կազմված առնվազն երկու ձևույթից՝ արմատից և վերջավորություններից»<sup>2</sup>, քանի որ բայահիմքին, լինի դա կազմությամբ արմատական, ածանցավոր թե՛ բարդ, միշտ ավելանում է **-ել//ալ** քերականական ձևույթը: Որպես բայի սկզբնաձև, բառարանային միավոր՝ հայերենում ընդունված է անորոշ դերբայը, որն արդեն բաղադրյալ է՝ կազմված արմատից և վերջավորությունից: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ սույն հոդվածում բայերը քննել ենք ածանցավոր կազմությունների մեջ: Ըստ բաղադրիչների կապակցելիության եղանակի կամ ըստ կառուցվածքային-բառակազմական առանձնահատկությունների՝ ինչպես մյուս խոսքի մասերի դեպքում, ունենք վերլուծական և համադրական կազմություններ: Վերլուծական կազմություններին մենք արդեն անդրադարձել ենք: Ինչ վերաբերում է համադրական կազմություններին, պետք է նշել, որ հայերենի

<sup>2</sup> Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 299:

զարգացման բոլոր փուլերին հատուկ է անվանական խոսքի մասերից, հատկապես գոյականից և ածականից բայական մասնիկավորմամբ բայեր կազմելու լեզվական միջոցը: Հին և միջին ֆրանսերենի բայական վերջավորությունները (ier,er,ir, re) փոխարինվել են հայերեն բայական **-ել** վերջավորությամբ, որ ավելացել է ֆրանսերեն բայարմատներին և կազմել բայեր: Մեր հաշվումներով միջին հայերենը ֆրանսերենից փոխառել է բացառապես **ե** խոնարհման պատկանող 10 բայ, 7-ը՝ հին ֆրանսերենից (**բայթել**-պաշտպանել, **ջարնջել**-բողոքել, **ջաստել**-պատժել, **սայզել**-բռնագրավել, **սֆրնտել**-պաշտպանել, **տըպլել**-կրկնակի հատուցել, **ֆայլել**-դատը տանուլ տալ, **օդրել**-արտոնել), 3-ը (**կալօիել**- քառամբակ վազել, **քիթել**-թողնել, շնորհել, **սայզել**-բռնագրավել)՝ միջին ֆրանսերենից: Սրանք յուրօրինակ բառակազմություններ են՝ բայակերտումներ, որոնք ստեղծվել են մեր լեզվին հատուկ բառակազմական կանոններով և խոնարհվելիս ենթարկվում են միջին հայերենի խոնարհման օրինաչափություններին: Այսպիսի կազմություններում քերականական ձևավորում ունեցող սերող հիմքերով խումբ են կազմում սուկածանցավորները և պատճառական բայերը՝ իրենց տարբերակային ձևերով, ինչպես՝ **պարոն**անալ, **կալափց**նել//**կալօփց**նել, **կարտինալ**ացուցանել, **պարոն**ացնել: Այս բոլոր բայերը անվանելով փոխառյալ բայեր՝ Հր. Աճառյանը առանձնացնում է սրանց 2 խումբ՝ 1) փոխառված բայարմատով և հայերենի բայական վերջավորությամբ կազմված, 2) որպես հարադիրներ գործածվող փոխառյալ արմատով և **անել**, **լինել** բայերով կազմված<sup>3</sup>: Այսպիսի բաղադրությունների համար Գ. Ջահուկյանը իրավացիորեն նշում է, որ հիմնականում դրանց առաջին բաղադրիչն է օտարազգի ծագման, և այդ բաղադրություններն անվանում է կլիսափոխառություններ-կլիսապատճենումներ<sup>4</sup>: Լ. Հովհաննիսյանը, խոսելով բայական փոխառությունների մասին, օտար ձևույթ+մայրենի լեզվի ձևույթ կաղապարով կառույցները փոխառություններ չի համարում, և այդպիսի բառերը բառացանկում նշում է «փոխառյալ արմատը մատնացույց անելու միտումով»<sup>5</sup>: Սակայն լեզվաբանը կարևորում է այդպիսի կազմությունների ուսումնասիրությունը, քանի որ ոչ միայն օտար ձևերի ուսումնասիրությամբ, այլև օտար միավորն ընդգրկող մայրենի ձևերի քննությամբ է ավելի լիարժեք բացահայտվում

<sup>3</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, IV, Բ, Երևան, 1959, էջ 488-499:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 225:

<sup>5</sup> Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 9:

օտար ազդեցությունների դերը փոխառու լեզվում: Փոխառյալ բայարմատով կազմությունները Լ. Հովհաննիսյանն անվանում է օտար հիմքով (արմատով) բայեր՝ նշելով, որ «խիստ առարկելի է առհասարակ փոխառյալ բայ տերմինը»<sup>6</sup>: Փաստորեն, փոխառու լեզուն, սեփականացնելով օտար բայահիմքը, այն ենթարկում է բառակազմական փոփոխությունների սեփական բառերի նման այնպես, ինչպես փոխառությունները ենթարկում է քերականական փոփոխությունների՝ գոյականները հոլովում է, ածականներին համեմատության աստիճաններ տալիս և այլն:

Այսպիսով, միջին հայերենում ֆրանսերենից փոխառյալ բառերն ըստ կազմության լինում են պարզ (*լիճ, քիթ*), ածանցավոր (*ջանսլեռություն, անլիճ*) և բարդ (*պարոնամայր, պարոնտեր, սայգայ տայ*): Բառաբարդման, ածանցման, ինչպես նաև բառաթեքման ժամանակ հաճախ տեղի է ունենում հնչյունափոխություն: Շեշտազրկված ձայնավորը սղվում է կամ վերածվում *ը-ի՝* բրինձ-բրնձի, *լիճ-լճություն, ջալունջ-ջալնջել, բրետիկադուր-բրետիկադրայ*: Սակայն երբեմն հնչյունական այս կանոնը չի գործում, և շեշտազրկված ձայնավորը մնում է անփոփոխ՝ դուկ-դուկի, գունդ-գունդություն:

Մեր կողմից առանձնացված մեկ օտար բաղադրիչով և հայերենի սեփական բառակազմական միջոցներով կազմությունների ուսումնասիրությունը հատկապես կարևոր է հայերենի զարգացման տվյալ շրջանում որևէ օտար լեզվի (տվյալ դեպքում՝ ֆրանսերենի) ազդեցությունն ավելի ճշգրիտ ներկայացնելու համար: Բաղադրություններում ֆրանսերենից փոխառյալ բառերի առանձնացումը խիստ կարևոր է, քանի որ դրանով որոշվում է տվյալ փոխառության գործածության հաճախականությունը և լեզվական արժեքը, որը կարևոր է ընդհանրապես փոխառյալ բառերի արժևորման, գնահատման համար:

Ֆրանսիական փոխառությունները արտացոլում են մի քաղաքակրթության ազդեցության աստիճանը մեկ այլ քաղաքակրթության վրա: Լեզվափոխառությունների կատարմանը նպաստող ներքին գործոններից են փոխառու լեզվում որևէ նորամուտ հասկացություն արտահայտելու համար համապատասխան բառի բացակայությունն ու տվյալ պահին լեզվի ներքին միջոցներով համարժեք ստեղծելու անհնարին կամ ոչ նպատակահարմար լինելը, իմաստային տարբերակում մտցնելու նպատակով այս կամ այն ընդհանուր հասկացությունը մասնավորելու

---

<sup>6</sup> Նշվ. աշխ., էջ 120:

անհրաժեշտությունը<sup>7</sup>, մայրենի միավորի համեմատությամբ օտար միավորի կարճությունը, մեկ հասկացության համար մեկ բառ գործածելու ձգտումը, ինչպես նաև բառապաշարային միավորների հաղորդակցային հստակությունն ապահովելու պահանջը:

**Ս. Գրիգորյան**

**Միջինհայերենյան բառակազմական կաղապարներ ֆրանսերենից  
փոխառյալ հիմքերով  
Ամփոփում**

Միջին հայերենի բառապաշարում մեծ թիվ են կազմում գրավոր և բանավոր ճանապարհով մուտք գործած անմիջական և միջնորդավորված փոխառությունները ֆրանսերենից: Փոխառությունները, փոխատու լեզվից վերցվելով իրենց ինքնուրույն արժեքով և հնչյունական ձևավորմամբ, փոխառու լեզվում հետագայում կարող են ենթարկվել ածանցման և բառաբարդման: Այդպիսի բաղադրությունները լեզվում համարվում են հիբրիդային կազմություններ: Բաղադրություններում ֆրանսերենից փոխառյալ բառերի առանձնացումը խիստ կարևոր է, քանի որ դրանով որոշվում է տվյալ փոխառության գործածության հաճախականությունը և լեզվական արժեքը, որը էական է ընդհանրապես փոխառյալ բառերի արժևորման, գնահատման համար:

французских

аимствования могут подвергаться изменениям и деривации в заимствующем языке.

---

<sup>7</sup> Տե՛ս Ս. Բարլեզիզյան, Հայ-ֆրանսիական լեզվական առնչությունները XIX դարում, Եր., 1990, էջ 121:

**Middle Armenian Word Formation Patterns with Bases Borrowed from French**

**Summary**

The direct and indirect loan words borrowed from French in both written and oral ways are numerous in the vocabulary of Middle Armenian. The loan words are taken from the borrower language with their own value and phonetic formation, but can later undergo affixation and compounding in the borrower language. This kind of word-compositions are considered to be hybrid formations in the language. The separation of loan words from French within word compositions is very important, because it decides the frequency and value of the usage of the given loan word which is in general very essential for the estimation of the value of borrowings.



процессом заимствования, но и общими закономерностями, которые приводят к возникновению родственных фразеологических единиц, демонстрирующих универсальный характер переноса соматических лексем, их функционально-семантическую динамику в составе фразеологизмов. Обилие СФ в разных языках естественно, так как соматические лексемы, входящие в их состав, обладают высокой способностью метафоризироваться. Однако при создании метафор степень продуктивности соматизмов неодинакова: одни соматизмы используются редко (плечо - *լիւ*, кулак - *բռնկոճ*, пятка - *կրկնկ* и т.д.), другие, наоборот, отличаются высокой частотностью употребления (голова - *գլուխ*, глаз - *աչք*, нос - *բիթ*, рот - *բերան*, язык - *լեզու*, рука - *ձեռք*, нога - *ոտք*).

Говоря об общности для разных народов функций, понятий, выражаемых отдельными соматизмами, не следует забывать о важности национального фактора, который зачастую может оказаться причиной расхождений значений многих СФ у конкретных носителей разных языков. Лексемы-соматизмы могут иметь в каждом конкретном языке новое употребление, связанное с символизацией лежащих в их основе денотатов, что и является одной из причин фразеологической уникальности. Попав в состав фразеологических единиц, эти слова как бы «уточняются» в своих функциях, а языковой коллектив принимает как данное, например, что в Италии храбрость ассоциируется с печенью, во Франции – с желудком. Для представителя же любой другой лингвокультурной общности подобные ассоциации могут быть непонятны, необъяснимы и даже абсурдны. Вот почему многие фразеологические выражения, закрепившиеся в системе одного языка, невозможно дословно перевести на другой язык, независимо от степени родства этих языков, а также от степени ясности лежащих в их основе лексем-соматизмов, универсальных для всех языков.

Как и любые языковые единицы, фразеологизмы в своем употреблении подчиняются существующим языковым нормам, и именно в таком соответствии установленным нормам последние зафиксированы во фразеологической системе языка. Однако в разговорной речи фразеологизмы нередко функционируют в преобразованной форме. Логично, что всякое отклонение от нормы должно считаться ненормативным употреблением, но когда рассматриваются две разные сферы употребления (язык и речь), то здесь нельзя говорить о каких-либо нормах. Точнее, понятие нормы в данном случае относится к языку, а речевого процесса оно не касается, поскольку речевые границы довольно обширны и подвижны: здесь могут иметь место индивидуальное и авторское употребление фразеологизма, трансформация его нормативной формы, всевозможные сдвиги внутри фразеологизма. Важно

также учесть, что все указанные преобразования нормативных форм употребления фразеологизмов подчинены определенным целям: они либо призваны внести новый оттенок, либо придать дополнительный колорит, либо помечены просторечным употреблением, не вызывая при этом семантических изменений. Однако порой индивидуальные изменения внутри фразеологизмов могут затронуть (и даже исказить) их значение. В таких случаях необходимо выяснить природу и цель этих изменений. Помимо этого, неправильное речевое употребление фразеологизма может исходить также от незнания языка и непонимания смысла фразеологизма.

При сопоставительном исследовании русско-армянских СФ в качестве основного фактора, объединяющего параллельные фразеологические единицы данного типа, выступает преимущественно фактор структурно-семантического тождества последних, что характерно для языковых универсалий. Однако в процессе дальнейшего анализа мы выявили также определенные несоответствия (фразеологические уникалии) между рассматриваемыми парами русских и армянских СФ, представляющие определенный интерес в лингвокультурологическом плане. Мы выделили некоторые наиболее интересные случаи несоответствий СФ в сравниваемых языках, связанные с проявлением национальной специфики, национального менталитета этноса-носителя каждого из этих языков. Поскольку соматические лексемы универсальны для всех языков, то логический подход к изучаемой проблеме предполагает наличие в параллельных русско-армянских фразеологизмах одного и того же соматического компонента. Однако анализ языкового материала показывает, что часто эквивалентные русские и армянские СФ расходятся именно по соматическому компоненту, сохраняя при этом синонимичную семантику.

Так, сравним: *зарубить себе на носу* – *սխմել ինքն օղ անկ* (в русском языке «нос», в армянском – «ухо»); *с глазу на глаз* – *երեսի ներքին երեսի* (в русском языке «глаз», в армянском – «лицо»); *кусать себе локти* – *գլխի ինքն* (в русском языке «локоть», в армянском – «голова») и т.д.

Другой причиной расхождений является передача смысла русского СФ несоматическим фразеологизмом с синонимичной семантикой. Например: *сходить с рук* – *հեշտ սրծնել*.

Более серьезное несоответствие между анализируемыми парами русских и армянских СФ может быть вызвано смещением языковых уровней. Здесь мы имеем в виду случаи выражения семантики русского фразеологизма в армянском языке не фразеологическими средствами, а средствами других уровней языка: либо с помощью синонимичного слова (лексический уровень), либо описательным путем (синтаксический уровень).

Например: *медный лоб* - *բթաժիտ*; *море по колено* - *վերջը չի*.

Наконец, расхождения между параллельными русскими и армянскими СФ могут носить исторический характер. Так, многие русские СФ, получившие широкое распространение в языке, не закрепились в армянской фразеологической системе, что, очевидно, вызвано отсутствием тех сугубо русских реалий, которые лежат в их основе. (ср.: *с гулькин нос*; *косая сажень в плече*; *ни аза в глаза* и т.д.).

В некоторых случаях при отсутствии конкретного фразеологического синонима в армянском языке предлагается пословный перевод соответствующего русского СФ, который, на наш взгляд, не дает реального представления о природе русского фразеологизма, и в итоге в языке перевода возникает выражение, полностью отдаленное от реального денотата, лежащего в основе исконного фразеологизма (ср., например: *иметь голову на плечах* - *ուների վրա գլուխ ունենալ*).

Исследование конкретного фразеологического материала выявило также случаи, когда русский СФ имеет в армянском языке более одного фразеологического соответствия. При этом, как правило, один из синонимов уступает другому в частотности употребления в языке и по степени распространенности в речи. Например:

*Рукой подать* - *ձեռքը մեկնես ՚կհասնի*; *բթի տակ*; *երկու քալ է*; *пускать пыль в глаза* - *աչքերին թոզ փչել*; *գլուխը յուղել*; *մատների վրա խաղաղնել*; *пальчики оближешь* - *վատներդ հետը կուտես*; *համը բերանումդ կմնա*; *համից չես կշտնիս* и т.д.

Итак, расхождения между параллельными русскими и армянскими СФ в основном и в общем вытекают из особенностей национальной специфики, ментального фактора этих языков, что в свою очередь связано с фактом прохождения этими языками разных путей исторического развития. Для получения более четкого представления о фразеологических универсалиях и уникалиях важно обращение к этнолингвистическому фактору.

### Լիտերատուրա

1. Телия В.Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. М., 1996.
2. Балли Ш. Французская стилистика. М., 1961.

Բ. Խոջովյան

**Լեզվային ընդհանրությունների և առանձնահատկությունների մասին  
(ռուսերեն և հայերեն դարձվածքների նյութի հիման վրա)**

**Ամփոփում**

Հոդվածը նվիրված է ռուսերենի և հայերենի սոմատիկ դարձվածքների լեզվամշակութային ոլորտի ուսումնասիրությանը: Քննության առնվող նյութի վերլուծության արդյունքում հայտնաբերվում են երկու լեզուներում տվյալ դարձվածքների միջև եղած նմանությունները և տարբերությունը: Վերջինս բացատրվում է համեմատվող լեզուների ազգային առանձնահատկություններով:

**Б.Ходжумян**

**О языковых универсалиях и уникалиях (на материале фразеологизмов  
русского и армянского языков)**

**Резюме**

В статье рассматривается лингвокультурологический аспект русских соматических фразеологизмов в сопоставлении с армянским. На основе анализа языкового материала выявляются соответствия и расхождения между соматическими фразеологизмами сравниваемых языков. Имеющиеся соответствия объясняются универсальностью фразеологии, а расхождения – национальными особенностями этих языков.

**B. Khojumyan**

**About language universalities and specifics in Russian and Armenian idioms**

**Summary**

The article discusses the cultured aspect of somatic idioms in Russian and Armenian languages. On the basis of analyses of language material compliances and distinctions between the compared idioms of both languages come to light. The available compliances are explained by universality of idioms, and distinction – by national specifics of these languages.

**ԳՐԱԲԱՐԻ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գրաբար, համաժամանակյա քննություն, անվանողական կայուն կապակցություններ, մակբայական կայուն կապակցություններ, բառային տարբերակներ, քերականական տարբերակներ, ձևաբանական տարբերակներ, շարահյուսական տարբերակներ, քանակային տարբերակներ, տարբերակների միագումարություն:

**Ключевые слова и выражения:** грабар, синхронный анализ, номинативные устойчивые сочетания, адverbальные устойчивые сочетания, лексические варианты, грамматические варианты, морфологические варианты, синтаксические варианты, квантитативные варианты, совокупность вариантов.

**Key words and phrases:** old Armenian, synchronic analyses, nominative stable compounds, adverbial stable compounds, lexical variants, grammatical variants, morphological variants, syntactical variants, quantitative variants, oneness variants.

Կայուն կապակցությունները (հետայսու՝ ԿԿ) երկու կամ ավելի բաղադրիչներով ձևավորված պատրաստի վերարտադրելի կառույցներ են, որոնք հանդես են գալիս վերաիմաստավորված (դարձվածային) կամ ոչ փոխաբերական նշանակություններով<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ «Կապակցության վերաիմաստավորումը սահմանազատում է դարձվածքները (իդիոմները) կայուն բառակապակցություններից: Նպատակահարմար է արտահայտություն կոչել այն բառակապակցությունները, որոնք դարձվածային ձևավորում ունեն, բայց վերաիմաստավորված չեն, իդիոմատիկ նշանակություն չունեն: Այլ կերպ ասած՝ արտահայտությունների բաղադրիչ բառերը գործածված են մնում իրենց սովորական բառային իմաստներով (տե՛ս Պ.Ս.Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973, էջ 18, 31):

Ըստ իրենց ընդհանրական իմաստի՝ բառակապակցության կառուցվածք ունեցող կամ անվանողական<sup>2</sup> ԿԿ-ները համախմբվում են՝ հարաբերակցվելով բառերի բառաքերականական կարգերին՝ խոսքի մասերին:

Հին հայերենում զգալի տեսակարար կշիռ ունեն մակբայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ԿԿ-ները: Այդ կարգի ԿԿ-ները հատկանշվում են որոշ յուրահատկություններով, որոնք պայմանավորված են ոչ միայն մակբայների խոսքիմասային առանձնահատկություններով, այլև այդ կարգի միավորների ձևաիմաստային բնութագրով:

Ինչպես ԿԿ-ների համար ընդհանրապես, այնպես էլ գրաբարի մակբայական ԿԿ-ների համար մասնավորապես հատկանշական է տարբերակների կամ զուգաձևությունների առկայությունը:

Առհասարակ ԿԿ-ների տարբերակները բաղադրիչների բառային, քերականական (ձևաբանական և շարահյուսական), ինչպես նաև քանակային կազմի տարբերություններ դրսևորող միավորներ են, որոնք ունեն ձևային միևնույն անխախտելի հիմքը և պահպանում են կապակցության իմաստային նույնականությունը<sup>3</sup>:

Ընդհանրապես տարբերակայնությունը՝ որպես լեզվական իրողություն, ենթադրում է փաստական նյութի՝ ամեն մի առանձին լեզվի պատմական զարգացմամբ և քերականական կառուցվածքի յուրահատկություններով պայմանավորված քննություն:

Սույն հոդվածում քննարկվում են մակբայի խոսքիմասային նշանակությամբ արժեքավորվող ԿԿ-ների փոփոխակները գրաբարի մակարդակում համաժամանակյա կտրվածքով: Առանձին-առանձին քննության են առնվում հին հայերենի մակբայական ԿԿ-ների բառային, քերականական և քանակային տարբերակները, ինչպես նաև ներկայացվում են տարբերակային ԿԿ-ների իրացումները խոսքաշարում: Ըստ որում, մեր ուսումնասիրության ծիրի մեջ ընդգրկված են ինչպես գրաբարյան

---

<sup>2</sup> Անվանողական ԿԿ-ների մասին հանգամանորեն տե՛ս Պ.Ս.Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 128-165, Խ.Գ.Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 91-291:

<sup>3</sup> Դարձվածային տարբերակների մասին տե՛ս Ալ.Ս.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., Եր. համալս. հրատ., 1990, էջ 335-337, Հ. Ղազարյան, Գունանիշ բաղադրիչով դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում, Ե., «Ճարտարագետ» հրատ., 2004, էջ 141, В.М.Мокиенко, Славянская фразеология, М., «Высшая школа», 1989, էջ 26, Е.И.Диброва, Природа значения вариантной ФЕ, Сб. Вопросы лексической и фразеологической семантики, Ростов н/Д, РГПИ, 1979, էջ 79:

(պատրաստի վերարտադրելի) ոչ փոխաբերական ԿԿ-ների, այնպես էլ միաբնեռ դարձվածային միավորների և իդիոմների<sup>4</sup> շրջանակներում ի հայտ եկող կառուցվածքային տարբերակները<sup>5</sup>:

**Ա. Բառային տարբերակներ:** Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է ԿԿ-ների տարբերակներում հանդես եկող բառային փոփոխակների հիմնականում երկու տիպ՝ 1. հոմանիշներ, 2. իմաստային միևնույն դաշտին կամ իմաստային-թեմատիկ միևնույն խմբին պատկանող բառեր<sup>6</sup>:

Առհասարակ մակբայական ԿԿ-ները հատկանշվում են կառուցվածքային առանձնահատկություններով: Այդ կարգի ԿԿ-ները կարող են ձևավորվել նաև առանց մակբայների մասնակցության. նրանք մակբայներին հարաբերակցվում են առաջին հերթին իրենց արտահայտած իմաստներով: Ըստ որում, խնդրո առարկա ԿԿ-ներում զգալի քանակություն են կազմում միագազաթ կառույցները: Այդօրինակ ԿԿ-ներում բացակայում է կառուցվածքային առումով գերադաս բաղադրիչը: Միագազաթ ԿԿ-ները ձևավորվում են մեկ լիիմաստ և մեկ թերիմաստ բաղադրիչներով, ընդամին, նրանց լիիմաստ անդամները կարող են հանդես գալ ծավալումներով:

Ստորև բերվող օրինակները մակբայական միագազաթ ԿԿ-ների *հոմանիշային փոփոխակներ* են.

Շանց **գունակ // օրինակ**<sup>7</sup> (չարքաշաբար), իբրև **զգառն // գոչխար** (խոնարհաբար), ընդ **այգն // առաւօտն** (առավոտյան), **որպէս // իբրև** ի

<sup>4</sup> Միաբնեռ և իդիոմատիկ դարձվածային միավորների մասին հանգամանորեն տե՛ս Ա.Գ.Назарян, Фразеология современного французского языка, М., “Высшая школа”, 1987, էջ 64:

<sup>5</sup> Առհասարակ զուգաձևությունների գոյությունն ամենից առաջ պայմանավորված է լեզվի կառուցվածքային հնարավորություններով (տե՛ս Զ.Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2007, էջ 119):

<sup>6</sup> Հմմտ. О.М.Неведомская, Компаративные фразеологизмы немецкого языка в сопоставлении с русскими, (АКД), Ленинград, ЛГУ, 1973, էջ 8, Н.В.Соколова, Варианты узуальных фразеологизмов в произведениях Ю.Бондарева, Сб. Проблема тождества фразеологических единиц, Челябинск, ЧГПИ, 1990, էջ 2-3:

Երբեմն նշվում է իմաստային առնչակցություն չունեցող բառային փոփոխակների առկայությունը (տե՛ս В.М.Мокиенко, նշվ. աշխ., էջ 36, Н.В. Соколова, նշվ. աշխ., էջ 2-3):

<sup>7</sup> **Որպէս և իբրև** սպասարկու բառերը գրաբարում հիմնականում հանդես են գալիս որպէս հայցական, իսկ **գունակ** և **օրինակ** բառերը՝ սեռական խնդիրներով նախադրություններ (Նախադրությունների (հետադրությունների) մասին հանգամանորեն տե՛ս Ա.Բագրատունի, Հայերեն քերականություն ի պէտս

կարկոտյ հարեալք (հանկարծակի, անսպասելիորեն), **որպէս // իբրև** գոչխար **ի սպանումն // ի սպանդ** (խոնարհաբար, ենթարկվելով):

Հետևյալ ԿԿ-ներում բառային փոփոխակներն արտահայտում են իմաստային միևնույն դիտվածքի (դաշտի) հասկացություններ կամ միևնույն հատկության (որակի) կրողներն են. **արեան // մահու** չափ (խիստ, սաստիկ, շատ-շատ), ի ձեռն **հաւատոց // հրեշտակաց** (հրաշքով):

Հմմտ. մակբայական ԿԿ-ների բառային (հոմանշային) տարբերակները խոսքային միջավայրում. Իսկ ի միւսում աւուրն **ընդ այգն ընդ առաւօտն** հրամայեաց արկանել ծիրանիս, եւ զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական ... (Ագաթ., Դ):

Գրաբարի մակբայական ԿԿ-ներում հանդիպում են նաև *բառային-բառակազմական փոփոխակներ*. ընդ **այգն // ընդ այգսայգոյն** (լուսադեմին, լուսաբացին), **վայր // վայրիկ** մի (մի պահ, մի փոքր ժամանակ), առ **ժամանակ** մի // առ **ժամայն** (միառժամանակ):

Հմմտ. այդ կարգի տարբերակները հետևյալ համատեքստերում. Արդ եկաց բազմեալ ուռուցեալ **վայր մի**, իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ.... (Բուզ., 4, ԾԴ): **Վայրիկ մի** ևս, սակաւիկ մի ևս կալցիս ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւն (ն.տ., ԾԵ): Յետ կատարելոյ փորձութեանն ի բաց եկաց ի նմանէ սատանայ **առ ժամանակ մի** (Ղեւ. 81): Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով **առ ժամայն** լուսաւորեալ և թևամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, .... հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնն (Կոր., 36):

**Բ. Քերականական տարբերակներ:** Մակբայական ԿԿ-ներում առանձնացվում են այդօրինակ ձևաբանական և շարահյուսական գուգաձևություններ: Ըստ որում, այդ կարգի փոփոխակները հաճախադեպ են գրաբարի մակբայական ԿԿ-ներում<sup>8</sup>:

---

զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 119, Մ.Սեբաստացի, Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 206, Ա.Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 1976, էջ 261, Գ.Բ.Թոսունյան, Գրաբարի նախադրությունները (V-XI դդ.), Լեզվի և ոճի հարցեր, VII, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 24, Լ.Մ.Խաչատրյան, Գ.Բ.Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., «Ձանգակ» հրատ., 2004, էջ 278:

<sup>8</sup> Ընդհանրապես մակբայական գուգաձևությունների մասին տե՛ս Ա.Բագրատունի, նշվ. աշխ., էջ 224-229, Մ.Չամչեանց, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1843, էջ 134-135:

Խնդրո առարկա ԿԿ-ների *քերականական-ձևաբանական տարբերակայնությունը* գրաբարում աղերսվում է հիմնականում հոլովի և թվի զուգաձևության հետ:

1. Մակբայական ԿԿ-ների կառուցվածքային դիտվածքում առկա գոյականական (այլև ածականական և դերանվանական) բաղադրիչների տարբեր հոլովաձևերով են հանդես գալիս հետևյալ տարբերակները. **ի տեղիս տեղիս** // **ի տեղաց տեղաց** (զանազան տեղերում), **ի մասնե** // **մասամբ ինչ** // **~իիք** (մասնակիորեն), յետ **սակաւ** // **սակաւու** միոյ (փոքր-ինչ հետո), **սկամա կամս** // **կամօք** (հարկադրաբար, իր կամքին հակառակ կերպով), ըստ **կամս** // **կամաց**, ըստ **միտս** // **մտաց** (ուզածի պես), **արեան** // **արեամբ** չափ, **մահու** // **մահուամբ** չափ (չափազանց, սաստիկ, շատ-շատ) և այլն:

Հմտ. **Ըստ կամս** դիրություն անձանց մերոց գնասցուք (Ագաթ., 49): Ոչ գոք թողուցու **ըստ** անձանց **կամս** գնալ (ն. տ., 285): Այնուհետև **ըստ կամաց** չարութեանն իւրոյ գնացեալ լինէր նա (Բուզ., 109): Այնուհետև **ըստ կամաց** գնային (ն. տ., 30):

Առանձին դեպքերում մակբայական ԿԿ-ների տարբերակներն ստեղծվում են նախդիր-նախադրությունների փոփոխություններով պայմանավորված հոլովական տարաձևությամբ. **ի** // **ըստ կամաց** (իր կամքով՝ ցանկությամբ), **ոչ** // **ոչ ըստ կամաց** (իր կամքին հակառակ), **առ** // **ըստ հարկի** (հարկադրված, բռնի կերպով), **ժամ ի** // **ընդ** // **քան (զ) ժամ** (երբեմն-երբեմն, պահ առ պահ):

Մակբայական տարբերակային ԿԿ-ներում գոյականական բաղադրիչները կարող են հանդես գալ որոշյալ-անորոշ ձևերով: Ըստ որում, նրանցում այդ կարգի (որոշյալ-անորոշ) հակադրությունն իմաստային և քերականական առումներով չեզոք է:

Հմտ. ըստ **կամաց** // **կամացն** (ուզածի պես, իր կամքով), իբրև **ծառայ** // **զծառայ** (ստրկամտորեն, հնազանդվելով), իբրև **ճրագ** // **զճրագ** (լուսավորելով):

Հմտ. Վարէին գնա **ըստ կամաց** իւրեանց (Բուզ., 132): Ուսոյց ամենեցուն **ըստ** իւրոց **կամացն** գնալ (Ագաթ., 417):

2. Հին հայերենի մակբայական ԿԿ-ներում ձևաբանական տարբերակներ են ստեղծվում գոյականական (կամ փոխանվանաբար գործածված) բաղադրիչների եզակի-հոգնակի ձևերով: Այդօրինակ երկձևություններում, սակայն, թվի քերականական կարգի նշանակությունը չի պահպանվում. եզակի-հոգնակի ձևերն իմաստային և քերականական առումներով չեզոք են մնում:

Հմտ. իբրև **գոչխար // գոչխարս** (խոնարհաբար, ենթարկվելով), որպես **ծնող // ծնողք** (հոգատարությամբ, սրտացավորեն), **ազգէ յազգ // ազգաց յազգս** (ցեղից ցեղ, սերնդեսերունդ)<sup>9</sup>, **ի սրտէ // ի սրտից** (սիրով), **ի սկզբանէ // ի սկզբանց** (հիմքից, սկզբից), ընդ **առաւօտն // առաւօտս** (առավոտյան), ըստ **արժանի // արժանեաց** (արժանիքի համաձայն), ըստ **օրինին // օրինացն** (օրենքի համաձայն, ընդունված կերպով), ըստ **կամի // կամաց**, ըստ **մտի // մտաց** (կամքի՝ մտադրության համաձայն)<sup>10</sup>:

Հմտ. **Ըստ օրինին** ծննդականաց ծնաւ զանդրանիկն (Ագաթ., 196): Եւ նա ետ բերել ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից աղ (Բուգ., 139): Եւ եղև նա ըստ մտի թագաւորին Պարսից (ն. տ., 136): Սկսան գնալ ըստ իրեանց մտաց (ն. տ., 223):

Ուշագրավ հոլովական (հոլովչային) և թվային զուգաձևություն է ցուցաբերում **ընդ երկնաւ // երկնիք** (երկնքի տակ, աշխարհում, կյանքում) տարբերակային ԿԿ-ն:

Հետևյալ ԿԿ-ները դրսևորում են բառային և ձևաբանական (թվի) տարբերակայնություն. **հաճ եւ հաւան // հաւանք եւ հաւասարք** (միաբանված, սիրով, խաղաղությամբ), օրինակ իմն **չարագոյն զագանի** ինչ // **պիղծ զագանաց** օրինակ (անհոգի կերպով, դաժանաբար), ուշի **ուշով // ~ մտօք** (ամբողջ ուշադրությամբ)<sup>11</sup>:

Մակբայական ԿԿ-ների բառային-բառակազմական և ձևաբանական (թվի) երկձևություններ են իբրև **զօտար ոք // զօտարտիս** (օտարի պես, անհոգի կերպով), իբրև **զայր // զքաջայրս** (խիզախորեն, քաջաբար) փոփոխակները:

Հմտ. Պնդեա՝ **իբրև այր** զմէջ քո (Ագաթ., 168): **Իբրև զքաջայրս՝** զառաջիկայ զօգտաբեր շքեղաբար հրահանգս մանկանցն հոգացեալ լնուին (Փարպ., 110):

<sup>9</sup> **Ազգ** բաղադրիչի կրկնությամբ կազմված ԿԿ-ների մասին հանգամանորեն տե՛ս Լ.Մ.Խաչատրյան, Գրաբարի ուսումնական բառարան, Ե., «Ձանգակ» հրատ., 2013, էջ 13:

<sup>10</sup> Ինչպես վերը բերված կառույցները, այնպես էլ այլ նախդիր-նախադրություններով ձևավորված մի շարք կապակցություններ գրաբարում համարվել են ոճեր կամ ոճական արտահայտություններ, որոնք «իրենց տարբեր իմաստներով հնարավորություն են ընձեռել բազմապիսի հասկացություններ առանց որևէ դժվարության արտահայտելու համար» (տե՛ս Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., Եր. համալս. հրատ., 1981, էջ 137-138):

<sup>11</sup> **Ուշ** բաղադրիչով կազմված այս և այլ ԿԿ-ների մասին տե՛ս Լ.Մ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 304:

Մեզ հետաքրքրող ԿԿ-ների շրջանակներում *քերականական-շարահյուսական գուրգռություններն* առաջանում են հիմնականում բաղադրիչների շարադասական փոփոխություններով:

Հմտ. **զգիշերն ամենայն եւ գտին ամենայն // գտին ամենայն եւ զգիշերն ամենայն, ի զիշերի եւ ի տուրնջեան // ի տուրնջեան (// տուրնջեան) եւ ի զիշերի** (զիշեր-ցերեկ, շարունակ), **օրինակ զայս // զայս օրինակ** (այս օրինակով՝ ձևով)<sup>12</sup>, **յական թոթափել // ի թոթափել ական** (մի ակնթարթում):

Միաժամանակ բառային, ձևաբանական (հոլովաձևային) և շարադասական տարբերակայնություն են ցուցաբերում **իբրև զԲարելոնի հնոցին բոց // իբրև զհուր հնոցին ի Բարբիլոն** (չափազանց՝ սաստիկ եռավով, խիստ բորբոքված վիճակում) ԿԿ-ները:

Հմտ. Բորբոքեցաւ **իբրև զհուր հնոցին ի Բարբիլոն**, մինչև իւրքն իսկ անդէն ևս իբրև զքաղղէացիսն այրեցեալ լինէին (Եղ., 13): Որք **իբրև զԲարելոնի հնոցին բոց** տեսանէին բարձրացեալ զամբարշտութեանն կիզումն (Փարս., 112):

Ձևաբանական (թվային, այլև հոլովական) և շարահյուսական (շարադասական) երկձևություն են ցուցաբերում հետևյալ ԿԿ-ները. **ժամ ընդ ժամ // ընդ ժամս ժամս** (երբեմն-երբեմն), **(թէ) ի զիշերի եւ (թէ) ի տուրնջեան // ի տուէ եւ ի զիշերի** (մշտապես, շարունակ):

Հմտ. Արդ յո՛ր կողմ և նոքա ի պատերազմ կացին **թէ ի զիշերի և թէ ի տուրնջեան**, սոքա վառեալք և պատրաստ անդր գտանէին (Լաստ., ԺԶ): Զայն պաշտօնէիցն **ի տուէ եւ ի զիշերի** անհատ էին ի սուրբ սաղմոսն (Եղ., 68):

ԿԿ-ների շարադասական տարբերակները, սակայն, այս կամ այն բաղադրիչի շեշտման, ընդգծման հետ կապված չեն:

**Գ. Քանակային տարբերակներ:** Մակբայական ԿԿ-ների այդ կարգի փոփոխակները հանդես են գալիս նրանց համառոտ և ծավալուն կառուցատիպերով: ԿԿ-ների ձևը փոխվում է մասնակիորեն, իսկ բովանդակությունը մնում է գրեթե նույնական:

Գրաբարի մակբայական ԿԿ-ներում հիմնականում առկա են ընդհանուրի և մասնավորի (վերացականի ու կոնկրետի) փոխհարաբերություններ դրսևորող տարբերակներ<sup>13</sup>:

<sup>12</sup> Հմտ. **զօրինակ զայս** ԿԿ-ն վերը բերված կապակցությունների նկատմամբ տարբերակայնություն է դրսևորում **զ** նախորդի կրկնությամբ:

<sup>13</sup> Մասնագիտական գրականության մեջ ԿԿ-ների քանակային տարբերակներում առանձնացվում են հատկապես բաղադրիչների քանակային կազմի կրճատումով ի հայտ եկող փոփոխակները (տե՛ս Լ.Դ.Игнатъева, Количественное варьирование во

Հմմտ. առ ժամանակ մի // մինչև առ ժամանակ մի (միառժամանակ), ի (// *յամենայն*) սրտէ (սիրով), գոհի(ն) (// ~ *ամենայն*) եւ զգիշեր(ն) (// *ամենայն*) (շարունակ, մշտապէս), իբրև զհուր // ~ *հնոցին ի Բաբելոն*, իբրև // *քան զհնոց(ն) // ~ Բաբելոնի* (խիստ՝ սաստիկ բորբոքվելով՝ եռալով, ամենակործան՝ ահարկու կերպով)<sup>14</sup>, իբրև զօձ // ~ *թունաւոր* (խիստ՝ սաստիկ թունաւոր կերպով, չարակամորեն), իբրև զարծաթ // ~ *ի բովս* (խիստ թրծվելով՝ մաքրվելով), իբրև զոչխար // ~ *ի սպանդ // ~ ի սպանումն* (խոնարհաբար, հնազանդորեն), որպէս մեղուս // ~ *ընդդէմ ծաղկանց* (համառորեն հարձակվելով) և այլն:

Հմմտ. Եմուտ իբրև զօձ ի մէջ ամրացելոցն (Եղ., 91): Մերթ շանթեր գալարեր իբրև զօձ թունաւոր, մերթ պարզեր գոչեր իբրև զառիւծ գայրացեալ (ն. տ., 16): Ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայսն ձախակողմեանն՝ որք կապեալ էին ի կռապաշտութեանն անլուծանելի հանգուցիք, վառեալք և ջեռեալք իբրև զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցոյ (ն. տ., 8): Նիւթ նոցա անմտութեանն ... բորբոքեցէք առաւել քան զհնոցն Բաբելոնի (Խոր., 248):

Մակրայական ԿԿ-ների քանակային տարբերակներ կարող են առաջանալ նաև տվյալ կապակցության՝ հեղինակային տարբեր մեկնաբանությունների հետևանքով<sup>15</sup>:

Հմմտ. օրինակ իմն որպէս փոթորիկ // ~ *յանտառէ տերևաթափ* (խիստ արագ, ուժգին թափով), նման արծաթոյն // ~ *ընդ մատնութեանն իսմայէլացի վաճառականացն* (խիստ թրծվելով, փորձության ենթարկվելով), իբրև զոչխար(ս) // ~ *ի մէջ սպականիչ գալոց* (խոնարհաբար, հնազանդվելով, ենթարկվելով) և այլն:

Հմմտ. վերը բերված տարբերակային ԿԿ-ների երկրորդ եզրում առկա կառույցները (հեղինակային ծավալումները) խոսքային միջավայրում. **Օրինակ իմն որպէս փոթորիկ *յանտառէ տերևաթափ***, այնպէս երազ

фразеологических единицах с компонентом “как”, “хоть”, “если”, Сб. Проблема тождества фразеологических единиц, էջ 81):

<sup>14</sup> Հմմտ. մասի և ամբողջի փոխհարաբերություն են դրսևորում տարբերակային հետևյալ ԿԿ-ները. իբրև // *քան զհնոց(ն) Բաբելոնի // իբրև զԲաբելոնի հնոցին բոց*:

Ուշագրավ է, որ խնդրո առարկա ԿԿ-ների տարբերակներում հանդիպում են հնչյունական փոփոխությունների հետևանքով առաջացած տարատեսակություններ, հմմտ. *քան զհնոցն Բաբելոնի // ~ Բաբելոնի* (ահարկու կերպով), *ի բնէ // ի բնւէ* (հիմքից, հենց սկզբից):

<sup>15</sup> Ընդհանրապես ԿԿ-ների՝ հեղինակային զանազան միջամտությունների հետևանքով ի հայտ եկող կառուցվածքային տարբերակների մասին տե՛ս В.Т.Бондаренко, Семантика устойчивой фразы в речи. Тождество и различие, Сб. Проблема тождества фразеологических единиц, էջ 145-146.

յերիվարացն առեալ նիզակօք՝ դի ցուրտ յերկիր ընկենուին (Խոր., 303): Պատիւս և մեծութիւնս, **նման արծաթոյն ... ընդ մատնութեանն իսմայէլացի վաճառականացն** (Փարպ., 25): Եւ տայր ի ձեռս նորա զժողովուրդս տեառն **իբրև զչխարս ի մէջ ապականիչ գայլոց** (Ղեւ., 166):

Այսպիսով՝

1. Մակբայական ԿԿ-ները բառակապակցության ձևավորումով և անվանողական (ոչ հաղորդակցական) արժեքով հանդես եկող պատրաստի վերարտադրելի կառույցներ են, որոնց բաղադրիչները միասնաբար արտահայտում են վերաիմաստավորված կամ ոչ փոխաբերական նշանակություններ:

2. Ինչպես ԿԿ-ներին ընդհանրապես, այնպես էլ հին հայերենի մակբայական ԿԿ-ներին մասնավորապես բնորոշ է կառուցվածքային տարբերակներ ունենալը:

3. Գրաբարի մակբայական ԿԿ-ների տարբերակները նույն կառույցների փոփոխակներն են՝ բառերի, բառաձևերի, շարահյուսական կառուցվածքի, բաղադրիչների քանակային և հնչյունական մասնակի փոփոխություններով: Այդօրինակ ԿԿ-ների յուրաքանչյուր զույգում կամ շարքում կարևորվում է իմաստային նույնականության պահպանումը:

4. Հինհայերենյան մակբայական ԿԿ-ներում առկա են թե՛ հոմանշային (միջբառությային իմաստային) հարաբերություններ դրսևորող և թե՛ իմաստային միևնույն դաշտի հասկացություններ արտահայտող բաղադրիչների փոփոխակումներով ձևավորված բառային տարբերակներ:

5. Գրաբարի մակբայական ԿԿ-ներում հաճախադեպ են քերականական (ձևաբանական և շարահյուսական) զուգաձևությունները:

Քննվող ԿԿ-ներում ձևաբանական փոփոխակումը կապված է հիմնականում հոլովի և թվի զուգաձևությունների հետ:

Խնդրո առարկա ԿԿ-ների շարահյուսական երկձևությունները մեծ մասամբ ձևավորվում են բաղադրիչների շարադասական փոփոխություններով:

6. Մակբայական ԿԿ-ների քանակային տարբերակներն առաջանում են նրանց համառոտ և ծավալուն կազմերի դեպքում: Քանակային կազմով փոփոխվող ԿԿ-ները, սակայն, պահպանում են իմաստային նույնականությունը:

7. Տարբերակներով հանդես եկող ԿԿ-ն մտնում է լեզվի մեջ որպես իր տարբերակների միագումարություն:

ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տփղիս, 1909:  
Բուզ. - Փաստոսի Բուզանդացոյ Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:  
Եղ. - Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957:  
Լաստ. - Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցոյ, Երևան, 1963:  
Խոբ. - Մովսիսի Խորենացոյ Պատմություն Հայոց, Տփղիս, 1913:  
Կոր. - Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:  
Ղե. - Ղեւոնդեայ վարդապետի Պատմություն, Ս. Պետերբուրգ, 1887:  
Փարպ. - Ղազարայ Փարպեցոյ Պատմություն Հայոց, Տփղիս, 1904:

**Լ. Ավետիսյան**

**Գրաբարի մակբայական կայուն կապակցությունների տարբերակները  
Ամփոփում**

Գրաբարի մակբայական կայուն կապակցությունները (ԿԿ) ունեն գանազան տարբերակներ. բառային (որպէս//իբրև ի կարկտոյ հարեալք, ի ձեռն հաւատոց // հրեշտակաց), քերականական (ձևաբանական - արեան // արեամբ չափ, ըստ կամի // կամաց, ընդ երկնաւ // երկնիւք, շարահյոյսական - զգիշերն ամենայն եւ զտիւն ամենայն // զտիւն ամենայն եւ զգիշերն ամենայն, իբրև զԲաբելոնի հնոցին բոց // իբրև զհուր հնոցին ի Բաբելոն) եւ քանակային (առ ժամանակ մի // մինչև ~, իբրև զօձ // ~ թունաւոր):

Տարբերակային ԿԿ-ն մտնում է լեզվի մեջ որպէս իր տարբերակների միագումարություն:

**Лилит Аветисян**

**Варианты адвербальных устойчивых сочетаний грабара  
Резюме**

Адвербальные устойчивые сочетания (УС) грабара имеют различные варианты: лексические (որպէս // իբրև ի կարկտոյ հարեալք, ի ձեռն հաւատոց // հրեշտակաց), грамматические (морфологические – արեան // արեամբ չափ, ըստ կամի // կամաց, ընդ երկնաւ // երկնիւք, синтаксические – զգիշերն ամենայն եւ զտիւն ամենայն // զտիւն ամենայն եւ զգիշերն ամենայն, իբրև զԲաբելոնի հնոցին բոց // իբրև զհուր հնոցին ի Բաբելոն) и количественные (квантитативные – առ ժամանակ մի // մինչև ~, իբրև զօձ // ~ թունաւոր).

Вариантная УС входит в язык как совокупность своих вариантов.

**The variants of adverbial stable compounds of old Armenian**

**Summary**

The adverbial stable compounds (SC) of old Armenian have different variants: lexical (որպէս // իբրև ի կարկտոյ հարեալք, ի ձեռն հաւատոց // հրեշտակաց), grammatical (morphological – արեան // արեամբ չափ, ըստ կամի // կամաց, ընդ երկնաւ // երկնիք, syntactical – զգիշերն ամենայն եւ գտին ամենայն // գտին ամենայն եւ զգիշերն ամենայն, իբրև զԲաբելոնի հնոցին բոց // իբրև զհուր հնոցին ի Բաբելոն) and quantitative – առ ժամանակ մի // մինչև ~, իբրև զօձ // ~ թունաւոր.

She variant SC enters into the lang

**Բանալի բառեր եւ արտահայտություններ.** Հոմանշություն, տարբերակային ձեւ, սովորական դարձվածք, հոմանշային շարք, բառային հոմանշություն, դարձվածքային հոմանշություն, համեմատական վերլուծություն, ռուսերեն եւ հայերեն համարժեք սովորական դարձվածքներ:

**Ключевые слова и выражения:** синонимия, вариантная форма, соматический фразеологизм, синонимический ряд, лексическая синонимия, фразеологическая синонимия, сопоставительный анализ, русские и армянские эквивалентные соматические фразеологизмы.

**Key words and expressions:** synonymy, variant form, somatic idiom, synonymous series, dominant idiom, lexical synonymy, comparative analysis, Russian and Armenian equivalent somatic idioms.

Одним из важнейших свойств фразеологизмов принято считать их воспроизводимость. При этом следует обратить внимание на тот факт, что фразеологизмы не создаются в процессе общения, а воспроизводятся как готовые целостные единицы. Свойство воспроизводимости фразеологизмов тесно связано со всеми остальными их характерными признаками: устойчивостью структуры, целостностью семантики, метафоричностью и т.д.

Наши наблюдения над исследуемым материалом позволяют заметить, что, помимо отмеченных известных признаков, фразеологизмы в большинстве своем отличаются также непроницаемостью структуры. Например, фразеологизмы «глазом не моргнуть» (*աչքը չթախրած*), «золотое сердце» (*«նույն սիրտ»*), «ветер в голове» (*«գլխուի քամի է»*), «бок о бок» (*«կողք կողքի»*), «краем уха» (*«սկիանջի ծայրով»*) и другие не допускают вклинивания в свой компонентный состав новых компонентов. Однако в ряде других случаев такое вклинивание не исключается. Сравним, например:

*своими глазами – своими собственными глазами (իր աչքերով – իր սեփական աչքերով)*

*не верить ушам – не верить собственным ушам (սկիանջներին չհավատալ – սեփական սկիանջներին չհավատալ)*

Еще одним характерным свойством фразеологических единиц обоих языков является их способность к образованию синонимических и

вариантных форм. При этом следует отметить, что указанная способность присуща не всем фразеологизмам, но обладает заметной частотностью.

Относительно вариантных форм фразеологизмов отметим, что вариантный фразеологизм полностью идентичен основному фразеологизму в лексико-грамматическом и семантическом планах и выступает всего лишь как одна из его разновидностей (возможно, с добавлением, устранением или заменой некоторых компонентов лексического окружения последнего). Критерием тождественности фразеологизмов является сохранение присущего им структурно-семантического состава, и только при наличии этого условия можно говорить о вариантности.

Проиллюстрируем это на конкретных примерах.

а) Появление вариантной формы фразеологизма за счет вклинивания в лексическое окружение фразеологизма дополнительного (факультативного) компонента:

*видеть своими глазами – видеть своими /собственными/ глазами (իր աչքերով տեսնել – իր /սեփական/ աչքերով տեսնել); находиться под /самым/ носом (քթի տակ գտնվել – /հենց/ քթի տակ գտնվել); знать свое дело – /хорошо/ знать свое дело (իր գործն իմանալ – իր գործը /լավ/ իմանալ); умывать руки – /полностью/ умывать руки (ձեռքերը լվանալ – ձեռքերը /լրիվ/ լվանալ); протянуть руку – протянуть руку /помощи/ (ձեռք մեկնել – /օգնություն/ ձեռք մեկնել) и т.п.*

б) Образование вариантной формы вследствие сокращения (сжатия) компонентного состава фразеологизма:

*сердце разрывается на части – сердце разрывается (սիրտը կտրր- կտրր լինել – սիրտը սլալթել); предлагать руку и сердце – предлагать руку (эквивалентный армянский фразеологизм не имеет вариантной формы и обычно употребляется именно усеченная форма: ձեռքն առաջարկել).*

в) Образование нового фразеологизма в результате замены одного из его компонентов синонимичным словом:

*вылететь из головы – выйти из головы (գլխից դուրս թռչել – գլխից դուրս գալ); вставить с левой ноги – вставить не с той ноги (ձախ ոտքից փրթնանալ – փրթն ոտքից փրթնանալ); давать волю рукам – давать волю кулакам (ձեռքերին ազատություն տալ – բռունցքներին ազատություն տալ); висеть на волоске – висеть на ниточке (մազից կախված լինել – թելից կախված լինել) и т.д.*

Наличие в языке фразеологических вариантов, на наш взгляд, во многом облегчает построение речи и сам процесс речевого общения, поскольку позволяет сделать свободный выбор среди существующих вариантов одного и того же фразеологизма.

С понятием вариантности настолько тесно переплетается другое распространенное явление во фразеологии – синонимия, что некоторые ученые порой склонны отождествлять эти явления. Однако вариантность и синонимия в сфере фразеологии сходны лишь на первый взгляд, а при более глубоком анализе они в корне отличаются друг от друга<sup>1</sup>. Если вариантность допускает употребление двух фразеологизмов с определенными модификациями, о которых речь шла выше, то фразеологические синонимы могут отличаться как по своей структуре и составу, так и семантико-стилистическими нюансами., при этом сохраняя неизменной общую семантику, внутреннюю форму соответствующего фразеологизма.

Фразеологическая синонимия, как и лексическая, может быть полной и частичной, т.е. в одних случаях синонимичные фразеологизмы полностью видоизменяемы, в других – различаются оттенками значений. Анализ синонимичных фразеологизмов показывает, что их полная и частичная взаимозаменяемость в определенном смысле обусловлены лексическим окружением последних. Так, в частности, стержневой центр большинства рассматриваемых глагольных фразеологизмов связан с конкретными глаголами, которые и привносят дифференцирующие оттенки в общую семантику соответствующего фразеологизма в целом.

Сравним, например, фразеологизмы «*во все лопатки*»(սիւրբղ թափիւմ) и «*в мгновение ока*»(սի անշրթաւի). Если рассматривать эти фразеологизмы в представленной усеченной форме, без глаголов-сопроводителей, то синонимичность их очевидна: оба фразеологизма указывают на быстроту действия и соотносятся с одинаковым наречием «быстро». При попытке же восстановления привычного глагольного окружения этих фразеологизмов выясняется, что синонимия здесь ограничена рамками видового употребления глагола. Оба отмеченных фразеологизма обычно сочетаются с глаголами движения «бежать», «мчаться», «скакать», но если фразеологизм «*во все лопатки*» может присоединять только форму несовершенного вида этих глаголов, то «*в мгновение ока*», наоборот, использует лишь форму совершенного вида тех же глаголов. Дело в том, что фразеологизм «*во все лопатки*» хоть и означает быстрое движение, но не ограничивает рамки этого движения; фразеологизм же «*в мгновение ока*» четко очерчивает предел данного быстрого движения: это то минимально короткое время, за которое

<sup>1</sup> Здесь заметна определенная связь с лексическим уровнем языка. Так, вариант слова (жаргон, арго, диалект и т.д.) вовсе не идентичен его синониму. Сравним, например: глаз, око, моргало.



**Литература**

1. Мокиенко В.М. Славянская фразеология. М., 1980.
2. Шанский Н.М. Фразеология современного русского языка. М., 1986.

**Ն. Բաղրամյան**

**Դարձվածքների հոմանշային և տարբերակային ձևերի օգտագործման տարբերությունը ռուսերենում և հայերենում**  
**Ամփոփում**

Հոդվածում դիտարկվում են սոմատիկ դարձվածքների հոմանշությանը առնչվող որոշ հարցեր: Չուզահետաքար վերլուծվում են նշված խմբի դարձվածքների տարբերակային ձևերը, նաև կատարվում է վերջիններիս տարբերակումը հոմանշային ձևերից: Որոշակի տեղ է հատկացվում սոմատիկ դարձվածքների հոմանշային շարքերի ուսումնասիրությանը, ինչպես նաև դարձվածքային և բառային միավորների հոմանշության խնդիրներին:

**Н. Баграмян**

**Различия в употреблении синонимичных и вариантных форм фразеологизмов в русском и армянском языках**  
**Резюме**

В статье рассматриваются некоторые вопросы синонимии соматических фразеологизмов. Параллельно анализируются варианты формы указанной группы, а также проводится дифференциация последних от синонимичных форм. Определенное место уделяется исследованию синонимических рядов соматических фразеологизмов и вопросам фразеологической и лексической синонимии.

**N. Bakhramyan**

**Distinctions in using the synonymic and variant forms of idioms in Russian and Armenian languages**  
**Summary**

The article considers some of the issues synonyms of somatic idioms. There also analyses the variant forms of the specified group of idioms and their distinction from synonymous form. Particular attention is given to the study of synonymous series somatic idioms, as well as issues of idiomatic and lexical synonymy. The article presents a comparative analysis of Russian and Armenian equivalent somatic idioms which leads to a number of important conclusions.

ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՑԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ  
գերմանական լեզուների ամբիոնի դասախոս  
ԵՊՀ ասպիրանտ  
ՀՏԴ 811

ԱԾԱԿԱՆ+ԳՈՑԱԿԱՆ ԿԱՂԱԿՈՒՄՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ  
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** բառակազմություն, բառաբարդում, բառածանցում, բառակապակցություն, կաղապար, ածական+գոյական, արտակենտրոն բարդություն, կառուցվածքային, իմաստային, շարահյուսական:

**Ключевые слова и выражения:** словообразование, словосложение, аффиксация, словосочетание, сложное слово, словосочетание, модель, прилагательное+существительное, экзоцентричное сложное слово, структурный, семантический, синтаксический.

**Key words and expressions:** word-formation, compounding, affixation, phrase, model, compound word, pattern, adjective+noun, exocentric compound, structural, semantic, syntactic.

Ժամանակակից լեզվաբանությունը մեծապես կարևորում է լեզուների զուգադրական և տիպաբանական ուսումնասիրությունները: Այս կամ այն լեզվի կառուցվածքային, գործառական խնդիրներն առավել արդյունավետ կարող են ուսումնասիրվել հենց տիպաբանության դիրքերից: Հայերենի և անգլերենի զուգադրահամեմատական քննությունը ցույց է տալիս, որ երկու լեզուներում շատ են բառակազմական համակարգերի միջև եղած ընդհանրությունները, իհարկե, կան նաև տարբերություններ, սակայն գերակշռող են ընդհանրությունները:

Սույն հոդվածի նպատակն է զուգադրել հայերենի և անգլերենի ածական+գոյական կաղապարով համադրական բարդությունները՝ քննելով դրանք ըստ բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերության և ըստ հնարավորին ներկայացնելով դրանց կառուցվածքային ու իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները երկու լեզուներում: Ածական+գոյական կաղապարով բարդությունները գործառական մեծ բեռնվածություն ունեն հայերենում և անգլերենում: Հայերենում այս կաղապարով բարդություններից հիմնականում ստացվում են *գոյականներ* և *ածականներ*՝ բաղադրիչների ստորադասական հարաբերությամբ: Տարբերակվում են ինչպես հոդակապավոր, այնպես էլ անհոդակապ կառույցներ:

**Հոդակապավոր** են, օրինակ՝ հետևյալ բարդությունները՝ *խաժաքար, խառնալեզու, մանրաբջիջ, մանրավեպ, մեծաբուրդ, մերկամարմին, մնջաթատրոն, նորակնունք, ուրախադեմ, չարագույժ, ջերմամարտկոց, սևազգեստ, սրալեզու, սրբակենցաղ, վաղաժամ, տխրատեսք, ցածրատեսակ, փափկաբուրդ, փոքրաթիվ* և այլն:

**Անհոդակապ** են, օրինակ՝ *երկարագի, թթխմոր, ծանրոտք, կեղծամ, կեղծանուն, կիսանդրի, հաղթարշավ, հարթոլորտ, հարթուղի, մանրաշխարհ, մեծաշխարհ, մեծուկոր, նրբերանգ, նրբուղի, ջերմաղբյուր, սնբախտ* և այլն:

Բաղադրիչների միջև շարահյուսական կապի տեսանկյունից ածական+գոյական կաղապարով բարդությունները մեծ մասամբ արտահայտում են որոշիչ-որոշյալի ստորադասական հարաբերություն, ինչպես օրինակ՝ *մեծարժեք, նորանշան, նորատարագ, նորիմաստ, նրբաթիթեղ, նրբանկար, պնդամկան, պնդաքար, պրկախտ, ջերմաջուր, սևաբուրդ, սևաթիկնոց, սևամորթ, սրբերգ, փոքրաթիվ, քարսիրտ, քնքշաթրթիռ* և այլն: Սրանց առաջին բաղադրիչը մասնավորեցնում, կոնկրետացնում է երկրորդի իմաստը՝ մատնանշելով դրա այս կամ այն հատկանիշը:

Գ. Ջահուկյանը գործառական առումով ստորադասական բարդությունների երկու տեսակ է տարբերում՝ *համագործառական (համակաղապարային)* և *փոխգործառական (փոխկաղապարային)*<sup>1</sup>:

Ածական+գոյական կաղապարի դեպքում, երբ որպես արդյունք ստացվում է ածական, գործ ունենք փոխգործառական կամ փոխկաղապարային բարդության հետ, իսկ երբ ստացվում է գոյական, ապա ունենք համագործառական կամ համակաղապարային բարդություն:

<sup>1</sup> Համակաղապարային կազմությունների դեպքում բարդությունն ունի խոսքիմասային նույն արժեքը, ինչ նրա հիմքային (իմա՝ վերջին) բաղադրիչը, ինչպես, օրինակ՝ մայրուղի, իսկ փոխկաղապարային բարդությունների դեպքում այն ունի դերբայական ածանցի կամ դերբայի լրացուցիչ գործառական արժեք, ինչպես՝ կարմրահեր՝ «կարմիր մազեր ունեցող»: Ըստ այդմ՝ նա համակաղապարային երկբաղադրիչ ստորադասական կազմությունների համար հնարավոր է համարում 6 տիպ՝ *ածական+գոյական գոյական, թվական + գոյական գոյական, մակբայ + ածական ածական, մակբայ + թվական թվական, լրացական դերանուն+գոյական գոյական, մակլրացական դերանուն+ածական ածական*, որոնցից էլ հայերենում գործածական է համարում միայն առաջին տիպը, իսկ մնացած տիպերը, ըստ նրա, կամ չեն հանդիպում, կամ էլ հազվադեպ են հանդիպում (տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 220):

Առաջին հերթին որպես այդ կաղապարի արդյունք ստացվում են գոյականներ, սակայն ավելի շատ են ածականները: Այսպես, այս կաղապարից ստացվում են.

ա) **գոյականներ**, օրինակ՝ *բարձրաշենք, գեղարվեստ, դեղնաներկ, զագրաբան, լիալուսին, խաժաքար, խառնագանգված, կեղտաբույն, կեղտահոր, կիսաթաթ\*, կիսաթախտ, կիսաճամփա, ճկակահույք, մեկուսաբանտ, մնջախաղ, ոսկեղար, ոսկեղրվագ, փոքրաքանդակ* և այլն,

բ) **ածականներ**, օրինակ՝ *ահեղադեն, բազմաժանր, բարձրառաստաղ, գեղածաղիկ, երկարադունչ, զվարթաձայն, թավասաղարթ, լայնաբիբ, լայնաշրջանակ, լրջախոտ, խաղաղասյուրք, խռովահույզ, ծանրաքարշ, կարկաչախոտ, համրաձայն, հավերժալույս, հավերժահուշ, մեծարժեք, նմանահանգ, նմանահնչուն, նմանասեռ, նմանավերջ* և այլն:

Մ. Աբեղյանը ածականի և գոյականի շարահյուսական կապակցությամբ առաջ եկած *մեծատուն* բառի վերաբերյալ գրում է, որ սկզբնապես այն նշանակել է «մեծ տուն», սակայն հետո նշանակության փոփոխությամբ դարձել է *մեծ տուն ունեցող*, ինչպես որ *ծուրբերան, ծուրքիթ* բարդությունները, որոնք նախապես նշանակել են «ծուր բերան», «ծուր քիթ», իսկ հետո իմաստի փոփոխությամբ ձեռք են բերել «ծուր քիթ ունեցող», «ծուր բերան ունեցող» նշանակությունը<sup>2</sup>:

Ա. Մուրվալյանը ևս նշում է, որ սրանք ի սկզբանե պետք է հանդես գային իբրև գոյական, ինչպես օրինակ՝ *վերին զգեստ-վերնազգեստ, վերին շապիկ-վերնաշապիկ* և այլն, «չնայած սրան՝ նման բարդություններ այսօր ոչ թե առարկայի, այլ մեծ մասամբ մի երկրորդ առարկայի հատկանիշի (ածականի) նշանակություն են արտահայտում» և ավելացնում է, «իմաստի այդ զարգացումը (առարկայից հատկանիշի իմաստ) նման բարդությունների մեջ սկզբնական նշանակության հետագա փոփոխության արդյունքն է»<sup>3</sup>: Այսինքն՝ *բարեսիրտ, հորդաջուր, պարարտահող* և նման այլ բարդությունները սկզբում նշանակել են «բարի սիրտ», «հորդ ջուր», «պարարտ հող» և այլն, իսկ հետո, իմաստի հետագա փոփոխությամբ սկսել են նշանակել «բարի սիրտ ունեցող, բարի սրտով», «հորդ ջուր ունեցող»,

\* Գ. Զահուկյանը գրում է, որ «կիսա-ով բարդությունները միջին տեղ են գրավում թվականով և ածականով բարդությունների միջև: Այսպես է նաև **բազմամարտ** բառը, որի հետ միասին նաև կան բուն թվականներով կազմություններ՝ **երկամարտ, եռամարտ, հնգամարտ**, ըստ որում այստեղ առաջին բաղադրիչը կարելի է մեկնել նաև նկարագրորեն՝ «հինգ ձկից «տեսակից» բաղկացած» (տե՛ս նույն տեղում, էջ 221):

<sup>2</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2., Երևան., 1974, էջ 154:

<sup>3</sup> Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 234:

«պարարտ հող ունեցող» և այլն: Սակայն սկզբնական իմաստից երկրորդական իմաստին անցել են, իհարկե, նման բարդություններից ոչ բոլորը:

Անգլերենում ածական+գոյական համադրական կաղապարով կառույցներից, ինչպես և հայերենում, ստացվում են հիմնականում **գոյականներ** և **ածականներ**:

Ավելի քիչ են հանդիպում այս կաղապարից կազմված **բայերը**, և դրանք հիմնականում ոչ թե համադրական, այլ վերլուծական կառույցներ են:

Այս կաղապարով բաղադրություններն անգլերենում շատ դժվար է տարբերել նույն կաղապարով բառակապակցություններից, քանի որ նման կազմությամբ մի շարք բառակապակցություններ շեշտի դիրքի փոփոխությամբ վերածվում են բարդությունների: Այդ անցումը կարելի է ցույց տալ աղյուսակ N1-ում տեղ գտած օրինակներով.

Աղյուսակ N1

ա) Բառակապակցություն	բ) Բարդ բառ
a black board (սև տախտակ)	blackboard (գրատախտակ)
a black shirt (սև վերնաշապիկ)	blackshirt (ֆաշիստ)
a blue bird (կապույտ թռչուն)	bluebird (կապտավզիկ (թռչնի տեսակ))
a green house (կանաչ տուն)	greenhouse (ջերմոց)

Ա սյունակի բառերը՝ շեշտի դիրքով պայմանավորված (երկրորդ՝ գոյական բաղադրիչի վրա), բառակապակցություններ են, մինչդեռ երկրորդ սյունակի բառերը՝ բարդություններ: Ածական+գոյական կաղապարով բարդություններում հաճախ լինում է նաև այնպես, որ հիմնական շեշտը բառում առաջին բաղադրիչի վրա է, իսկ երկրորդական՝ ավելի թույլ շեշտը՝ երկրորդ բաղադրիչի, ինչպես, օրինակ՝ *mad man* «հոգեկան խնդիրներ ունեցող անձ»:

Ածական+գոյական կաղապարի արդյունքում, ինչպես նշեցինք, ստացվում են.

ա) **գոյականներ**՝ *blackboard* «գրատախտակ», *granddaughter* «թոռնուհի», *busywork* «անօգուտ աշխատանք», *greengrocer* «միրգ ու բանջարեղեն վաճառող», *highchair* «մանկական բարձր աթոռ», *hotbed* «ջերմոց», *mainland* «մայրցամաք», *shorthand* «սղագրություն», *sicklist* «հիվանդների անվանացանկ», *strongman* «ուժեղ անհատականություն», *superstar* «գերաստղ (արվեստում)», *sweetmeat* «կոնֆետ, քաղցրեղեն», *sweetbread*

«*քաղցրահամ հաց*», *tenderfoot* «սկսնակ, նոթեկ», *whiteboard* «բաց գույնի գրատախտակ»,

բ) **ածականներ**՝ *freehand* «ձեռակերտ», *freestyle* «ազատ ոճի», *longhand* «ձեռագիր», *longwinded* «երկարաշունչ», *thickset* «թիկնավետ», *truehearted* «անձնվեր, հավատարիս», *worthwhile* «արժեքավոր», *slimline* «նեղ, բարակ» և այլն:

գ) խիստ հազվադեպ ստացվում են նաև **բայեր**, այն էլ՝ բարդ գոյականների կոնվերսիայի արդյունքում, ինչպես՝ *tightrope* «պարանի վրա քայլել», *softland* «փափուկ վայրէջք կատարել», *doubleclick* «երկու անգամ կտկտացնել (համակարգչի մասին)», *wrongfoot* «թե՛նիս խաղալիս գնդակը սխալ ուղղությամբ նետել» և այլն:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի *lighthearted* տիպի բարդությունները, որոնք համապատասխանում են հայերենի խառը տիպի կաղապարով բարդություններին: Ինչպես մեզ հայտնի է, երբ բաղադրյալ բառերն ըստ անմիջական բաղադրիչների ենք վերլուծում, ստացվում են երկու գլխավոր հիմնակադասարներ՝ **հիմք+հիմք, հիմք+ածանց**, ըստ որի էլ առանձնացնում ենք բարդ և ածանցավոր կազմությունները: Մակայն, ինչպես նշում է Լ. Հովսեփյանը. «...հանդիպում են այնպիսի կառույցներ, որոնք հնարավոր չէ միանշանակ կերպով հատկացնել բարդ կամ ածանցավոր բառերի (վերջիններին դեպքում՝ նախաածանցավոր կամ վերջածանցավոր) կաղապարների թվին, քանի որ բառակազմական քայլերի հաջորդականություն, որպես այդպիսին, այդ կազմություններում չի դիտարկվում»<sup>4</sup>:

Սրանք, փաստորեն, բարդ ու բարդածանցավոր բառերի միջև միջին դիրք են գրավում: Հեղինակը, դիտարկելով այս կառույցով գրաբարյան բառերը, փաստում է, որ դրանք առաջացել են բաղադրիչների միաժամանակյա կցումով՝ բառակազմական մեկ քայլի ընթացքում, որի հետևանքով ստացվում են բուն իմաստով բարդածանցավոր կամ նախածանցավերջածանցավոր բառեր: *Խառը տիպի* եզրույթը, ըստ Լ. Հովսեփյանի, արտացոլում է ոչ միայն բաղադրիչների ձևային կազմը, այն է՝ ածանցների և մեկից ավելի արմատական ձևայինների առկայությունը, այլև նրանց հավասարությունը՝ հաջորդականության բացակայության առումով<sup>5</sup>:

Հեղինակը նշում է, որ եթե փորձենք այս տիպի կառույցները տրոհել անմիջական բաղադրիչների, կստացվեն ոչ թե բառակազմական (ածանց,

<sup>4</sup> Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987, էջ 288:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 288:

հիմք կամ արմատ, ազատ արմատի դեպքում՝ բառ), այլ բառակազմական և շարահյուսական միավորներ՝ *ածանց և բառակապակցություն*: Հետևաբար կստացվի, որ որպես սերող հիմք այս բառերում հանդես է գալիս բառակապակցությունը: Օրինակ՝ *ազատաշխարհիկ* բառի անմիջական բաղադրիչներն են *ազատ աշխարհ* բառակապակցությունը և *իկ* վերջածանցը, *վատատոհմիկ* բառինը՝ *վատ տոհմ* բառակապակցությունը և *իկ* վերջածանցը և այլն: Այսպիսի կաղապարները կոչվում են **խառը տիպի** կաղապարներ:

Խառը տիպի կաղապարները հիմնականում ոչ թե հոդակապավոր, այլ անհոդակապ կառույցներ են: Ըստ Լ. Հովսեփյանի՝ հոդակապավոր կառույցները խառը տիպի կաղապարների շարքին միայն պայմանականորեն կարելի է դասել և հիմնականում այն դեպքերում, երբ սերող հիմքն առանձին վկայված չէ, ինչպես՝ *երկայնաժամանկեայ, հեշտապաշտօնեայ* բառերի դեպքում, քանի որ առանձին *երկայնաժամանակ, հեշտապաշտօն* ձևեր չկան: Այս բառերի մի մասը գրաբարից անցել է նաև ժամանակակից հայերենին, ինչպես՝ *բազմաժամանկյա, երկարաժամանակյա, սակավաժամանկյա, վատատոհմիկ*. ժամանակակից հայերենում, դրանք, ինչպես տեսնում ենք, հիմնականում հոդակապավոր են<sup>6</sup>:

Նույն բացատրությունը կարելի է տալ նաև անգլերենի *lighthearted* «անհոգ, ուրախ» տիպի բարդությունները քննելիս: *Light heart* բառակապակցությանը միանում է *-ed* վերջածանցը՝ կազմելով *lighthearted* բարդածանցավոր բարդությունը: Այս բարդության կառուցվածքային կաղապարը հետևյալն է՝ *light heart [(light+heart)+ed] lighthearted*. այստեղ *-ed* ածանցը փաստորեն դառնում է կաղապարի՝ քերականական և իմաստային տեսանկյունից դոմինանտ (տիրապետող) բաղադրիչը. ածանցը որոշում է բառի խոսքիմասային և բառային իմաստը՝ վերածելով այն ածականի՝ «մի բան ունենալու նշանակությամբ»<sup>7</sup>: Նշանակում է, երկու լեզուներում կան որոշակի ածանցներ, որոնք հանդես են գալիս «բաղադրյալ բառի կազմիչները (տվյալ դեպքում բառակապակցության անդամները) ի մի ձուլող գործոնի դերում...»<sup>8</sup>:

Նման այլ կառույցներ են, օրինակ՝ *դեղնայա, թխայա, կապտայա, սևայա, հրայա* և այլն: Անգլերենում սրանց համազոր կառույցները

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 289:

<sup>7</sup> Տե՛ս R. Ginzburg, S. Khidekel, G. Knyazeva, A. Sankin, A Course in Modern English Lexicology, 2<sup>nd</sup> ed., Moscow, 1979, էջ 150:

<sup>8</sup> Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 288:

հիմնականում վերլուծական բաղադրություններ են, ինչպես՝ *beautiful-eyed* «գեղաշյա», *black-eyed* «սևաշյա», *green-eyed* «կանաչաշյա», *blue-eyed* «կապտաշյա», *goggle-eyed* «դուրս պրծած աչքերով» և այլն:

Ածական+գոյական բարդությունների բաղադրիչների միջև, ինչպես և հայերենում, մեծ մասամբ առկա է որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն. *strongman* «ուժեղ տղամարդ» բառում, օրինակ՝ առաջին բաղադրիչն արտահայտում է երկրորդի հատկանիշը:

Նման կառույցների կազմում հանդես եկող ածականներից շատերը կազմված են գերմանական ծագման միավանկ բառերից, ինչպես՝ *busybody* «ուրիշների գործերին խառնվող մարդ», *highroad* «մայրուղի», *hothouse* «ջերմոց», *quickstep* «ռազմական արագ քայլերթ», *redhead* «կարմրահերթ», *stronghold* «պատվար, հենարան» և այլն: Սակայն այս կաղապարով բարդությունների կազմությանը մասնակցում են նաև վաղ շրջանի ռոմանական փոխառություններ հանդիսացող մի շարք ածականներ. դրանք են *double*, *grand*, *noble*, *tender* և այլ բառերը՝ *doubletalk* «դատարկաբանություն», *grandfather* «պապիկ», *nobleman* «ազնվական», *tenderloin* «սուկի (սեջքի միս)» և այլ բարդություններում<sup>9</sup>:

Բազմաթիվ են *free*, *green*, *long*, *low*, *super* սերող հիմքերով համադրական բարդությունները, ինչպես՝ *freeway* «արագընթաց ավտոճանապարհ», *greensward* «գազոն, մարգասեղ», *longterm* «երկարաժամկետ», *lowbrow* «ցածր խավի մարդ», *supermarket* «հանրախանութ» և այլն:

Ածական+գոյական կաղապարով կազմվում են հիմնականում «բահուվրիհի»<sup>10</sup> տիպի ածականներ: Ի. Առնոլդը նշում է, որ «բահուվրիհի» տիպի բառերը թվով շատ են և այլ կերպ կոչվում են ստացական արտակենտրոն\* բարդություններ (possessive exocentric compounds),

<sup>9</sup> Տե՛ս L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 91:

<sup>10</sup> Հայտնի է, որ Պանինին ու մյուս հնդիկ քերականները տարբերում էին երեք տիպի բարդություններ՝ *կցական* (*dvandva-*), *որոշչային* (*tatpurusa-*) և *ստացական* (*bahuvrīhi-*): Բարդության այս երեք տեսակների անվանումներն ընտրված են այդ տեսակների համար առնված օրինակներից՝ *dvandva*-«գույգ», *tatpurusa*-«նրա ծառան», *bahuvrīhi*-«բազմաբրինձ» (տե՛ս Գ. Ջահուկյան, *Լեզվաբանության պատմություն*, հ. 1, Երևան, 1960, էջ 28):

\*Արտակենտրոն են այն բարդությունները, որոնց իմաստային կենտրոնը բառից դուրս է, օրինակ՝ *daredevil* «խիզախ», *rubberneck* «հետաքրքրասեր մարդ» բառերում ակնհայտ իմաստային կենտրոն չկա. դրանք վերաբերում են մարդուն, սակայն բարդությունների երկրորդ՝ հիմնական իմաստն արտահայտող բաղադրիչը, ինչպես տեսնում ենք, *մարդ* (*man*) բառը չէ, իսկ օրինակ՝ *dogfood* «շան կեր», *bedroom* «ննջասենյակ» բառերի դեպքում *food* «ուտելիք», *room* «սենյակ» բառերը դրանց

որոնցում մի որևէ կենդանի, առարկա կամ մարդ փոխաբերաբար են անվանվում՝ ելնելով դրանց՝ աչքի ընկնող որևէ հատկանիշից (արտաքին կամ մարդկանց դեպքում՝ նաև հոգևոր)<sup>11</sup>:

Հ. Մարչանդն արտակենտրոն բարդությունների վերաբերյալ գրում է. «Այս բարդությունները հիմնականում մատնանշում են շնչավոր էակների (մարդկանց կամ կենդանիների), բայց դրանց շարքում հանդիպում են նաև բույսերի անուններ և մի քանի այլ բառեր, որոնք տարբեր իրեր, առարկաներ են մատնանշում: Անձ ցույց տվող բառերը մեծ մասամբ արհամարհական կամ ծաղրական (նաև հումորային) երանգավորում ունեն<sup>12</sup>. օրինակ՝ ածական+գոյական կաղապարով այդպիսի բարդություններ են՝ *addlebrained* «բույթ, անուղեղ», *bigheaded* «պարծենկոտ մարդ», *bigmouth* «բացբերան մարդ», *bluestocking* «չակերտավոր կրթված կին», *faintheart* «վախկոտ, թուլամորթ մարդ», *fathead* «հիմար, հաստազուլիս մարդ», *greenhorn* «խակմիտ մարդ», *greybeard* «հասակավոր մարդ», *sorehead* «նվնվան, դժգոհ մարդ», սակայն կան նաև այնպիսիք, որոնք արտակենտրոն են, բայց ծաղրական իմաստ չեն արտահայտում, ինչպես՝ *redcap* «բրիտ.՝ ռազմական ռստիկան, ամեր.՝ երկաթուղային բեռնակիր (բարձող բանվոր)», *redcoat* «բրիտանական բանակի զինվոր», *sweetheart* «սիրելի, թանկագին անձ» և այլն:

Կան առարկաներ, երևույթներ մատնանշող արտակենտրոն համադրական բարդություններ, ինչպես, օրինակ՝ *blacklist* «սև ցուցակ», *blueprint* «ծրագիր, նախագիծ» և այլն: Բնականաբար, *blacklist* բառը նշանակում է ոչ թե «սև գույնի ցուցակ» այլ «մարդկանց/ընկերությունների խումբ», որոնց կատարած աշխատանքը կամ մեկ այլ բան չեն հավանել, և նրանք հայտնվել են սև ցուցակում: Այդպիսիք են նաև *deadline* «վերջնաժամկետ», *deadhead* «ձանձրալի անձնավորություն», *deadpan* «անզգացմունք» և այլ բարդություններ:

Մարդկանց վերաբերող արտակենտրոն բարդություններից շատերում, ինչպես տեսնում ենք, երկրորդ բաղադրիչը մարդու մարմնի մասի անուն է՝

իմաստային կենտրոններն են, ողջ բաղադրության ենթանիշերը (*hyponyms*)՝ բառեր, որոնց իմաստն ընդգրկվում է ընդհանուր բաղադրության կամ բարդության իմաստի մեջ, այդ իսկ պատճառով սրանցով կազմված բաղադրությունները ներկենտրոն են: Արտակենտրոն բարդությունների մի տեսակ են «բահուվրիիի» տիպի բարդությունները:

<sup>11</sup> Տե՛ս Ի. Арнольд, Лексикология современного английского языка, 3-е изд., Москва, 1986, էջ 125:

<sup>12</sup> Տե՛ս H. Marchand, The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach, Wiesbaden, 1960, էջ 44:

*mouth «բերան», neck «պարանոց», head «գլուխ»* և այլն: Հայերենում ևս ունենք մարդու մարմնի մասերի անուններով կազմված բարդություններ, որոնցից, իհարկե, ոչ բոլորի, բայց շատերի միջոցով արտահայտվում են արհամարհական, ծաղրական իմաստներ, ինչպես՝ *ծուռբերան, ծուռթաթ, կախզուլիս, հաստազուլիս, հաստապռոշ, հաստավիզ, մեծագլուխ, մեծաբերան, մեծաշուրթ, չորագլուխ* և այլն: Նման բարդությունները հայերենում նույնպես արտակենտրոն են:

Հայերենի և անգլերենի **ածական+գոյական** բարդությունների միջև ընդհանրություններ կան նաև դրանց արտահայտած իմաստների առումով: Երկու լեզուներում կարելի է առանձնացնել դրանց տարբեր իմաստային խմբեր, որոնք կարող են արտահայտել.

ա) զգայարաններով ընկալելի հատկանիշներ, ինչպես՝ *բոսորերանգ, գարշահամ, խաժաչ, խաժաքար, կարմրախոտ, կարմրավիզ, ոսկեերանգ, ոսկեձամ, սեխահամ, սևաբաղ, սևաբուրդ, սևագեղմ, սևազգեստ, սևամորթ, սպիտակամարմին, սպիտակավարս, քաղցրահամ* և այլն, անգլերենում՝ *blackboard «գրատախտակ (բառացի՝ սև տախտակ)», redhead «կարմրահեք», redskin «կարմրամորթ, հնդկացի», sourdough «թթխմոր», sweetcorn «քաղցր եգիպտացորեն», whiteboard «սպիտակ գրատախտակ»* և այլն,

բ) առարկաների և երևույթների ծավալային ու ձևային հատկանիշներ՝ *բարձրագագաթ, երկարագի, երկարադունչ, թեթևաքաշ, լայնաբիբ, լիալուսին, ծուռթաթ, կարճոտն, մեծատարած, նեղաբերան, շեղանկյուն, սրադունչ, փոքրածավալ* և այլն, անգլերենում՝ *broadsheet «լայնաաֆորմատ թերթ», broadsword «լայնաշեղք սուր», longbow «մեծ աղեղ», narrowboat «նեղ, երկար նավակ»* և այլն,

գ) կենդանանուններ և բուսանուններ, որոնց առաջին բաղադրիչները հիմնականում արտահայտված են **գոյների** անուններով, այդպիսիք քիչ չեն նաև անգլերենում: Հայերենում ունենք, օրինակ՝ *գորշագռավ, դեղնածաղիկ, դեղնայտ, դեղնաշիտետ, դեղնափոք, թխակակաչ, կապտաթիթեռ, կապտալանջ, կապտաձուկ, կարմրաբանջար, կարմրաթևիկ, կարմրախնձոր, ճերմակաթիթեռ, ճերմակաձուկ, սպիտակախայտ, սպիտակածաղիկ* և այլն: Անգլերենի մեր ընտրանքում հանդիպում են հետևյալ օրինակները՝ *blackberry «մոշ», blackbird «սև կեռնեխ», bluebell «զանգակածաղիկ», blueberry «կապույտ հապալաս», bluebird «կապտավզիկ», bluegrass «դաշտավլուկ», bluejay «հյուսիսամերիկյան կապույտ ճայ», flatfish «տափակաձուկ», greengage «ռենկլոդ (սալորի ընտիր տեսակ)», greyhound «բարակ (որսկան) շուն», redbreast «կարմրալանջ, շիկահավ», redwood «սեբվոյա, կարմիր ծառ», silkworm «շերամի որդ», sweetgrass «խմրախոտ, ճումել»* և այլն,

դ) արտաքին գնահատողական հատկանիշներ՝ *գեղազանգուր, զվարթահայաց, ժանտադեմ, խաժաչ, խստահայաց, հարթերես, նրբերանգ, վշտածպիտ, տխրածպիտ, ուրախադեմ, ուրախածպիտ* և այլն: Անգլերենում մարդու արտաքինը բնութագրող բառերը հիմնականում ոչ թե համադրական, այլ գծիկով գրվող վերլուծական բարդություններ են, որոնք վերջանում են *ed* կամ *ing* վերջածանցներով, ինչպես՝ *bright-eyed* «պայծառաչ», *left-handed* «ձախլիկ», *middle-aged* «միջին տարիքի», *right-handed* «աջիկ» և այլն,

ե) մարդկանց հոգեմտավոր, բարոյական հատկանիշներ, ինչպես՝ ազատամիտ, *բարեհոգի, ճարտարամիտ, թանձրամիտ, մեծաշնորհ, մռայլասիրտ, չարասիրտ, սրալեզու, վատահամբավ, վսեմախոս, տաքզլուխ, տաքսիրտ, փափկերես, փափկասիրտ* և այլն, անգլերենում՝ *hardheaded* «համառ», *hardhearted* «քարսիրտ», *hotheaded* «տաքզլուխ», *kindhearted* «բարեսիրտ», *lighthearted* «թեթև բնավորությամբ, անհոգ» և այլն:

Ինչպես տեսնում ենք, երկու լեզուներում իմաստային ամենատարբեր հատկանիշներ են արտահայտվում հատկապես այս՝ **ածական+գոյական** կադապարով բարդությունների միջոցով, քանի որ դրանց առաջին բաղադրիչը առարկաների, երևույթների այս կամ այն հատկանիշն է արտահայտում, ուստի հատկանշային իմաստների զանազանության դրսևորմանն ականատես ենք լինում հատկապես այս կադապարով բարդությունների դեպքում:

Հայերենի և անգլերենի ածական+գոյական կադապարով համադրական բարդությունների զուգադրահամեմատական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ունի երկու լեզուների միջև տիպաբանական ընդհանրությունների ու տարբերությունների որոշման տեսանկյունից, այլև լեզուների դասավանդման հարցում:

## Միբարբի Կարապետյան

### Ածական+գոյական կադապարով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում

#### Ամփոփում

Ածական+գոյական կադապարով բարդությունները շատ տարածված են հայերենում և անգլերենում: Այս կադապարով և՛ համադրական, և՛ վերլուծական բարդություններ կան: Հոդվածում քննվում են ածական+գոյական կադապարով համադրական բարդությունների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները երկու լեզուներում: Հաճախ սրանց կազմությանը մասնակցում են բառաբարդումն ու ածանցումը միաժամանակ, և այդ դեպքում բառակազմական քայլերի

հաջորդականություն չի դիտվում. այդ պարագայում գործ ունենք խառը տիպի կաղապարով բարդությունների հետ: Առանձնացվում են ածական+գոյական կաղապարով ստացական արտակենտրոն բարդությունները, որոնք սանսկրիտական քերականության մեջ կոչվում էին “bahuvrihi compounds”-բահուվրիհի բարդություններ: Հոդվածում քննության են առնվում նաև ածական+գոյական կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունը, ինչպես նաև դրանց արտահայտած իմաստային առանձնահատկությունները հայերենում և անգլերենում:

**С. Карапетян**

### **Синтетические сложные слова со структурой**

**прилагательное+существительное в армянском и английском языках**

#### **Резюме**

Синтетические сложные слова со структурой прилагательное + существительное достаточно распространены в армянском и английском языках. Данная модель имеет аналитические и синтетические формы. Целью статьи является детальное изучение сложных слов с моделью прилагательное+существительное, в частности, их структурные и семантические особенности в армянском и английском языках. Довольно часто в формировании сложных слов типа прилагательное+существительное принимают участие словосложение и аффиксация одновременно, в результате чего формируются деривационные сложные слова. В статье выделяются поссесивные (притяжительные) или экзоцентричные сложные слова-прилагательные, которые в грамматике древнего санскрита назывались “бахуврихи”. В статье также изучается синтаксическое отношение между компонентами сложных слов, а также семантические особенности сложных слов типа прилагательное+существительное.

**S.Karapetyan**

### **Adjective+Noun Synthetic Compounds in the Armenian and English Languages**

#### **Summary**

Adjective+noun compounds are widespread in the Armenian and English languages. There are both analytic and synthetic compounds of the adjective+noun pattern. The aim of the given paper is to examine synthetic adjective+noun compounds, their structural and semantic peculiarities in English

and Armenian. Very often both compounding and derivation simultaneously take part in the formation of adjective+noun compounds in case of which there is no concession of word-formation steps and we deal with derivational compounds. The possessive exocentric compounds of adjective+noun pattern are singled out; these compounds were called “bahuvrihi” in the Sanskrit grammar. The paper also studies the syntactic relation between the components of the compound words, as well as the semantic peculiarities expressed by the adjective+noun compounds in Armenian and English

**ԱՆՀՈԳՆԱԿԱՆ և ԱՆԵԶԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ և ՀԱՅԵՐԵՆՈՒՄ. ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** անեզականություն, անհոգնականություն, թիվ, հավաքական, վերացական:

**Ключевые слова и выражения:** pluralia tantum, singularia tantum, категория числа, единственное и множественное число, квантитативная актуализация.

**Key words and phrases:** number, collective, quantitative actualization, comparative-contrastive analyses.

Անհոգնականությունը և անեզականությունը թվի քերականական կարգի յուրատեսակ դրսևորումներ են, որ հատուկ են այն գոյականներին, որոնք իրենց մեջ կրում են բառիմաստին անմիջականորեն կապված թվային իմաստ, որը բացառում է հակադիր իմաստի առկայությունը: Այլ կերպ ասած, անհոգնականները և անեզականների չունեն թվային իմաստի հակադիր ձևերից մեկը, կամ եթե այն առկա է, ապա ցույց չի տալիս եզակիի և հոգնակիի իմաստային որոշակիացում<sup>1</sup>:

Բազմաթիվ լեզուների հետազոտությունները ցույց են տալիս, որ թվի քերականական կարգը չի ենթադրում միայն և միայն քանակական իրողությունների արձանագրում, ինչպես օրինակ՝ որևէ առարկայի մեկ կամ մի քանի հատ լինելու հանգամանքը: Գոյականների մի մասի պարագայում կիրառվելիս թվի գաղափարը կարող է արտահայտել տարբեր նրբերանգային իմաստներ, որոնք ուղղակիորեն չեն հանգում քանակի հասկացությանը<sup>2</sup>:

Անհոգնական (Singularia tantum) կոչվում են այն բառերը, որոնք չունեն եզակիին համապատասխան հոգնակիի ձևեր, կամ եթե ունեն, ապա այդ հոգնակին կազմված է բառիմաստի խզումով: Գոյություն ունեն բուն անհոգնականներ, որոնք թվակարգից դուրս են, նրանցից հոգնակի ձևեր կազմել հնարավոր չէ, և կան բառիմաստային ուրույն հատկություններով խմբավորումներ, որոնք հարաբերականորեն անհոգնական են<sup>3</sup>:

<sup>1</sup> Кацнельсон С. Д., *Типология языка и речевое мышление.*, Ленинград, 1972, էջ 28-29.

<sup>2</sup> Storch A. and Dimmendal G. J., *Number constructions and semantics*, Amsterdam/Philadelphia, 2014, pp. 1-3.

<sup>3</sup> Պետրոսյան Հ. Չ., *Գոյականի թվի կարգը հայերենում*, Երևան, 1972, էջ 44-45:

Այս դեպքում կարող է հարց առաջանալ, որ եթե անհոգնականությունը և անեզականությունը բառիմաստով պայմանավորված երևույթներ են, ի՞նչ նպատակ ունի դրանց դիտարկումը երկու լեզուներում թվի քերականական կարգի սահմաններում՝ զուգադրական-տիպաբանական տեսանկյունից: Դա նախևառաջ պայմանավորված է նրանով, որ անհոգնականները և անեզականները արտահայտում են թվի քերականական իմաստի հիմնական բաղադրիչին՝ քանակի հասկացությանը հարող որոշակի իմաստներ, որոնց անտեսումը թերի է դարձնում թվի քերականական կարգի բնութագիրը:

Հայերենում սովորաբար առանձնացվում են անհոգնականների հետևյալ խմբերը՝ զանգվածա-նյութայնության, վերացական անհոգնական գոյականներ, անհոգնական հավաքականներ, անհոգնական հատուկ անուններ և եզակի՝ բնության մեջ մեկ հատ առարկայի անուններ:

Պարսկերենում, ըստ էության, չկան այնպիսի գոյականներ, որոնցից ձևաբանորեն հնարավոր չլինի կազմել հոգնակի ձևեր: Այլ կերպ ասած, պարսկերենում բուն անհոգնականներ չկան, այլ կան հարաբերական, ենթատեքստային անհոգնականներ:

Ընդհանրապես անհոգնականները չունեն հատուկ կառուցվածքային գիծ: Հ. Պետրոսյանը նշում է. «Անհոգնականությունը պայմանավորող գործոնները աշխարհի տարբեր լեզուներում ունեն իմացական (իմաստային) ընդհանրական հիմունքներ, սակայն կառուցվածքային որոշ գծեր, յուրահատկություններ երբեմն նեղացնում կամ լայնացնում են նրա դրսևորումների շրջանակը»<sup>4</sup>:

Անհոգնականներին բնորոշ ոչ մեծաթիվ քերականական հատկություններից կարելի է նշել, օրինակ, այն, որ դրանք թվական լրացում սովորաբար չեն ընդունում, իսկ նախադասության մեջ որպես ենթակա կիրառվելիս պահանջում են եզակի թվով դրված ստորոգյալ:

Ինչպես նշվեց, անհոգնական են հատուկ անունները, որոնք իրենց ուղիղ իմաստով կիրառության դեպքում բացառում են հոգնակի թիվը: Հ. Պետրոսյանը հատուկ անվան անհոգնական լինելու հանգամանքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Հատուկ անունը, նշանակելով միայն անհատը, բացառելով այդ անհատը ներկայացնող տեսակի մնացած անդամները՝ բացառում է նաև կառուցվածքային այն միջոցները, որոնք մեկից ավելիների ընդգրկումների համար են, այսինքն՝ չեզոք է դառնում հոգնակիակազմության նկատմամբ»<sup>5</sup>:

---

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Պետրոսյան Հ. Օ., *Գոյականի թվի կարգը հայերենում*, Երևան, 1972, էջ 51:

Այնուամենայնիվ, պայմանավորված ենթատեքստով, հայերենում երբեմն հնարավոր է հատուկ անունների՝ հոգնակի թիվ ընդունելը: Պետք է սակայն նշել, որ այս երևույթը հիմնականում հատուկ է գրական-գեղարվեստական ստեղծագործությունների լեզվին:

Մ. Ասատրյանը թվարկում է հատուկ անունների՝ հոգնակի թվով հազվադեպ կիրառման դեպքում արտահայտած որոշ առանձնահատուկ նշանակություններ<sup>6</sup>.

1. տարբեր անձեր կամ տեղանուններ, որոնք նույն անունն ունեն, օրինակ. «Համալսարանում բազմաթիվ Արմեններ, Արամներ, Ռուզաններ կան»:

2. նույն ընտանիքի կամ գերդաստանի անդամներ, ամուսիններ, օրինակ. «Ալիմյանները վշտի մեջ էին»:

3. տվյալ հատուկ անվանը բնորոշ ընդհանուր տիպական նշանակությամբ օժտված անձինք՝ «*Հայ ժողովուրդը Վարդան Մամիկոնյաններ շատ է ծնել*»:

Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, հատուկ անունը կարող է հոգնակի թիվ ստանալ միայն վերը նշված իմաստներից երրորդով կիրառվելիս<sup>7</sup>: Օրինակ՝

ایران در دامن خود فردوسی ها و حافظ ها پروده است.

*Iran dar dāman e khod ferdowsihā va hāfezhā parvarde ast.*

*Իրանը իր գրկում Ֆիրդուսիներ և Հաֆեզներ է մեծացրել:*

Ինչ վերաբերում է հայերենում հատուկ անվան հոգնակի թիվ ընդունելու նշված դեպքերից առաջին և երկրորդ տարբերակներին, ապա պարսկերենում դրանք չեն կիրառվում:

Անհոգնականների թվային առկայացման տարածված միջոցներից մեկը թվականի հետ որևէ պայմանական միավորի կիրառությունն է, որ հատուկ է մասնավորապես նյութա-զանգվածայնության գոյականներին: Օրինակ՝ *մի շիշ ջուր, երկու պարկ պյուր, հինգ կապ ցախ*, և այլն<sup>8</sup>:

Եվ՝ հայերենում, և՛ պարսկերենում բառի մեջ իմաստային երանգավորումների և լրացուցիչ իմաստավորումների հետևանքով կարող է փոխվել անհոգնականի քերականական վարքագիծը, երբ անհոգնականը

<sup>6</sup> Ասատրյան Մ., *Տամանակակից հայոց լեզու. ձևաբանություն*, Երևան, 2004, էջ 56-57:

<sup>7</sup> 1364 اساطیر -تهران: (ویرایش 3). "دستور زبان فارسی" محمد جواد، شریعت، / Šariat, M. J., "Dastur-e zabān-e fārsi", (virāyesh-e 3). Tehran, Asātir, 1364, p. 178.

<sup>8</sup> Кацнельсон С. Д., *նշվ. աշխ.*, էջ 30

ձեռք է բերում հոգնակիի քերականական ձև: Իմաստաբանական տեսանկյունից այդ հոգնակի ձևերը երկու լեզուներում որոշ դեպքերում կարող են ունենալ նման իմաստներ, իսկ որոշ այլ դեպքերում՝ տարբեր:

Երկու լեզուներում էլ կան մի շարք նյութ ցույց տվող գոյականներ, որոնց հոգնակի ձևը արտահայտում է տվյալ նյութի տեսակների գաղափարը, օրինակ

روغن- روغنها

**յուղ-յուղեր/roughan-roughanhā**

این کارخانه روغنهای ماشین تولید می کند.

*In kārkhāne roughanhaye mashin toulid mi konad.*

Այս գործարանը ավտոմեքենայի յուղեր է արտադրում:

شراب- شرابها

**գինի-գինիներ/sharāb-sharābhā**

شرابهای فرانسوی خیلی مشهور هستند.

*Sharābhāye farānsavi kheili mashhur hastand.*

Ֆրանսիական գինիները շատ հայտնի են:

- فلزها

**մետաղ-մետաղներ/felez-felezhā**

اگر چه شباهتهای زیادی بین فلزها وجود دارد، تفاوتهایی نیز دارند که مشخص می کند یک فلز تا چه حد برای یک کاربرد خاص مناسب است.

*Agarche shabāthāye ziādi beyn e felezhā vojūd dārad, tafāvtohāyi niz darand ke moshakhas mi konad yek felez tā che had baroye yek kārbord e khasi monāseb ast.*

Չնայած մետաղների մեջ նմանություններ կան, բայց տարբերություններ նույնպես կան, որոնք ցույց են տալիս թե տվյալ մետաղը այս կամ այն կիրառության համար որքան է պիտանի:

گندم- گندمها

**հացահատիկ-հացահատիկներ/gandom-gandomhā**

کل افت به 3 درصد نیز نمی رسد که نشان دهندهی کیفیت بالایی گندمها است.

*Kol e oft 3 darsad niz nemi resad ke neshān dahandeye keyfiyat bālāye gandomhā ast.*

Ամբողջ կորուստը չի հասնում նույնիսկ 3 տոկոսի, որ հացահատիկների բարձր որակի ապացույցն է:

Պարսկերենում որոշ անհոգնականների հոգնակի ձևը ցույց է տալիս տվյալ առարկայի մեծ ծավալ, օրինակ՝

- پشمها

**pashm-pashmhā/ քուրդ- 0**

یکی از رسوم دامداران این است که در تابستان هر سال، پشمهای بدن گوسفندانشان را کوتاه می کنند.

*Yeki az rosum e dāmdārān in ast ke bar tābestān har sāl pashmhāye badan e gusfandāheshan rā qutāh mi konand.*

*Անասնապահների պարտականություններից մեկն այն է, որ ամեն ամառ խուզում են իրենց ոչխարների բուրդը:*

چربی- چربیها

**Ճարպ-ճարպեր/charbi-charbihā**

چربی های شکم و کنار پهلو پیدا شده است.

*Ravesh e suzāndan e charbihaye shekam va kenār e pahlū peydā shode ast.*

*Որովայնի և կողերի ճարպերից ազատվելու միջոցը գտնվել է:*

Անհոգականների մեկ այլ խումբ են կազմում վերացական գոյականները: Դրանք արտահայտում են միասեռ հասկանիչի ընդհանրությունը, իրենց ուղղակի իմաստներով չեզոք են թվի կարգի նկատմամբ, ուստի համարվում են անհոգնական: Դրանք ցույց են տալիս ոչ նյութական հասկացություններ՝ հասկություն, գործողություն, դրություն, մարդու հոգեկան կամ մտավոր գործունեություն:

Հայերենում հոգնակիի ձև կարող են ստանալ գործողություն և հասկություն ցույց տվող մի շարք վերացական բառեր, որոնք լեզվագործածության ընթացքում ձեռք են բերել որոշակի թանձրացական իմաստային երանգավորում, օրինակ՝ *հիշողություն-հիշողություններ, ցանկություն-ցանկություններ:*

Անհոգնական են նաև մի շարք վերացական գոյականներ, որոնք արտահայտում են հոգեկան կամ ֆիզիոլոգիական երևույթներ՝ *սեր, կամք, վարք, համակրանք*, և այլն: Այս խմբի բառերն իրենց բուն նշանակությամբ անհոգնական են, սակայն որոշ գեղարվեստական կիրառությունների՝ դեպքում հնարավոր է դրանց հոգնակի թվով գործածումը, օրինակ՝ «Արցունքով լվացված սերեր» (Հ. Մահյան):

Բնության որոշ երևույթներ, պայմանավորված իրենց իմաստային առանձնահատկություններով, անհոգնական են, սակայն երբ արտահայտում են տվյալ երևույթի առանձին պահերի շարք, բազմադեպություն, կարող են հոգնակի կազմել՝ *շոգ-շոգեր, ցուրտ-ցուրտեր, սառնամանիք-սառնամանիքներ:*

Պարսկերենի վերացական գոյականները՝ հոգնակի կազմելու տեսանկյունից կարող ենք պայմանականորեն բաժանել մի քանի խմբերի.

1. վերացական գոյականներ, որոնք չեն կարող ունենալ հոգնակի ձև-اسارات / **esārat**- գերություն, غرور / **ghorur**- հպարտություն, فقر / **foqr**- աղքատություն, پیری / **pīri**- ծերություն:
2. վերացական բառեր, որոնք լեզվագործածության ընթացքում ձեռք են բերել որոշակի առարկայական իմաստ-مهربانی / **mehrabani**- **mehrabaniha**-բարություն-բարություններ, شایستگیها/شایستگی / **shāyastegi**/**shayastegiha**-կարողություն/կարողություններ:

3. վերացական բառեր, որոնց եզակի ձևը նշանակում է մի բան, հոգնակին՝ այլ բան- تشکيل-تشکيلات/**tashkil-tashkilat-կառուցվածք,բաղադրություն** /կազմակերպություն, /تشریف-تشریفات/**tashrif-tashrifat- պատիվ-արարողակարգ:**

Գոյականների մեկ այլ խումբ՝ հավաքականները, մի կողմից հարում են անեզականներին, մյուս կողմից՝ անհոգնականներին. արտահայտման տեսանկյունից դրանք կարող են լինել եզակիաձև և հոգնակիաձև:

Եզակիաձև հավաքականը անհոգնական գոյական է, որն ունի հավաքական ամբողջության բառային իմաստ: Օրինակ՝ հայերենում սովորաբար անհոգնական են գոյական հիմքերից **-եղեն** ածանցով կազմված հավաքականները: Անհոգնական են նաև *նյութ* ածանցով կազմված հավաքական գոյականները՝ *աշակերտություն, ուսանողություն, երիտասարդություն, գյուղացիություն* :

Պարսկերենում թեև չկա առանձին հավաքականակերտ ածանց, սակայն դիտարկումը թույլ է տալիս նշել, որ գոյականներին հավաքականության ընդգծված իմաստավորում հաղորդելու հատկություն ունի **-jāt/** վերջածանցը<sup>9</sup>:

میوه میوهجات  
*mive- mivejāt – միրգ/ մրգեղեն*  
سبزی- سبزیجات  
*sabzi-sabzijāt- կանաչի/ կանաչեղեն*

**-jāt/** վերջածանցը իր հերթին հանդիսանում է արաբական ծագման **-āt/** հոգնակիակերտ վերջածանցի այլաձևությունը<sup>10</sup>:

Անհաշվելի գոյականների մյուս խումբը անեզականներն են (Pluaralia tantum) և դրանք ունեն միայն հոգնակի ձև, իսկ եզակի բառաձևը իսպառ կամ գրեթե իսպառ բացակայում է: Անեզականները նույնպես կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի. բուն անեզականներ, որոնք ընդհանրապես չունեն եզակի ձևեր, և եզակի-հոգնակի անհամարժեքությամբ պայմանավորված անեզականներ:

<sup>9</sup> Anvari /حسن انوری، حسن احمدی گوی، "دستور زبان فارسی"، ویرایش چهارم، انتشارات فاطمی، تهران، 1391 H., Givi. H. A., "Dastur-e zabān-e fārsi: virāyeš-e čāhārom", Entešārāt-e Fātemi, Tehrān, 1391. p. 95.

<sup>10</sup> Այս դեպքում **j** բաղաձայնն ավելացել է **-āt/** վերջավորությանը բարեհնչության նկատառումներով, քանի որ ինչպես կարող ենք նկատել բերված օրինակներից, դրանք ավարտվում են ձայնավորով, և **j** -հավելումը դյուրացնում է բառի արտասանությունը:

Անեզականների կիրառությունը և՛ հայերենում, և՛ պարսկերենում խիստ սահմանափակ է: Հայերենի պարագայում անեզականությունը մեծ տարածում է ունեցել գրաբարում, սակայն ժամանակակից հայերենում անեզականների քանակը փոքր է: Անեզական են մասնավորապես հոգնակիի ձևով կիրառվող մի շարք հատուկ անուններ: Սակայն այդ հատուկ անունները, որոնք ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում հանդես են գալիս որպես ձևով անեզականներ, պարսկերենում չունեն հոգնակիի քերականական ցուցիչ: Օրինակ՝

آلپ / **ālp** – Ալպեր

کوه های کاریات / **kuhhāye kārpāt**- Կարպատներ

مالدیو / **māldiv**- Մալդիվներ

فیلیپین / **filipin**- Ֆիլիպիններ

Այս երևույթը պարսկերենին վերաբերող լեզվաբանական գրականության մեջ մինչ այժմ որևէ կերպ մեկնաբանված չէ: Մենք կարող ենք եզրակացնել, որ այս դեպքում հատուկ անունների անհոգնական լինելու կանոնը պարսկերենում չափազանց խիստ և հստակ է գործում, որ անհնար է դարձնում որևէ հատուկ անվան հոգնակիի քերականական ցուցիչի հավելումը:

Պարսկերենի անեզականների թվին կարելի է դասել նաև արաբերենից փոխառյալ թեքական հոգնակիի մի շարք բառաձևերը, որոնց եզակին պարսկերենում ընդհանրապես կամ գրեթե չի կիրառվում<sup>11</sup>: Օրինակ՝

امال / **āmāl**- հույսեր, ակնկալիքներ (արաբ. եզ. / *amal*)

/ **maāser**- քաջագործություններ (արաբ. եզ. / *masere*)

ابرار / **abrār**- սրբեր (արաբ. եզ. / *barr*)

Պարսկերենում նշված բառերի եզակին նշելու համար օգտագործվում են այլ հոմանիշներ:

#### Գ. Գրիգորյան

### Անհոգնական և անեզական գոյականները ժամանակակից պարսկերենում և հայերենում. գուգադրական քննություն

#### Ամփոփում

Հայերենում և պարսկերենում անեզականությունը և անհոգնականությունը ունեն արտահայտման զգալի նմանություններ: Մասնավորապես, ժամանակակից հայերենը և պարսկերենը նյութազանգվածային գոյականների թվային առկայացման համար օգտագործում են հիմնականում նույնական կաղապարներ: Երկու լեզուներն էլ ունեն

<sup>11</sup> Рубинчик Ю. А., «Грамматика персидского языка, Москва, 2001, стр. 112.

հավարականության իմաստ արտահայտող քերականական ձևով, որն արտահայտում է նաև նյութի, տեսակի գաղափար: Անեզականների զուգադրական դիտարկումը ցույց տվեց, որ երկու լեզուներում էլ դրանք ունեն չափազանց սահմանափակ կիրառություն:

Г. Григорян

***Singularia tantum* и *Pluralia tantum* в современном персидском и армянском:  
сопоставительный анализ**

**Резюме**

*Singularia tantum* и *Pluralia tantum* являются своеобразными выражениями грамматической категории числа. Они свойственны тем существительным, у которых численное значение непосредственно привязано к лексическому значению. Иными словами, у *Singularia tantum* и *Pluralia tantum* отсутствует одна из противоположностей категории числа (единственное или множественное), а если формально присутствует, не выражает значения количественной актуализации. Исследования на примере многих языков показывают, что грамматическая категория числа не подразумевает исключительно констатацию количественных реалий: у некоторых существительных она может выражать разные нюансы, которые не сводятся напрямую к значению количества.

G. Grigoryan

***Singularia tantum* and *pluralia tantum* modern Persian and Armenian:  
comparative-contrastive analyses**

**Summary**

*Pluralia tantum* and *Singularia tantum* are unique expressions of the grammatical category of noun number. They contain quantitative meaning which is directly derived from the lexical meaning of the noun. In other words, *Pluralia tantum* and *Singularia tantum* lack one of the opposing grammatical meanings (singular or plural) of number category. Even if it formally exists, it doesn't express the meaning of quantitative actualization. Researches on many languages show that along with expressing quantitative meanings, number can also indicate other semantic implications.

**ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ  
ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Ս. Կապուտիկյան, նորաբանություն, հուշագրություն, դիպվածային բառեր, համատեքստ, գրական հայերեն, բարբառ, ժողովրդախոսակցական բառաշերտ, լեզվամտածողություն, սեղմություն:

**Ключевые слова и выражения:** С. Капутикян, неологизм, мемуары, окказионализмы, контекст, литературный армянский, диалект, разговорный пласт, языковое мышление, сжатость.

**Key words and expressions:** S. Kaputikyan, neologism, memoir, occasionalisms, context, Literary Armenian, dialect, folk style language layers, language awaneness, brevity.

Գեղարվեստական ստեղծագործություններում գրողի ինքնատիպ աշխարհըմբռնումն ու լեզվամտածողությունը, նրա լեզվաոճական նախասիրությունն արտացոլվում են նաև հեղինակային նորակազմությունների տարբեր դրսևորումներում, երբ ստեղծագործական գործընթացում ոճական որոշակի նպատակներով գրողը դիմում է նաև բառաստեղծմանը: Հեղինակային նորակազմությունները գեղարվեստական երկի բառապաշարում միշտ աչքի են ընկնում անսովոր ու հետաքրքիր դրսևորումներով, աշխարհն ու երևույթները յուրովի ընկալելու և արտահայտելու հարուստ ներուժով, նորությամբ ու թարմությամբ՝ տարբերվելով միայն, ինչպես նշում է Ա. Գվոզդևը, ցայտունության աստիճանով: «Որոշ բառերում,- նկատում է նա,- նորությունը միանգամից աչքի է ընկնում, մյուսները հազիվ են առանձնանում լեզվի համագործածական բառային միջավայրում»<sup>1</sup>:

Ս. Կապուտիկյանի հուշագրությունների<sup>2</sup> բառապաշարը հարուստ է հեղինակային նորակազմություններով: Համաբարբառների բացակայության

<sup>1</sup> А. Гвоздев, Очерки по стилистике русского языка, М., 1965, с. 102.

<sup>2</sup> Նկատի ունենք Ս. Կապուտիկյանի հետևյալ ստեղծագործությունները՝ «Քարավանները դեռ քայլում են», Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 2, Ե., 1973 (այսուհետև՝ 1), «Խճանկար հոգու և քարտեզի գույներից», Երկեր 3 հատորով հ. 3, Ե., 1985 (այսուհետև՝ 2), «Գույներ նույն խճանկարից», Ե., 1989 (այսուհետև՝ 4), «Հոգու

պատճառով դժվար, երբեմն նույնիսկ անհնարին են դառնում դրանց առանձնացումն ու քննությունը: Այս դեպքում արդեն հիմք ենք ընդունել բառարաններում գետեղված բառամթերքը և, բացի դիպվածայինից, կապուտիկյանական նորակազմություններ ենք համարել բոլոր այն բառերը, որոնք չկան՝

ա) Սո. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարան»-ում (այսուհետև՝ ՀԲԲ),

բ) Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում (այսուհետև՝ ԱՀԲԲ),

գ) Գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում (այսուհետև՝ ԺՀԲԲ),

դ) ՀԲԲ-ում, իսկ ԱՀԲԲ-ում կամ ԺՀԲԲ-ում տրված են միայն Ս. Կապուտիկյանի ստեղծագործություններից քաղված օրինակներով:

Արդի հայերենի բառակազմական եղանակներն ու միջոցները լայն հնարավորություն են տվել Կապուտիկյանին հարստացնելու հուշագրությունների լեզվի բառապաշարը և կերտելու նոր բառեր, որոնք իրենց բնույթով բնորոշ են գործառական տարբեր ոճերին: Հեղինակային նոր բառերը կազմվել են ոճական տարբեր նպատակներով, գրական, երբեմն բառապաշարի բարբառային և ժողովրդախոսակցական բառաշերտերից ընտրված արմատներով, համատեքստի ներքին իրադրության ու բառային միջավայրի թելադրանքով, նաև լեզվում առկա բառերի համաբանությամբ:

Բառակազմական տարբեր եղանակներով, երբեմն նաև բառային միջավայրի թելադրանքով կազմված հեղինակային նորաբառերի գերակշիռ մասը իրավիճակները, առարկաներն ու երևույթները բնորոշում է դիպուկ ու հակիրճ և հիմնականում դիպվածային բնույթ ունի: Գրողի նպատակն այստեղ խոսքի սեղմության ապահովումն է՝ հաճախ միահյուսված ոճական հավելյալ խնդիրների լուծմամբ: Այսպես՝ խոսքի հակիրճությանը նպաստող որոշ նորաբառեր կազմվել են նաև տեղի, ժամանակի իմաստն ընդգծելու՝ *անդունդեզրյա* ոլորան (2-337), *ամենապահյա* հոլովում (4-359), *այդորյա* տնօրեն (3-246), *լողափային կառույց* (2-305), եզակի առարկան դիպուկ անվանելու՝ *մատիտագրիչ* (3-100), նաև կրկնությունից խուսափելու ոճական նպատակներով: Վերջինս ցայտուն է երևում համատեքստում.

---

նույն երթուղիներով», Ե., 1993, «Քարավանները հեռանում են», Ե., 1999: Վերջին երկու հուշագրություններն ամփոփված են նաև «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» գրքում, Ե., 2002 (այսուհետև՝ 3):

«...մեզ շրջապատեցին հայկական վառվորուն տարազներով տղաներն ու աղջիկները, երբ երկու փոքրիկներ՝ նույնպես *հայատարազ*, ... մատուցեցին ավանդական աղն ու հացը» (4-328):

Համապատասխան խոսքաշարերում խոսքի սեղմության և հավելյալ ոճական արժեքով են օժտված ածանցավոր այլ նորակազմություններ: Այսպես՝ երևույթը դիպուկ ու հակիրճ բնորոշող *տոմսային* նոր բառի կերտման ոճական շարժառիթը նաև անսպասելի իրավիճակի ստեղծման հիմքում ընկած հանգամանքը (Նոր տարվա հանդեսի համար նախօրոք տոմս չունենալը) ընդգծելն է. «Թե ինչով էր լուծվել *տոմսային* թնջուկը, անհարմար զգացի հարցնել» (2-314): Կամ՝ *երկրագունդի, լողազգեստավոր* նորակերտ բառերից առաջինն օժտված է նաև ընդհանրական-հավաքական գաղափարը կարևորելու, մյուսը՝ արտաքին ընդհանուր նմանությունն ընդգծելու և պատկերն առավել ցայտուն ներկայացնելու ոճական արժեքով. «... այս անջատումը երկրից մարդու հոգու մեջ պիտի ... աշխարհի բոլոր մարդկանց դարձներ *«երկրագունդիներ»*» (2-412), «Այս էլ ստադիոնն է, փոքրիկ ծովախորշը բոլորող ամֆիթատրոնի պես դեպի ծովն իջնող ստադիոն՝ լցված *լողազգեստավոր* խայտաբղետ բազմությամբ» (2-298):

Համապատասխան խոսքաշարում սեղմ ու խորիմաստ է նաև *ճաշկերությանին* նորակազմությունը: Այն բնորոշում է արտերկրում հենարան չունենալու պատճառով լայն ասպարեզ չմտած, բնատուր ձիրքերը դրսևորելու սահմանափակ հնարավորություն ունեցող և անուշադրության մատնված հայ արվեստագետների տաղանդի գնահատման ոչ պատշաճ մակարդակը. «...հիմնականում մնում են հայկական միջավայրի սահմաններում, այդ *«ճաշկերությանին»* քաջալերանքի ու գնահատականի հույսին» (2-398):

Անբարեհունչ, ոչ այնքան էլ հաջող կազմություններ են առավել խոսակցական լեզվին բնորոշ *-(ա)վարի* ածանցով կերտված որոշ նորակազմություններ՝ *չարչափուքավարի* (3-286), *սուլթանավարի* (1-50), *սասունցիավարի* (2-239), *երիտասարդավարի* (4-119), նաև բառային միջավայրի թելադրանքով կազմված *հազվածք, զանազանահայ* դիպվածային նորաբառերը. «... *հազվածքի* ու պահվածքի մեջ ... կար նաև հավուր պատշաճի շողքն ու հանդիսավորությունը» (1-354), «... նկատելի են ... պարսկահայ, թուրքահայ, լիբանանահայ, սիրիահայ և մյուս *«զանազանահայ»* փոքրիկ խլրտումներ» (3-139):

Հուշագրություններում խոսքը հակիրճ ձևակերպելու, միտքը սեղմ ու դիպուկ արտահայտելու գրողի նախասիրությունն ակնհայտ է նաև շարահյուսական տարբեր կապակցություններից նորակերտ բառ բառերի կազմություններում: Շարահյուսական ազատ կապակցություններից նոր բառեր կազմելու բառակազմական այս եղանակը հայերենին բնորոշ

իրողություն է: Դեռևս Մ. Աբեղյանը նկատել է, որ հայերենի «բարդ բառերը, ինչպես ընդհանրապես բոլոր բաղադրված բառերը, ծագում են երկու սկզբնապես ինքնուրույն բառերի այնպիսի շարահյուսական կապակցությունից, որ ըմբռնվում է իբրև մի առանձին բառական միություն, մեկ բառ մեկ նշանակությամբ»<sup>3</sup>:

Բառակազմական այս եղանակով կազմված նորաբառերի մեծ մասը՝ *խոժոռահամբավ* (2-190), *տաշղաչափ* (1-158), *նոթոտադեմ* (2- 71), *գայլահամբավ* (2-407), *կարծրակող* (2-321, 4-30), *բետոնասփրտ* (2-321), *սևահամբավ* (2-370), *ալկոհոլաբույր* (2-330), *խստաճաշակ* (2-86), *ակմբատեղ* (2-422), *աթոռաշար* (2-75), *տնազգեստ* (2-372), գեղագիտական առումով նույնպես անհաջող կազմություններ են, թուլացնում են հեղինակային խոսքի արտահայտչականությունն ու հուզական ներգործությունը:

Ոչ միայն արտահայտած իմաստով, այլև անսովոր կազմությամբ դիպվածային որոշ նորակազմություններ էլ ստեղծում են գեղարվեստական առումով ոչ այնքան հաջող նկարագրություններ. «Համայնանը թևերը ... *ճաշքերան* ու թվատ էր շարժում ...» (1-100), «... իվվում են երեխաները առողջ, լեռնական օդ ու ջրի կարմիրը այտերին, թեև նոր հագուստով, բայց նորից վարտիքը կախ, ցեխոտ ու *ծուրկոշիկ*՝ գյուղի երեխաներ» (2-52), «Մայամի-Բիչը աչք էր խտտացնում իր խժաղմուկ գույներով...» (2-305):

Կառուցվածքային և իմաստային հետաքրքիր ու դիպուկ գործածված նորաբառ է դիպվածային *յանագուրկ*-ը, որը նաև գրողի ինքնատիպ լեզվամտածողության արտահայտություն է: Կազմության բաղադրիչ ընտրելով ողջ աշխարհում հայությանը խորհրդանշող ազգանվանակերտ – *յան* ածանցը՝ գրողը տալիս է օտարության մեջ ոչ ինքնակամ ազգանվանափոխ եղած հայերի դիպուկ բնորոշումը. «Բայց այդ չի նշանակում, որ իրենք, այդ *յանագուրկ* հայերն էլ տերևաթափ են եղել իրենց ծառ ու ճյուղերից» (3-87):

Գրողը հաճախ նոր բառեր է կերտել շարահյուսական ազատ կապակցության բաղադրիչների բառաբարդմամբ և ածանցմամբ: Այդպիսի նորակազմություն է դիպվածային *նորկյանքական բառը*, որի ստեղծման ոճական նպատակը «Նոր կյանք» ամսագրի խմբագրական կազմի անդամներից երկուսին հակիրճ ու տպավորիչ ներկայացնելն է. «Այստեղ են և «*նորկյանքականներ*» Մեմ Բակուբյանն ու Ավետիս Չափարյանը» (3-362):

Ակնհայտ է բառակազմական միջոցների լայն հնարավորությունների ոճական դերը հեղինակային նորակերտ բառերում: Ածանցների ոճական

<sup>3</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 168-169:

արժեքն ընդգծվում է նաև այն դեպքում, երբ գրողը ածանցավոր բառի ածանցը փոխարինում է այլ հոմանիշ ածանցով կամ լեզվում եղած կաղապարի ածանցմամբ յուրահատուկ նրբիմաստ է հաղորդում բառին: Այսպես՝ համագործածական կամ չեզոք *արտահանում* բառի համեմատությամբ նույնիմաստ *արտահանույթ* նորակերտ բառը, իր վրա կրելով խոսքի տրամաբանական շեշտը, օժտվում է վերամբարձությամբ և խոսքի տրամաբանականությանը ներդաշնակելու ոճական առավելություններով. «Ահա այդ օրվա զգացածիս բանաստեղծական *արտահանույթը*» (2-127):

Խոսքային իրավիճակի թելադրանքով, ասելիքի տրամաբանական կապի պահպանման անհրաժեշտության պահանջով Կապուտիկյանը նոր բառեր է կերտել նաև համագործածական բառերի նմանողությամբ, երբեմն նաև բառային միջավայրի թելադրանքով: Հաճախ գրողը փոխել է լեզվում առկա բառերի բաղադրիչներից մեկը՝ հարմարեցնելով համապատասխան իրադրությանը: Այսպես՝ *կովախնձոր, կովածաղիկ* բառերի համաբանությամբ գրողը կազմել է *կովածամոն* նոր բառը, որի ստեղծման հիմքում երկու քույրերի՝ կովի պատճառ դարձած ծամոնն էր. «Երկու քույրերի միջև ծամոնը դարձել էր *կովածամոն*» (4-293):

*Հացադուլ, գործադուլ* բառերի նմանողությամբ *դուլ* բաղադրիչով Կապուտիկյանը կազմել է *զբոսադուլ* բառը, որն անմիջապես բխում է պատումի բովանդակությունից և դառնում նաև զբոսասեր հերոսուհու նկատմամբ մեղմ հեզմանքի արտահայտիչը. «... վերջապես *զբոսադուլ* հայտարարեց ... Լյուդմիլա Սիմիլյանան...» (4-572):

Ինչպես տեսնում ենք, Ս. Կապուտիկյանի խոսքարվեստում նորակազմությունների ստեղծման ոճական շարժառիթը հաճախ որոշակի վերաբերմունք, տվյալ դեպքում՝ հեզմանք արտահայտելն է: Ոճական այս նպատակով *հայերեն, ռուսերեն, վրացերեն* և նման այլ բառերի համաբանությամբ, մեկ այլ դեպքում բառային միջավայրի թելադրանքով գրողը կազմել է *շրիլանկերեն* (պետություն անվանող Շրի Լանկա բաղադրյալ բառից), *ամերիկերեն* նորաբառերը: Ընդգծելով անհասկանալի լեզվի գաղափարը՝ Կապուտիկյանը հեզմանքով է շեշտում օտար լեզվի իր չիմացությունը. «Հարկ չկար *շրիլանկերեն* իմանալ, որպեսզի հասկանայի, որ ... պիտի այդ հովվերգական պատկերը չտեսնելու տայի» (3-284) և «-Դուն ի՞նչ լեզվով կխոսիս աս աղջկա հետ: -*Շրիլանկերեն*, - ծիծաղում էի ես» (3-284), «Շուրջս ամեն ինչ անգլերեն, անգլերեն էլ չի, *«ամերիկերեն»* է» (2-418):

Նշենք նաև, որ որ ոճական նույն նպատակով, սակայն ոչ բառային միջավայրի թելադրանքով կամ լեզվում առկա բառի համաբանությամբ գրողը կազմել է նաև այլ բառեր: Հեղինակի հեզմական վերաբերմունքն են

ընդգծում – *ս(վարի)* ածանցով այլ նորակազմություններ՝ «... կդնեին իրենց «*հիպիավարի*» անխնամ «Ժիգուլիի» մեջ ու կքշեին ուղիղ Էջմիածին» (2-132), «Խմբագիրներ, որոնք ... տպագրեցին ... *կնկավարի* ըսի – ըսավներ հիշեցնող լուսաբանություններ» (3-243), նաև հանրության մեծ մասին անհասկանալի բարբառային *բիրդան* (հանկարծ) արմատի բառաբարդամբ և ածանցամբ կազմված դիպվածային *բիրդանաղայականություն* բառը: Նորակերտ բառը դրսևորում է գրողի հեզնանքը «Քարավանները հեռանում են» հուշագրության հերոսի՝ Սեմ Բակուբյանի՝ երբեմն ի հայտ եկող վեհանձնության նկատմամբ. «Սեմի մեջ հանկարծ ցայտքեր է տալիս խորքերում ծվարած «*բիրդանաղայականությունը*» (3-290), «... չնայած երբեմն ... իրենց զգալ տվող *բիրդանաղայական* գծերի, ընդհանրապես բարի էր» (3-287): Ակնհայտ է հարաբարդ կազմությունների անկենսունակությունն ինչպես լեզվական, այնպես էլ խոսքային մակարդակներում: Նման բազմաբաղադրիչ կազմությունների նկատմամբ գրողի մերժողական վերաբերմունքը հիմնավորվում է հուշագրությունների լեզվում հիշատակված նորակազմ քառաբաղադրիչ բառի եզակի դրսևորմամբ:

Խոսքի ռիթմը, բարեհնչունությունը, տրամաբանականությունն ապահովելու նպատակով բառային միջավայրի թելադրանքով, նաև *աստղահույլ, ծխակոլոլ* (փոշեկոլոլ) բառերի համաբանությամբ Կապուտիկյանը կազմել է *մանկաձոր, կղզահույլ, մթակոլոլ* բառերը: Դիպուկ ու արտահայտիչ այդ նորակազմությունները ստեղծում են մանուկներով լցված Ծաղկաձորի, կղզիներով շրջապատված Վենետիկ քաղաքի, գիշերային Չիկագոյի գեղարվեստական գողտրիկ ու տպավորիչ պատկերներ. «Ծաղկաձորը միայն ծաղկաձոր չէ այդ ամիսներին, *մանկաձոր* է» (1-190), «... կղզիներից հյուսված մի *կղզահույլ* է» (4-558), «Չիկագո, օտար, այլև խոժոռահամբավ քաղաք, երկինքը խոյահարող երկնաքերեր, *մթակոլոլ* գետեր, ճանապարհներ...» (2-190):

Ինչպես կարելի է նկատել, մեծ է հեղինակային նորակազմությունների ոճական դերը նաև արձակ խոսքում, և ամենևին համոզիչ չէ առանձին հեղինակների կողմից կերտված նոր բառերի՝ առավել չափածո խոսքին հատուկ երևույթների բնորոշումը<sup>4</sup>: Հաճախ արձակ ստեղծագործություններում նույնպես նոր բառերի կերտման ոճական նպատակադրումը խոսքի բանաստեղծականացումն է: Այս միտումը, որը որոշ չափով պայմանավորված է նաև բանաստեղծ Կապուտիկյանի յուրօրինակ

<sup>4</sup> Տե՛ս Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 227:

մտածողությամբ, ակնհայտ է նաև հուշագրությունների լեզվում: Կապուտիկյանական որոշ նորակազմություններ ստեղծվել են աշխարհն ու երևույթները բանաստեղծական մտածողությամբ արտահայտելու, ձևավորված հույզը, զգացմունքը, ապրումը անհրաժեշտ նրբերանգով դրսևորելու նպատակով. *ժպտաշաղախ* (3-5), *հոբելյանաշունչ* (3-234), *քաղցրաստսափ* (4-12), *բոցաողող* (2-107), *հեծկլտախառն* (3-100), *հոփսիսիմեստիպ* (4-172):

Հեղինակային նույնաբնույթ այլ նորակազմություններ նույնպես ստեղծում են բնության գեղարվեստական ինքնատիպ պատկերներ, որոնց պատկերավորության հիմքում հաճախ նաև փոխաբերությունն է: Այդ նկարագրություններում ավելի են ընդգծվում նորակերտ բառերի հուզաարտահայտչական մեծ ներուժը, բանաստեղծուհի հուշագրողի քնարական շունչը. «Անձրևոտ օր էր, գերեզմաններին այցելության գնալու սգավոր ու *արցունքակաթ* օր» (3-292), «Հեռավոր երկրի *հեռաբույր* մի աշուն էր» (2-429):

Հուզական-զգայական երանգավորում ունեցող *սևարցունք*, *սևկոճակ*, *անմթնոլորտ*, *անավյուն* հեղինակային նորակազմությունները, որոնք ոճական առումով հետաքրքրական են նաև իրենց ինքնատիպ գործածություններով, ընդգծում են գրողի ջերմ զգացմունքն ու համակրանքը հերոսների նկատմամբ. «Աստղիկը բուրբի մեջ գտնում էր ինձ և բեմից՝ խոշոր, *սևարցունք* աչքերը վրաս հառած՝ երգում էր» (2-397), «Բեմում հայտնվում է մի երկարուկ տղամարդ, սուրուլիկ դեմքով, *սևկոճակ* աչքերով» (3-30), «Նրանք իրենց աչքերով *անմթնոլորտ միջոցի* անն ու անունը բերել-խառնել են իրար» (2-433), «... գունատ, *անավյուն* դեմքը այդ պահերին ներսից լուսավորում էր ո՛չ բյուրեղյա ջահերի, այլ ուրիշ, աներկրային մի կրակով» (2-307):

Հուշագրությունների բառապաշարի այս շերտը քննելիս նկատում ենք, որ հեղինակային որոշ նորակազմություններ կրկնվում են, ինչը որոշ չափով հիմնավորում է դրանք տարածելու գրողի միտումը: Տարբեր հուշագրություններում ոճական ու արտահայտչական նույն արժեքով են օժտված ինչպես արդեն հիշատակված *կարծրակող*, այնպես էլ *թանձրապակի* (4-428, 2-58), *հուշանվերային* (4-190, 2-28), *մանկապարտեզային* (2-154, 37, 4-356), *կամկախ* (4-573, 3-238), *կերպրնկալ* (2-223, 3-354) նորակերտ բառերը:

Իզական սեռի նշանակությամբ անձի անուններ կազմող *-ուհի* ածանցով նորակազմությունների դրսևորումներում նույնպես ընդգծվում է գրողի՝ գրական լեզվում դրանք ընդհանրացնելու միտումը: Երբեմն նաև կրկնվող այդ բառերը գուցեև հեղինակի բառակազմական նախասիրության ինքնատիպ արտահայտություններ են, մանավանդ որ համապատասխան

խոսքաշարերում ոճական-արտահայտչական առումով չեզոք են. *տնտեսագիտուհի* (3-572), *անդամուհի* (1-117,3-35), *առաջնորդուհի* (2-394), *դասախոսուհի* (4-536), *պաշտոնեուհի* (1-27), *մեծավորուհի* (1-208), *խոսնակուհի* (4-118), *ատենադպրուհի* (1-300), *գրողուհի* (4-114): Տվյալ համատեքստից դուրս անհանձնարարելի այս կազմությունների արտառոցությունը բացատրվում է երկու ոչ համատեղելի բաղադրիչների՝ իմաստային առումով անսովոր համադրմամբ<sup>5</sup>: Հեղինակային խոսքում հանդիպող այս ածանցով կազմված *բարերարուհի*, *գրագիտուհի* կազմություններից վերջինը ԺՀԼԲԲ – ում տրված է *հզվդ*. նշումով:

Քննված նորակազմությունները, որոնք հուշագրություններում միևնույն ոճական հագեցվածությունն ու արժեքը չունեն, իսկ լեզվի բառապաշարի հարստացման գործում՝ միևնույն դերը, էական նշանակություն ունեն Ս. Կապուտիկյանի ոճի ինքնատիպության ձևավորման, բառակազմական նախասիրությունների ընդգծման համար: Դրանց գործածությամբ հեղինակային խոսքը նաև թարմություն է ստանում:

Լ. Միրումյան

**Նորաբանությունները Ս. Կապուտիկյանի հուշագրություններում  
Ամփոփում**

Նորաբանությունները Ս. Կապուտիկյանի հուշագրությունների բառապաշարի կարևոր մասն են կազմում: Գրողը նոր բառեր է կազմվել բառակազմական տարբեր եղանակներով, համատեքստի ներքին իրադրության և բառային միջավայրի թելադրանքով: Դրանք հիմնականում դիպվածային են: Կան նաև անհաջող կազմություններ: Հեղինակային նոր բառերի ստեղծման ոճական նպատակները տարբեր են: Դրանց գործածությամբ գրողը սեղմ ու դիպուկ է բնորոշում երևույթները, դրսևորում է որոշակի վերաբերմունք: Որոշ նորակազմություններ միջավայրի զգայական ընկալման, բանաստեղծուհի Կապուտիկյանի յուրօրինակ մտածողության արտահայտություններ են:

Л. Мирумян

**Неологизмы в мемуарах С. Капутикян  
Резюме**

<sup>5</sup> Տե՛ս Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 147:

Неологизмы составляют важную часть лексикона мемуар С. Капутикян. Писательница составляла новые слова с помощью разных словообразованных способов, под диктовку внутренней ситуации и лексической среды контекста. Они в основном новосозданные слова (окказионализмы). Некоторые окказионализмы неудачные. Стилистические цели создания новых авторских слов разные. Их применением писательница кратко и точно описывает явления, отображает определенное отношение. Некоторые неологизмы – это выражения чувственного восприятия среды, самобытного мышления поэтессы Капутикян.

L. Mirumyan

### Neologisms in memoirs S. Kaputikyan

#### Summary

New formations constitute an important part in the lexicon of memoirs of S. Kaputikyan. The writer made up new words by different forming methods, in the context of the internal situation and under the dictation of the lexical environment. They are basically random. There are also bad structures. The stylistic goal of creating new authorial words are different. The writer succinctly and accurately describes the events, reflects a certain attitude by using them. Some new formations are the expression of sensory perception of the environment, the original thinking of the poetess Kaputikyan.

---

ՄԱՍԻԿՈՆ ՑԱՎՐՈՒՄՅԱՆ

Արցախի պետական համալսարանի  
հայոց լեզվի և գրականության ամբիոնի հայցորդ

**ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՅՈՒՐՈՐԻՆԱԿ ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐԱՆՔ  
ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** բառային կրկնություններ, հարակրկնություն, անաֆորա, էպիֆորա, վերջույթ, բանաստեղծական ռիթմ, ռեֆրեն, խոսքի արտահայտչականություն:

**Ключевые слова и выражения:** повторение слов, анафора, эпифора, концовка, стихотворный ритм, рефрен, выразительность речи.

**Key words and phrases:** word repetitions, anaphora, epiphora, limb, poetic rhythm, significance of speech.

Իբրև լեզվի արտահայտչական միջոց Խանյանը գործածում է բառական կրկնության վրա հիմնված բանադարձումներ: Բառերի կրկնությունը նրանց իմաստային կողմն ընդգծող ոճական կարևոր միջոց է:

Նշված արտահայտչամիջոցը ոչ միայն նպաստում է մտքերի ու նախադասությունների շաղկապմանը, այլև խոսքի հուզական լիցքավորման միջոց դառնում: «Շարահյուսական կառույցների (այսպես կոչված՝ ֆիգուրների) կրկնությունը,- ինչպես նշում է Էդ. Ջրբաշյանը,- օգնում է ստեղծելու թեմայի, ոճի և արտահայտության այն ներքին միասնականությունը, որի շնորհիվ բանաստեղծությունն ընկալվում է իբրև մեկ ամբողջական և անբաժան տրամադրություն, գաղափարի ավարտուն մարմնավորում»<sup>1</sup>: Կրկնությունների արմատները գալիս են դարերի խորքից և կապվում են ժողովրդական բանահյուսության հետ: Խանյանի ստեղծագործություններում կրկնությունները իմաստային և ոճական տարբեր նպատակներ են հետապնդում:

Շարահյուսական կառուցվածքի մեջ տվյալ բառը կրկնվելով՝ ուժեղացնում է խոսքի արտահայտչականությունը, չափածո խոսքում նպաստում նաև ռիթմին, բանաստեղծական տողերի համաչափ կառուցվածքին: Կան բառական կրկնության տարբեր տեսակներ: Խանյանը շատ հաճախ նույն բառը կրկնում է տողերի սկզբում՝ ստեղծելով գեղեցիկ անաֆորա (հարակրկնություն): Ըստ Արտ. Պապոյանի՝ «կրկնության այս տեսակը բնորոշվում է նրանով, որ շարահյուսական որևէ միավոր՝

<sup>1</sup> Էդ. Մ. Ջրբաշյան, Վահան Տերյանի չափածոյի տաղաչափական համակարգը, Ե., «Պարբերական» հրատ., 1995, էջ 117:

նախադասություն, բառ, տող և այլն, սկսվում է միննույն բառով, բառակապակցությամբ»<sup>2</sup>: Դիտարկենք օրինակներ.

Օրը մտավ իմ սիրտը, ճյուղավորվեց ծառի պես,  
Օրն իմ սրտում թպրտաց երգ չմտած բառի պես,  
Ընկերացավ իմ սրտում օրն առեղծված անհունին,  
Օրն իմ սրտում ծավալվեց ինչպես հայոց անտունին...(ԸԵ,

հ.2, էջ 115)

Գրեթե բոլոր տողերի սկզբում կրկնվող «օր» բառը առավել ներգործուն է դարձնում այդ բառի կարևորությունն ու արժեքը:

Հաճախ Խանյանն ամբողջ բանաստեղծությունը կառուցում է անաֆորային սկզբունքով.

Ծառերն այս ունեն անուններ,  
Ծառերն այս ապրում են, շնչում,  
Ծառերն այս բացում են նոր հուներ՝  
Եվ ըմբոստ պայքարի կոչում:  
Ծառերն այս հուշ են, հիշատակ,  
Ծառերն այս թիկունք են ու թև,  
Ծառերն այս սրտեր ունեն տաք,  
Խոնարհվենք ծառերի առջև: (ԸԵ, հ. 4, էջ 271)

Այստեղ ծառեր բառը, որ կրկնվում է յուրաքանչյուր տողի սկզբում, ուժեղացնում է գուգահեռ անդամների ամբողջականությամբ արտահայտված բանաստեղծության միտքը՝ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով ընդգծված բառի իմաստային կողմի վրա: Ծառերն այստեղ խորհրդանշում են պատերազմում հերոսաբար զոհված ուսանողների վերածնված հոգիները:

Հարակրկնության միջոցով բանաստեղծն իր խոսքի իմաստային կենտրոնում է պահում մի քանի բառեր և դրանցով սկսելով բանաստեղծական տողերը՝ ներկայացնում է ապրումի աստիճանական զարգացումը: Որպես հարակրկնության միավորներ հանդես են գալիս տարբեր բառեր ու բառակապակցություններ: Խոսքին առանձնահատուկ երանգ են հաղորդում հատկապես դերանունների, մակբայների ու եղանակավորող բառերի տողասկզբի կրկնությունները, ինչպես օրինակ՝

Ես՝ սիրո համար ծնված,  
Ես՝ սիրո հրով սնված,  
Ես՝ սիրո Աստված ու տեր... (ԸԵ, հ.2, էջ 173)

<sup>2</sup> Արտ. Հ. Պապոյան, Չափաձոյի լեզվական արվեստի հարցեր, Ե., 1976, էջ 88:

Չափածո խոսքում կրկնվել կարող են ոչ միայն առանձին բառեր, այլև բառակապակցություններ և նույնիսկ նախադասություններ ու քառատողեր: Խանյանը կիրառում է ոչ միայն բառային, այլև շարահյուսական անաֆորա: Այս դեպքում տողասկզբում կրկնվում են ոչ թե առանձին բառեր, այլ բառակապակցություններ ու նախադասություններ: Օրինակ՝

Հազար անգամ հեռվից փարվել եմ քեզ հոգով,

Հազար անգամ քեզնով սիրտս է խնդացել: (ԸԵ, հ.1, էջ 34)

Հարկ է նկատել, որ Խանյանը հաճախ է դիմում տողասկզբում շարահյուսական անաֆորաների.

Իմ սիրտը ծառին տվի, ծառը բողբոջեց,

Իմ սիրտը առվին տվի, կարկաչեց առուն,

Իմ սիրտը հրին տվի, հուրը բորբոքվեց,

Իմ սրտով ծլարձակվեց մի հրաշք գարուն:

Իմ սիրտը տվի ճամփին, ճամփան թրթռաց,

Իմ սրտով ձգվեց անվերջ, ձուլվեց գալիքին,

Իմ սիրտը երգին տվի, երգը խլրտաց... (ԸԵ, հ.2, էջ 116)

Տողասկզբում կրկնվող բառերի կամ բառակապակցությունների միջոցով բանաստեղծն առանձնացնում, ընդգծում է դրանք՝ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով նրանց արտահայտած իմաստային այս կամ այն կողմի վրա: Ահա մեկ այլ օրինակ՝

Եվ ո՞ւմ չի տարել դեպի ջինջ բարձունք,

Եվ ո՞ւմ չի մղել դեպի թեժ պայքար,

Պետեֆու սիրտը՝ հույզերի ակունք,

Պետեֆու սիրտը՝ մի ամբողջ աշխարհ: (ԸԵ, հ.1, էջ 83)

Բանաստեղծական խոսքի հանգավորմանը, հնչյունական հարստությանը և պատկերավորությանը նպաստում են բանատողերի ներսում հանդես եկող ներքին կրկնությունները.

Դրա համար գոհ եմ, գոհ եմ ես իմ բախտից...

Գոհ եմ քեզնից, սեր իմ, անչափ գոհ եմ... (ԸԵ, հ.1, էջ 152)

Կրկնությունը մտքի արտացոլման միջոց է դառնում՝ շեշտադրելով տվյալ բառը կամ արտահայտությունը:

Խոսքի արտահայտչականությունն ուժեղացնելու, առանձին հատվածների միջև ներքին կապ ստեղծելու նպատակով Խանյանն օգտվում է կրկնության այլ ձևերից. հաջորդ քառատողի սկզբում կրկնում է նախորդ քառատողի վերջին տողը՝ կամ նույնությամբ, կամ աննշան փոփոխություններով.

Գլխաշոր ուներ նա կանա՛չ-կանա՛չ,

Եվ կանա՛չ-կանա՛չ ժպիտներ ուներ... (ԸԵ, հ.1, էջ 155)

\*\*\*

Արևը իջել է սարերին,  
Սարերը խոսում են իրար հետ...(ԸԵ, հ.1, էջ 233)

Երբեմն բանաստեղծը ամբողջ բանաստեղծությունն է կառուցում այս սկզբունքով: Դրա վառ օրինակն է «Մորս ծննդյան օրն է» բանաստեղծությունը, որից կրեբենք մի քառատող.

Մորս ծննդյան օրն է, տաղիկներ,  
Տաղիկներ, հնչեք մորս քնքշանքով,  
Մորս ծննդյան օրն է, շաղիկներ,  
Շաղիկներ, շնչեք մորս քնքշանքով: (ԸԵ, հ.4, էջ 137)

Խանյանը կիրառում է նաև տողավերջում կրկնվող բառերի, առանձին արտահայտությունների, նախադասությունների ոճական ձևերը՝ վերջույթ կամ էպիֆորա, որը մեծ չափով նպաստում է բանաստեղծական խոսքի ռիթմին, ուժեղացնում նրա արտահայտչականությունն ու հուզական ներգործությունը:

Վերջույթի օգտագործման լավագույն օրինակ է հետևյալ բանաստեղծությունը.

Բարակ առուն խոխոջում է՝ երգ է ասում,  
Մառն աղբյուրը կարկաչում է՝ երգ է ասում,  
Որոտում է գժված գետը՝ երգ է ասում,  
Ոլորում է քամին մեջքը՝ երգ է ասում,  
Հսկա կաղնին ստափում է՝ երգ է ասում,  
Աստղը հեռվից լուռ թարթում է՝ երգ է ասում...(ԸԵ, հ.1, էջ

100)

Վերջույթային կրկնության ոճական արժեքն ավելի է կարևորվում, երբ կրկնվում է կոչականը: Այդ դեպքում միաձուլվում են կոչականի՝ որպես խոսքի կենտրոնի ու կրկնվող բառի իմաստային ու արտահայտչական կարևոր դերերը: Դիտարկենք «Լեռներ» բանաստեղծությունը, որտեղ կոչականը կրկնվում է ինչպես բանատողերի վերջում, այնպես էլ սկզբում.

Լեռնե՛ր, դուք ինձ ծնող լեռնե՛ր,  
Լեռնե՛ր, դուք ինձ սնող լեռնե՛ր,  
Հպարտ լեռնե՛ր,  
Անպա՛րտ լեռներ...(ԸԵ, հ.1, էջ 232)

Քնարական հերոսի ներքին ապրումներն ու զգացողությունները կարծես ամփոփված լինեն ընդամենը մեկ բառի մեջ՝ լեռներ: Կրկնվող կոչականը դառնում է խոսքի կենտրոն՝ բանաստեղծական խոսքը հասցնելով առավելագույն հնչեղության:

Վերջույթի դեպքում էլ կարող են կրկնվել ինչպես առանձին բառեր, այնպես էլ ամբողջական բառակապակցություններ ու նախադասություններ: Ըստ որում, դրանք կարող են կրկնվել կամ յուրաքանչյուր

տողից հետո կամ էլ ամեն մի երկտողի վերջին տողից հետո: Օրինակ՝ «Իմ Ղարաբաղ» բանաստեղծության մեջ (որը հեղինակը երգ է անվանում) յուրաքանչյուր քառատողից հետո կրկնվում է նույն երկտողը.

Իմ Ղարաբաղը գալիքիս լույսն է,

Բալիկիս հույսն է իմ Ղարաբաղը: (ԸԵ, հ.1, էջ 474)

Միևնույն տողը ճշգրտորեն կրկնվում է յուրաքանչյուր քառատողի վերջում և արտահայտում քնարական հերոսի հոգեվիճակը: Կրկնության ոճական հնարանքը նաև համապատասխան ռիթմի ստեղծման միջոց է:

Հաճախ վերջույթի միջոցով բանաստեղծն արտահայտում է տվյալ ստեղծագործության հիմնական տրամադրությունը, լիրիկական հերոսի հուզական ապրումները: Օրինակ.

Եթե լռել կա՝ մայր հողի նման,

Թներ պարզել կա՝ մայր հողի նման,

Որդուն սիրել կա՝ մայր հողի նման,

Փառքի տիրել կա՝ մայր հողի նման: (ԸԵ, հ.1, էջ 479)

Խանյանը կիրառում է նաև բանաստեղծական ամբողջական տողերի, քառատողի կրկնություն (ռեֆրեն)՝ կրկնվող տողերով ուժեղացնելով և ընդգծելով բանաստեղծական հիմնական տրամադրությունը: Այսպես՝

Դու ծաղկունք շատ էիր սիրում.

Ծաղկել են արդեն ծառերը,

Դու ծաղկունք շատ էիր սիրում.

Ծաղկել են ադեն սարերը: (ԸԵ, հ.1, էջ 934)

Դիտարկենք «Ղարաբաղ» բանաստեղծությունը, որն ամբողջությամբ չենք մեջ բերում, սակայն նշենք, որ յուրաքանչյուր նոր քառատողից հետո կրկնվում է ընդգծված քառատողը, և այդպես՝ չորս անգամ.

Ուր գնացել եմ, սիրել եմ ես քեզ

Ու մնացել եմ միշտ ղարաբաղցի,

Ընկերներիս հետ ազնիվ եղբոր պես,

Իսկ աշխատանքում քաջ ու առնացի:

Իմ ուժ ու ավյուն,

Իմ սիրտ ու արյուն,

Դու իմ հաց ու աղ,

Իմ մայր Ղարաբաղ: (ԸԵ, հ.4, էջ 144)

Բանաստեղծի չափածոյում հանդիպում են նաև խառը և շրջադասված կրկնության օրինակներ, որոնք համաչափ դասավորություն չունեն, չեն ենթարկվում որոշակի կադապարների: Նմանօրինակ կրկնությունները ոչ միայն նպաստում են խոսքի արտահայտչականությանը, այլև բազմազանություն են մտցնում խոսքի մեջ, ինչպես օրինակ՝

Աշխարհը ծնվել է ջերմ սիրուց,

Միրո խենթ ընթացք է ողջ կյանքը,  
Եվ սերը լեզենդ է հինավուրց  
Քո սերն է իմ անհուն բերկրանքը: (ԸԵ, հ.2, էջ 285)

Խանյանի չափածոյում գործածական կրկնության բոլոր տեսակները նրա լեզվական արվեստը հատկանշող կարևոր տարրեր են: Առանձին բառերի, կապակցությունների, բանաստղերի կրկնությունները ոչ միայն հոգեվիճակի դրսևորման ցայտուն միջոցներ են, որոնք նպաստում են տաղաչափական խնդիրների լուծմանը, այլև կարևոր գործառոյթ են կատարում բանաստեղծական լեզվի ժողովրդայնության ու մի շարք արժանիքների՝ երաժշտականության, ներդաշնակության, բազմազանության ապահովման գործում: Նշված ոճական հնարանքի տպավորությունն ու արժեքը պայմանավորված են կրկնության միավորների ճիշտ ընտրությամբ, ինչը դարձյալ փաստում է ինքնատիպ մտածողի անսպառ երևակայության ու յուրահատուկ աշխարհընկալման մասին:

### Մ. Յավրույան

#### **Կրկնությունը որպես յուրօրինակ ոճական հնարանք Մոկրատ Խանյանի ստեղծագործություններում Ամփոփում**

Մոկրատ Խանյանը հայ ժամանակակից այն գրողներից է, ում ներկայանալը բազմերանգ է և ընդգրկուն: Խանյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում իրենց անմիջականությամբ, պարզությամբ, բայց միևնույն ժամանակ հոգեբանական խորությամբ: Բանաստեղծը վարպետորեն է գործածում հայերենի ամենատարբեր լեզվաոճական հնարանքները՝ արտահայտելու համար քնարական հերոսի ներքին ապրումներն ու զգացմունքները: Նրա չափածոյում առավել հաճախակի գործածական հնարանքներից է կրկնությունը:

Որպես լեզվական արտահայտչության միջոց ուշագրավ են բառային կրկնությունները: Նշված արտահայտչամիջոցը ոչ միայն նպաստում է մտքերի ու նախադասությունների շաղկապմանը, այլև խոսքի հուզական լիցքավորման միջոց դառնում: Կրկնությունների արմատները գալիս են դարերի խորքից և կապվում են ժողովրդական բանահյուսության հետ: Խանյանի ստեղծագործություններում կրկնությունները իմաստային և ոճական տարբեր նպատակներ են հետապնդում: Շարահյուսական կառուցվածքի մեջ տվյալ բառը կրկնվելով՝ ուժեղացնում է խոսքի արտահայտչականությունը, չափածո խոսքում նպաստում նաև ռիթմին, բանաստեղծական տողերի համաչափ կառուցվածքին: Կրկնվել կարող են ոչ միայն առանձին բառեր, այլ նաև բառակապակցություններ կամ ամբողջական բանաստեղծական տողեր: Խանյանի չափածոյում

գործածական կրկնության բոլոր տեսակները նրա լեզվական արվեստը հատկանշող կարևոր տարրեր են: Առանձին բառերի, կապակցությունների, բանաստղերի կրկնությունները ոչ միայն հոգեվիճակի դրսևորման ցայտուն միջոցներ են, որոնք նպաստում են տաղաչափական խնդիրների լուծմանը, այլև կարևոր գործառույթ են կատարում բանաստեղծական լեզվի ժողովրդայնության ու մի շարք արժանիքների՝ երաժշտականության, ներդաշնակության, բազմազանության ապահովման գործում:

**Мамикон Яврумян**

**Повтор как специфический стилистический прием  
в произведениях Сократа Ханяна**

**Резюме**

Сократ Ханян – современный армянский писатель с пестрой и многогранной палитрой воззрений. Произведения Ханяна отличаются своей непосредственностью, простотой и одновременно психологической глубиной. Поэт мастерски использует стилистические средства языка для выражения чувств и внутренних переживаний лирического героя. В его поэзии часто используется прием повтора.

Словесные повторы весьма занимательны в качестве средства выразительности речи. (Словесные повторы используются как языковые средства выражения). Данное средство выражения способствует не только соединению мыслей и предложений, но и становится средством эмоционального наполнения речи (эмоциональному наполнению речи). Использование повторов уходит своими корнями вглубь веков и связано с народным творчеством. В творчестве Ханяна повторы преследуют разные смысловые и стилистические цели. Наличие словесных повторов в синтаксической конструкции усиливает выразительность речи, способствует ритмичности поэтического текста и позволяет соразмерно конструировать стихотворные строки (соразмерности стихотворных строк). Повторяться могут не только отдельно взятые слова, но и словосочетания или стихотворные строки. В поэзии Ханяна все виды использованных повторов – важные элементы, характеризующие его языковое искусство. Повторение отдельных слов, словосочетаний и стихотворных строк – средство выражения внутреннего состояния человека. Они также способствуют решению метрических целей, выполняют важную функцию в популяризации поэтического языка и обеспечении мелодичности, гармоничности и разнообразия поэтического текста.

**The repetition as an original stylistic trick in Sokrat Khanyan's works**

**Summary**

Sokrat Khanyan is one of the modern Armenian writers, whose compositions are various and complete. Khanyan's compositions are known for their directness, simplicity, but at the same time with the psychological depth. The poet masterly uses different methods of Armenian language-stylistics for expressing the hero's inner life and feelings. In his poems the repetition is the most used method.

Word repetitions are remarkable as the means of linguistic significance. The mentioned means of significance promote the conjunction of thoughts and sentences and also makes the speech emotional.

The roots of repetitions come from the ages and are connected with folklore. In Khanyan's works repetitions have semantic and stylistic various purposes.

In syntactical structure the repeated word strengthens the significance of speech, in poetical speech it promotes the rhythm and symmetrical structure of poetic lines, too. Not only separate words can be repeated and also phrases and complete poetic lines.

In Khanyan's poetical works all the types of colloquial repetition are important elements to feature his linguistic art.

The repetition of separate words, phrases, poetic lines brightly demonstrate state of soul which promotes to solve versification problems and perform a great function in popularity of poetic language and in creating a number of virtues which are musicality, harmony, diversity.

**ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ԼԵԶՎԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հնչյունական համակարգ, բաղաձայն, բաղաձայնական տեղաշարժ, ձայնավոր, հնչյունափոխություն, վաղ աշխարհաբար, սպագիր գիրք, հնչյունական բնութագիր:

**Ключевые слова и выражения:** звуковая система, согласный, консонантное передвижение, гласный, чередование звуков, ранний новоармянский язык, печатная книга, звуковая характеристика.

**Key words and expressions:** phonetic system, consonant, consonant displacement, vowel, alteration, Early Modern Armenian, printed book, phonetic description.

**Մուտք:** Հայոց լեզվի զարգացման նոր փուլում լույս են տեսել աշխարհաբար առաջին սպագիր գրքերը («Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» (1675), «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմուսացն Դաւթի մարգարէին» (1687), «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» (1699)), որոնց լեզվի հնչյունական քննությանն է նվիրված մեր այս աշխատանքը<sup>1</sup>: Առավել բնութագրական հնչյունական իրողությունները կարող են հուշել նշված երկերին հատուկ բարբառային առանձնահատկությունների կամ բարբառային միախառն պատկերի առկայության մասին: Վերոհիշյալ գրքերի լեզվում առանձնացված հնչյունական երևույթները միավորել ենք մի քանի խմբերում:

**«Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» (1675): 1. Բաղաձայններ:**

Գ. Ջահուկյանը հայերենի բարբառներն ուսումնասիրելիս նշում է, որ դրանց հնչյունական հատկանիշների քննությունը նպատակահարմար է

<sup>1</sup> Աշխատանքում բնագրային օրինակները կբերվեն հետևյալ աղբյուրներից՝ «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ», Մարսել, 1675, «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմուսացն Դաւթի մարգարէին», Վենետիկ, 1687, Ղ. Վանանդեցի, «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի», Ամստերդամ, 1699:

կատարել նախ ըստ բաղաձայնների, ապա ըստ ձայնավորների<sup>2</sup>: Մեր քննած գրքերի լեզվի հնչյունական բնութագիրը մենք ևս կներկայացնենք այդ սկզբունքով, քանի որ փորձելու ենք առանձնացնել հայերենի բարբառներին բնորոշ բաղաձայնական տեղաշարժեր: Երկի լեզվում բաղաձայնների փոփոխությունների առավել ընդգրկուն խումբը հետևյալն է՝ *ձայնեղների խլացում*<sup>3</sup>, *բ>պ*՝ արապներն (էջ 2), *պարշեցավ* (121, 124 ննայս բայը հաճախ է կիրառվում (բարիշել)), քահրիպար (143՝ միջին հայերենի բառարանում վկայված է պ-ով քահրիպար՝ սաթ, սակայն նշված է նաև քահրուբար տարբերակը<sup>4</sup>, արդի հայերենի բառարանում վկայված է նաև քահրիբար<sup>5</sup>), *գ>կ*՝ կարկալ (53, սակայն հանդիպում է նաև կարգալ (95)), հինկերորդն (1, 33), հինկ (12, 13 նն), հնկին հետ (25), հնկէն յետ (56 (հինգ թվականը երկի լեզվում տարբեր կապակցություններում հանդիպում է կ-ով)), *կեօրայ* (116), *դ>տ*՝ տաքտեղ (106, բայց գործածվում է նաև տաքդեղն (107)), Լուտովիկոսի (145), *տինարի* (97 (դինարի, դենար՝ մի դրամի կշիռ)), *ջ>ճ*՝ ճամբարած (116 (ջամ անել՝ գումարել)):

Գրքի լեզվի բաղաձայնական համակարգին բնորոշ են նաև որոշ իրողություններ, որոնք սահմանափակվում են մեկ-երկու օրինակներով, ինչպես՝ ձայնեղների շնչեղ խլացում՝ *գ>ք*՝ թարքմանել (առաջաբան I), խուլերի շնչեղ խլացում՝ *տ>թ*՝ կարթին համար (122), սակայն գործածվել է նաև կարտ (122, 123), կարտին համար (125), շնչեղ խուլերի ձայնեղացում՝ *ք>գ*՝ գրգոյս (առաջաբան I), գգիրգս (առաջաբան I), գրգուկս (145): Հարկ է նշել, որ *գիրք* բառի նման գրությունը երկի լեզվում կարող է ընդունված ուղղագրական իրողության արտացոլում լինել:

Ըստ բաղաձայնների որոշ փոփոխությունների՝ Ա. Ղարիբյանը կատարել է բարբառների հնչյունական դասակարգում՝ առանձնացնելով բաղաձայնական համակարգի տեղաշարժեր<sup>6</sup>, որոնց տեսանկյունից քննելով «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» երկի լեզվում բաղաձայնական համակարգի նշված փաստերը, կարելի է նշել, որ առկա են բաղաձայնների տարբեր փոփոխություններ, սակայն հիմնականը և բնութագրականը ձայնեղների խլացումն է՝ բաղաձայնական համակարգի

<sup>2</sup> Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն (վիճակագրական բարբառագիտություն), Եր., 1972, էջ 45:

<sup>3</sup> Ընդգծված հնչյուններով ցույց են տրվում հնչյունական փոփոխությունները:

<sup>4</sup> Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 796: Այսուհետև՝ ՄՀԲ, բացատրության ժամանակ օրինակների կողքին կնշվի էջն այս աղբյուրից:

<sup>5</sup> Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, հ. 2, էջ 1545:

<sup>6</sup> Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 57-62:

առաջին տեղաշարժը, որը տեւում ենք Աստրախանի, Շամախու, Ուրմիայի, Վանի, Խոյի և որոշ այլ բարբառներում: Ձայնեղների շնչեղ խլացումը, որն առանձնապես տարածված չէ երկի լեզվում և սահմանափակվում է *թարքմանել* օրինակով, բաղաձայնական համակարգի տեղաշարժ-տեղափոխության հատկանիշներից մեկն է, նաև երկրորդ տեղաշարժի բնութագրերից մեկը: Բաղաձայնական որոշ իրողություններ որպես կոնկրետ տեղաշարժերի հատուկ դրսևորումներ չեն նշվում, սակայն սահմանափակ օրինակներով առկա են երկի լեզվում, ինչպես՝ շնչեղ խուլերի ձայնեղացում, խուլերի շնչեղ խլացում: «Արհեստ համարողութեան» երկի լեզվին անդրադառնալիս Ռ. Իշխանյանը նշում է, որ նրանում խուլերով տառադարձված ձևերը հավանաբար միջին հայերենի կամ արևմտահայ խոսքի ազդեցությամբ են պայմանավորված, միաժամանակ բառերի մի մասն էլ արևելահայ ձևավորում ունի, ինչպես՝ դիտր (Ն. Ջուղայի բարբառ), ֆլան (Երևանի և Նոր Ջուղայի բարբառ)<sup>7</sup>:

**2. Ձայնավորներ:** Երկի լեզվում ձայնավորների վերաբերյալ առանձնացրել ենք հետևյալ իրողությունները՝ ձայնավորների հնչյունափոխություն և ձայնավորների սղում: Հնչյունական այս երևույթները ներառվում են դիրքային կամ շեշտի ազդեցությամբ կատարվող հնչյունափոխության մեջ, որը հայտնի է նաև որպես ավանդական կամ ժառանգորդական: Նշված իրողությունները տրված են ստորև

*ա) ձայնավորների հնչյունափոխություն՝* **ի>ը** (*բառասկզբում*)՝ ըննին հետ (25), ըննումն (48), քսան և ընով (100, 102, բայց քսան և ինն (99), ինու (102), ինոյ (133)), հարիւր և ըննով (132), **ի>ը** (*բառամիջում*)՝ գրին (23), թվով (33, 54), ի մտքերս (38), թվի մեջն (55-այս բառով օրինակները ևս հաճախ են հանդիպում), գրերեն յետ (69-*գիր* բառով օրինակները հաճախակի են երկի լեզվում), մառչին (81, 95 նն), դորի (142), **ե>ի**՝ միջումըն (14), կիսին համար (96), կիսով (144), **ու>ը**՝ ծուրթինն (12), քշտի (49, 87), մշկի (141, 142 նն) նն: Երկի լեզվում գերակշռում է **ի>ը** հնչյունափոխությունը, որն ունի բառասկզբի և բառամիջի դրսևորումներ,

*բ) ձայնավորների սղում՝* ձայնավորների սղման վերաբերյալ Հ. Մուրադյանը նշում է. «Շեշտի ազդեցությամբ առաջացած պատմական հնչյունափոխության ամենաաչքի ընկնող երևույթը ձայնավորների սղումը կամ ը-ի փոխվելն է: Այս փոփոխությունը կատարվում է հնչյունաբանական

<sup>7</sup> Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Եր., 1979, էջ 54:

մակարդակում...»<sup>8</sup>: Բերենք օրինակներ՝ **ե**՝ երսուն-(երեսուն) (7), ցորնահար-(ցորեն) (112), **ի**՝ ամսումըն (112), ամսներն-(ամիս) (126), **ու**՝ պզտկութիւն-(պզտիկ) (18), քառասնի միջումըն- (քառասուն) (47), **ա**՝ առջնովն-(առաջ) (113, բայց գործածվել է նաև առաջնովն (111, 114), աւելցած-(աւելացած) (130), **օ**՝ եթի-(բայց հանդիպում են նաև հետևյալ ձևերը՝ եօթն (24), եօթնով (47) են): *Երսուն*-(երեսուն) (7), *առջնովն*-(առաջ) (113), *աւելցած*-(աւելացած) (130) բառերում ունենք միջնավանկի ձայնավորի անկում, որը հայոց լեզվի զարգացման ընթացքում դարձել է մի շարք արևմտյան բարբառների առանձնահատկություն, ապա թափանցել արևմտահայ գրական լեզվի սահմանները: Ըստ Հ. Մուրադյանի՝ արևմտահայերենի համեմատությամբ արևելահայ գրական լեզվի մեջ քիչ են սղման ենթարկված նման բառերը, բայց, այնուամենայնիվ, կան<sup>9</sup>:

3. **Հնչյունական այլ իրողություններ:** ա) **երկբարբառների (երկհնչյունների) փոփոխություններ** (սա ևս շեշտափոխական հնչյունափոխության դրսևորում է)՝ **իւ>ի**՝ Պիթագորասի (32), **ոյ>ու**՝ ծուլից (առաջաբան I), **իւ>ե**՝ համարողութեան (առաջաբան I, 145), մարմնութեան (145) են (սեռական-տրական հոլովին բնորոշ **իւ>ե** գրաբարյան կանոնիկ հնչյունափոխություն) են,

բ) **զուգահեռություններ**՝ երկի լեզվում երբեմն նույն բառն օգտագործվում է հնչյունական տարբեր կազմերով, ինչպես՝ հազարաւորներն (7) // հազարներն (7), չի մընար (14, 43 են) // չի մնար (49, 61 են), տողումն (33) // տողումըն (33), մընացածն (72, 73 են) // մնացածն (73), մարչիլն (80, 91) // մառչիլ (83, 90 են), մառչիլ (81, 95) // մառչիլի (91), երբեմըն (90) // երբեմն (101), քսան և ըննով (99, 100) // քսան և ընով (100), տաքտեղ (106) // տաքդեղն (107), ամսումըն (112, 113 են) // ամսումն (113), կարթին համար (122) // կարտին համար (125) են: Հաճախ են գործածվում ը-ի գրությամբ և առանց դրա զուգահեռ ձևերը: Վաթսուն թվականը հանդիպում է *վացուն* ձևով, որն էլ կիրառվում է նաև հետևյալ տարբերակով՝ վացուն (96) // վացուն (107, 112, 133, սա հանդիպում է նաև «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» երկի լեզվում (78)), վացուն և վեց (97), վացնով (108, 111): Այս օրինակում կարելի է տեսնել պարզ հնչյունների բարդացում, երբ *թ* բաղաձայնական զուգորդությունից առաջացել է *ց* պայթաշփականը, իսկ կոնկրետ տվյալ բառը բնորոշ է արդեն կիլիկյան հայերենին: Մարչիլն (80, 91) // մառչիլ (83, 90 են) զուգահեռ կիրառության (ր/ռ) վերաբերյալ

<sup>8</sup> Հ. Դ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 86:

<sup>9</sup> Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 87:

նշենք, որ Գ. Ջահուկյանը բարբառների բաղաձայնական համակարգերին բնորոշ կարևոր հատկանիշներից է համարում ո-ի և ր-ի շփոթությունը ոչ նախաբաղաձայնական դիրքում<sup>10</sup>,

զ) *հնչյունի հավելում և դրափոխություն*<sup>11</sup>՝ սրանք փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումներ են, որոնք երկի լեզվում սահմանափակվում են մեկ-երկու օրինակներով, ինչպես՝ մանտր (109), ութնով (133): Մանտր բառում առկա է տ հնչյունի հավելում, հավանաբար նր-ի միջև ավելացել է ղ հնչյունը (մանր>մանդր)<sup>11</sup>, որը հաստուկ է հայերենի բարբառներին, ձայնեղ դ-ն խլացել է և վերածվել տ-ի: Ութնով բառում ունենք ն-ի հավելում, որի վերաբերյալ Հ. Մուրադյանը նշում է. «Ն-ի հավելումը առավել տիպական է բարբառներին, այն էլ բառավերջում՝ բաղաձայնից հետո և բառամիջում՝ բաղաձայնից առաջ»<sup>12</sup>: Դրափոխությունը դրսևորվել է եկրու (125) // երկու (125), լիրպայ (144) // լիպրայ (144,145) օրինակներում,

դ) *ը-ի հավելում*<sup>13</sup>՝ երկի լեզվի հնչյունական համակարգում տարածված է արտասանվող ը-ի գրությունը, որը կարող ենք դիտել որպես բնութագրական հատկանիշ, ինչպես՝ կու մընայ (12, 26 նն), միջումըն (14, 51 նն), մընացածն (15, 16 նն), տակումըն (19), կողմըն (26, 28 նն), ըզթին (50) նն:

**«Պարզաբանություն հոգեմտագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» (1687):**

1. **Բաղաձայններ:** Սույն գրքի լեզվի բաղաձայնական համակարգը ներկայացնում ենք առավել բնութագրական հետևյալ իրողություններով՝

ա) *ձայնեղների խլացում*<sup>14</sup>՝ բ>պ՝ ստամպօլցի (3), ամպարշտաց, ամպարիշտ (12, թեև ՆՀԲ-ում վկայված է նաև ամպարիշտ<sup>13</sup>, պօղազն (28), կուլն և պօղազն (28), արապներն (89), արապներովն (92), ամպարն (485 I), գ>կ՝ հնկեկի (3), հինկերորդ (9), գանկատիս (26), գանկատելով (49), կարկին (481), դ>տ՝ պնտագլուլի (133), պինտ (146 II, 742), յարգանտի (806), ջ>ճ՝ մունճ (65, 97 նն), ճկրաններն (135), մունճկացայ (147), մունճանան (481), զինճիք (820), խօճայ (839, 5) նն,

բ) *ձայնեղների շնչեղ խլացում*<sup>15</sup>՝ բ>փ՝ խաբեփայ (12, 461 նն), խափելով (31, 52 նն), խափեբայութեամբ (162), խաբեփայութին (59), ինչպես նկատում ենք, այս բառի տարբեր ձևերում կատարվում է առաջին կամ երկրորդ բ-ի

<sup>10</sup> Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 48:

<sup>11</sup> Է. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 268:

<sup>12</sup> Հ. Դ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 322:

<sup>13</sup> Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. 1, էջ 74:

փոփոխություն, որը հետաքրքիր իրողություն է, **գ>ք՝** փափաքմամբ (3), փափաքողք (5), փափաք (838) են,

զ) **խուլերի շնչեղ խլացում՝** պ>փ՝ ափշեցայ (466), կ>ք՝ մարդիք (14, 27 են, նաև զմարդիք (488, 826)), թալաք (166) (պրսկ. talak–թակարդ), տ>թ՝ լաթինաց (3), լաթինաց ըն շարագրեալ (838), **ծ>ց՝** ըստեղծուացոց (505) են,

դ) **շնչեղ խուլերի ձայնեղացում՝** ք>զ՝ գիրզ (6), գրզեր (25), գրզերն (98, 99), գիրզն (801, 803 են ), գիրզք (821), գիրզս (838): Այս բառախմբի հիման վրա կարելի է նշել, որ սույն գրքի լեզվում ք>զ փոփոխությունը բնութագրական առանձնահատկություն է հատկապես *գիրզ* բառի և նրանից կազմված բառաձևերի համար, ինչպես «Արհեստ համարողութեան» երկի լեզվում: Ինչպես վերը նշել ենք, սա կարող է լինել նաև ընդունված ուղղագրական իրողության արտացոլում:

«Պարզաբանութիւն հոգեւուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» երկում բաղաձայնական համակարգին բնորոշ ձայնեղների խլացման հիման վրա կարելի է մատնանշել բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժը, որը կրում են Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հաղրութի, Քեյվան-Շաղախի, Մարաղայի, Ուրմիայի, Վանի, Խոյի բարբառները: Սակայն միաժամանակ երկում առկա են բաղաձայնների այլ փոփոխություններ, ինչպես՝ ձայնեղների շնչեղ խլացում (տեղաշարժ-տեղափոխությանը բնորոշ իրողություններից մեկը), խուլերի շնչեղ խլացում, շնչեղ խուլի ձայնեղացում (սա արտահայտվում է *գիրք* բառի օրինակներով): Այս երևույթը գալիս է փաստելու, որ վերոհիշյալ գրքի լեզվում միաժամանակ առկա են բաղաձայնական համակարգի տարբեր փոփոխություններ: Ռ. Իշխանյանը նշում է, որ մեր քննած երկի լեզվում մի շարք բառերում ձայնեղների ավանդական գրության փոխարեն խուլերի գործածություն է նկատելի, նոր փոխառյալ բառերում նկատվում են արևմտյան խոսքին կամ միջին հայերենին բնորոշ տառադարձություններ (ՃԷԷԽԻՐ, ՃԷՂԻԱՆ ԼՆ)<sup>14</sup>, սակայն բաղաձայնական համակարգի որևէ տեղաշարժ նա չի մատնանշում:

**2. Ձայնավորներ:** Ինչպես վերը նշվել է, շեշտափոխական հնչյունափոխության դրսևորումներ են հետևյալ իրողությունները՝ **ա)** **ձայնավորների հնչյունափոխություն՝** ի>ը՝ մեկնչի (3), գրգոյս (5), ըզձի (5), պարսպի նման (149), չարասրտաց (479), խղճմտանաց (485 I), նգերն (740), առ ի մարմնանալ (742), անմարմնոյ (756), միածնի (800), **է>ի՝** բարեսիրի (3), **ու>ը՝** բրտի (19), խորհրդներն (116, 135), ժողովրդների (154), պոնկներդ (162), գբի (464), սրբոց (759) են,

<sup>14</sup> Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 79:

բ) *ձայնավորների սղում*՝ **ի**՝ մարդկանց (մարդիկ) (12), մարմնասեր (մարմին) (16),

մօտկացան (մօտիկ) (127), միածնի (միածին) (471), **ը**՝ ի յարեգակնէն (արեգակ[ը]ն) (748) են: Գերակշռում է ի-ի սղումը:

3. **Հնչյունական այլ իրողություններ:** ա) *երկբարբառների (երհնչյունների) փոփոխություններ*՝ շեշտափոխական հնչյունափոխության դրսևորումներից են նաև այս փոփոխությունները՝ **իւ>ը**՝ ճղքէն (20), **եա>է**՝ սենեկիս (816), **ոյ>ու**՝ սառուցի (742), սառուցների (743), տարակուսի (3), **իւ>ու**՝ հազար հարուրեկի (3) են, **իւ>է**՝ մխիթարութեան (12), փրկագործութեան (13), վրեժխնդրութեան (162) են (սեռական-տրականի իւ>է օրինաչափ փոփոխություն),

բ) *հնչյունի հավելում*՝ փոխազդեցական հնչյունափոխության այս դրսևորումը սահմանափակ է՝ ծանտր (70, 197, 818), մանտրեցիր (89), կումանտրէ (135) են,

գ) *ը-ի հավելում*՝ տվյալ երկի լեզվին ևս բնորոշ է ը-ի հավելումը, ինչպես «Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» գրքի լեզվին, օրինակ՝ ըստամոքս (142), ըստացուածքն (143), ըշտեմարանն (485) ըստեղծօղի (606), ըզիշատակ (838), ընթերցողաց ըն աղաչեալ (838) են: Ը հնչյունի հավելումը մենք դիտում ենք որպես երկի լեզի հնչյունական համակարգի բնութագրական առանձնահատկություն, քանի որ այն շատ տարածված է և ներառում է բազում օրինակներ,

դ) *հնչյունական այլ երևույթներ*՝ երկի լեզվում հանդիպող որոշ բառեր մեզ հիմք են տվել առանձնացնելու հնչյունական այլ երևույթների խումբ, օրինակ՝ սեփհական (84)-գուցե պահպանվել է սեպհական-ի (հնչյունի բարդացում դեռ չի կատարվել) հ-ն, ճեվահիր (100)-ջավահիր-ի տարբերակն է, յերևելի (160)-յ-ն գրվել է ե-ից առաջ, ամբիծ (507, 604)-մասնակի առնմանություն է կատարվել, մարախուղն (821)-ռ/ր, խորուկ (826)-ն-ի կորուստ է կատարվել, կեռացեր եմ (829)-կեռ արմատը չի հնչյունափոխվել (կռանալ), ձիգացեալ (838)-ձիգ արմատը չի հնչյունափոխվել են: Բառակազմության մեջ հնչյունի չհնչյունափոխվելը, մ-ն, ո-ր միմյանց փոխարեն հանդես գալը և հնչյունական վերոհիշյալ այլ երևույթները մասնակի բնույթ են կրում, որոշ իրողություններ կարող ենք դիտել որպես բարբառային գործածություններ, բարբառների ազդեցություն:

«Գանձ չափոյ, կշռոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» (1699): 1. **Բաղաձայններ:** Բաղաձայնական համակարգի հնչյունական իրողություններն այս գրքի լեզվում խմբավորել ենք հետևյալ կերպ՝

ա) *ձայնեղների խլացում*՝ ձայնեղների խլացումն առկա է հատուկենտ օրինակներում, երկի լեզվում առանձնապես տարածված չէ՝ **բ>պ**՝

Ըստամայօլ (14, 29 նն), գ>կ՝ դանկ (7, 8)-դանկ՝ պրսկ. dang՝ամբողջի, եկամուտի մեկ վեցերորդ մասը (ՄՀԲ, 158)), սակայն նաև դանգ<sup>15</sup>):

բ) *խուլերի ձայնեղացում՝ տ>ղ՝* խրիղ (30)-Ստ. Մալխասեանցի բառարանում տրվում է *խրիտ* բառը՝ պարսկ.xeriden՝ շահավետ առևտուր<sup>16</sup> նն: Խուլերի ձայնեղացման երևույթը քննելիս ցանկանում ենք նշել որոշ բառեր, որոնց բացատրությունը տեսնում ենք միջին հայերենի բառարանում, որտեղ դրանք վկայված են հնչյունական այլ կազմով: Միջին հայերենի շրջանում հնչյունափոխությունն ընդգրկել էր բաղաձայնական համակարգի հատկապես պայթականների և պայթաշփականների ձայնեղ և խուլ շարքերը: Ըստ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության՝ այդ փոփոխություններն իրենց բնույթով հիշեցնում են այն ելևէջները, որոնք արձանագրվում են մեր ժամանակակից բարբառներում<sup>17</sup>: Հետաքրքիր է խուլերի ձայնեղացման երևույթը միջին հայերենի բառարանում վկայված բառերի համեմատությամբ, ինչպես՝ **պ>բ՝** կու հսաբեն (38), **հսաբ** (64)-**հսապ՝** արաբ. hisab, պրսկ. hesab, թուրք. hesap՝ հաշիվ (ՄՀԲ, 439), **տ>ղ** նաղղ (31)-*նաղտ*՝ արաբ. naqd, պրսկ. nāğd՝ կանխիկ, առձեռն (ՄՀԲ, 564), **ճ>ջ՝** մարջան (16) // մերջան (17)-մարճան // մերճան, որը փոխառություն է՝ բուստ (ՄՀԲ, 503), **քիրաջ** (75)-**քիրաճ՝** թուրք. kirec՝ կիր, այրած կիր (ՄՀԲ, 812) նն,

գ) *խուլերի շնչեղ խլացում՝ պ-փ՝* Փորթուզեզի (50, 56), Փորթուզալ (52, 53), Փորթուզալից (56), **տ>թ՝** ֆունթ (34), Հաշթարխան (37), սուրաթի (18)-միջին հայերենի բառարանում տրված է սուրաթ // սուրատ՝ արաբ. surat, պրսկ. surāt՝ երես, դեմք, կերպարանք (ՄՀԲ, 713), լաթինի (50), **կ>ք՝** մարք (12, 23), կօպեք (36), մեխաք (40, 41), մարդիք (76), նագուք (51)-միջին հայերենի բառարանում նշված է *նագուք* բառը՝ պրսկ. nazok՝ բարակ, նուրբ (ՄՀԲ, 561), Ըստօբօլմ (53, 58), սակայն ժամանակակից հայերենում նույն իմաստով վկայված է նաև նագուկ<sup>18</sup>), Դանիմարք (104), *շնչեղ խուլերի ձայնեղացում՝* քքուրդի (47, 55)-քուրուրթ՝ տաճկ. kükürd՝ ձծումբ<sup>19</sup>,

դ) *բաղաձայնների այլ փոփոխություններ՝* դ>լ՝ փիլ (51), լ>ղ՝ դիտր (10, 18 նն, սակայն գործածվում է նաև լիտր (8, 9 նն)), **փ>ֆ՝** սարֆ (42)-սարփ՝ թուրք. sert՝ թունդ, բարակ (ՄՀԲ, 692), քաֆուրի (46)-քափուր խիժ հնդկային

<sup>15</sup> Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Եր., 1944. էջ 485:

<sup>16</sup> Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 2, Եր., 1944. էջ 309:

<sup>17</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 109:

<sup>18</sup> Է. Աղայան, նշվ. աշխ., հ. 2, էջ 1044:

<sup>19</sup> Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 343:

ծառոյ՝ սպիտակ, ծանրահոտ<sup>20</sup>, **խ>ղ՝**թուղթ (30)-միջին հայերենի բառարանում վկայված է թուլիթ (ՄՀԲ, 250), մսղալ (12 նն), **ֆ>փ՝**Փրանցայ (52), **ս>զ՝** զՄուքիագն (3, 80), Լիզբոնայ (11), Ըստրագբուրզ (58) // Ըստրագբուրզ (58) նն:

«Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» գրքի բաղաձայնական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկի լեզվում առկա են բաղաձայնների տարաբնույթ փոփոխություններ: Ձայնեղների իլացման և խուլերի ձայնեղացման հիման վրա որոշ չափով հնարավոր կլինեն առանձնացնել բաղաձայնական համակարգի տեղաշարժ, սակայն դրանք բավականին ընդգրկուն չեն: Գրքի լեզվում առկա են նաև բաղաձայնական այլ իրողություններ, ինչպես՝ խուլերի շնչեղ իլացում, շնչեղ խուլի ձայնեղացում, այլ փոփոխություններ, որոնք վերը նշվել են: Մեծ քանակությամբ գործածվող և հայ վաճառականների խոսակցական լեզվին հատուկ չափի, կշռի, դրամի, հաշվի բառերի վերաբերյալ (մի մասը փոխառյալ է) Ռ. Իշխանյանը նշում է, որ տառադարձված են արևելահայերենին հատուկ ձևով և բերում է օրինակներ, ինչպես՝ դանթար, ռուփի, մսղալ, թուման, բիբար, դարչին ևն<sup>21</sup>:

2. **Ձայնավորներ:** ա) **ձայնավորների հնչյունափոխություն՝** **ի>ը՝** ի ինդրոյ (առաջաբան), գրեանս (3), մարչի (28, մարչլին (38)), մարչլաքաշ (32), արճըճով (31, 41, բայց նաև արճճով (31), միջագծեն (43), սքան մնեն (46), ամեն մնին (65), **է>ա՝** աժանագին (36), աժան (42), **ու>ը՝** մշկի (16, 21, 40), վշին (41), նշի (45), քքուրդի (47, 55), **է>ի՝** միջումն (43), միջին (69) նն,

բ) **ձայնավորների սղում՝** **ո՝** կշռոյ-(կշիռ) (առաջաբան), **ու՝** հայցման (հայցում) (առաջաբան), եօթանասնին (եօթանասուն) (38), պտղով (պտուղ) (56), **ի՝** մարգարտի (մարգարիտ) (16, 31), դպրի (դպիր) (80), **ը՝** Մարայ (Մարբ) (54) նն: Ըստ մեզ՝ ինչպես ժամանակակից հայերենում է շեշտափոխական հնչյունափոխությունը գործուն, այնպես էլ այս շրջանում է եղել:

3. **Հնչյունական այլ իրողություններ:** ա) **երկբարբառների (երկհնչյունների) փոփոխություններ՝** ոյ>ու՝ բուսով (56), գրքուկ (79), **իւ>ե՝** աշխատութեամբ (առաջաբան), հաւանութեամբ (առաջաբան), սրբութեան (8) նն (սեռական-տրականի իւ>ե գրաբարյան կանոնիկ հնչյունափոխություն),

բ) **զուգածություններ՝** մսխալ (11) // մսղալ (16, 17, 21), դիրեթն (12) // դիրարթն (12, 13), Հնդուստան (16) // Հնդստան (74), մարջան (16) // մերջան

<sup>20</sup> Գ. Աւետիսեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 1002:

<sup>21</sup> Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 106-107:

(17), գուլդ (21, 46) // գուլդի (46), Բաղդադ (20) // Բաղդաստ (26), ունգրուզ (35) // ունկրուզ (36), Հաշտարխան (37) // Հաշթարխան (37), կօռէնթ (41) // կօրէնթ (42), մէխաք (44) // մէխաք (45), սկէլին // ըսկէլին (45), բանքօյի // բանքոյի (48), Ֆրանցիզաց (51) // փրանցիզ (51), Ըստրասբուրգ (58) // Ըստրազբուրգ (58) նն: Նշենք, որ գուգաձևությունները բնորոշ են երկի լեզվին և վերոհիշյալ օրինակներում հիմնականում կառուցվել են խ/դ, դ/տ, ֆ/փ, ս/զ, ո/ր, գ/կ, է/ա, ա/ե, ե/է, օ/ո հնչյուններով, առկա են նաև ը ձայնավորով և առանց ը-ի, ի ձայնավորով և առանց ի-ի գուգահեռ ձևեր, գ) փոխազդեցական հնչյունափոխությունը երկի լեզվում դրսևորվել է սահմանափակ օրինակներով, ինչպես՝ *հնչյունի հավելում*՝ կանանչ (36), ընկերտանց (թեև տ-ն այս դեպքում կարող է լինել բարբառային մասնիկ-հավելում), *դրափոխություն*՝ Թարվիզի (18): Ը-ի հավելումը երկի լեզվի հնչյունական համակարգին առանձնապես բնորոշ չէ, սակայն որոշ բառեր հանդիպում են ը-ով, ինչպես՝ ըստակ (21, 26 նն), Նուրմբերգ (29), Ղըպրուզ (29), չըզիտացած (68, 69 նն), դրմըզն (31) նն:

**Եզրակացություն:** Աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են հնչյունական տարաբնույթ երևույթներ, որոնց մի մասն օրինաչափ է, մյուս մասը շեղվում է հնչյունական ընդհանրական իրողություններից և կարելի է համարել տվյալ գրքերի լեզվին բնորոշ: Թեև «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» (1675), «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» (1687) երկերի լեզվում որոշ չափով հնարավոր է առանձնացնել որևէ կոնկրետ բաղաձայնական տեղաշարժ, սակայն վերը քննված բոլոր գրքերում միաժամանակ գործում են բաղաձայնների տարբեր փոփոխություններ: Այսպիսով, աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի հնչյունական բնութագիրը բաղաձայնական համակարգերի տեսանկյունից միասնական է, քանի որ բաղաձայնների տարաբնույթ փոփոխությունները հանդիպում են միաժամանակ, կողք կողքի:

Ձայնավորների համակարգերում առկա են շեշտափոխական հնչյունափոխության հետաքրքիր դրսևորումներ: Հնչյունական այլ իրողությունների բաժնում առանձնացված երևույթները ևս կարևոր են մեր քննած գրքերի լեզվի հնչյունական բնութագրի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար, օրինակ՝ հնչյունի հավելումներ հանդիպում են վերոհիշյալ գրքերի լեզվում, սակայն ը-ի հավելումը հատկապես ընդգծված է «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ», «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» երկերում, և մենք դա դիտում ենք որպես բնութագրական առանձնահատկություն: «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ»

«Գանձ չափոյ, կշոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» գրքերի լեզվում առանձնացվել են մի խումբ հնչյունական զուգաձևություններ, որոնք կարող են վկայել ոչ հստակեցված հնչյունական կիրառությունների մասին:

Այսպիսով, աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվական բնութագիրն ամբողջանում է նաև հնչյունական համակարգի քննությամբ՝ վկայելով հնչյունական տարաբնույթ իրողությունների, օրինաչափ ու տարբերվող երևույթների մասին, որոնք մեր կարծիքով կարող են պատկերացում հաղորդել վաղաշխարհաբարյան հնչյունական բնութագրի մասին առհասարակ:

**Թ. Պողոսյան**

### **Աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի հնչյունական բնութագիրը Ամփոփում**

Սույն հոդվածը նվիրված է աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի հնչյունական բնութագրին: Քննության ընթացքում ներկայացվել են առավել բնութագրական հնչյունական իրողությունները, որոնք միավորվել են համապատասխան խմբերում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև որոշ երկերի լեզվում հնարավոր է առանձնացնել որևէ բաղաձայնական տեղաշարժ, սակայն աշխարհաբար առաջին տպագիր գրքերում միաժամանակ գործում են բաղաձայնների տարաբնույթ փոփոխություններ: Հնչյունական բնութագիրն ամբողջանում է շեշտափոխական, փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումների, հնչյունական զուգաձևությունների, այլ իրողությունների քննությամբ: Մեր կարծիքով աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը կարող է պատկերացում հաղորդել վաղաշխարհաբարյան հնչյունական բնութագրի մասին առհասարակ:

**Т. Погосян**

### **Звуковая характеристика первых книг, напечатанных на новоармянском языке**

#### **Резюме**

Данная статья посвящена описанию звуковой характеристики первых книг, напечатанных на новоармянском языке. Во время исследования были выявлены наиболее характерные фонетические явления, которые мы классифицировали по группам. Исследование показало, что в изучаемых книгах одновременно наличествуют разные изменения согласных. Звуковая характеристика языка вышеуказанных книг было проведено так же на основе

изучения гласных, разных типов чередования звуков, звуковых парных форм и других фонетических явлений. По нашему мнению, исследование звуковой системы первых книг, напечатанных на новоармянском языке, может в целом передать представление о ранней новоармянской звуковой характеристике.

**T. Poghosyan**

**Phonetic description of the first Modern Armenian printed books**

**Summary**

The article is devoted to the examination of the phonetic system of the first Modern Armenian printed books. During the examination relevantly more descriptive phonetic phenomena have been presented under corresponding groups. The research shows that though it is possible to single out some consonant displacements, there are various consonant changes occurring at the same time in the language of examined books. The phonetic description becomes complete by the examination of vowels, different manifestations of alteration, phonetic parallel forms and other phonetic phenomena. From our point of view, the phonetic examination of the first Modern Armenian printed books can depict the phonetic description of the Early Modern Armenian language in general.



Перевод лермонтовского стихотворения «Я не хочу, чтоб свет узнал...», по мнению С.Даниеляна, относится к наименее удавшимся, поскольку смысл лермонтовского стихотворения не полностью раскрыт Туманяном. И, сравнивая перевод Туманяна с переводами Ал.Цатуряна и Комуни, он отдает явное предпочтение двум последним. Проводя буквальный анализ, он приводит примеры «искажений» («свет» употребляется в значении «мир», «повесть» в значении история, «невежда» надо переводить не «սնմիտ», а «տգետ», «սնկիրթ», «высокая» (душа) следует переводить «վսեմ» или «վեհ», а не «բարձր»)².

На самом же деле Туманян точно и творчески воссоздает образы стихотворения, тонко передает его интонационный рисунок, сохраняет «длину» строки, сжатость и чеканность стиха, его энергичную и горестную интонацию.

Сравним переводы Цатуряна, Туманяна и поздние – Геворкяна³, Погосяна⁴.

В первой строке («Я не хочу, чтоб свет узнал») Цатурян, Погосян и Геворкян усиливают отрицание, начиная с добавленного «нет»:

Ո՛չ, ես չեմ ուզում, որ խորհրդավոր  
(Пер. Цатуряна)

Ո՛չ, չեմ կամենում պատմել աշխարհին  
(Пер. Погосяна)

Ո՛չ, չեմ ցանկանում աշխարհին հայտնել  
(Пер. Геворкяна)

Перевод Ов.Туманяна начинается с «Я», как у Лермонтова, и строки 8-сложные, как в оригинале (в других переводах применен десятисложник):

Ես չեմ ուզում մարդ իմանա  
Իմ անցքերը խորհրդավոր –  
Մերս ու վիշտս, որոնց վերա  
Խիղճս և աստված են դատավոր:

Цатурян меняет местами третью и четвертую строку:

Մերս ու խիղճս են միայն դատավոր  
Ե՛վ իմ վառ սիրուն և՛ իմ տանջանքին:

2 . . . . . 1960, . 140-142 ( . . . . . ) . . . . .

3 . . . . . , 1982, . 37-38 ( . . . . . )

4 . . . . . 3 . . . . . 1. . . . . , 1965, . 198 ( . . . . . )

В переводе первой строфы у Погосяна и Геворкяна совпадают 2 и 4 строки:

Ո՛չ, չեմ կամենում պատմել աշխարհին  
Ես պատմությունը իմ խորհրդավոր,  
Ինչպես եմ տանջվել, սիրել ջերմագին՝  
Աստված ու խիղճն են միայն դատավոր:

(Пер. Погосяна)

Ո՛չ, չեմ ցանկանում աշխարհին հայտնել  
Ես պատմությունը իմ խորհրդավոր.  
Ինչպես եմ սիրել, ինչից եմ տանջվել.  
Աստված ու խիղճն են միայն դատավոր...

(Пер. Геворкяна)

Третья строка приведенной строфы («Как я любил, за что страдал») точнее звучит у Геворкяна, в переводе Погосяна два вопроса объединены в один («Ինչպես եմ տանջվել, սիրել ջերմագին»).

В строфе:

Им сердце в чувствах даст отчет,  
У них попросит сожаленья;  
И пусть меня накажет тот,  
Кто избрел мои мученья.

у Цатуряна, как и в конце первой строфы («Եվ իմ վառ սիրուն, և իմ տանջանքին»), есть повтор (թող նա...թող նա), появляется новый образ (цепь страдания), нет и изначально кажущегося непоэтичным слова «отчет»:

Եվ նոցա առաջ սիրտը կը բացվի,  
Հույս դրած նոցա ջերմ կարեկցության.  
Եվ թող նա՛ միայն, թող նա՛ ինձ պատժի,  
Ով վերստի դրավ տանջանքի շղթան:

Обрубленно звучат строки Лермонтова. А поставленное Цатуряном «и» в начале этой строфы соединяет их. Следующая строка («У них попросит сожаленья») в переводе становится гораздо мягче (надеясь на горячее сочувствие).

В переводе Погосяна – «даст ответ» (а не отчет). Появляется вводное модальное слово (возможно), и «мученье» оттенено эпитетом «беспредельное»:

Իմ սիրտը նրա՛նց պատասխան կտա,  
Խնդրելով, գուցե, խղճահարություն,  
Եվ թող որ միայն ինձ պատիժ տա նա՛,  
Ով հնարել է տանջանքս անհուն:

В переводе Геворкяна добавленные им слова (լոկ, միայն) подчеркивают, акцентируют, что только у Бога и совести сердце просит сожаленья, и лишь тот накажет, кто создал его мучения:

Միրոսս իր հաշիվը նրանց պիտի տա,  
 Նրանցից էլ լոկ կարեկցանք հայցի.  
 Եվ թող ինձ միայն դատապարտի նա,  
 Ով ստեղծել է տանջնաքններն անձիս:

В оригинале один раз, в конце первой строфы, появляется «лишь», выделяющее Бога и совесть как единственного судию – «Тому судья лишь Бог да совесть!..». У Цатуряна это слово (միայն) встречается три раза, в первой, второй и четвертой строфах, у Погосяна – дважды (в первой и второй строфах), у Геворкяна – три раза (дважды – «միայն», один раз – «լոկ»). В переводе Туманяна оно употребляется один раз, но не в первой, а во второй строфе.

Туманян сохраняет все акценты. Каждая строка этой строфы начинается с тех же слов, что и в оригинале:

Նրանց կըրտա սիրոսս հաշիվ  
 Եվ նրանցից կըհայցե գուրթ,  
 Եվ թող ինձ նա միայն պատժի,  
 Ով ցավերիս տվեց սնունդ:

В переводе следующей строфы:

Укор невежд, укор людей  
 Души высокой не печалит;  
 Пускай шумит волна морей,  
 Утес гранитный не повалит.

у Цатуряна опять появляется повтор, причем повторяется добавленное им слово (бессильно – անզոր է).

Մարդկանց անարգանք, մարդկանց նախատինք  
 Անզոր ք են վրսեմ հոգին վրրդովել.  
 Թող գոռա ծովի կատաղած ալիք –  
 Անզոր ք է կանգուն ժայռը կործանել:

В переводе Погосяна «не печалит» становится более радикально-выделенным – не задушит. Волны моря – «неукротимые», вводится противительный союз «но».

Նախատինքը բթամիտ մարդկանց  
 Չեն կարող խեղդել իսկական ոգին,  
 Թող ոռնան ծովի ալիքներն անսանց,  
 Բայց գրանիտյա ժայռը չի պոկվի:

Геворкян добавляет эпитеты – у него два эпитета к «душе» (у Лермонтова она только «высокая») и один – к «волне морей»:

Լուսանքների բիրտ, անհոգի մարդկանց  
Չեն վշտացնի վսեմ վեհ հոգուն.  
Որքան էլ ոռնա ծովը մոլազար  
Գրանիտ-ժայռը կմնա կանգուն:

Туманян творчески точен:

Նախատինքը անմիտների  
Չի խոռվիլ բարձրը հոգին, –  
Որքան ծովը գոռա, փրփրի.  
Ժայռը կանգնած է վերստին:

В последней строфе:

Его чело меж облаков  
Он двух стихий жилец угрюмый,  
И, кроме бури да громов,  
Он никому не верит думы...

у Цатуряна появляются уточнения – утес «всегда рассказывает» свои думы «только» буре.

Նորա ճակատն է ամպերի միջին –  
Մըռա յլ բնկախչ երկու տարերքի  
Եվ միայն ահեղ որոտ-փոթորկին  
Պատմում է նա միշտ խորհուրդը մըտքի:

В переводе А.Погосяна «угрюмый» жилец становится «неуязвимым»:

Ամպերն է քերում ճակատն առնացի  
Երկու տարերքի բնակիչն անխոց,  
Եվ ամպրոպներից ու հողմից բացի,  
Նա իր խոհերը չի մատնի այլոց...

Геворкяновский перевод точнее:

Ամպերի մեջ է ճակատը հպարտ  
Զույգ տարերքների մռայլ բնակչի,  
Եվ փոթորկից ու ամպրոպից բացի,  
Ոչ ոքի խոհեր չի վստահի նա:

В переводе Туманяна нет предугаданной Лермонтовым «тютчевской» краски – «двойного бытия» души («Он двух стихий жилец угрюмый»):

Նրա ճակատը, բարձրացած,  
Ամպերումն է մշտամռայլ,  
Եվ մրրիկից, որոտից զատ  
Միտքը ոչ ում չի հավատալ:

Но в целом его перевод поэтически точен и не превзойден. Другие переводы еще больше оттеняют его превосходство, его лермонтовское звучание.

**Р. Татевосян**

**Об армянских переводах стихотворения М.Ю.Лермонтова**

**«Я не хочу, чтоб свет узнал...»**

**Резюме**

В статье рассматриваются четыре перевода стихотворения Лермонтова «Я не хочу, чтоб свет узнал...» - Ал. Цатуряна, Ов. Туманяна, В. Геворкяна, А. Погосяна. Несмотря на звучавшие в адрес перевода Туманяна упреки в искажениях, именно он точен поэтически: в нем сохранена краткость строки, сжатость, чеканность стиха, энергическая и горестная интонация. Хотя в туманяновском переводе нет предугаданной Лермонтовым «тютчевской» краски, «двойного бытия» души («Он двух стихий жилец угрюмый»), но в целом этот перевод и сейчас является непревзойденным, и сопоставление с другими переводами еще больше оттеняет его превосходство.

**Ռ. Թադևոսյան**

**Մ. Լերմոնտովի «Ես չեմ ուզում մարդ իմանա...» բանաստեղծության**

**հայերեն թարգմանությունների մասին**

**Ամփոփում**

Հոդվածում քննված են Լերմոնտովի «Я не хочу, чтоб свет узнал...» բանաստեղծության չորս թարգմանություններ, որոնք կատարել են Ա. Օստոյրյանը, Հովհ. Թումանյանը, Վ. Գևորգյանը և Ա. Պողոսյանը: Չնայած Թումանյանի թարգմանության մեջ եղած «շեղումների» առթիվ հնչած դժգոհություններին, պետք է շեշտել, որ հենց այս մեկն է առանձնանում բանաստեղծական ճշգրտությամբ. պահպանված են տողի սեղմությունը, իտությունը, քերթության հղկվածությունը, էներգետիկ եւ տիրամած երանգները: Ճիշտ է, թումանյանական թարգմանության մեջ բացակայում են Լերմոնտովի կանխագուշակած ոգու երկվության «տյուտչևան» գույները («Он двух стихий жилец угрюмый»), բայց ամբողջության մեջ այս թարգմանությունն այսօր էլ մնում է անմրցելի, իսկ մյուսների հետ համադրումը ավելի է սրում նրա գերազանցությունը:

R.Tadevosyan

**About Armenian translations of M.Lermontov's poem «I don't want the world know...»**

**Summary**

The article deals with four translations of M.Lermontov's poem «I don't want the world know...» done by Al. Tsaturyan, H.Tumanyan, V.Gevorgyan, A. Pogosyan. Notwithstanding the reproaches of perversions made about Tumanyan's translation, it is it that is poetically precise: it retains the shortness of the line, concision, preciseness of the poem, the energetic and mournful intonation. The Tumanyan's translation doesn't have «Tutchev's» colours foreseen by Lermontov, the «binary existence» («He is the morose dweller of two elements»), but on the whole this translation still remains unsurpassed and the comparison with the other translations makes even more prominent its superiority.

**ՀԱԿՈՒՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ «ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ»  
(ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Հակոբ Պարոնյան, «Մեծապատիվ մուրացկանները», ռեալիզմ, դիպաշար, կառուցվածք, վիպակ, կերպարային համակարգ, նախատիպ, կոմիզմ, երգիծանքի միջոցներ:

**Ключевые слова и выражения:** Акоп Паронян, «Высокочитимые попрошайки», реализм, сюжетная линия, структура, повесть, система образов, прототип, комизм, сатирические средства.

**Key words and expressions:** Hakob Paronyan; 'Honourable Beggars'; realism; plot structure; novelette; figural system; prototype; comic; tools of satire.

Թվում է՝ գրականագիտությունն արդեն վաղուց պիտի սպառիչ խոսք սասած լիներ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի մասին՝ համակողմանի քննելով պատումի ու ժանրային յուրահատկությունները, կառուցվածքը, կերպարային համակարգը, երգիծանքի միջոցներն ու հնարանքները և հարակից այլուայլ հարցեր, նաև նախատիպերի առկայությունը: Բնավ չստվերելով պարոնյանագիտության անցած արգասավոր ուղին՝ նկատելի է, սակայն, որ համաշխարհային մեծության երգիծաբանի արվեստը, այդ թվում՝ հիշյալ կոթողային վիպակը, տակավին կարոտ են գիտական լրջմիտ քննության: Հիմնախնդիրը թողնելով գալիքին՝ ներկա հրապարակման նպատակն է մի քանի դիտարկումներ կատարել «Մեծապատիվ մուրացկանների» առանձնահատկությունների առիթով:

Նախ՝ վիպակի հրատարակության թվականի և խորագրում առկա **ը** որոշիչ հոդի խնդիրը: Զարմանալի մի անփութությամբ ամենատարբեր հրատարակություններում և ուսումնասիրություններում տասնամյակներ շարունակ նշվում են զանազան թվականներ՝ վիպակի խորագրից էլ հաճախ զանց առնելով նշյալ հոդը: Եվ դա այն դեպքում, երբ արդեն կես դարից ավելի է, ինչ Հ. Պարոնյանի երկերի ակադեմիական հրատարակության համապատասխան հատորի տեքստը պատրաստողն ու ծանոթագրողը՝ երջանկահիշատակ Ալիս Մանուկյանը, բարեխղճորեն արձանագրել է հետևյալը. ««Մեծապատիվ մուրացկանները» առաջին անգամ լույս է տեսել

1880 թվականին պրակ առ պրակ: Այս առթիվ «Լույսի» 1880 թվականի նոյեմբերի 1-ի համարում արված է հետևյալ հայտարարությունը՝

«ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Գրեց Հ. Հ. Պարոնյան

Հրատարակիչ Ս. Ղ. Պարտիզպանյան

Ազգային ժամանակակից վեպ մ է, որ տետր առ տետր սկսած է հրատարակվիլ, առաջին տետրը ի լույս ընծայված ըլլալով, կը ծախվի...»:

Տպագրությունը շարունակվել է մինչև 1881 թվականը<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, մեկնաբանություններն ավելորդ են, և անհրաժեշտ է պարզապես ամրակայել հայտնի փաստը՝ հնարավոր աղավաղումներից խուսափելու համար:

Հաջորդ խնդիրը խորագրի խորհուրդն է. մի՞թե *մուրացկանները* կարող են լինել *մեծապատիվ*: Այո, կարող են, և, որ պակաս կարևոր չէ, նրանք ապրում են բոլոր ժամանակներում, նաև՝ այսօր: «Մեծապատիվ մուրացկաններ» թևավոր խոսք դարձած օքսիմորոնը գրականությունից վաղուց իջել է կյանք, մարդկանց կենցաղ ու առօրյա՝ դառնալով հասարակ անուն: Ստեղծագործության վերնագիրն իմաստաբանորեն բավականին ծանրաբեռնված է. պոլսահայ մտավորականները մուրացկանություն են անում մի տեսակ արժանապատվորեն. նրանց մեծ մասը ուղղակիորեն դրամ չի ուզում. խոսում, ավելի ճիշտ՝ ճամարտակում է հանրության շահերի անունից. խմբագիրը ազգային լրագրության («Խմբագրական տաժանելի ասպարեզին մեջ ազգին ծառայություններ ընելու կոչված եմ», 66), բանաստեղծը՝ հայ գրականության («Ծառադ կը փափագի գրականությամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախտությամբ կը վարվի յուր գրագետներուն դեմ», 32), ուսուցիչը՝ հայոց դպրոցի («Նոր եղանակով նոր դասագիրքեր հանած եմ, անոնցմե հարյուրի չափ ձեզի տալ կ ուզեի», 77), դերասանը՝ հայ թատրոնի («Տասը տարի է ի վեր թատերական բեմին վրա կը քալեմ», 85), բժիշկը՝ ազգային հիվանդների մասին («Հոս հիվանդները ազգային զգացում չունին, Հայաստանի վրա զաղափար չունին», 70) ու այդպես շարունակ, և աճպարարությամբ գրպանվում են Աբիստղոմ աղայի ոսկիները: Ուրիշ խոսքով՝ արդյունքում մեծապատվորեն շահարկվում են ազգային նվիրական զգացումները՝ հանուն անձնական օգուտի:

<sup>1</sup> **Պարոնյան Հ.**, Երկերի ժող. տասը հատորով, հ. 3-րդ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 401 (ներկա հատորից կատարվող մեջբերումների էջերն այսուհետ կնշվեն տեքստում՝ փակագծի մեջ):

«Մեծապատիվ մուրացկանները» նաև հեղինակի անձնական ցավի արտահայտությունն է. վերնագիրը երգիծաբանին կապում է իր վիպակի, այնտեղ արծարծվող արդիական և իրեն հուզող խնդիրների հետ: «Մուրացկանները» շահագործող խավի ներկայացուցիչներ չեն. նրանք հանապազօրյա հացը օրը օրին գետնաքարշ ստորացումով հայթայթող խեղճուկրակ, տխուր ճակատագիր ունեցող մարդիկ են, հասարակական նողկալի պայմանների զոհեր, որոնք իրենց հիմնականում անհամարձակ արտաքինի տակ գուցեև թաքցնում են ազգին իսկապես ծառայելու ազնիվ մղումներ: Ավելի որոշ՝ նրանց «մուրացկաններ» է դարձրել դաժան իրականությունը, և մարդիկ իրենց «ողբալի կացության» պատճառով են *ստիպված* բռնել գոյատևելու անպատվաբեր ուղին: Այստեղ, սակայն, անհրաժեշտ է կատարել մի կարևոր դիտարկում. իսկ հեղինակը. չէ՞ որ ինքն էլ մյուս մտավորականների պես էր ապրում՝ անապահով, զանազան զրկանքներով, վարձու բնակարանում, նյութական կարիքից դրդված էլ իր կողմից խմբագրվող պարբերականների չվաճառված օրինակները (ասենք՝ «Մեղու»-ի) երբեմն քաշով ծախում էր նպարավաճառներին: Արդյոք Հ. Պարոնյանն իր հերոսների նման ևս *ստիպված* չի՞ դիմել «մեծապատիվ մուրացկանության»: Ո՛չ, հաստատապես երբեք չի դիմել<sup>2</sup>:

**«Մենք ներկայացած չենք Աբխաղում աղային»** (ընդգծումն իմն է.- Ալ. Մ., 101),- սպառիչ հայտարարում է գրողը, և սա վիպակի կարևորագույն շեշտադրումներից մեկն է. ըստ երգիծաբանի՝ որքան էլ ծանր է կացությունը, դաժան՝ իրականությունը (իսկ բազմաթիվ պատճառներից ակնառու են երկուսը՝ թուրքական բռնապետությունն ու դրամատիքական հասարակարգը), հայ մտավորականը, այնուամենայնիվ, իրավունք չունի իջնելու փող կորզելու ճարպիկ հնարքների, աճալարարության աստիճանին. պետք է բարձր պահի իր բարոյական կեցվածքը: Եվ հենց այստեղ է, որ բարձրանում է երգիծաբանի մտրակը, և, ճիշտ է, ներքուստ վշտախառն ծիծաղով, բայց ընդհանրության մեջ *սաստիքական ծաղրով* մտրակահարվում են «մեծապատիվ» հորջորջված մտավորականները:

«Մեծապատիվ մուրացկանների» ուսումնասիրության հաջորդ կարևոր խնդիրը վերաբերում է ժանրային պատկանելության ճշգրտմանը՝ վե՞պ, թե՞ վիպակ: Անկեղծ ասած՝ մի առանձնակի մեղանչում էլ չէ այս

<sup>2</sup> Հ. Պարոնյանի բարոյական բարձր կեցվածքի, ազնվության ու անշահախնդրության վկայությունն են իր ամբողջ կյանքն ու գործը, ժամանակակիցների զանազան հուշերն ու վկայությունները: Տես «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում» /Աշխատասիրությամբ Ալ. Մակարյանի/, ԳԱԹ հրատ., Երևան, 2004, 292 էջ:

ստեղծագործությունը վեպ անվանելը, քանի որ վերջնահաշվում տեսականորեն գրեթե անհնար է չափազանց հստակ սահմանագատել վեպը վիպակից. ի դեպ, նույնն է խնդիրը նաև Մուրացանի «Առաքյալի» կամ Շիրվանզադեի «Նամուսի» պարագայում: Բայց և այնպես, ավելի տրամաբանական է «Մեծապատիվ մուրացկանների» գետեղումը *վիպակի* ժանրային շրջանագծում: Բնչո՞ւ: Նախ՝ հայտնի է, որ վեպը ժանրային արտաքին հատկանիշների տեսակետից օժտված է անհամեմատ մեծ ծավալով, բազմաթիվ իրադարձությունների, պատկանելի թվով հերոսների ու մարդկային զանազան ճակատագրերի պատկերմամբ, կենսական մեծ ժամանակահատվածի ու խոր շառավղի ընդգրկմամբ: Բացի այդ, որ, պակաս կարևոր չէ, վեպի համար ամենաբնորոշն այն է, որ այն արտացոլում է ոչ թե կյանքի մեկ առանձին կողմ կամ վիճակ (դա հենց այդպես է «Մեծապատիվ մուրացկանների» դեպքում), այլ անհամեմատ լայն ու բազմակողմանի իրադրություն:

«Մեծապատիվ մուրացկանների» հաջորդ հիմնախնդիրը հեղինակի կիրառած գեղարվեստական մեթոդն է: Բնավ նորություն չէ, որ Պարոնյանը վիթխարի ուժի ռեալիստ արվեստագետ է, և իր վիպակն էլ իրապաշտական գրականության գլուխգործոցներից է: Մա հանրահայտ ճշմարտություն է: Բայց և այնպես ավելորդ չի լինի հայ ռեալիստական գրականության համապատկերում կատարել մի ճշգրտում. խոսքը մասնավորապես վերաբերում է Գրիգոր Չոհրապին, որի մասին արդեն քանի տասնամյակ անվերապահորեն հայտարարվում է, որ նա 1880-ականների արևմտահայ իրապաշտական գրականության առաջամարտիկն ու ամենաերևելի դեմքն է: Կարելի էր անտարակուսելիորեն համաձայնել այս ձևակերպմանը, եթե չլիներ Պարոնյանի խնդիրը. չէ՞ որ Չոհրապից առաջ ու նրա հետ միաժամանակ և ոչ պակաս ուժով հանձարեղ երգիծաբանը հիմնականում հենց 1880-ականներին էր ստեղծում իր անմահ գլուխգործոցները՝ նաև տեսականորեն պաշտպանելով իրապաշտական ոճի դատը: Ասել է թե՛ Չոհրապի տեղը՝ իբրև իրապաշտական շարժման պարագլխի, պետք է մեծապես զեղչել ու տեղափոխել հաջորդ տասնամյակ՝ 1890-ականները, երբ արդեն վախճանվել էր Պարոնյանը (1891):

Բազմաթիվ են այն կովանները, որոնք ապացուցում են իրապաշտ գեղագետի *կյանքը ինչպես որ է* սկզբունքի անդուլտրեն պաշտպանելու ջանքերը: Օրինակ՝ նրա քաղաքական երգիծանքի գլուխգործոցը «Ազգային ջոջերն» ունի ըստ ամենայնի ուշագրավ առաջաբան. հեղինակը հենց սկզբից ազդարարում է, որ իր խնդիրը չէ «ո՛չ փափուկ ստամոքսի տեր ընթերցողներուն մարտողությանը ծառայել և ո՛չ ալ քիչ կերակուր ուտողներուն ախորժակը բանալ»: «Մենք այս հրատարակությամբ,- գրում է Պարոնյանը, - աշխատած ենք մեր ազգին մեջ գտնված երևելի անձերուն

կենսագրություններն ընելով՝ անոնց թերություններն ցույց տալ այն անաչառությամբ, որ կենսագրե մը կը պահանջվի՝ առանց սակայն դուրս ելնելու հեզնաբանության սահմանեն: Կը համարձակինք ըսելու, որ ոչ գոք վիրավորել ուզած ենք և ներկայացուցած ենք անձերն այնպես, ինչպես որ են և ոչ թե ինչպես որ կ'ուզեն իրենք»<sup>3</sup>: Ինչպես նկատելի է, երգիծաբանը տարբերակում էր «անձերն այնպես, ինչպես որ են և ոչ թե ինչպես որ կ'ուզեն իրենք» սկզբունքները: Դրանով իսկ նա մեկեն մատնանշում էր և իր նպատակն ու մոտեցումը, և՛ դավանած գեղարվեստական մեթոդը: Մոտեցումն ու նպատակը շատ որոշ են՝ «հեզնաբանությամբ», այսինքն՝ երգիծանքով ցույց տալ «երևելիների» թերությունները: Իսկ երկրորդն արդեն վերաբերում է գրական ուղղությանը՝ ռեալիզմին:

Այս տեսակետից ուշարժան է նաև «Մեծապատիվ մուրացկանների» սկզբնամասը. փոքր-ինչ զվարթաբանելով սեպտեմբեր ամսվա օրերի քանակի շուրջ՝ հեղինակն անմիջապես սկսում է պատումը՝ ներկայացնելով Տրապիզոնից շոգենավով նոր ժամանած և իր սնդուկներով զբաղված միջահասակ ու գիրուկ մարդուն: «Կը տեսնե՞ք, որչափ պարզությամբ սկսա,- գրում է երգիծաբանը:- Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր օրինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն օրն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուզար, թե խուռն բազմություն մը հետաքրքրությամբ դեպի Ղալաթիո հրապարակը կը վազեր, թե ոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն. խոսքեր, որովք վիպասաններն կ'սկսին միշտ իրենց վեպերը: Ես ալ կրնայի ըսել այս ամենը, բայց չըսի, որովհետև նույն օրն ոչ հով կար, ոչ անձրև, ոչ խուռն բազմություն, և ոչ ալ ձերբակալված աղջիկ մը:

Ա՛րդ, առանց կասկածելու հավատացե՞ք պատմությանս, որ ժամանակակից դեպք մ'է» (7):

Վերն ասվածից կարելի է եզրակացնել, որ Պարոնյանը, ներկայացնելով իր հերոսի՝ ամուսնանալու նպատակով Տրապիզոնից Կ. Պոլիս ժամանելու «պատմությունը», ցույց է տալիս, որ հետագա պատումը լինելու է ոչ թե, մտացածին, այլ հիմնվելու է իրական, հոգեբանական փաստերի վրա: Այլ խոսքով՝ երգիծաբանը նման մոտեցմամբ սկզբունքային փոփոխություն է մտցնում արևմտահայ գրականության մեջ՝ կերպարների, վիպակի կերտման առումով. հրաժարվում է գրական նախորդ տեքստերում առկա արկածային, չվերապրված կերպարներից ու իրադարձություններից՝ փոխարենն առաջարկելով հոգեպես վերապրած գրական աշխարհի մոդելը:

<sup>3</sup> **Պարոնյան Հ.**, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2-րդ, ՀՄՄՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 7:

Բացի այդ՝ Պարոնյանն ընթերցողին հուշում է, որ ներկայացվող տեքստը հոգեբանորեն խորապես գիտակցված հեղինակային աշխատանքի արգասիք է:

Վիպակում, հետագայում մի պահ ընդմիջելով պատումը՝ Աբիսողոմ աղայի ու նրան այցելության եկած բժշկի երկխոսությունը, իբր պաշտպանելով Ծերենցին (Հովսեփ Շիշմանյան), որ վերջինս մեղավոր չէ, որ իր ներկայացրած անձերը խորամանկ են՝ ձևանալով մերթ տգետ, մերթ զհիտուն, մերթ անաչառ, մերթ աչառու, մերթ կեղծավոր ու մերթ անկեղծ, և բամբասակում է, «թե Ծերենցն տակավին Մանուկենց է անձեր ստեղծելու արհեստին մեջ»<sup>4</sup>, ներողություն է խնդրում իր հերոսներից և գրում է. «Այո՛, Ծերենցն կը ներկայացնէ անձերն ոչ թե ինչպէս որ են, այլ ինչպէս որ կ երևին. Ծերենցն այս մասին որչափ ալ երկնցնէ յուր մագերն, իրավունք ունի, վասնզի ունինք հեղինակներ, որոնք Ծերենցն ավելի երկար մագ ունին և կը ներկայացնեն իրենց անձերն ոչ թե ինչպէս որ են, այլ ինչպէս որ կ ուզեն իրենք, որ ըլլան անոնք» (ընդգծումներն իմն են.- Ալ. Մ., 71-72):

Բայց և այնպէս, ասվածը չի նշանակում, որ նախապատվությունը տալով ռեալիզմին՝ Պարոնյանն աջ ու ձախ սևացնում է գրական մյուս ուղղությունները՝ չհասկանալով դրանցից յուրաքանչյուրի բերած կենսական ուժն ու տարբերքը: Նա պարզապէս դեմ է վերամբարձությանն ու ճոռոմաբանությանը, ճառասացությանը՝ այնքան հատուկ ռոմանտիկ որոշ գրվածքների: Իսկ Ծերենցի պարագան ուրիշ էր. ըստ Պարոնյանի՝ վերջինս արձանագրում է երևացող փաստը՝ գուցէն հեռանալով հոգեբանական ճշմարտացիությունից, սակայն մյուսները (օրինակ՝ Ս. Տյուսաբը) մեղանչում են բնականության առջև և երբ «Հայկ կամ Վարդան կամ Արտաշես ներկայացնել ուզեն, Վիքթոր Հյուկոյի խոսքերը կամ Մոլլթբեյի կարծիքները կը դնեն անոնց բերնին մեջ» (72): Մինչդեռ այդպիսին չէ վիպասան Ծերենցը: Պարոնյանն «Ազգային ջոջերի» նրան նվիրված դիմանկարում անաչառորեն գրում է. «Թե՛ հրապարակի, թե՛ լսարաններու և թե՛ վեպերու մեջ Շիշմանյան էֆենտին աշխատած է և կ աշխատի երիտասարդներու սրտին մեջ հայրենասիրություն արծարծել. ուստի յուր խոսքերն միշտ սիրով մտիկ ըր-վելու արժանի են»<sup>5</sup>: Նույնքան դրվատալից ու հարգալից էր նրա վերաբեր-մունքը նաև ռոմանտիկներ Պ. Դուրյանի և Մ. Պեշիկթաշյանի նկատմամբ: Մեծ արվեստագետին, այսպիսով, ամենից առաջ գրավել է յուրաքանչյուր ստեղծագործության գեղարվեստական արժեքը, և նա նշանակություն չի

<sup>4</sup> Բառախաղ է. ասել է թե՛ Հովսեփ Շիշմանյանի՝ Ծերենցի ստեղծագործական կարողությունները զիջում են են ծածկանվան իմաստին:

<sup>5</sup> Պարոնյան Հ., Երկերի ժող. տասը հատորով, հ. 2-րդ, էջ 83:

տվել հյուսվածքի մեթոդին՝ լինի դա ռեալիստական թե ռոմանտիկական, նատուրալիստական թե գրական մեկ ուրիշ ուղղության: Որպես այս խնդրի ամփոփում՝ հիշենք Պարոնյանի հայտնած կարծիքը Ալեքսանդր Դյումա Որդու «Կամելիազարդ տիկինը» վեպի առիթով. «Երբ բնապաշտական դպրոցին վրա կը խոսակցեինք, օր մը ըսավ ինձ,- պատմում է երգիծաբանի քրոջ որդին՝ Մաքսուտ Սանտալճյանը.- *La Dame aux camélias* ի՞նչ կը կարծիս որ ըլլա. այն ալ բնապաշտական վեպ մ է. բայց ո՞րքան կը տարբերի մյուս վեպերեն. լացած եմ այդ վեպը կարդալով»<sup>6</sup>:

«Մեծապատիվ մուրացկանները» վիպակն ունի ուրույն կառուցվածք: Հեղինակն իրեն հատուկ զգուշավորությամբ ու բարեխղճությամբ երկար է մտածել՝ նպատակասլաց ձևով կառուցելու համար իր երկը, այնպես, որ նրա բոլոր մասերը բխեն հիմնախնդրից, ծառայեն դրա իրագործմանը: «Պարոնյանը հրաժարվել է վիպական հյուսվածքի տարածված եղանակից, երբ գործող անձինք իրար հետ առնչվում են բազմակողմանի հարաբերություններով, հանդես են գալիս իրենց բնավորության և վարքագծի այլևայլ դրսևորումներով»,- իրավացիորեն նկատում է ակադ. Էդ. Ջրբաշյանն ու ավելացնում, որ «մուրացկանները» «իրար հետ ուրիշ կապ չունեն, բացի նրանից, որ բոլորն էլ վիպակի տարբեր մասերում դիմում են Աբխտղոմ աղային՝ նրանից դրամ կորզելու ակնկալությամբ: Այդ մարդիկ հանդես են գալիս միայն դեպի Աբխտղոմ աղան ունեցած հարաբերության մեջ, բայց դա երգիծաբանի համար բավական է՝ նրանց բնավորության ու վիճակի տիպական պատկերը գծագրելու համար»<sup>7</sup>:

Հիրավի, վիպակն այնպես է կառուցված, որ հյուսվածքի հիմնական առանցքը Աբխտղոմ աղան է, որի հետ, չնչին բացառությամբ, միայն մեկ անգամ են հարաբերվում ազգային մտավորականները (թերթի խմբագիր, քահանա, բանաստեղծ, լուսանկարիչ, միջնորդ կին, բժիշկ, ուսուցիչ, փաստաբան, դերասան, տպարանատեր, սափրիչ ու այլք) և հեռանում՝ այդ ընթացքում բնութագրելով թե՛ իրենց և թե՛ Աբխտղոմ աղային: Ընտրված կառույցն այս պարագայում, ինչ խոսք, ամենահարմարն էր, քանի որ հնարավորություն էր ընձեռում փոքր ծավալում հանդես բերելու հերոսների մի ամբողջ պատկերասրահ՝ դիպուկ ու նպատակասլաց ներկայացնելով «մուրացկանների» և նյութական ծանր վիճակը, և բարոյահոգեբանական աններելի մեղանշումները, և՛ արժանապատվության ցավալի փլուզումները: Ահա այդ մարդկանց հետ ունեցած զավեշտալի հանդիպումների ու

<sup>6</sup> «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», էջ 133:

<sup>7</sup> Ջրբաշյան Էդ., **Գրականագիտության ներածություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, էջ 112:**

նույնքան զավեշտալի խոսակցությունների հաջորդական նկարագրությունից էլ աստիճանաբար հյուսվում է ստեղծագործության կոտ կառույցը, որի առանձին հատվածները թողնում են երգիծական ավարտուն մանրապատումների, թերևս նովելների տպավորություն: Նշելի է, որ հեղինակն իր վիպակում, ճիշտ է, կատակով, բայց շատ հստակ բացատրում է ընտրված կոմպոզիցիայի նպատակահարմարությունն ու առավելությունը: «Ես ալ ուրիշ վեպերու տեսարաններով չէի կարող գրել *Մեծապատիվ մուրացկաններս*, որոնց բնությունն է աներևույթ ըլլալ Արիստոլոմ աղային անգամ մը ներկայացնելէն ետքը, - գրում է նա: - Կը խոստովանիմ, որ եթէ սույն կյուրը Օվրատիոս առներ, երգիծանք մը կը շիներ, և եթէ Մովիեր ձեռք անցուներ, կատակերգություն մը կը հորիներ. բայց մենք, որ ապրելու պետք ունինք, ստիպված ենք ժամանակին հարմարիլ, շատ անգամ բանթալոնեն բաճկոն և երգիծանքեն վեպ շինելով» (83):

Վիպակի կառուցվածքային հաջորդ առանձնահատկությունը երկխոսությունների առատությունն է: Իր գրական գործունեությունն իբրև դրամատուրգ սկսած («Երկու տերով ծառա մը», 1865) և դրամատուրգ ավարտած («Պաղտասար աղբար», 1886) գրողը հաճախ ամբողջ էջեր ներկայացնում է միմիայն գործող անձանց վառ ու կենդանի զրույցների ձևով՝ մատուցված պոլսահայ հյույթեղ խոսվածքով: Իսկ այդ հանգամանքը մի կողմից անսպառ շարժունություն է հաղորդել երկին, մյուս կողմից բավական հեշտացրել է վիպակը հետագայում պիեսի վերածելու գործընթացը:

Երգիծաբանը վիպակի ինքնատիպ կառույցին հմտորեն միաձուլում է մտերմիկ պատումի ոճը, հնարավորինս իրար մոտեցնում պատմողընթերցող տարածությունը. անվերջ զվարթաբանում է, հանկարծ ընդհատում դիպաշարը, կողմնակի դատումներ անում հանրության բարոյահոգեբանական արժեքաբանության կամ արվեստի զանազան խնդիրների մասին, հետո ներողություն խնդրում ու վերստին շարունակում դիպաշարը: Այս տեսակետից հիշատակելի են, օրինակ, պարոնյանական դատումները գրաքննադատության մասին: Գրողը ցավով էր նկատում, որ «այս փափուկ ժամանակին մեջ» գրաքննադատները, չնչին բացառությամբ, վեհերոտ են, անազնիվ, չեն հանդգնում անաչառ քննադատել գրական երկերը. ակնոց ակնոցի վրա դրած սոսկ գեղեցիկ կտորներ են փնտրում՝ «փնտրելու համար և ոչ թե տեսնելու համար, վասնզի տեսնված բանը չփնտրվիր», իսկ գրաքննիչներն էլ, ընդհակառակը, «միայն տգեղ կտորներ կը փնտրեն»: Գրական երկերը համարելով սրբություններ՝ Պարոնյանը պահանջում է անկողմնակալ մոտեցում. «Ո՛չ, պարոն քննադատներ, ո՛չ իրավունք չունիք, սպանեցե՛ք տգեղ գործերն և վստահ եղեք, որ պիտի գեղեցկանան անոնք: Մարդեր կան, որ կը գեղեցկանան, երբ մեռնին» (72):

Այս լրջախոհությանը, սակայն, անմիջապես հաջորդում է հեղինակային անհոգ կատակը՝ այս անգամ արդեն ուղղված սեփական ստեղծագործությանը, որը ենթատեքստում թաքցնում է վիպակի պատումի յուրահատկություններից մեկը՝ *հեղինակային մենախոսական միջատությունների գիտակցվածությունը*. «Ես, որ այսչափ խստությամբ կը խոսիմ ուրիշներու երկերուն վրայոք՝ կը կարծեք, թե քաղցրությամբ կը վարվիմ «Մուրացկաններու» անձերուն հետ, որոնց բերնեն ելած խոսքերն միայն բառ առ բառ կը գրեմ հոս, առանց իմ կողմես կետ մ ավելցնելու հանդգնությունն ունենալու: Բնավ երբեք, մանավանդ թե կ զգամ, որ իմ անձերս ալ ունին շատ թերություններ, զորս օր մը պիտի հարվածեմ: Նույնիսկ մեծ թերություն մ է, որ պատմիչ մը յուր պատմության թելը կտրե և յուր ընթերցողներն երկու ժամ խնդիրեն դուրս խոսքերով զբաղեցնե: Բայց ի՞նչ ընեմ, այս թերությունս իմ առավելությունս է, վասնզի այս թերության շնորհիվ է, որ կրցած եմ քանի մը ընթերցողներու տեր ըլլալ, թերություն, որ թերություններ ուղղելու պաշտոնն ունի: Այսչափ բացատրություն ալ թերությանս համար: Դառնանք ուրեմն մեր պատմության» (72-73):

Վիպակում նկատելի է, որ «մուրացկաններն» անանուն են՝ բացառությամբ մի քանիսի՝ միջնորդ կնոջ (Շուշան), լուսանկարչի (Դերենիկ) և «ազգային գործիչ» Մանուկ աղայի: Ինչո՞ւ: Թերևս ընդհանրացնելու համար. նրանցից յուրաքանչյուրը ժամանակի պոլսահայ միջավայրի իր բնագավառի տիպիկ ներկայացուցիչն է, և հեղինակը պարզապես չի ցանկացել մասնավորեցնել նրանց: Բայց և այնպես խորաթափանց ընթերցումն ինչ-որ բան հուշում է, և հմուտ քողավորման հետևից ճանաչելի են դառնում նրանցից երկուսի՝ խմբագրի ու անմուսաբանաստեղծի նախատիպերը: Առաջինը «Մասիս» լրագրի համբավավոր, բայց շողոքորթ խմբագիրն է՝ Կարապետ Ութուճյանը, երկրորդը՝ նույնքան երևելի, սակայն հանգապաշտ ապաշնորհը՝ Խորեն Նար-Պեյը (Գալֆայան):

Նախ՝ Կարապետ Ութուճյանը (1823-1904): Նա հանրային-քաղաքական գործիչ էր՝ արևմտահայ ազատամտական հոսանքի պարագլուխը, հրապարակագիր ու թարգմանիչ, «Մասիս» օրաթերթի երկարամյա խմբագիրը (32 տարի՝ 1852-1884): Արևմտահայ Ջարթոնքի սերնդի ներկայացուցիչ նշանավոր այս մտավորականը մեծ ներդրում ուներ, անշուշտ, ոչ միայն արևմտահայոց Սահմանադրության ընդունման հարցում, այլև առհասարակ գրական-մշակութային կյանքում. օրինակ՝ գրաբարաշխարհաբար գրապայքարում տենդագին պաշտպանել է աշխարհաբարի դատը, իսկ իր լրագրի «Բանասիրական» բաժնում էլ արևմտաեվրոպական գրականությունից զետեղել բազմաթիվ

թարգմանություններ: Պատկառելի վաստակ ունեցող այս գործիչը, սակայն, աչքի է ընկել ծայրահեղ զգուշավորությամբ<sup>8</sup>, խորամանկությամբ, նաև Բ. Դռան՝ «Բարեխնամ կառավարությանն» ու «Օգոստոսափառ կայսերն» ուղղված հազար ու մի շողոթորթություններով. բավական է թերթել «Մասիսի» ցանկացած համար՝ համոզվելու դրանում: Բացի այդ Կ. Ութուճյանն աչքի չի ընկել սկզբունքայնությամբ, հաճախ է ճշմարտությունը զոհել անձնական շահին՝ հրապարակելով իրարամերժ հոդվածներ կամ նամակներ, ճշմարտության նկատմամբ թույլ տվել զանազան մեղանչումներ՝ հանուն հարուստների ու թերթի բաժանորդների... Եվ ահա Պարոնյանը բնականաբար վաղուց, շատ վաղուց էր նկատել արատավոր այդ հատկանիշներն ու ամենատարբեր առիթներով երգիծանքի սլաքներն ուղղել շողոթորթ խմբագրի դեմ: Վերջինս, իհարկե, պատասխանում էր կամ, ավելի ճիշտ, փորձում էր պատասխանել: Բայց... ապարդյուն. նրա դեմ կանգնած էր վիթխարի ուժի երգիծաբանը: «Մասիսի» խմբագրի ամենաթունոտ ձաղկումը տեղի էր ունեցել 1879-ին «Ազգային ջոջերի»՝ նրան նվիրված անմահ դիմանկարում: Կ. Ութուճյանը հավանաբար ազդված պիտի լիներ հատկապես հետևյալ հատվածից. «...տարակույս չունինք, որ եթե Կալիգոլայի օրով խմբագրության պաշտոնին մեջ գտնված ըլլար՝ զովաբանելով պիտի դրվատեր Կալիգոլայի այն որոշումն, որով ձին հյուպատոս անվանել կ ուզեր և անշուշտ խմբագրական հոդվածով մը ձին ալ պիտի շնորհավորեր... և վերջապես պիտի առաջարկեր ինչ որ այս այլանդակ կայսրը կը խորհեր»<sup>9</sup> (ընդգծումն իմն է. - Ալ. Մ.):

Ավելի քան հասկանալի է, որ դիմանկարիչը հռոմեական սանձարձակ կայսեր՝ Կալիգուլայի կողմից իր ձիուն հյուպատոս կարգելու խելացնոր պատմության միջոցով ակնարկում է նոր ժամանակները (այս ցուցական դերանվան ուղիղ հասցեատերը «կարմիր սուլթանն» էր՝ Աբդուլ Համիդը) և կատարում խիզախ ընդհանրացում՝ Կ. Ութուճյանին ուղղված սատիրան դարձնելով բռնապետության անլուր կամայականությունների դեմ ուղղված ազդու բողոք: «Մասիսի» փորձառու խմբագիրը չէր կարող չհասկանալ այլաբանությունն ու ցուցական դերանվան նշանակությունը... Դիմանկարը գրվելուց անցել են բազմաթիվ տասնամյակներ, և այսօր՝ 137-ամյա հեռավորությունից, ի պատիվ Կարապետ Ութուճյանի, պիտի ասել, որ

<sup>8</sup> Կ. Ութուճյանի «Մասիսը» 32 տարվա ընթացքում գրաքննչության կողմից շատ կարճ միջոց փակվել է ընդամենը 1-2 անգամ՝ այն էլ ոչ խմբագրի մեղքով, մինչդեռ Հ. Պարոնյանի «Թատրոնը» համարձակ հոդվածների համար 4 տարվա ընթացքում (1874-1877) արգելվել է 8 անգամ՝ բավական երկար ժամկետներով:

<sup>9</sup> Պարոնյան Հ., Երկերի ժող. տասը հատորով, հ. 2-րդ, էջ 58-59:

վերջինս չգնաց մի հարվածով Պարոնյանին ֆիզիկապես ոչնչացնելու մատնության. նա հայ մարդ էր, ի վերջո գրական գործիչ և չէր կարող չհասկանալ հանճարեղ երգիծաբանի՝ համազգային արժեք լինելը: Բավարարվեց պարզապես մի քանի թունոտ բնորոշումներով, որոնցից հիմնականը թերևս «*շոշորթ*»՝ *խելառն* էր:

Եվ, զարմանալի բան. Պարոնյանի կողմից դրան հետևում է հաջորդ սպանիչ հարվածը, այս անգամ՝ «Մեծապատիվ մուրացկաններում»: Բթամիտ Աբխտղոմ աղայի և անանուն խմբագրի երկխոսություններից հետո, երբ արդեն բազմաթիվ շողոքորթություններից հետո գավառացի ժլատը համաձայնել էր մեկուկես ոսկով դառնալ լրագրի բաժանորդ, խմբագիրը նրան պատվիրում է հետևյալը. «Ինձ հետ ձեր այս ունեցած տեսակցությունն ալ ուրիշի մի գրուցեք, վասնզի տեսակ մը բախտախնդիր, չվառական անձեր կան, որք **բանդազուշական կենսագրություններ** կը գրեն և իմ անձնավորությունս կը խժբժեն» (ընդգծումն իմն է.- Ալ. Մ., 13):

Ակնարկն ավելի քան պերճախոս է. դիմանկարային կենսագրություններ գրողը Պարոնյանն էր:

Այժմ մյուս կերպարի՝ բանաստեղծի նախատիպի՝ հոգևորական բարձրաստիճան գործիչ, բանաստեղծ, թատրերգակ, թարգմանիչ ու մանկավարժ Խոդեն Նար-Պեյի (1831-1892) մասին: Եթե Կարապետ Ութուճյանի պարագայում նախատիպի քողավորումը, այնուամենայնիվ, պատռվում է, և մատնանշվում է բուն հասցեատերը, ապա նույնը չի կարելի ասել Նար-Պեյի մասին. այստեղ ավելի գերակայող են դառնում կռահումները, որոնք հիմնականում երկուսն են՝ արտաքինի նմանություն և ճարտասանելու սնամեջ, վերամբարձ ոճ:

«Կապույտ աչերով, դեղին մազերով զարդարված ըլլալով՝ ուներ նաև երկու մատ մորուք... Սակայն էթե հագուստի մասին վանողական էր, դեմքի մասին քաշողական զորություն ուներ այս անձը» (30),- Աբխտղոմին այցելած բանաստեղծի մասին գրում է Պարոնյանը: Հիրավի, արքեպիսկոպոս Նար-Պեյ սրբազանը, ինչպես միաբերան հավաստում են ժամանակակիցները, եղել է գեղեցկատես մեկը, որի անվան հետ են կապվել սիրո գայթակղիչ բազմաթիվ պատմություններ: Վկայություններից բերենք մեկը: «Գեղանի կնկան մը դեմքն ունի՝ ի բաց առյալ մորուսն ու պեխերը՝ զորս ստեպ յուղով օծելով՝ կարծրությունը մեղմելու կ ջանա»<sup>10</sup>, - «Հայկական նամականի»-ում գրում է Մ. Մամուրյանը:

Բացի այդ՝ ժամանակին բանաստեղծի մեծ համարում ունեցող Նար-Պեյն օժտված է եղել առենաբանելու ակնառու ձիրքով, որը ևս նկատվել է

<sup>10</sup> Մամուրյան Մ., Երկեր, «Հայաստան» հրատ., Երևան, 1966, էջ 249:

ժամանակակիցների կողմից: Երվանդ Շահազիզը, օրինակ, 1878-ին Մոսկվայում լսելով նրա մատուցած պատարագը, վերհիշել է. «Նա ազատ էր խոսում, չէր ծամծմում բառերը, լավ էր զարգացնում, ամփոփում յուր խոսքի միտքը և կարողանում էր իշխել յուր ունկնդիրների էթե ոչ մտքի, գոնե, նոցա սրտի ու երևակայության վրա»<sup>11</sup>: Պարոնյանը նույնպես չի ուրացել Նար-Պեյի ճարտասանական ունակությունները. «Յուր քարոզներն ավելի կը փայլին քան յուր մազերը»<sup>12</sup>:

Եվ ահա «Մեծապատիվ մուրացկանների» անմուսա բանաստեղծը: Մենյակում մենակ գտնվող Աբիսողոմ աղային ներկայանալով ու սեղանի վրա անակնկալ կանգնելով՝ նա սկսում է իր սրտաճմլիկ ճառը. «Տյարք և տիկնայք... Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կռվեր, սգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցյալ են, մենք՝ ապառնի, անոնք խավար են, մենք՝ լույս... » (31): Թվում է՝ ատենաբանությունն արտաքուստ ողորկ է, հղկված, լի հակադրամիասնություններով, բայց այն ըստ էության անհեթեթ ու սնամեջ, ծիծաղաշարժ մի ճոռոմաբանություն է, որը հիշեցնում է իրականության մեջ «Չիր անուան կոչ / Գիտե՞ս – ո՞ր, ոչ»՝ «բանաստեղծական գյուտի»<sup>13</sup> հեղինակին՝ Խորեն Նար-Պեյին:

Այս ամենով հանդերձ՝ թեև նախատիպի կռահումն ինչ-որ առումով կարող է թվալ խոցելի, այնուամենայնիվ ակնառու է Նար-Պեյ – անմուսա բանաստեղծ աղերսը, որն ընդհանրության մեջ ուղղված է պոլսահայ գրական միջավայրում սնկի պես աճող այն «պուետների» դեմ, որոնք պոեզիայից դուրս էին մղել հույզը, ապրված զգացմունքը և զբաղվելով բառարանային մարզանքներով՝ դարձել հանգապաշտ ապաշնորհներ...

«Մեծապատիվ մուրացկանները» վիպակը փայլում է երգիծական միջոցների ու հնարանքների բազմաթիվ օրինակներով, հեղինակային անակնկալ գյուտերով: Այնտեղ ծիծաղը մի կողմից այն հզոր ուժն է, որի անաչառ դատաստանի առջև կանգնում են հասարակության տարբեր

<sup>11</sup> **Շահազիզ Եր.**, Խորեն արք. Գալֆայան և Նալբանդյանի «Աղյմիքը», տպ. Քութեյաձեի, Թիֆլիս, 1903, էջ 28:

<sup>12</sup> **Պարոնյան Հ.**, Երկերի ժող. տասը հատորով, հ. 2-րդ, էջ 13:

<sup>13</sup> Այս արտահայտությունը գտնում ենք Նար-Պեյի թարգմանած «Դաշնակք Լամարթինյա» ժողովածուի (Փարիզ, 1859) 4-րդ գրքի «Օաղիկն ջուրց. առ Վալենտինեն» բանաստեղծության մեջ, որի յուրաքանչյուր տուն վերջանում է դրանով: Այս փաստն իր սարկաստիկ արտացոլումն է գտել «Ազգային ջոջերում»:

շերտերի մարդիկ՝ իրենց սոցիալական հոգեբանությամբ և ուրույն վարքագծով, մյուս կողմից՝ այն լավագույն միջոցը, որով հեղինակը ճանաչել է կյանքն իր կոմիկական դրսևորումների մեջ:

Վիպակի գեղարվեստական հմայքն ամենից առաջ պայմանավորված է *խոսքի կոմիզմով*: Բնորոշն այն է, որ երգիծաբանն առանձնապես մեծ ջանք չի էլ թափում կոմիկական բառեր ու արտահայտություններ գտնելու. նա բնատուր շնորհքով երգիծական մթնոլորտ է ստեղծում խոսքի պատկերային համատեքստում, դիպաշարային բնական ընթացքով ու ծիծաղահարույց երկխոսություններով: Բազմաթիվ օրինակներից հիշատակելի են հատկապես Աբիսողոմ աղայի և Մանուկ աղայի տիկնոջ, Աբիսողոմ աղայի և խմբագրի հանդիպումներն ու ամուսնության միջնորդ Շուշանի՝ ապագա հարսնացուի աչքերի գույնի մասին հարցումը՝ ուղղված անճաշակ աղային:

Նյութական կարիքից դրդված՝ իրենց բնակարանի մի մասը վարձու տվող Մանուկ աղայի կինը, տան շեմին նկատելով Աբիսողոմ աղային, ընդգծված քաղաքավարությամբ է նրան ներս հրավիրում: Այդ տեսարանում դրսևորվում է *բառի կոմիզմի* տարածված ձևերից մեկը՝ միևնույն բառի կամ բառերի միտումնավոր կամ միամիտ կրկնումը՝ «հրամմեցեք, Աբիսողոմ աղա», «վեր հրամմեցեք, Աբիսողոմ աղա», «Աբիսողոմ աղա, տունը ձերն է, Աբիսողոմ աղա»... Խմբագրի խոսքում էլ «վայ, Աբիսողոմ աղա, վայ» բառերը կրկնվում են միամտաբար: Կրկնության կոմիզմի բնորոշ օրինակ է նաև Մանուկ աղայի՝ շուկա գնալը, երբ նրա հետևից կինն անդադար բացականչում է՝ «Մանուկ աղա, Մանուկ աղա» և նորանոր մթերքներ պատվիրում:

Կամ՝ միջնորդ կնոջ և վաճառականի կարճառոտ հարց ու պատասխանի միջոցով ստեղծվում է խոսքի կոմիզմի մեկ ուրիշ դրսևորում, որի արդյունքում ընթերցողի առջև բարձրանում են «այրերուն կին», «կիներուն այր» մատակարարող Շուշանի և գավառացի տխմարի կոմիկական դիմապատկերները: Տիկինը երկար-բարակ առևտուր անելուց հետո Աբիսողոմ աղային ասում է.

- «- Ծատ լավ. աղջիկը ճերմակ գույն ունենա, թե քիչ մը թուխ:
- Ճերմակ կ ուզեմ:
- Աչքերը սև՝, թե կապույտ:
- Եկու տես, որ սևն ալ կը սիրեմ, կապույտն ալ...
- Կամ մին պիտի ըլլա, կամ մյուսը. վասնզի չկնար ըլլալ անանկ աղջիկ մը, որուն մեկ աչքը կապույտ ըլլա, մյուսը սև:
- Կապույտ ըլլա թո՛ղ:
- Ծատ լավ: Հասակն և մազերը...» /63-64/:

«Մեծապատիվ մուրացկաններում» խոսքի կոմիզմն ինքնանպատակ չէ. երգիծական աշխույժ մթնոլորտի համապատկերում այն էական դեր է

խաղում կերպարաստեղծման մեջ: Միանգամայն տարբեր կերպ են մտածում մտավորականներն ու Աբիսողումը, հոգևորականներն ու միջնորդ կինը, Մանուկ աղան և բեռնակիրները... Յուրաքանչյուր պատկեր-կերպարի փոփոխման հետ միասին խոսքի կոմիզմը ձեռք է բերում նոր երանգներ ու կենսական տարողություն:

«Մուրացկաններին», օրինակ, հատուկ են խոսքի երկդիմությունն ու քծնանքը, հանուն մի քանի ոսկու՝ բարոյական անկումը, ճղճղան ծամածռություններն ու խոնարհ ճամարտակությունը: «Դո՞ւք եք Աբիսողում աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգեհավով եկաք, ի՞նչպես եք, ձեր եղբայրն ի՞նչպես է, ազգային գործերն ի՞նչպես են Տրապզոն, հացի գինը քանի՞ է հոն, անձրև եկա՞վ այս օրերս ձեր քաղաքը...»,- այսպես է ճամարտակում խմբագիրը: Մանուկ աղան էլ խոսում է հավերժ շաղակրատի ոճավորումներով. թաղականի ընտրություններին վերաբերող նրա ատենաբանությունը անվերջ է ու անիմաստ, լեցուն առտնին բամբասանքներով... Այդպիսին չեն, սակայն, հասարակ մարդիկ՝ բեռնակիրները. նրանց լեզվամտածողությունն իրենց հոգիների պես պարզ է ու ազնիվ: Այդ միամիտ մարդիկ չափազանց խոցվում են, երբ հասկանում են, որ իրենց շիտակ մտքերը «խոշոր թիկնոց մը հագած» մարդու մասին նենգափոխում է Մանուկ աղայի տիկինը:

Վիպակին մի առանձին հմայք են տալիս նաև խոսքի ժողովրդական ոճավորումները՝ «ականջը խոսի», «աղեկ ըսիր», «քաշելիք ունենք եղեր», «ես հոգիս սեցնել չեմ ուզեր» և այլն:

Պարոնյանական ստեղծագործությունը փայլում է նաև *թյուրիմացությունների կոմիզմի* նպատակասլաց կիրառություններով, այն է՝ հերոսների՝ միմյանց մասին ունեցած սխալ կարծիք, թյուրիմացություն կամ էլ սխալ արարք: Վիպակի գլխավոր կերպարը՝ Աբիսողում աղան, ծիծաղելի է դառնում հատկապես նրա համար, որ շարունակական թյուրիմացությունների մեջ է «մուրացկանների» հետ: Իր դատումներում կատակաբանելու համար նույն թյուրիմացությունն է օգտագործում նաև հենց հեղինակը. հիշենք, օրինակ, Աբիսողում աղայի քթի հետ կապված «թյուրիմացությունը»...

«Մեծապատիվ մուրացկանները» վիպակն այսօր էլ պահպանում է իր անանց հմայքը: Այն անսպառ նյութ է տալիս Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունն ուսումնասիրողներին, գրականության պատմաբաններին, ինչպես նաև ընթերցողական լայն շրջաններին, որոնք կարող են այդ անմահ երկում բացահայտել ինքնատիպ ու հետաքրքիր նորանոր շերտեր:

Ա. Մակարյան

**Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»  
/մի քանի դիտարկումներ/  
Ամփոփում**

Ներկա հրապարակումը նվիրված է հանճարեղ երգիծաբան Հակոբ Պարոնյանի /1843-1891/ «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի որոշ առանձնահատկությունների դիտարկմանը: Այն մի կողմից ուշադրություն է հրավիրում ստեղծագործության թեմայի խոսք դարձած օբյեկտին խորագրի, գրական ուղղության, կառուցվածքի, կերպարային համակարգի վրա, մյուս կողմից բացահայտում է նախատիպերին, մատնանշում հեղինակի իրականի ու գեղարվեստականի հարաբերակցության հմուտ ներհյուսումներն ու երգիծանքի արվեստը:

А. Макарян

**«Высокочитимые попрошайки» Акопа Пароняна  
/некоторые заметки/  
Резюме**

Статья посвящена некоторым вопросам исследования повести «Высокочитимые попрошайки» гениального сатирика Акопа Пароняна (1843-1891). С одной стороны, вызывают интерес парадоксальное заглавие повести, ее художественное направление, структура, система образов, с другой стороны, повесть выявляет прототипы, раскрывает сатирическое мастерство автора, его умение искусно переплести соотношение реального и художественного.

А. Makaryan

**«Honorable Beggars» by Hakob Paronyan  
(some observations)  
Summary**

The present publication is devoted to the observations of some peculiarities in the novelette 'Honorable Beggars' by the brilliant satirist Hakob Paronyan /1843-1891/. On one hand it draws attention to the paradoxical title of the work, as well as, to the literary direction, structure and figural system, while, on the other hand, it reveals the prototypes and indicates the author's masterful combination of realism and fiction and satirical art.



տարիներ, ներկայացվել է ֆրանսիական ELLE ամսագրի Գրան Պրի մրցանակին, հանգամանք, որն անտարակուսելիորեն վկայում է ընթերցողների շրջանում այս ստեղծագործության լայն հանրաճանաչության մասին:

Այս պատմավեպը, ուր անգամ առկա են ինչ-որ առումով դեղեկտիվային տարրեր, ունի բավական հետաքրքրաշարժ կառուցվածք: Այն բաղկացած է երկու մասից. առաջինը կրում է Մահվան դատապարտվածի խոստովանությունը ձերբակալման երեկոյան խորագիրը և նվիրված է Հիսուսի նվիրական խոհերին, անցած ճանապարհի վերազնահատմանն ու իմաստավորմանը, իսկ երկրորդ մասում հարազատ եղբորը՝ Տիտին, ուղղված միակողմանի նամակագրության միջոցով Հրեաստանի պրոկուրատոր Պիղատոսը քայլ առ քայլ վերապատմում է Հիսուսի խաչելության, նրա մարմնի անհետացման, Քրիստոսի հարության ու քրիստոնեության՝ որպես նոր կրոնի առաջացմանը վերաբերող իրադարձությունները: Նա նաև թղթին է հանձնում գողացված մարմինը գտնելու ձեռնարկած իր միջոցները, այդ ճանապարհին իրեն պարուրած խոհերն ու կնոջ՝ Հռոմի ազնվական ընտանիքի դուստր Կլավդիա Պրոկուլայի հետ ունեցած գրույցները:

Ինչպես արդեն նշեցինք, վեպի առաջին հատվածը պատկերում է խաչելությանը նախորդող գիշերը, երբ Հիսուսն սպասում է հռոմեացի զինվորներին ու խորհում սեփական կյանքի մասին. նրա մտորումներում առկա են սրտմաշուկ ափսոսանք, հիասթափություն և անգամ՝ երկմտանք:

«Ավետարան ըստ Պիղատոսի վեպը լի է ավելի շուտ Հիսուսի մարդկային, քան աստվածային նկարագրով. ձերբակալման սպասելիս Հիսուսը երկյուղում է մահից, սակայն միաժամանակ վստահ է հրապարակային ու տանջալից մահվան անհրաժեշտության մեջ: Որպես իրական կյանքում իր առաջին հիասթափություն՝ Փրկիչը վերհիշում է մանուկ հասակի իր երազային ճախրանքները, որոնք ավարտվում են ժայռից ցած թռչելով, իրական ցավով և ուշաթափությամբ: Մանկական տարիների առաջին հիասթափությանը շուտով հաջորդում են հոգեկան գիտակցված պայքարն ու երկվությունը. հոր՝ Հովսեփի մահն ու մանկամարդ կնոջ Յուդիթի քարկոծումը Իեշուայի հոգում առաջ են բերում հակասական զգացմունքների անդիմադրելի պայքար. մի կողմից նրա հոգին տոչորվում է հարազատների հանդեպ սիրուց, և ինքը հստակ գիտակցում է այդ սերը ցույց տալու շուտափույթ անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից նա ընդվզում է աստվածային օրենքների դեմ, երբ ականատես է լինում նույն վեհագույն զգացմունքի համար քարկոծվող անչափահաս աղջկա մահվանը:

«Ավետարան ըստ Պիղատոսի վեպի առանցքային դրվագներից է Հիսուսի և հարուստ զինեզործի դստեր՝ Ռեբեկայի սիրո պատմությունը, որը

և կանխորոշում է Հիսուսի հետագա ճակատագիրը: Միրահարված Իեշուան ընթրիքի է գնում իր սիրեցյալի հետ, որպեսզի ամուսնության առաջկություն անի վերջինիս, սակայն այդ երջանկությունը խաթարվում է մի պարզ իրադարձությամբ. սիրահարների սեղանին են մոտենում մուրացկան ծերունին ու փոքրիկ տղան, որոնք կերակուր են աղերսում: Ի պատասխան քաղցած մուրացիկների խնդրանքի՝ գեղեցիկ ու անսիրտ օրհորդը հրամայում է վտարել նրանց այդ տարածքից: Իեշուան կարծես արթնանում է թմբիրից ու առանց վարանելու մերժում է երկրային սերը, որպեսզի այն փոխարինի համամարդկային չհասկացված սիրով, որին ի պատասխան՝ ժողովուրդը նրան անվանում է սոսկ հիմար և ապուշ : Ուշագրավ է, որ նույն Ռեբեկայի որդուն՝ մանկահասակ Ամոնին, հարություն տալով է հետագայում նաև Հիսուսը սկիզբ դնում իր հրաշագործություններին, որը և, ցավոք, դառնում է նրա ու ժողովրդի *միակ կապող օղակը*: Ուստի Ձիթենյաց այգում նստած ու իր մահվանը սպասող Հիսուսը դառնորեն խորհում է. «Ես դադարեցի մարդ լինելուց և վերածվեցի բազում ճամփաների խաչմերուկում հայտնված դատարկ պանդոկի, ուր բոլորը գալիս էին՝ իրենց հետ բերելով սեփական բնավորությունը, իրենց բեռն ու համոզմունքները: Ես դարձա օտար ձայների արձագանքը <sup>1</sup>: Ուստի Հովհաննես Մկրտչի խոսքերով ասած՝ Աստծո Գառը, որը կքավի ամբողջ աշխարհի մեղքը <sup>2</sup>, կյանքի վերջին պահերին ափսոսում է իր կորցրած տարիները, որոնք նվիրված են եղել այդպես էլ իր սեփական ժողովրդի սրտում արձագանք չգտած սիրո ուսուցմանն ու մտովի բացահայտում են իր նվիրական երազանքը. «Կցանկանայի լինել երկու կապույտ մայրիներից մեկը, որոնց ճյուղերը գիշերն աղավնիների համար ապաստան են ծառայում, իսկ ցերեկը ծածկում են փոքրիկ, աղմկոտ շուկաները: Նրանց նման ես էլ կցանկանայի արմատներ նետել, դառնալ անհոգ ու տարածել սիրո սերմերը»<sup>3</sup>:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի գրողի կերտած Հիսուսը, որին, ի դեպ, իր իսկ խնդրանքով մատնում է ամենասիրեցյալ աշակերտը՝ Հուդան, ու տեղեկացնում վերջինիս իր ինքնասպանություն գործելու որոշման մասին, երկրային կյանքից հեռանում է խոր հիասթափությամբ ու հասկացված չլինելու դաժան զգացումով:

Շմիդտյան Հիսուսի միակ մխիթարանքը մայրն է, որն ամենուր հետևում է նրան, անլուր տառապանքով դիտում որդու անցած ուղին և լռելյայն համակերպվում վերջինիս բաժին ընկած ճակատագրին: Այդպիսին է

<sup>1</sup> - , “ ”, 2011, . - , . 18.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 31:

մայրական անանձնական սիրո անմեկնելի խորհուրդը. միայն մայրական սիրուն է հասկանում Հիսուսի՝ Հուդային ուղղված շրջապատի համար անհասկանալի ներման խոսքերը, որոնց ի պատասխան՝ Հուդան արձագանքում ինքն իրեն չնեղելու որոշմամբ և գնում է իրականացնելու պարտադրված դավաճանությունը. Բայց մայրս, որ նստած էր մութ անկյունում, կռահեց ամեն բան: Նրա աչքերն անհանգստությունից լայնացան, նա անքթիթ նայեց ինձ, հարցրեց, պահանջեց հերքել կատարվածը: Ես նրան չպատասխանեցի, և նա հասկացավ, թե ինչ էր սպասում ինձ, ու նրա կոկորդից հնչեց վիրավորված զգանսի գոռոցը<sup>4</sup>: Եվ ծեր մայրն ու որդին, կողք կողքի նստած, միափայլվում են միայն իրենց երկուսին հասկանալի ժպիտով, ու Հիսուսը շնջում է. Ների՛ր ինձ : Այսպիսով, Աստծո ընտրյալը թողություն է հայցում միայն իսկական ու միակ աստվածությունից՝ սեփական մորից:

Ինչպես արդեն նշել ենք, Ավետարան ըստ Պիղատոսի վեպի երկրորդ մասը կերտված է նամակագրության ժանրով, որն ընթերցողին հնարավորություն է ընձեռում տեղեկանալու Հրեաստանի պրոկուրատորի այն զուտ անձնական մտորումներին, որոնց կարող է հասու լինել միայն արյունակից բարեկամը: Ուշագրավ է, որ ամբողջ նամակագրության ընթացքում Պիղատոսը Հիսուսին անվանում է կախարհ, սակայն վերջինիս հանդեպ կատարվածը համարում է վայրենություն: Օտարագգի իշխանավորի համար մինչև վերջ անհասկանալի է մնում հրեաների անբացատրելի արյան ծարավը Քրիստոսի հանդեպ, Նրա, որն իր ամբողջ կյանքն ի սպաս էր դրել նրանց համար, ինչպես նաև քրիստոնյաների կրոնական խորհրդանիշների անմեկնելի խորհուրդը: Եթե կնոջ՝ Կլավդիայի հանդեպ թելադրված սիրով պայմանավորված՝ իր տարօրինակ ուխտագնացության ճանապարհին նա հասկանում է ձկան խորհրդանիշի խորհուրդը, որը հունական տառադարձությամբ հիշեցնում է *Հիսուս Քրիստոս* բառերը, ապա խաչ կրելու սովորույթը համարում է տարօրինակ, քանի որ, Պիղատոսի համոզմամբ, այդ նշանը հիշեցնում է Իեշուայի կյանքի մասամբ փառավոր և ամենանվաստացուցիչ<sup>5</sup> էջը, որին հետևում է կնոջ՝ Հիսուսի խաչելությանն ու հարությանն ականատեսի խորիմաստ և ամբողջացնող պատասխանը. Եթե նա թույլ տվեց, որ իրեն խաչեն, ապա միայն մարդկանց հանդեպ ունեցած սիրուց դրդված: Իսկ հարություն առավ, որպեսզի ապացուցեր սիրելու իր իրավունքը, ինչպես նաև այն, որ ցանկացած պարագայում, նույնիսկ, եթե ստիպում են ստել, պետք է սիրելու

---

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 127:

քաջությունը ունենալ <sup>6</sup>: Ասել է թե՛ ճակատագրի հեզնանքով հիսուսյան պատգամի խորհուրդը հասու է օտարագգի կնոջը, բայց ոչ հարազատ ժողովրդին:

Ավետարան ըստ Պիղատոսի վեպի համատեքստում ընդհանուր գաղափարը Հիսուսին և Պիղատոսին հատկացված պատմական առաքելությունն է, որն ընդհանրացվում է հենց Պիղատոսի բերանով.

Իեշուան խաղում էր իր դերը, ես իմը: Մենք երբեք ուրիշներին չենք տեսնում այնպիսին, ինչպիսին նրանք իրականում կան: Մենք նրանց տեսնում ենք հատվածաբար, հետաքրքրաշարժ պահերի տեսանկյունից: Մարդկային կատակերգության մեջ մենք փորձում ենք սուկ խաղալ մեր դերը, իսկ դա արդեն բարդ է, և կառչում ենք մեր խոսքերից, իրադրությունից: Այդ գիշեր մենք երկու դերասաններ էինք. Իեշուան խաղում էր դատավարության զոհի դերը, իսկ ես՝ Պիղատոսս, խաղում էի հռոմեական արդար ու անաչառ պրոկուրատորի դերը <sup>7</sup>:

## Հ. Շարության

### **Ապոկրիֆային ավետարանի մոտիվները Էրիկ-Էմանուել Շմիդտի Ավետարան ըստ Պիղատոսի վեպում Ամփոփում**

Ապոկրիֆային ավետարանի մոտիվները Էրիկ-Էմանուել Շմիդտի Ավետարան ըստ Պիղատոսի վեպում խորագրով հոդվածը նվիրված է ժամանակակից ֆրանսիացի գրողի նշանավոր ստեղծագործության քննությանը: Մասնավորապես անդրադարձ է կատարվել վիպասանի՝ Հիսուսի ձերբակալման գիշերն ունեցած մտորումներին, ինչպես նաև նրան ակամա դատապարտող հռոմեացի պրոկուրատոր Պիղատոսի՝ Քրիստոսի հարության, քրիստոնեության՝ որպես կրոնի հաստատման հիմնախնդիրներին վերաբերող խոհերին: Եզրակացվել է, որ տուրք տալով ապոկրիֆյան ավետարաններին բնորոշ հատկանիշներին՝ արձակագիրը բարձր արվեստով կերտել է Իեշուայի մարդկային կերպարը, որը երկրային կյանքից թեև հեռանում է որպես չգնահատված ու խորապես հիասթափված անհատ, այնուամենայնիվ իր մահով ստիպում է օտարագգի իշխանավորին վերանայել սեփական հայեցակետերը:

---

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 123:

**H. Sharuryan**

**The Motives of Apocryphal Gospels in the Novel by Eric-Emmanuel Schmitt  
«The Gospel According to Pilate»  
Summary**

The article entitled ‘The Motives of Apocryphal Gospels in the Novel by Eric-Emmanuel Schmitt ‘The Gospel According to Pilate’ is devoted to the analysis of the well-known novel’ by the French contemporary writer Eric-Emmanuel Schmitt. Here the author of the article particularly turns to the depictions of the novelist concerning the deliberations of Jesus at the night of his arrest, as well as, to the issues of resurrection of Jesus and Christianity as a religion , which occur in the mind of Roman procurator, who unconsciously condemns Jesus . We have assumed that by taking into account the typical features of apocryphal gospels, the French novelist with great artfulness created the human character of Ieshua, who though leaves the earthly life as an unappreciated and deeply disappointed individual but by his death makes the representative of foreign authority review his own concepts.

**ՆՈՐԱԿԱԶՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ»  
ՊՈԵՄՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Հովհաննես Շիրազ, թոնդրակեցի, բանաստեղծ, պոեմ, լեզու, գործուն բառապաշար, նորակազմ բառ, դիպվածային բառեր, ածանց, արմատ:

**Ключевые слова и выражения:** Оганес Шираз, тондракийци, поэт, поэма, язык, новые слова, активный словарный запас, окказиональные слова, корень, суффикс.

**Key words and phrases:** Hovhannes Shiraz, Tondrakians, poet, poem, language, active vocabulary, new words, occasional words, root, suffix.

Շիրազյան նորակազմությունների մասին առաջներում գրվել են և այսուհետև էլ գրվելու են լեզվաբանական ուսումնասիրություններ, քանի որ այդ բնույթի բառերը նրա քնարերգության մեջ այնքան են բազմահարուստ ու յուրատեսակ, ինչպես գրողի հարուստ ներաշխարհն է: Նորակազմ ամեն բառ, որ նրա երկերում ստեղծվել է հայերենի բառակազմական յուրօրինակ կաղապարներով, միննույն ժամանակ գրողի անհատականության ու խառնվածքի, մանավանդ բանաստեղծի խոհական տարերքի, ապրումի, զգացմունքի արտահայտություն է: Դրանք անակնկալ ծնվում են ստեղծագործելու պահին՝ տվյալ բառական միջավայրում՝ զեղարվեստական պատկերն առավել արտահայտիչ ու տպավորիչ դարձնելու նպատակով:

2014 թ. լույս տեսավ Հովհ. Շիրազի՝ 1954 թ. գրած, բայց ընթերցողին անհայտ մնացած «Թոնդրակեցիները» հեղինակային բնորոշմամբ «պոեմ՝ պատմափիլիսոփայական, վիպերգ ազգային-համամարդկային» մեծածավալ ստեղծագործությունը, որի բառապաշարն իր հարստությամբ ու բազմազանությամբ, կարծում ենք, արժանի է ուշադրության:

Սկսենք վերնագրից:

*Թոնդրակեցիներ* բառն առաջացել է *թոնիր*, *թոնդիր* բառից, որը, ըստ Հր. Աճառյանի, արևելյան փոխառություն է, նշանակում է գետնափոր փուռ»<sup>1</sup>, «Զանուն տեղվոյն Թոնդրակս անուանեն, զի անունդ այրեցման նշանակէ պատշաճ գոլ»:

---

<sup>1</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 196:

Հ. Հյուբշմանն այդ բառը համարել է պարսկական փոխառություն: Հր. Աճառյանի «Արմատական բառարանում» բերված են այդ արմատով մի քանի բառերի օրինակներ՝ *թոնրահող, թոնրեզր, թոնրտուն, թոնրմուխ* և այլն: Մինչդեռ Շիրազը այդ արմատով ստեղծել է ավելի քան երեք տասնյակ բառեր՝ *թոնդրաբողոք, թոնդրագլուխ, թոնդրալույս, թոնդրախորով, թոնդրակախարդ, թոնդրակամեծ, թոնդրականալ, թոնդրակածին, թոնդրահամայնք, թոնդրահամբույր, թոնդրադուրան, թոնդրամարմին, թոնդրանետ, թոնդրաշեն, թոնդրառոհմակ, թոնդրապղծյալ, թոնդրուհի* և այլն:

Բերենք պոեմից բնորոշ օրինակներ.

Ինչպե՞ս ծովանա էլ հայոց ածուն,

Երբ *թոնդրականում*,

Էլ հայ չեք ծնում,

Վայելում, բայց միշտ ամուլ եք մնում<sup>2</sup>:

Հայտնվի՛ր, աստված, տես՝ ինչ է ոռնում այս *թոնդրաքամին*,

Ազգն են տրոհում, պառակտում՝ այն էլ ազգի սև ժամին: (Էջ 248)

Այդ բառերի զգալի մասը, անկասկած, դիպվածային բառեր են՝ ստեղծված բառային տվյալ միջավայրում պահի թելադրանքով և բանաստեղծական տողի արտահայտչականության, պատկերավորման ու ռճավորման նպատակով: Նորաստեղծ այդ բառերը թոնդրակյան շարժման էությունը ներկայացնող ու բնութագրող և դրանց նկատմամբ հեղինակի անմիջական վերաբերմունքի բանաստեղծական արտահայտություններ են:

Նորաբանությունները հարափոփոխ հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերի հետևանքով նոր հասկացություններն անվանելու նպատակով առաջացած բառերն են: «Բառային նորաբանությունները նոր ստեղծված կամ նոր փոխառված բառեր են, և կամ նոր իմաստներ են՝ դրված մեր հին բառերի մեջ»: Ըստ Պ. Պողոսյանի՝ «քանի դեռ այսպիսի բառերը չունեն ընդհանուր տարածում և զգացնել են տալիս իրենց նոր լինելը, նորաբանություն են, բայց ընդհանուր ճանաչում գտնելուց հետո դադարում են նորաբանություն լինելուց»<sup>3</sup>:

Բառային նորաբանություններից պետք է տարբերել նորակազմությունները: «Նորակազմությունների առաջացման աղբյուրները բազմազան

---

<sup>2</sup> **Շիրազ Հ.**, Թոնդրակեցիները, «Հայրապետ» հրատ., Եր., 2014, էջ 166: Այսուհետև սույն հրատարակությունից քաղվածքների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

<sup>3</sup> **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ռճագիտության հիմունքներ, Եր., 1990, հ. 1, էջ 160, :

են, – գրում է Յու. Ավետիսյանը: – Դրանք նախ և առաջ բառակազմական գործող կաղապարներն են՝ բառաբարդում, ածանցում, հապավում, ինչպես նաև բառապատճենում»<sup>4</sup>:

Այդ կաղապարներով շիրազյան նորակազմությունները բացառապես անհատական են, հեղինակի կողմից ստեղծված են որոշակի իրադրության թելադրանքով, պատմական դարաշրջանի գունեղանգների արտահայտման կամ հերոսների բնավորության այս կամ այն գիծը գործողության մեջ առավել ճշգրտորեն ցուցադրելու նպատակադրմամբ: Դրանք, ի վերջո, հեղինակի մտքի ու մարդկային ապրումների արտահայտությունն են և ավելի շատ կիրառվում են ոճական նկատառումներով: Այդպիսի բառերը կարող են ժամանակի ընթացքում մտնել բառապաշար կամ այլևս բնավ չգործածվել՝ մնալով դիպվածայինի կարգավիճակում:

Էդ. Աղայանը դիպվածային այդ բառերը իրավացիորեն համարել է «մեկուսացած նորաբանություններ, որոնք թեև գործուն շերտին չեն անցնում, բայց նրանց մի մասը, առանձնապես հեղինակային նորակազմությունները մնում են, այնուամենայնիվ, բառապաշարի չգործուն շերտում, որպես բառագանձի տարր, ու կարող են ազատորեն գործածվել ըստ անհրաժեշտության և ինչ-որ ժամանակ անցնել գործուն շերտին»<sup>5</sup>:

«Թոնդրակեցիները» պոեմում Հ. Շիրազի նորակազմությունները ստեղծված ու գործածված են ճիշտ տեղում՝ բանաստեղծական պատկերի բովանդակությունը բացահայտելու և ընդգծելու համար: Այդ նորաստեղծ բառերը ավելի արտահայտիչ ու պատկերավոր են դարձնում հեղինակի խոսքը, ճիշտ ներկայացնում դարաշրջանի ու մթնոլորտի համապատկերը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանաստեղծն ավելի շատ կիրառել է բառաբարդումը՝ որպես բառակազմական միջոց: Այդ բառերի մեծ մասը իսկական բարդություններ են՝ *առյուծակորյուն, գառնաբառաչ, դեղնակնիք, դիվախոս, թրալեզու, իգացեղ, խաչադող, կնճաբհիտ, մահավճիռ, մեղսաքառս, մեծաթագ, շղթայաբանտ, վշտավեղար* և այլն:

Եվ արքան, ինչպես *առյուծակորյուն*,

Որին այս չքնաղ վանդակը սեղմեց,

Իր մահավճիռ ցատումը մեղմեց,

Սիրուն հաղթեց մտքին իր արքայակալ: (Էջ 219)

Նկատվում է նաև, որ Հ. Շիրազին բնորոշ է հատկապես գոյականից բայ կազմելու սկզբունքը՝ *ախուրյանվել, աղանդվել, աճյունվել, ամրոցվել*,

---

<sup>4</sup> Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Եր., 2014, էջ 51:

<sup>5</sup> Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 170:

*ավանակվել, ավարայրվել, գորզվել, գորքվել, թիկունքվել, խարույկել, մագաղաթվել, մագհատրոսել, մատյանել, մոխրել, նորվել* և այլն:

Այս բառերն առանձին իմաստ, իհարկե, արտահայտում են, սակայն նրանց բառիմաստն ավելի ընդգծվում, ցայտունանում է իրավիճակ կամ գործողություն պատկերող բառական միջավայրում.

Մայր տաճարի հսկա բակում,

Ուր ամբոխն էր *ողբասգում*՝

Սպասելով հուսո ելքին: (էջ 154)

Որոշ նորակազմ բառերում նկատվում է վ կրավորական ածանցի նպատակային գործածությունը, որով բայն ստանում է լրացուցիչ դառնալ իմաստը, օրինակ ավարայրվեց – Ավարայր դարձավ. սանդարամետված – սանդարամետ դարձած և այլն.

Հայն հայի դեմ *ավարայրվեց*,

Ծուխն էլ լուսնի ոտքերն այրեց: ( էջ 239)

Ո՞վ էղնիկների կյանքի ճամփեքը արոտավետեց,

Կամ երկնի խորքից՝ *սանդարամետված*

Լավայի ծովերն հրաբուխելով՝ ո՞վ երկինք նետեց: (էջ 148)

*Ավարայրվել* բառը գործածելով՝ Հ. Շիրազն ստեղծել է պատմական միջավայրի գունեքանգը հատկանշող պատկեր, որտեղ երևում է հեղինակի առանձնահատուկ վերաբերմունքը երևույթի նկատմամբ:

Իր գրական ուղու ողջ ընթացքում Հ. Շիրազը հանդես է եկել որպես բառաստեղծ հեղինակ: Նա նաև ածանցումն է օգտագործել որպես բառակազմական միջոց՝ ածանցավոր նոր բառեր կազմելով հատկապես -անք, -արան, -յա, -ուհի վերջածանցներով: Ստեղծել է նաև բարդածանցավոր բառեր (օրինակ՝ անք վերջածանցով՝ *մարմնապաշտանք*, ոց-ով՝ *մարմնադարբնոց* և այլն):

Նկատելի է, որ բանաստեղծն ավելի շատ հակված է եղել վերջածանցներով բառեր կազմելու:

Ածանցման, հատկապես գործուն ածանցների միջոցով Շիրազը «Թոնդրակեցի-ները» պոեմում ստեղծել է այդպիսի բազմաթիվ բառեր՝ *գրկուհի, կրքյա, մարմնանք, մարմնարան, տրդատյա, օձյա* և այլն: Սակայն, այնուամենայնիվ, բանաստեղծի տարերքը բառաբարդման միջոցով նորակազմ բառերի ստեղծումն է: Տարբեր բաղադրիչների առանձին բառիմաստների համադրմամբ նոր բարդ բառեր կազմելով՝ նա իրականացրել է իր բանաստեղծական մտահղացումները:

Տեսնենք, թե ինչ կաղապարներով է Հ. Շիրազը բառեր կազմել: Նա նորակազմ բարդ բառեր ստեղծել է հետևյալ կաղապարներով.

Ն. Գոյական + գոյական՝ *աղյուծադրոշմ, ողբադողանջ, մահատավիդ, մարդապատյան, խաչադող, մահամատյան, մեղսաքառս,*

*որովայնավիշտ, որովախրխինջ, ոգեմեղք , ոգեքաղց* և այլն:  
Օրինակ՝

Ժամերգումներս՝ որպես բույրն հացի,  
Ցրում են մութը մեր *ոգեքաղցի*,  
Խավարյալ սիրտը թորում են լույսով,  
Անհուսացյալին հաստում են հույսով: (280)

Այս կաղապարով ստեղծված բոլոր բառերը գոյականներ են:

Օ. Գոյական + ածական՝ *երկնակապույտ, խաչքարախավար, առնագեղ, կնճաբբիրտ, մեղսահաշտ, կրքակույր, հրեշտականուրբ, մահաժանտ, լրբանուշ, մարմնաշվայտ:*

Այս կաղապարով կազմված բառերը ածականներ են: Օրինակ՝

Մարմինը *հրաշք, հրեշտականուրբ,*  
Մարմնի թաքուցյալ խոյանքներն՝ *անսուրբ:* (207)

Ք. Թվական + գոյական՝ *հազարագույց, հազարաբերան, յոթնագավառ, յոթնասիրտ, յոթնաբույլ, միամտուր, միաարտո* և այլն: Նկատելի է, որ այս բարդությունները չեն կազմվել պատահական թվերով, այլ գերազանցապես խորհրդանշական թվերով, որոնք հաճախ են գործածվել ժողովրդական հեքիաթներում և էպոսում: Այս կաղապարով ձևավորվել են նոր ածականներ: Օրինակ՝

Մեր հույսն արքայի խիղճն է *յոթնասիրտ,*  
Քնքշացան ասես մտունչները բիրտ: (78)

Չ. Գոյական + բայ՝ *ահեղասաստ, աստվածակերտ, դիվապաշտ, թրաթաքույց, հայրենամոռ, մահակազեն, մարմնաբույժ, շղթայատանջ, ոգեհաղթ, սատանագարդ, սատանախաբ, սատանատանջ* և այլն: Ինչպես տեսնում ենք, այս կաղապարով դարձյալ կազմվել են նոր ածականներ, որոնցով ավելի ընդգծվել ու արտահայտիչ են դարձել հեղինակի կամ հերոսների խոսքը.

Ծունկի՝ *իջեք Աստծո առաջ,*  
Երկնի առաջ՝ *ի սեր գահի,*  
Ո՛վ խաբվածներ *սատանատանջ,*  
Իջե՛ք՝ *ի սեր իմ արքայի:* (էջ 50)

Մնացած օրինակները քիչ են՝ ածական + ածական՝ *խոժոռալուռ, նենգանուրբ, դերանուն + բայ՝ ձեզուրաց, հնքնամերժանք,* ածական + գոյական՝ *պղծաբերան, քնքշաղեղձ, պղծաքարոզ:*

Օգտվելով մեր լեզվի բառակազմական անսահման հնարավորություններից՝ Շիրազը *մարմին* արմատով ստեղծել է բարդ և բարդաձանցավոր նոր բառերի մի յուրատիպ շարք՝ *մարմնապերճ, մարմնագիշեր, մարմնաբոց, մարմնագինի, մարմնապատկեր, մարմնաքառս, մարմնաթովչանք, մարմնապաշտանք, մարմնապաշտիկ* և

այլն, որոնք նոր իմաստ ու բովանդակություն են ստացել պոեմում: Բերենք այդ բառերի գործածության օրինակներ.

*մարմնապաշտանք* (Ձեր հույժ անհոգի *մարմնապաշտանքի* սիրացնորքը... էջ 146)

*մարմնակերոն* (Դու ծով ձգեցիր մեր ազգը պահող սրբակրոնը, // Վառեցիր ձեր պիղծ *մարմնակերոնը*, էջ 151)

*անմարմնաշոշափ* (*Անմարմնաշոշափ*, անըմբռնելի, անոգեշոշափ և անբռնելի, // Միայն մտքի մեջ երկրպագելի, էջ 170)

*մարմնապերճ* (Գինին՝ լրբաթույր, // Թասը՝ *մարմնապերճ*, էջ 207)

*մարմնաբոց* (Որ անտենչանք է ստոնության մեջ էլ իր *մարմնաբոցի*, էջ 209)

*մարմնաձայն* (Հավատս խախտեց իր *մարմնաձայնը*, էջ 254)

*մարմնախայթ* (Եկան՝ լքելով սին խաչ ու խունկի *մարմնախայթ* փուշը, էջ 257):

Հ. Շիրազը հայերենի բառակազմական օրինաչափություններով ստեղծել է նաև բարդածանցավոր մի շարք բառեր՝ *աստվածախոսիկ*, *ոգեներուժ*, *առնապաշտիկ*, *աստվածախոսանք*, *ինքնամերժանք*, *ցնորախոսանք*, *ունայնախոսանք*, *մարմնադարբոց*, *մյուռոնաբուրյան* և այլն:

*Ուրանալ* բայի անցյալի հիմքով՝ *ուրաց* բայաձևով, կազմվել և գործածվել են՝ *բուրվառուրաց*, *վանքուրաց*, *ծեսուրաց*, *վեհուրաց*, *խաչուրաց*, *մատուռուրաց*, *վեղարուրաց*, *մատաղուրաց*, *կերոնուրաց*, *կրոնուրաց* և այլ բառեր, որոնք թոնդրակյան շարժման առաջնորդների ու մասնակիցների ազգադավ ու հակաքրիստոնեական գործունեության էությունն են բնորոշում: Ահա ինչպես են իրենք իրենց բնորոշում թոնդրակեցիները՝ արքայի և բանադրող ատյանի առջև արդարանալով.

- Մենք ձեզուրաց ենք՝
- Ընդդեմ հավկուրաց,
- Մենք ծեսուրաց ենք, ոչ աստվածուրաց:
- Մենք վեհուրաց ենք, վարդապետուրաց...
- ...Իմաստնաբանեց քուրմը խաչուրաց.
- Մենք խաչուրաց ենք, մենք տաճարուրաց,
- Մատուռուրաց ենք,
- Մենք՝ բուրվառուրաց,
- Շուրջառուրաց ենք,
- Մենք՝ ուրարուրաց,
- Վեղարուրաց ենք,
- Մենք՝ մատաղուրաց,
- Կերոնուրաց ենք,
- Մենք՝ կրոնուրաց,
- Մենք հավիտյան ենք եկեղեցուրաց,

- Մենք ձեզուրաց ենք, - կրկնեց Հաբեյը,  
Ինչպես հայկընդդեմ աղեղված Բեյը: (Էջ 76)

Գրաբարի անցյալ դերբայի հիմքով ստեղծվել են *ազգանեղծյալ, խաչեցյալ, խավարյալ, խոտորյալ, հղփացյալ, մարմնապղծյալ, ոզեղծյալ, պոռնկացյալ*, որբացյալ և այլ բառեր, որոնք հետաքրքիր երանգավորում են սովել պոեմին:

Նկատելի է, որ բարդություններն ունեն տարատեսակ խոսքիմասային կազմություններ. դրանց մեջ գերակշռում են ածականով կազմված բարդությունները:

Այժմ անդրադառնանք այդ բարդությունների բաղադրիչների շարահյուսական հարաբերություններին: «Սակավաթիվ են այնպիսի բարդությունները, որոնց երկու մասերն ունեն համադասական հարաբերություն, այսինքն՝ մեկը մյուսի լրացումը չի դառնում, այլ երկու մասերը միանում են իբրև համագոր բառեր, ինչպես բաղիյուսական հարադրությունների մեջ, կամ ինչպես կրկնավորները: Սովորաբար բարդության բաղադրիչ մասերի հարաբերությունը ստորադասական է. մասերից առաջինը ըստ իմաստի լինում է լրացում երկրորդին, այսինքն՝ բարդ բառի գլխավոր կամ հիմնական նշանակությունը երկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որևէ կողմից որոշում, լրացնում է երկրորդի իմաստը. օրինակ՝ հացատուն-հացի տուն, սևահող – սև հող...»<sup>6</sup>:

Մ. Աբեղյանը գտնում է, որ ամեն բարդ բառի նշանակություն կարելի է արտահայտել որևէ շարահյուսական կապակցությամբ. օրինակ՝ գոյական + գոյական կաղապարով կազմված գոյականներ, որոնց երկրորդ բաղադրիչը գոյական է և պահում է իր հիմնական նշանակությունը, իսկ առաջին բաղադրիչն ունի սեռական հոլովի նշանակություն՝ *վշտավեղար* – վշտի վեղար, *մարմնագիշեր* – մարմնի գիշեր, *մարմնակամար* – մարմնի կամար, *թոնդրաորջ* – Թոնդրակի որջ և այլն: Այս օրինակներում արտահայտված է հատկացուցիչ – հատկացյալի հարաբերություն:

Ածական + գոյական կաղապարով կազմված բարդություններում բաղադրիչները որոշիչ – որոշյալի հարաբերություն են արտահայտում՝ *գեղեցկատան* – գեղեցիկ տան, *գաղտնագիրք* – գաղտնի գիրք, *պղծաբավիղ* – պիղծ բավիղ, *սրբակրոն* – սուրբ կրոն, *պղծաբարոզ* – պիղծ քարոզ, *քնքշադեղձ* – քնքուշ դեղձ, *սպիտակավարդ* – սպիտակ վարդ և այլն:

Պարագայական ու խնդրային հարաբերություն արտահայտում են հետևյալ կաղապարները՝

---

<sup>6</sup> Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 201:

ա. Գոյական + ածական կադապարում հիմնական բաղադրիչը ածականն է, իսկ առաջին բաղադրիչը՝ նրա լրացումը: Օրինակ՝ *հեթանոսասուրբ* – հեթանոսի նման սուրբ, *գնդանակուռ* – գնդանի նման կուռ, *մարմնասանձ* – մարմնի պես անսանձ, *հրեշտականուրբ* – հրեշտակի պես նուրբ, *մահաժանտ* – մահի նման ժանտ, *մարմնաճշան* – մարմնի պես ճշացող և այլն:

բ. Թվական + գոյական կադապար՝ *յոթնագավառ*, *հազարաբերան*, *յոթնասիրտ*:

գ. Գոյական + բայ կադապար՝ *մարմնաբույժ*, *շղթայատանջ*, *մայրամուռնչ*, *դարակուտակ*, *արյունասույգ*, *սատանախաբ*:

դ. Ածական + ածական բարդ բառերի բաղադրիչներն արտահայտում են պարագայական իմաստ՝ *նենգանուրբ*, *նրբանուրբ* և այլն:

Ուսումնասիրությամբ պարզվում է, որ նորակազմ բառերի մեծ մասը ածականներ են: Հ. Շիրազը հատկապես որևէ բառակազմական միջոցով բառեր ստեղծելու նպատակ չի ունեցել, սակայն պարզ է նրա պատկերավոր ու ինքնատիպ մտածողությանը ոգի ու շունչ են տվել բառաբարդման եղանակով ստեղծված ածականական նորակազմությունները: Հ. Շիրազն այդ բառերին նոր իմաստ ու բովանդակություն է հաղորդել՝ այդպիսով ավելի արտահայտիչ դարձնելով բանաստեղծական պատկերը:

Թեև պատկերավորման համակարգի մասին խոսելը դուրս է մեր նպատակից, սակայն անհնար է չանդրադառնալ պոեմում սփռված բազմաթիվ ու բազմատեսակ մակդիրներին, որոնք ոչ թե սովորական, այլ մակդիր – նորակազմություններ են՝ փոխաբերական իմաստներով: Լ. Եզեկյանը հենց փոխաբերական իմաստն է համարում մակդիրների գլխավոր հատկանիշը<sup>7</sup>: Օրինակ՝ *արյունասույգ ծիրանի*, *բանապաճույճ մեղք*, *գայլավագրացող անհավատ*, *եղնկանուրբ մարմնաթուլչանք*, *թշնամախույզ ծպտյալ*, *խոժոռոլուռ իմաստություն*, *հեթանոսասուրբ միտք*, *հրեշտականուրբ մարմին*, *մասրաբերան նրբուհի*, *մարդապատյան դև*, *նենգանուրբ կույր*, *փառանպարտ շքախումբ* և այլն:

Հնարավոր չէ անդրադառնալ պոեմում գործածված բոլոր նորակազմություններին: Նրանցից շատերը՝ որպես դիպվածային բառեր, ունեն միանգամյա գործածություն: Սակայն մի զգալի մասն էլ ժամանակի ընթացքում գուցե կանցնի գործուն բառապաշար՝ հարստացնելով մեր լեզվի բառազանձը և ընդլայնելով նրա պատկերավորման ու արտահայտչական հնարավորությունները:

<sup>7</sup> Տե՛ս Եզեկյան Լ., Ոճագիտություն, ԵՊՀ հրատ., 2003, էջ 335:

**Ն. Թիրաբյան**

**Նորակազմությունները Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում  
Անվոփում**

Հոդվածում առաջին անգամ քննության են առնվել Հովհ. Շիրազի՝ մինչև 2014թ. ընթերցողին անհայտ մնացած «Թոնդրակեցիները» պատմափիլիսոփայական ծավալուն պոեմում առատորեն գործածված նորակազմությունները: Ցույց է տրվում, որ այդ բառերի գերակշիռ մասն ստեղծվել հայերենի գործուն ածանցներով ու բառաբարդման հիմնականում հետևյալ կաղապարներով՝ գոյական + գոյական, ածական + գոյական, գոյական + թվական, գոյական + բայ: Նորակազմ ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր բառերի քննությամբ հեղինակը եզրակացնում է, որ դրանցից շա-տերը՝ որպես դիպվածային բառեր, ունեն միանգամայն գործածություն, սակայն մի զգալի մասն էլ անպայմանորեն կանցնի գործուն բառապաշար՝ հարստացնելով մեր լեզվի բառազանձը և ընդլայնելով նրա պատկերավորման – արտահայտչական հնարավորությունները:

**Н. Тирабян**

**Новообразования в поэме О. Шираза <<Тондракийцы>>**

**Резюме**

В статье впервые анализируются новообразования, использованные в историческом философском поэме Шираза, которые до 2014 г были неизвестны читателю. Показано, что подводящее большинство этих слов создано с помощью аффиксов и формами словосложения армянского языка: существительное + существительное, прилагательное + существительное, существительное + числительное, существительное + глагол. Анализируя новообразные производные, сложные и сложнопроизводные слова автор приходит к выводу, что многие из них в качестве случайных слов, имеют одноразовое использование, но их значительную часть войдет в словарный состав обогащая и расширяя выразительные возможности армянского языка.

**Neologisms in Hovh. Shiraz's Poem "The Tondrakians"**

**Summary**

In this article the abundant usage of neologisms, that is found in Hovh. Shiraz's historical-philosophical excessive poem "The Tondrakians", which was unknown for the reader till 2014, are examined for the first time. Here it is pointed out that the vast majority of those words are created by the affixes and compounding actively used in Armenian language: the main patterns are- noun + noun, noun + adjective, noun + numerals, noun + verb. By examining the newly formed derivative, compound and compound derivative words the author assumes that most of them are occasional and, as such, are used only once, but the huge part will certainly be included in active vocabulary and enrich the lexicology of the language and enlarge its descriptive-expressive means.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ ՀՈՎԵՅԱՆԻ ՍԵՂՇՍԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Հ. Հովեյան, բանաստեղծություններ, Հայաստան, գեղարվեստական պատկեր, գեղարվեստական տարածություն, գեղարվեստական ժամանակ, խորհրդանիշ, գրական ժառանգորդություն:

**Ключевые слова и выражения:** Ов. Овевян, стихи, Армения, художественный образ, художественное пространство, художественное время, символ, литературная преемственность.

**Key words and phrases:** Hovik Hoveyan, poems, Armenia, art picture, art space, art time, a symbol, literary continuity.

Արարելու մղումը թռիչքի գաղափարական խտացումների ընկալումներով է հատկանշվում, մատուցման ձևի ու ոճի յուրօրինակությամբ, և արարված-ծնված ստեղծագործությունն իրեն արարողի հոգևոր վերթնումի ուղղակի կրողն է դառնում:

Երկրագնդի պտույտն ամեն օրվա հետ է սովորական դառնում, ասվածն ու չասվածը երբեմն կամ հաճախ նմանվում են հարակրկնության, իսկ պոետի առջև ամեն օր դրվում է դժվարին մի խնդիր՝ եռամասնյա ժամանակի մեջ թողնելու իրենը, նորը, չկրկնվածը կամ անկրկնելին:

Բանաստեղծ Հովիկ Հովեյանի հատկապես վերջին շրջանի ստեղծագործությունները նրա պոետական համոզմունքների հանրագումարն են: 2004-ին հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուն բաղկացած է «Հիշողության կավ», «Աշնան թևեր», «Երագուտներ», «Հողաթափեր՝ Աստծո շեմին» բաժիններից: Ընտրված խորագրերը տարողունակ են և ընթերցողին մղում են խորքայինի ճանաչմանը:

Ժողովածուի «Հիշողության կավ» բաժինը բացվում է «Ինքնադիմանկար» բանաստեղծությամբ, որտեղ ինքն է՝ Հայաստանի արևի ու հայ բարբառի մեջ, որտեղ տատի փռած չրերն են, հորեղբոր շիրմաթմբից աճած նշենին... Ինքնադիմանկարը հետո պիտի լրացվի «Մեղավոր տող եմ ձեր անմեղ շուրթին» /48/ բնորոշումով: Ապա՝ եթե Երևանը Լույսի այգեպան է, ուրեմն ինքը նրա այգու շիվերից մեկն է:

Պոետական կերպի մեջ է մտնում բոլորովին էլ ոչ պոետական արտագաղթը.

*Լվացքի պարաններից*

Գլխատված հրեշտակներ են կախված,  
Եվ Լուսինը ճերմակ վարդեր է թափում  
Նրանց հիշատակին...  
Նախշափայտ պատշգամբը հղի է  
Սև թթենու ճյուղով,  
Եվ ճաքած ապակին  
Կիսաադեմ կարտոններ է ծնում  
Գիշերվա քարայրում...  
Լվացքի պարաններից  
Գլխատված քաղաքն է կախված,  
Եվ պոետների քարավանը  
Լքում է տարածքն իր  
Անապետյան...  
Լվացքի պարաններից  
Պոետներ են կախված... /էջ 47/:

Չկարկատանվող գենետիկ հիշողություն են ծովից ծովը, նոյյան հեղեղի աղը, ջրի լեզենդը. սեգ ու ձյունավառ սարն էլ ամեն Աստծո օր իր վրա է կրում պոետի կարոտը /49/: Երկիրը փնտրելու ջանքերը կարծեք վերջ չունեն.

Ես քանի՞ գարուն այսպես փնտրեմ քեզ,  
Մթնում տրոցված Հայաստան՝ իմ հող... /52/:

Գրեթե բոլոր ստեղծագործողներն իրենց գործի մի որոշակի հատվածում և կամ էլ ստեղծագործական ամբողջ ճանապարհին ժամանակ առ ժամանակ իրենց և բոլորի համար բացահայտում են միայն իրենց ընկալած հայրենիքը: Այս իմաստով՝ Հովեյանի կերտած գեղարվեստական տարածության մեջ Հայաստանի հին քաղաքները փշրված հայելիներ են /60/ իբրև բազմապատկված հիշողություն: Հայաստանն ուրվագծվում է որպես լեռնոտ երկիր՝ հազար գույնանի /61/:

Հայրենիքին նվիրված համայնապատկերը գաղափարական առումով սնվում է խորապես ազգային հենակետերից՝ գոյության կենսատարածքն ընկալելով որպես հայտնությունների անակնկալ, անսպասելի իրողություն, բայց այնպիսի իրողություն, որը միշտ մեզ հետ է, և տարբեր ժամանակային հատվածներում թողնում է միմյանց չկրկնող տպավորություններ:

Ժամանակը ստեղծագործողից պահանջում է համարժեք վերաբերմունք ցուցաբերել առկա իրողությունների և երևույթների հանդեպ, ճշմարտացի գնահատել, սեփական վերաբերմունքն ունենալ ակնհայտի ու աներևույթի նկատմամբ:

Հովեյանի բառերը խտացնում են գաղափարի և իրականության, երազի և իրական կյանքի բախման արդյունքում ծնված բազմաթիվ հարցադրումների

պատասխաններ: Ժամանակների համադրության, միմյանց մեջ ներհյուսման արդյունքում էլ ծնվում է ապագայի տեսլականը՝ բացելով աշխարհաճանաչողության նոր հորիզոններ:

*Հայաստանն էս՝ հազարածալ մեղրի նման,*

*Եվ էս՝ մեղուդ, քաղցր ու անուշ*

*Լեզվիդ վիհին՝ հար մահապարտ /62/:*

Շովից ծովի զգացողությունն ամբողջացնում է գեղանկարչի տեսողությամբ օժտված պոետի հայրենանվեր բանաստեղծությունների շարքը՝ հավաքական ամբողջության մեջ ընդգրկելով ազգի գենետիկ հիռոդությունը, հայրենիքի աշխարհագրական ընկալումն ու կենսատարածքի՝ դրա հետ անհամատեղելի, անհամեմատելի լինելու ցավը:

Հովեյանի արարած գեղարվեստական տարածության մեջ կա ժառանգորդի գենետիկ պատասխանատվության զգացողությունը, իր երկրին անվարան և հավիտյան տեր լինելու համոզվածությունը, որը մեկտեղում է անցյալի ու ներկայի կորուստներն ու ձեռքբերումները ապագայի դիտակետից ճշմարտացի գնահատելու պոետի տեսողությունը և գիտակցությունը:

*Երկիր իմ, էս զգեստն եմ քո,*

*Հանիր ինձ, փոխիր և իբրև խաչքար*

*Պահ տուր ժայռերի ձերպերին... /82/:*

Սա նաև համոզմունքի աներեր լինելու խորհրդանշական պատկեր է, որտեղ ուրվանկարվել են հայի արարչաստեղծ տեսակն ու առաքելությունը՝ նաև ապագայում նրա լինելիության անհրաժեշտության գիտակցումով, որը թերևս տիեզերական, աստվածային կամքի դրսևորում է... Ասվածն իբրև գաղափարական հիմնաքար հանդես է գալիս Հովեյանի շատ բանաստեղծություններում, որոնց գեղարվեստական տարածության մեջ արձանագրվում է դարերի տևողություն ունեցող, դարերի փորձությունն անցած ճշմարտությունը:

*Երակներինս միջով իմ ավերակված*

*Երգերն են հոսում... /90/:*

Կամ՝

*Ձուկը մենք ենք՝ խաչե գլխով,*

*Արյունը մեր՝ ծաղկած անցյալ,*

*Ջրվեժի տակ՝ լեռների ծով,*

*Մակույկ-վանքեր հավատացյալ /96/:*

Արձանագրելով ժամանակների շնչառությունը՝ Հովեյանը բանաստեղծության տարածության մեջ դինամիկ ընթացք է հաղորդում հայի ճանապարհի երգին, որ գալարապտույտ անցել ու շարունակում է անցնել Լեռան միջով:

*Աշխարհը լեռ, մեր ճամփեն՝ խաչ,  
Խաչե ճամփով մենք քառատվել,  
Հարյուր-հազար տարի առաջ  
Լեռը մտանք ու մեջն ենք դեռ /99/:*

Ակնարկն առավել քան թափանցիկ ու պարզ է՝ մենք բանտված Միեր ենք բոլորս, ու աբսուրդն այն է, որ բոլորովին էլ Միերի ժառանգորդը չենք:

Այսպես երևակվում է ժողովրդի կենսագրությունը, որի գոյությունն ամրագրվել է ժայռապատկերներում և համահունչ ու համաքայլ է աշխարհաստեղծման առասպելին:

Նետաքրքրական շերտերով է աչքի ընկնում Հովիկ Հովեյանի պատկերագիրքը, որտեղ կենաց խորհուրդն ամփոփվում է ծաղկաբույր ծառերի երկնառաք աղոթքներում, գինու ցուլքերում, ծաղկած մոխիրներում, ողկույզե քանդակներում, ցորենի վառած արտի և հազարավոր վանքերի ու մատուռների երկինք բարձրացող խնկաբույրի և Աստծո աչքերից կաթող հասկերի մեջ: Հարատևումի խորհրդանիշ ու երաշխիք է՝ «Ջրհեղեղի վերջին օրվա կավն եմ եղել՝ շողուն ու թաց» /110/:

Գրքի «Հիշողության կավ» բաժնում պոետի ներաշխարհից բխած առանձին-առանձին միավորները բանաստեղծական ամբողջական ասք են ձևավորում, որի մեջ ծովից ծովն է, որտեղ գեղարվեստական միջավայրի առօրյա ու ամենօրյա վավերագրումներն անբացատրելիորեն ենթական են վերերկրայինին: Պատմական տարածքներն ու պատմական ժամանակն այստեղ ներքին շաղկապումով ձգվում են դեպի բիրիական՝ աշխարհաստեղծման ժամանակային ու գեղարվեստական տիրույթներ՝ հոգեվիճակների ամենատարբեր փոխանցումներով պատկերելով ժողովրդի ճանապարհ ու ճակատագիր, հոգևոր ներքին լույսի շնորհիվ հայտնաբերվող ապագա՝ այդպիսով զարմանալիորեն շարունակելի դարձնելով բանաստեղծությունից դուրս ձգվող ժամանակն ու տարածությունը:

*Ժայռը ճաքած հայելի է,  
Անցնեմ ե՛ս էլ մերոնց հետքով,  
Որ աշխարհ գամ երևի թե,  
Որդուս որդու պայծառ դեմքով... /148/:*

Թվում է՝ պատկերված ամեն ինչ գերծ է ցավի խորհրդանիշներից. անցյալի ցավն ու խոշտանգումները հիշեցնող տեսարաններն ստեղծվել են հանդարտ էպիկականությամբ, զուսպ բառաշերտով, բայց ընդհանուր հանգստության կամ թվացյալ հանդարտության մեջ ներքին տագնապի անհանգիստ զգացողություն կա, և առկա է ինչ-որ դատարկ տարածություն, որ նոր արարումի կամ վերագտնումի հույսով լցնելու մղումով է կերպավորվել:

*Անձրևները հղկեցին իմ կողերը ժայռեղեն,  
Տաշտշեցին թևերն իմ դանակներով արծաթե,  
Որպես վայրի մասրենի՝ ականջալուր ու անքեն,  
Ես իմ անդունդը գտա ու կախվեցի անարգել:  
Արևն իմ մեջ մայր մտավ՝ կարասն իջնող գավի պես,  
Երկինքն իմ ճյուղը ներկեց թախիժներով անցյալի,  
Օձն իր կաշին պահ տվեց հալածական կողերիս,  
Գայլը բուրդը կախ տվեց, իբրև կոտրած հայելի:  
Գրկած անդունդը կյանքիս ու արևներ կրծքիս տակ,  
Դարձած շրշուն մի տատմեր՝ ծոցվոր գարնան շուրջբուր,  
Բողբոջեցի գորգի պես, բողբոջեցի զանգ առ զանգ,  
Որ լուսաբաց առաքեմ մերոնց՝ Աստծո ամեն օր /150/:*

Արդի հայ պոեզիայում քիչ չեն այն բանաստեղծությունները, որոնցում Հայաստանի աշխարհագրական չափագրումը պոետական անկրկնելի կերպի մեջ է մտնում կամ իբրև սենյակում պոետի մենության շուրջ լուռ սփռված երկիր /Սարուխան/, կամ իբրև միայն ցավին ու սուգին հարմար եկող քարտեզագրված չափագրում և կամ էլ՝ ամեն կողմից կրծոտված մեղրաբլիթ՝ Հայաստան /Հովհ. Գրիգորյան/: Հովիկ Հովեյանն էլ է չափագրել Հայաստանը որպես *հրեշտակի թևի տակ տեղավորվող երկիր /165/*: Վերը մեջբերված բանաստեղծական հատվածը բացահայտում է նաև յուրօրինակ մի ժառանգորդություն՝ Համո Մահյանի և Հովիկ Հովեյանի միջև. նկատի ունենք *«Որպես վայրի մասրենի՝ ականջալուր ու անքեն, /Ես իմ անդունդը գտա ու կախվեցի անարգել»* տողը:

Երբ գործ ունենք Հովեյանի՝ Հայաստանը պատկերող բանաստեղծությունների հետ, արտաքին պարզության մեջ նշմարելի և իրականում անընդգրկելի խորություն կա, որտեղ լեռնաշխարհի տիրական ներկայությունն է, որտեղ հավատավոր վանքերն են իբրև ժայռեղեն հայրենիքի համապարփակ մարմնավորում:

Նրա պոետական մտածողությունը բառերի եզակի համադրությունների կիրառության շնորհիվ, ներքին համակարգված իմաստավորումներով երբեմն թանձրանում է՝ հասնելով պատկերի խորհրդավորության, որտեղ վաղուց հնացածը դեռևս շարունակում է կենսունակ լինել հիշողության տիրոջնեթում, որտեղ հոգևորի կացարանները կերպավորվում են իբրև երրորդ աչք՝ ինքնաբացահայտման ու կատարելագործման ճանապարհին:

Ընդհանրացնելով՝ թերևս կարելի է ասել, որ հովեյանական հայրենիքի պատկերագրումները խորապես ազգային արմատներ և ակունքներ ունեն, որոնց տարածականությունը լի է աշխարհընկալման և արտացոլման անկրկնելիությամբ:

Տրամադրությունների և զգացողությունների փոփոխությունն ակնհայտ է «Վրիպած ջրհեղեղ» ժողովածուում /2014/, որտեղ պոետական մտածումների մեջ թանձրանում են մուգ, մռայլ գույները: Նախկին վստահ քայլերը զգալի վարանոտ են դառնում.

*Ափսոս, ոտքերս են սեպագիր, ծվատ,*

*Ափսոս, որ երգս գոց է ընդերքով /31/:*

Թևաթափ ու հուսակտուր է, երբ գրում է, թե *Հայաստանի ժամանակը մնացել է / Ավերակների կոկորդոս /53/:*

Մեփական զարկերակից ներս քայլողի համար, եթե օրապահիկը չորացած վրնջյուն է ընդամենը, հուսալքումի զարկերն էլ ավելի են ընդգծվում:

Այստեղ իսպախում են անցյալի ու ներկայի սահմանագծերը.

*Սա իմ լուսանկարն է՝ բարձունքիս հետ...*

*Բարձունքս հատակս է,*

*Ավաղ՝ նախնյաց ոսկորներով*

*Լեցուն... /77/:*

Այսպիսի գիտակցումով, կորուստները կում-կում ըմպելով է պոետը տեր կանգնում անցյալի հիշողությանը, ու այսպես է պարադոքսն ամրագրվում զարկերակի հիշողության մեջ՝ *բարձունքս հատակս է:*

Ինքն իր ներսում կամրջվածի տող առ տող փլուզումը /216/ բանաստեղծական պատկեր ու շնչառություն է դառնում, և պոետն ընթերցողին պարզվում է մի դեպքում որպես աշնանացան ցորեն /172/, մյուս դեպքում՝ իբրև կակազողի թիկնոց հագած, որի խնդիրը Վերջը ամեն կերպ երկարաձգելն է /211/...

Եվ այնուհանդերձ, իր իսկ խոստովանությունը դիտենք իբրև ճշմարիտ ապրելու և արարելու կատարելակերպ.

*Ապրում եմ այսպես՝ Աստծո բիրի մեջ /160/:*

### Օգտագործված գրականություն

1. Հովեյան Հ., Բանաստեղծություններ, Ե., 2004, «ԳԱՄՊԻԲՆՏ» հրատ., 528 էջ:
2. Հովեյան Հ., Վրիպած ջրհեղեղ, Ե., 2014, ՀԳՄ հրատ., 224 էջ:

**Լ. Սահակյան**

**Հայաստանի պատկերը Հովեյանի ստեղծագործության մեջ  
Ամփոփում**

Հետանկախական շրջանի հայ պոեզիայում Հովիկ Հովեյանի ստեղծագործությունն աչքի է ընկնում գաղափարական խտացումների ընկալումներով: Հոդվածում ներկայացվում է Հայաստանի գեղարվեստական պատկերը՝ հովեյանական մեկնաբանությամբ:

**Л. Саакян**

**Образ Армении в творчестве Ов. Овояна**

**Резюме**

В армянской поэзии постсоветского периода своим восприятием идеологической концентрированности выделяется творчество Овик Овояна. В статье представляется художественный образ Армении в овояновской интерпретации.

**L. Sahakyan**

**The Image of Armenia in H. Hoveyan`s poetry**

**Summary**

In the Armenian poetry of post independence period Hovik Hoveyan's work is striking with its ideological thickened perceptions. The art picture of Armenia is introduced in the article with Hoveyan's interpretation.

**ԴԻԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ**

ԵՊՀ գրականության տեսության և  
գրաքննադատության ամբիոնի ասպիրանտ  
ՀՏԴ 821.19.0

**ՊՈՍՏՄՈՂԵՌՆԻՍՏԱԿԱՆ ՀԵՐՈՍԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** պոստմոդեռնիզմ, նոր հերոսի ընտրություն, միայնություն, ժամանակային շրջափուլ, լաբիրինթոս, թվացյալ շարժում, միֆ, սև հումոր:

**Ключевые слова и выражения:** постмодернизм, выбор нового героя, одиночество, временной цикл, лабиринт, кажущаяся движение, миф, черный юмор.

**Key words and phrases:** postmodernism, the choice of a new hero, loneliness, time circle, maze, seeming movement, myth, black humor.

20-րդ դարասկզբին մոդեռնիստական դարաշրջանի մտածելակերպը փոխարինվում է նորով, որն անվանելու համար անհրաժեշտ էր մի նոր եզրույթ: «Պոստմոդեռն» բառը ի հայտ եկավ Ամերիկայում՝ հասարակագետների և քննադատների շնորհիվ, որպեսզի մատնանշի 20-րդ դարի երկրորդ կեսի հասարակական և մշակութային կյանքում տեղի ունեցող կառուցվածքազաղափարային փոփոխությունները: Ամիտայ Էտցիոնին նույնիսկ որոշակի տարեթիվ է նշում. «Պոստմոդեռնիստական դարաշրջանը սկիզբ է առնում մոտավորապես 1945 թվականից հետո և իր հետ բերում է այլընտրանքային մոտեցում և տեխնոլոգիաների ինտենսիվ և անխոչընդոտ զարգացում, որոնք մեծ մասամբ հենվում են իրենց էֆեկտիվության չափորոշիչների վրա և կամ էլ նոր արժեքների համակարգի ընտրության, որոնք ճանապարհ կհարթեն «ակտիվ հասարակության համար»<sup>1</sup>:

Սկիզբ առնելով ԱՄՆ-ում՝ տերմինը հետագայում ընդլայնվեց և տարածում գտավ նախ ֆրանսիական փիլիսոփայության մեջ, իսկ ապա նաև արվեստի բոլոր ուղղություններում: Դոնալդ Կարսոնը նշում է. «Բոլորը խոսում են պոստմոդեռնիզմի մասին: Ոմանց համար այդ բառը բնորոշում է վերջին տասնամյակներին տեղի ունեցած բոլոր հիանալի երևույթներն ու զարգացումները, իսկ մյուսների համար այն

<sup>1</sup> Etzioni A. «The Active Society: A Theory of Societal and Political Processes», N Y., 1968, p. 43:

իրականության ժխտումն է և մեծամտության դրսևորում: Մարդիկ չեն հասկանում այս եզրույթի իմաստը և միայն գիտեն, որ հարկավոր է կա՛մ հիանալ պոստմոդեռնիստական մտքով և կա՛մ զգուշորեն մոտենալ դրան: Սակայն նրանք այդքան էլ չեն պատկերացնում, թե՛ ինչ է իրենից իրականում ներկայացնում պոստմոդեռնիզմ ասվածը»<sup>2</sup>:

Լայն առումով պոստմոդեռնիզմը դիտվում է որպես ինքնուրույն ուղղություն, որին բնորոշ է մոդեռնիզմի հետ կապի խզումը, սակայն այն զուտ մոդեռնիզմի ժխտումը չէ, այլ կոչված է ներկա դարաշրջանի աշխարհաճանաչման ընդհանուր դրսևորմանը: Դմիտրի Չատոնսկին գրում է. «Ե՛վ մոդեռնիզմը, և՛ պոստմոդեռնիզմը հարաբերական արժեքների համակարգ են, արվեստի հավերժական կատեգորիաներ, որոնք փոխարինում են մեկը մյուսին, բայց միևնույն ժամանակ մեկը մյուսին ո՛չ գերազանցում է և ո՛չ էլ զիջում»<sup>3</sup>: Այնուամենայնիվ, անհերքելի է, որ պոստմոդեռնիզմի հիմնական թիրախը մոդեռնիստական գաղափարախոսությունն էր, ինչը առավել ցայտուն դրսևորվեց հատկապես գրականության ասպարեզում:

Չնայած նրան, որ գրականության մեջ պոստմոդեռնիզմի առաջխաղացման շուրջ տեսաբանները միակարծիք չէին՝ մշակվեցին պոստմոդեռնիստական ուղղության տարբերակիչ որոշ հատկանիշներ, ինչպիսիք են, օրինակ՝ տարածաժամանակային խախտումը, ինտերտեքստայնությունը, սև հումորը, իրականի և երևակայականի անտարանջատվածությունը, միֆերի և հեքիաթների առկայությունը և այլն: Պոստմոդեռնիստական աշխարհընկալմանը բնորոշ այս հատկանիշներն իրենց դրսևորումը գտան նաև հայ նորագույն գրականության մեջ:

Իրական կյանքի փոփոխություններին զուգահեռ, փոխվել էր նաև մարդու աշխարհայացքը, մոտեցումներն ու տեսակետները և Հայաստանի անկախացումը իր հետքն էր թողել նաև գրականության վրա: Անցյալ դարի 90-ական թվականների գրողը անորոշ վիճակում էր գտնվում, քանի որ մի դեպքում խուսափում էր անցյալից, իսկ մյուս դեպքում չունէր վստահություն և հավատ վաղվա օրվա նկատմամբ: Նման պայմաններում առաջ եկած ստեղծագործությունները տարբերվում էին նախորդներից ոչ միայն իրենց բովանդակությամբ և թեմայով, այլև հերոսի ընտրությամբ: Նախնառաջ նշենք, որ եթե ռոմանտիզմի դարաշրջանի հերոսը աչքի էր

<sup>2</sup> Карсон Д. «Опасности и привлекательные стороны постмодернизма»// [reformed.org.ua/2/463/Carson](http://reformed.org.ua/2/463/Carson)

<sup>3</sup> Затонский Д. «Модернизм и постмодернизм. Мысли об извечном коловращении изящных и неизящных искусств», М., 2000 г., с. 37:

ընկնում իր տառապանքներով և աշխարհի հանդեպ հիասթափվածությամբ, բայցև շարունակում էր պայքարել անարդարության դեմ, ապա ռեալիստական հերոսը հաշտվում էր կյանքի դժվարություններին և պատվով կրում իր խաչը, իր հերթին, մողեռնիստ անհատը ուղղակիորեն երես էր թեքում այդ իրականությունից: Մակայն լիովին այլ էր նոր ժամանակների պոստմոդեռնիստական հերոսը, ով, կրելով իր մեջ նախորդներին բնորոշ հատկանիշները՝ աչքի էր ընկնում իր լքվածությամբ և դատապարտվածությամբ, բայցև մինևույն ժամանակ իր յուրահատկությամբ. հերոս, ով կյանքն ընկալում է որպես խաղ և գտնվում է ոչ միայն անորոշ ժամանակամիջոցում, այլև անգամ մի քանի իրականությունների միջև, ուր իրականի կողքին ազատորեն գոյություն ունեն նաև անբացատրելի և հեքիաթայինը: Պոստմոդեռնիստական այս հերոսը հաստատուն քայլերով մուտք գործեց նաև հայ պոեզիա և իր արտահայտությունը գտավ նաև Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծություններում:

Անդրադառնալով Հովհաննես Գրիգորյանի ստեղծագործությանը՝ Մելրան Գրիգորյանը գրում է. «Անկախության շրջանը նորովի բացահայտեց նրա աշխարհայացքի և գեղագիտության ողջ խորությունն ու հմայքը՝ սպացուցելով գրական նախընթաց որոնումների, տեսական ու պոետական բանաձևումների արդյունավետությունը»<sup>4</sup>: Եվ իսկապես, անկախության տարիների գրիգորյանական ստեղծագործությունները աչքի են ընկնում կյանքի նոր ընկալմամբ և մինչ այդ տիեզերքի կենտրոնում կանգնած հերոսը, ով կարծես ամեն ինչ գիտեր, հանկարծ փոխարինվում է ինչ-որ փոքր մարդու կերպարով, որն ունի բազմաթիվ խնդիրներ և չունի հենակետ ու ըստ այդմ՝ թափառում է իրականի և երևակայականի խաչմերուկներում: Ինքը՝ Հովհաննես Գրիգորյանը իր բանաստեղծություններից մեկում ևս նշում է, որ ինչ-որ բան արդեն փոխվել է.

արջը հեծանիվ էր քշում  
թութակը ոտանավորներ էր արտասանում  
կապիկները սիրահետում էին իրենց վարժեցնողին  
լարախաղացը ճարպկորեն թռչկոտում էր լարի վրա...  
հետո հանկարծ ամեն ինչ փոխվեց միանգամից և հիմա  
արջը ոտանավորներ է արտասանում  
թութակը հեծանիվ է քշում  
կապիկները թռչկոտում են լարի վրա,

---

<sup>4</sup> Գրիգորյան Ս. «Բանասիրություն և բանավեճ», Ե., 2002թ., էջ 215:

լարախաղացը ճարպկորեն սիրահետում է իրեն վարժեցնողին ...ինչ-որ բան է փոխվել ժողովրդի մեջ – ծիծաղելով նկատեց ծաղրածուն ծիծաղելով ինչ-որ բան է փոխել ծաղրածուն –նկատեց ժողովուրդը...<sup>5</sup> Սակայն փոփոխված և նոր կյանքը ամեննին էլ իդեալական չէր և նոր ժամանակների պոստմոդերնիստական հերոսը իր հետ բերեց նաև իր լքվածությունն ու դատապարտվածությունը, որն այդքան հարագատ էր դառնալու գրիգորյանական պոեզիային: Պետք է նշել, որ պոստմոդերնիստական ստեղծագործությունների հերոսը չունի իր հենակետը ոչ իրականության և ոչ էլ երևակայականի մեջ և այդ պատճառով միայն թափառում է այդ երկուսի սահմաններին՝ միննույն ժամանակ բացահայտելով աշխարհի ողջ սարսափն ու ցավը: Գրիգորյանը, իր հերթին, նույնպես ձգտում էր «ազատվել» իր ժամանակի գորշ իրականությունից և այդ պատճառով հատեց իրականի և երևակայականի սահմանը, սակայն միննույն ժամանակ դժվար էր անտեսել և կամ մոռացության մատնել կործանվող իրականությունը.

Ահա, ձեռքերս արյունոտված և ոտներս քրքրված՝  
դժվար է ճանապարհն այս լեռների ու քերծերի միջով,  
ուր գայլերն են հետապնդում որսորդներին և դարանակալ սպասում են  
թփերի ետևում և փոսերի մեջ ապահով թաքնված:

Ուր ծառերը զլխիվայր են աճում՝ արմատները  
երկինք պարզած և պտուղները հողի մեջ ինչ-որ տեղ, խորքերում,  
իսկ գետերը հոսում են լեռն ի վեր և հանգստանում են միայն  
հասնելով ամենա-ամենաբարձր գագաթին...

Ուր մարդիկ ծնվում են ծերացած, և ապա,  
տարիների հետ դանդաղ մանկանում:

Ուր սկզբում պատիժն է, իսկ հանցանքը հետո է լինելու,  
ուր սկզբում ծափերն են, իսկ երգը հնչում է հետո,  
ուր սկզբում քանդում են ամեն ինչ և Աստված շրջում է անտուն...<sup>6</sup>

Իրականի և երևակայականի այս սահմանին կանգնած հերոսը, ժխտելով իրականությունը, երբեմն ստեղծում է իրենը և կամ ճիշտ կլինի ասել, որ բազմաթիվ իրականություններ է ստեղծում, որոնք, սակայն, փոխկապակցված են: Առհասարակ, պոստմոդերնիստական արվեստը հրաժարվել է հստակ կանոններով գեղարվեստական համակարգ ձևավորելու գաղափարից: Միակ անփոխարինելի արժեքը համարվում է ոչնչով չսահմանափակված հեղինակի ազատ ինքնաարտահայտումը,

---

<sup>5</sup> Գրիգորյան Հ. «Երբեք չմեռնես-ահա թե ինչ կասեմ քեզ», Ե., 2010թ., էջ 19:

<sup>6</sup> Գրիգորյան Հ. «Գիշերահավասար», Ե., 2006թ., էջ 122:

որը հենվում է «ամեն ինչ կարելի է» նշանաբանի վրա: Բոլոր մյուս գեղագիտական արժեքները հարաբերական են, պայմանական և պարտադիր չեն գեղարվեստական ստեղծագործություն կերտելու համար: Այս ամենը հնարավորություն է ընձեռում պոստմոդեռնիստին իր ստեղծագործության մեջ ներառել կյանքի բազմակողմանիությունը, սակայն միևնույն ժամանակ հանգեցնում է արսուրդայնության, քանի որ արվեստը հարմարեցվում է հեղինակի ստեղծագործական երևակայությանը՝ ջնջելով սահմանները իրականի և երևակայականի միջև: Տվյալ դեպքում Գրիգորյանը ևս, ջնջելով այդ սահմանները, իր նոր հերոսի համար կերտում է երևակայական իրականություն, ուր վերջինս միակ բնակիչն է.

Արտակարգ գորշ ու տաղտկալի է միակ բնակչի առօրյան՝  
Առավոտյան արթնանում եմ, լիցքային վարժություններ եմ  
կատարում, ապա գնում եմ խանութ՝ գնելու ինձ համար  
թխված միակ հացը, հետո գնում եմ մեկ տպաքանակով  
տպված թերթերը, որոնց մի մասն ինձ իշխանափոխության կոչ է  
անում, իսկ մյուսն, ընդհակառակը, մղում է սխրանքների...<sup>7</sup>

Իր կերտած աշխարհում միայնակ թողնելով իր հերոսին՝ Գրիգորյանն ասես նպատակ ուներ պաշտպանելու վերջինիս շրջապատում տիրող քաոսից, քանի որ ինչպես հեղինակն է նշում չկա մեկը, որի հետ քննարկես՝ ի՞նչ անել: Մակայն, պոստմոդեռնիստ հերոսը ամենին չի փախչում իր միայնությունից, երես չի թեքում և չի բողբոջում իր ճակատագրից: Ըստ այդմ՝ գրիգորյանական պոեզիայում առաջ է գալիս համակերպվածության գաղափարը և իր միայնության մեջ ամփոփված հերոսը հետզհետե վարժվում է այդ կյանքին, քանի որ ոչ մի հնար չկա, որովհետև այլևս ոչինչ չկա.

Հատուկենտ ինքնաթիռներ են անցնում՝ թներն  
անշտապ թափահարելով և սուզանավեր, որոնք  
օդում են լողում ջրի բացակայության պատճառով:  
Թեև, միգուցե կան ուրիշ պատճառներ, ասենք,  
հավերժական հաշտությունը գայլաղեմ ոչխարների և  
ոչխարաղեմ գայլերի,

երբ այլևս ոչինչ չկա իրարից թաքցնելու, որովհետև այլևս ոչինչ  
չկա...<sup>8</sup>

---

<sup>7</sup> Գրիգորյան Հ. «Երկու ջրհեղեղի արանքում», Ե., 1996թ., էջ 35:

<sup>8</sup> Գրիգորյան Հ. «Երբեք չմեռնես-ահա թե ինչ կասեմ քեզ», Ե., 2010թ., էջ 13:

Հատելով սահմանները՝ Գրիգորյանը մինևսյն ժամանակ նաև փոխում է ժամանակի ընթացքը: Առհասարակ, պոստմոդերնիզմը մեկնաբանվում է որպես խաղահրապարակ, ուր ազատորեն տեղաշարժվում են գաղափարները, և ինչ-որ մեկը խաղում է ոչ մի պարտականություն չառաջադրող մի խաղ: Պատճառն այն է, որ որպես կանոն՝ պոստմոդերնիզմը և առհասարակ պոստմոդերնիստական գրականությունը ստեղծում և ընթերցողին է ներկայացնում մասնատված, մոդուլային, կողավորված և մի քանի մեկնաբանություն ենթադրող իրականություն, իսկ ավելի ճիշտ՝ իրականության հորինվածք, որում ժամանակի միակ միավորը տվյալ ներկա պահն է և ըստ այդմ՝ անցյալն ու ապագան միաձուլվում են ներկային՝ ստեղծելով անվերջ կրկնվող շրջափուլ:

Անվերջ նույն ձյունը, անվերջ նույն գույնը, անվերջ նույն բառը...

Եվ տես, մի բառով, և տես մի գույնով

ինչ հեշտ է, թեթև է կերտում բնությունը

քո հազարաբառ ու անպատմելի այս մենությունը...<sup>9</sup>

Այն հանգամանքը, որ, ըստ պոստմոդերնիստական ընկալման, ներկան իր մեջ է ներառում նաև անցյալն ու ապագան, վերջինիս վերածում է մի ինքնուրույն և ամբողջական ժամանակային միավորի, որից, սակայն, «այլ ժամանակ» դուրս ելնելը բացարձակապես անհնար է: Գուցե այս է պատճառը, որ Գրիգորյանը իր նախապատվությունը տալիս է հենց պոստմոդերնիստական ժամանակային ընկալմանը, քանի որ 1990-ականների հեղինակը չուներ ապագայի զգացողություն ու ապագայի հանդեպ հավատ, ինչպես նաև փորձելով նորարար երևալ՝ խուսափում էր խորհրդային անցյալից: Մուրեն Աբրահամյանը իր «Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի ժամանակը երեկն է, այսօրը և գալիքը...» հոդվածում նշում է. ««Անժամանակ» մեր ժամանակում (ինչպես բանաստեղծն է ասում, «կես ժամանակում») նրա պոեզիայի արժեքը ճանաչողական բացառիկ նշանակություն ունի, ներքին էներգիա, ինչպիսին մեր ապրած դարը և վայրկյանը՝ «դանդաղ ժամերը», դարը՝ հայտնված «երկու ջրհեղեղի արանքում»<sup>10</sup>: Հաշվի առնելով այս ամենը՝ բանաստեղծին մնում էր միայն իր հերոսին բնակեցնել անվերջ կրկնվող ներկայում, որին կամա թե ակամա ստիպված ես համակերպվել: Գրիգորյանը գրում է.

....ամենադժվարն առաջին հազար տարին է,

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 115:

<sup>10</sup> <http://hetq.am/arm/news/4270/hovhannes-grigoryani-poeziayi-zhamanaky-erekn-e-aysory-ev-galiqy.html>

հետո ամեն ինչ դառնում է սովորական,  
հետո սկսում է կրկնվել անվերջ՝  
առավոտյան, կեսօրին, երեկոյան...<sup>11</sup>

Սակայն երբեմն թվում է, թե՛ պոստմոդեռնիստական լաբիրինթոսում ժամանակը ուղղակիորեն կանգ է առնում և կանգ է առնում, որպեսզի ընթանա նորից, բայց արդեն շրջանի հակառակ ուղղությամբ: «Ես արդեն հասկացա» բանաստեղծության մեջ Գրիգորյանը գրում է.

-Երևի ինչ-որ տեղ պատերազմ է,- հարցրեցի ես  
հատկապես երիտասարդներին:  
-Ինչ որ տեղ ժամանակը կանգ է առել,- ասացին  
հատկապես երիտասարդները,-  
և դանդաղ վերադառնում է ետ...<sup>12</sup>

Գրիգորյանական հերոսը գիտակցում է, որ իր համար ժամանակային այդ փակ շրջանից ելք չկա, որովհետև անհնար է կանգնեցնել և կամ դուրս պրծնել պոստմոդեռնիստական ժամանակի որոգայթից: Այս ամենից ծնվում է հրաժեշտի, վերջի և մահվան տխուր տրամադրությունը.

Եվ քաղցած ու ցնորված աչքերով մի կին հանկարծ  
մոտենալով քաշեց թևիցս.- Վերջն ո՞վ է, կասկածելով  
հացի հերթ է՝ ուրիշ էլ որտեղ կարող էր այսքան մարդ հավաքվել...  
-Վերջ չկա,- ասացի, դառնությամբ նայելով ծաղկած  
դագադին,- չկա, վերջ չկա այս պատմությանը,- և  
գլխահակ քայլեցի վշտահար թափորի ետևից...<sup>13</sup>

Այնուամենայնիվ, բանաստեղծը գործադրում է իր վերջին հույսն ու ձգտումները և փորձում է կոտրել շրջանն ու դուրս բերել իր հերոսին ժամանակային այդ լաբիրինթոսից: Դրանով իսկ Գրիգորյանը, ասես ձգտում էր գտնել հույսի մի շող, որը կվկայեր իր ժամանակի խավարի կործանման և լուսավոր ապագայի հաստատման մասին, որին հասնելու համար հարկավոր էր միմիայն առաջ շարժվել: Սակայն հեղինակի ջանքերը ապարդյուն անցան. չէ՞ որ պոստմոդեռնիստական շարժումը միայն թվացյալ է.

-Շարժվեցի՛նք,- բազմանշանակ ասաց տանտերն ու շուրթերին  
տարավ բաժակը, որը լցված էր օղիով դեռևս տարիներ առաջ:  
-Շարժվեցի՛նք,- կրկնեց բազմանդամ ընտանիքը,  
չկտրելով հայացքը ճանճի խոտորուն թռիչքից:

---

<sup>11</sup> Գրիգորյան Հ. «Հրեշտակներ մանկության երկնքից», Ե., 1992թ., էջ 18:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 78:

<sup>13</sup> Գրիգորյան Հ. «Նոր տողից», Ե., 2013թ., էջ 248:

-Շարժվեցի՛նք,- կտրուկ ոտի թռավ թղթակիցն ու հրաժեշտի համար համբուրեց տատի հնամենի ճակատն ու չանթելով վարունգի բանկան սեղանից՝ իրեն դուրս նետեց ճիշտ այն պահին, երբ հետզհետե արագություն հավաքելով, ուր որ է, վագոնը շարունակելու էր կանգնած մնալ իր տեղում<sup>14</sup>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ գրիգորյանական պոեզիայի հերոսն, ապրելով իր լաբիրինթոսում, հաճախ է բախվում նաև միֆական և հեքիաթային պատկերների: 20-րդ դարի գրականության մեջ շատ էր խոսվում միֆերի և հեքիաթների մասին, որպեսզի արտահայտվի միայնակ և լքված անհատի օտարումը հասարակությունից և հաճախ միևնույն ստեղծագործության մեջ հանդես էին բերվում մի քանի միֆեր ու հեքիաթներ: Այս երևույթը առկա է նաև Գրիգորյանի բանաստեղծություններում: Պետք է նշել, որ Հովհաննես Գրիգորյանը կապված էր արտասահմանյան գրականությանը և անգամ լատինամերիկյան վեպից և իսպանալեզու պոեզիայից կատարում էր թարգմանություններ: Սակայն միևնույն ժամանակ նա շարունակում էր հավատարիմ մնալ հայ պոեզիայի դասական ավանդներին, ինչի արդյունքում արտասահմանյան գրականությանը բնորոշ հատկանիշները զուգահեռվում էին ավանդական ձևերի հետ: Ըստ այդմ՝ ներկայացնելով իր ժամանակի իրականությունը՝ Գրիգորյանի ստեղծագործություններում իրենց տեղն ունեին նաև միֆերն ու հեքիաթները, ինչը նպատակ ուներ, ընդգծելով հերոսի օտարումը իրականությունից, նաև փոքր-ինչ երանգ հաղորդել նույն այդ իրականությանը: Երբեմն անգամ միֆերի և հեքիաթների մասին խոսվում էր այդպես կոչված «փակ տեսքով», երբ ընթերցողը ինքը պետք է կարողանար դուրս բերել միֆի դասական դրսևորումը: Այս ամենից ելնելով՝ հաճախ թվում է, որ ներկայացվածը միֆ կամ հեքիաթ չէ, այլ իրականություն է: Այդպես, օրինակ՝ «Վերջին հավերժահարսերը» բանաստեղծության մեջ հերոսը փնտրում է ջրահարսների և ընթերցողն ամեննին էլ չի կարող կասկածել նրանց գոյությանը.

Ես հարցրել եմ բոլորին առանձին-առանձին: Ոչ ոք չգիտե, թե ինչպես են ձմեռել հավերժահարսերն այս տարի:  
Նրանք, ովքեր իր տավիղները գրկած, հիշում էք, թափառում էին երկրի ու երկնքի արանքում. Ահա թե ինչու ոչ երկնքում էին գրանցված և ոչ էլ՝ երկրում, ահա, թե ինչու,

---

<sup>14</sup> Գրիգորյան Հ. «Գիշերահավասար», Ե., 2006թ., էջ 275:

վստահ եմ, որ նրանց անունը չի եղել և ոչ մի ցուցակում...<sup>15</sup>

Գրիգորյանական ստեղծագործություններում մեծ տեղ է հատկացվում նաև դրախտի և դժոխքի թեմային: Չնայած նրան, որ մարդկային պատմության մեջ գոյություն ունեն շատ գաղափարախոսություններ և կրոններ, այնուամենայնիվ դրանք ունեն մեկ ընդհանրություն՝ դրախտը: Այն ներկայացվում է որպես հոգու հավերժական կացարան, ուր տիրում է կատարյալ երջանկություն և չկա մահ և կամ տառապանք: Բնական է, որ կյանքի դժվարություններից ազատվել փորձող հեղինակը պետք է ձգտեր գտնել իր հանգիստը հատկապես հեքիաթային դրախտում: Սակայն կրկին անգամ ապարդյուն և Գրիգորյանը իր «Նա» բանաստեղծության մեջ գրում է, որ իր և իր հերոսի առջև փակ են անգամ դրախտի դռները.

Երբ մուտքի վրա կարդաց. «Կողմնակի անձանց մուտքը խստիվ արգելված է»-

ինքնագոհ շրջվեց ու հեռացավ, վերջապես հասկանալով թե ով է ինքը:

Եվ իսկապես, նա լիովին իրավացի կլիներ իրեն երջանիկ համարել...

և խորին գոհունակությամբ հրաժեշտ կտար

այս անցողիկ կյանքին և ժպիտը դեմքին կկանգնե՞ր շեմին  
հավերժության,

եթե միայն ահեղ այդ գրությունը չփակեր նրա ճամփան՝  
փակցված Դրախտի մուտքի վրա, աչքի ընկնող մի տեղ...<sup>16</sup>

Մեկ այլ բանաստեղծության մեջ Գրիգորյանը, ձգտելով ներկայացնել իր շրջապատում տիրող անարդարությունն ու դառնությունը, իր հերոսին հանդես է բերում Ադամի կերպարում, ով, սակայն ոչ թե երկնային, այլև երկրային բնակիչ է: Միֆական կերպարը ներմուծելով մեր իրականություն՝ Գրիգորյանը էլ ավելի է ընդգծում մարդու օտարումը հասարակությունից. մարդ ով չունի ոչինչ և անգամ ավելին՝ նախապես վտարված է երանելի դրախտից.

Ես այնքան չդառնացա, երբ ինձ վտարեցին երկնքից՝

Տերն արդար էր, երբ չրիսկոցով փակեց Դրախտի դռներն իմ ետևից...:

Ես այնքան չդառնացա, երբ մորեմերկ հայտնվեցի փողոցում, գիշերով,

ինչ-որ մի քարքարոտ երկրում՝ առանց մի գրոշի, առանց

մասնագիտության, առանց բաժնետոմսերի-չունենալով սեփականության  
իրավունք, բանկում՝

հաշվի համար...: Այս ամենն ինչ...: Դառնությունս անսահման էր,

երբ գործազուրկների հաշվառման գրասենյակում թուլացան ծիծաղից,

---

<sup>15</sup> Գրիգորյան Հ. «Նոր տողից», Ե., 2013թ., էջ 245:

<sup>16</sup> Գրիգորյան Հ. «Երբեք չմեռնես-ահա թե ինչ կասեմ քեզ», Ե., 2010թ., էջ 57:

երբ ես ազնվորեն հայտնեցի, որ նախորդ աշխատանքից  
ինձ վտարել են ընդամենը մի խնձորի համար...<sup>17</sup>

Այս բանաստեղծության մեջ աչքի է ընկնում պոստմոդեռնիստական մի հնար ևս, այն է՝ հեզնանքը: Մակայն, պետք է նշել, որ պոստմոդեռնիստական հեզնանքը իր բնույթով տարբերվում է դասական հեզնանքի ընկալումից: Օլգա Ֆրայդենբերգը գրում է. «Դասական հեզնանքի կարող է ենթարկվել միայն այն, ինչ «կենդանի է և սուրբ»: Պոստմոդեռնիստական դարաշրջանում ոչինչ կենդանի չէ և առավել ևս սուրբ չէ»<sup>18</sup>: Ըստ այդմ՝ ի տարբերություն դասական հեզնանքի, պոստմոդեռնիստական գաղափարախոսության մեջ բացակայում է սահմանը հեզնականի և լրջության միջև և ծաղրի են ենթարկվում հատկապես կարևորություն ներկայացնող թեմաները, ինչպիսիք են, օրինակ՝ մահը, սերը և այլն: Այս առումով պոստմոդեռնիստական հերոսը Գրիգորյանի ստեղծագործություններ ներմուծեց նաև այդպես կոչված սև հումորը: Հարություն Պերպերյանը գրում է. «Հրաշալի հասունացում մը կը տեսնեի իր մեջ: Նախկին, քիչ մը թատերականացված անհեթեթ իրականությունը աստիճանաբար սարքագնով բնորոշվող սև երգիծանքով մը փոխարինված էր, որուն մեջ խորունկ տխրություն մը հաճախ կրնայիր կարդալ»<sup>19</sup>: Գրիգորյանական պոեզիայի ձգտումը դեպի պոստմոդեռնիստական հեզնանք ու սև հումորը, որոշ չափով բացատրվում է հեղինակի ապրած ժամանակահատվածով և օրինակ՝ Հասմիկ Հակոբյանը իր «Լեզվական իրացումները արդի հայ պոեզիայում» հոդվածում նշում է. «Ժամանակակից պոեզիայի լեզվական հատույթում տիրող վիճակը շատ ու շատ գծերով կապված է պոստմոդեռնիստական փիլիսոփայության հետ: Խոսքի կանոնիկ դասավորություններն առավել ու առավել շատ իրենց տեղը սկսում են զիջել խախտված լեզվական կաղապարներին, գնում դեպի քառսայնություն, իրենց կառույցի մեջ ներառելով խաղը, պարողիան, ֆարսը, ինտերտեքստային հղումները, կայական կառույցների կազմաքանդումը»<sup>20</sup>: Այդպես, օրինակ՝ «Մի գնա այդպես հեզորեն» բանաստեղծության մեջ Հովհաննես Գրիգորյանը գրում է.

Օ, Ալեն Գինգբերգ, ես ողբում եմ քո մահը,

<sup>17</sup> Գրիգորյան Հ. «Կես ժամանակ», Ե., 2002թ., էջ 23:

<sup>18</sup> Фрейденберг О. «Происхождение пародии»// Учен. Зап. Тартуского университета, Т., 1973г., Вып. 308, с. 29:

<sup>19</sup> <http://www.cultural.am/hy/norutyunner/aknark/hovhannes-grigoryani-het>

<sup>20</sup> <http://granish.org/contemporary-armenian-poetry/>

բայց առավել իմ ճամպրուկների կորուստն եմ ողբում,  
որ անհետացան խորխորատներում Քենեդու անվ. օդանավակայանի<sup>21</sup>:

Բանաստեղծության հերոսը ճիշտ է անդրադառանում է մահվան գործոնին, բայց իր ճամպրուկներին շատ ավելի մեծ նշանակություն է տալիս: Ըստ գրիգորյանական պոեզիայի՝ նման մոտեցումը թելադրում է ժամանակը, և նոր աշխարհընկալումն ու բարքերը փոխել են մարդկանց վերաբերմունքը նաև մահվան նկատմամբ:

Հանգուցյալներին էլ են դնում դագաղաձև ճամպրուկների մեջ,  
բարի ճանապարհ են մաղթում և խնամքով ու զգուշորեն  
հողին են հանձնում ուղեբեռի պես, որոշ ժամանակ անց  
անխաթար ետ ստանալու ակնկալիքով<sup>22</sup>:

Ինչպես նշվեց «նոր ժամանակներն» իրենց հետ բերեցին նաև լեզվական դասական կառույցների կազմաքանդում և ըստ այդմ՝ Գրիգորյանի բանաստեղծություններն այժի են ընկնում նաև առօրյա-խոսակցական վառ երանգավորմամբ: Հասմիկ Հակոբյանը իր վերը նշված հոդվածում գրում է. «Առօրյա-խոսակցական լեզվի մտերմիկությունը նպատակ ունի ընթերցողի հետ առավել արագ երկխոսություն սկսելու, խոսքը բնականության մեջ պահելու: Պարոդիան ու ծիծաղն էլ, իրենց հերթին, միանալով ազատ խոսքին՝ ցրում են «մեծ» բաների՝ Աստծո, աշխարհի վերջի հանդեպ վախը»<sup>23</sup>: Պատճառն այն էր, որ անկախության տարիների հայ հեղինակը պետք է փորձեր թեկուզ և մտովի, բայց հնարավորինս դուրս բերել իր ընթերցողին իրականում տիրող մոռյալ իրավիճակից: Այս ամենին օգնության եկած հեզնանքն ու սև հումորը, հնարավորություն էին ընձեռում անտարբեր նայելու ոչ միայն անմխիթար ներկային, այլև ազատվելու մահվան սարսափից: Սուրեն Աբրահամյանը իր «Նոր իրականություն և նոր գրականություն» հոդվածում նշում է. «Ձևի քայքայումն ակնհայտ է Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում: Այն արտահայտվում է ոճի ինքնության պսևդոպարոդիկ, պսևդոտրագիկ ընկալումներով, ուր հասու է դառնում խոսքի ներքին ռիթմը, շեշտադրությունը, որ ունի քնարական, դրամատիկ, ողբերգական երանգներ»<sup>24</sup>: Արդյունքում Գրիգորյանի հերոսն անվախ և անգամ հումորով է խոսում Աստծու հետ:

Քանի դեռ ուշ չէ, ներիք նրա մեղքերը, Տեր,

---

<sup>21</sup> Գրիգորյան Հ., նույն տեղում, էջ 44:

<sup>22</sup> Գրիգորյան Հ. «Երբեք չմեռնես-ահա թե ինչ կասեմ քեզ», Ե., 2010թ., էջ 122:

<sup>23</sup> <http://granish.org/contemporary-armenian-poetry/>

<sup>24</sup> «Գրականագիտական հանդես», Ե., 2010-2011թ., ԺԱ-ԺԲ, էջ 59:

ու եթե հնարավոր է՝ պետպատվերով ընդունիր նրա հոգին,  
եթե ոչ դրախտ, ապա գոնե քավարան և ոչ մի դեպքում դժոխք,  
որովհետև այնտեղ նա իսկույն կհայտնվի յուրայինների գրկում...  
և անմիջապես աննախադեպ ծաղկում կապրի կաշառակերությունը...<sup>25</sup>

Գրիգորյանը վարպետորեն միահյուսում է հեզնականը ողբերգականին  
և ահա, այդպիսին է գրիգորյանական պոեզիայի որակը՝ մռայլ ու  
լուսավոր: Այդպես է նա մտել Բանաստեղծական աշխարհ և այդպես էլ  
մնաց մինչև վերջին օրը: Սակայն անգամ մահը չկարողացավ լիովին խլել  
Հովհաննես Գրիգորյանի հերոսից իր կյանքը, քանի որ՝ «Երբեք չմեռնես»,  
ահա գրիգորյանական ուղերձն իր հերոսին, իսկ մեզ մնում է միայն  
հավելել.

Գուցե սա իսկապես վերջին դարն է,  
կամ էլ առավել սարսափելին՝ վերջին տարին:  
Իսկ հեքիաթն ընթանում է իր սովորական հունով՝  
նույն թագավորի տղան և արքայադուստրը նույն,  
նույն բարի հրեշտակը և նույն սատանան չար...  
Միայն թե՛ լինում է, չի լինումի փոխարեն-եղել է ու այլևս չի լինի...  
Իսկ հեքիաթի վերջում երկնքից երեք նետրոնային ռումբ է  
ընկնում,  
մեկն ինձ որպես հեքիաթասացի, մյուսը՝ ձեզ,  
որ համբերությամբ ապրեցիք այսքան տարիներ,  
իսկ երրորդը հենց այնպես, հետաքրքրության համար<sup>26</sup>:

**Դ. Մնացականյան**

**Պոստմոդեռնիստական հերոսը Հովհաննես Գրիգորյանի  
բանաստեղծություններում  
Ամփոփում**

Սույն հոդվածում դիտարկվում է պոստմոդեռնիստական հերոսին  
բնորոշ որոշ հատկանիշների մասնակի դրսևորումը Հովհաննես  
Գրիգորյանի բանաստեղծություններում: Գրիգորյանական պոեզիայի  
հերոսը աչքի է ընկնում իր լքվածությամբ և դատապարտվածությամբ և  
որպես կանոն գտնվում է իրականի և երևակայականի միջև՝

---

<sup>25</sup> Գրիգորյան Հ. «Գիշերահավասար», Ե., 2006թ., էջ 26:

<sup>26</sup> Գրիգորյան Հ. «Դանդաղ ժամեր», Ե., 1986թ., էջ 44:

Ժամանակային փակ շրջանում, միևնույն ժամանակ ցուցաբերելով կյանքի հանդեպ հեզնական վերաբերմունք: Վերը նշված այս հատկանիշների առկայությունն էլ գրական ստեղծագործության մեջ կարելի է համարել պոստմոդերնիզմի դրսևորում:

**Д. Мнацакян**

**Постмодернистический герой в поэзии Оганеса Григоряна**

**Резюме**

В выше приведенной статье рассматриваются некоторые характерные черты постмодернистического героя в стихах Оганеса Григоряна. Герой григорянской поэзии выделяется своим одиночеством и обреченностью и как правило находится между реальным и воображаемым в закрытом временном цикле, в то же время имея ироническое отношении к жизни. Наличие выше преведенных чертов в литературном произведении считается проявлением постмодернизма.

**D. Mnatsakanyan**

**Postmodernism's hero in the poetry of Hovhannes Grigoryan**

**Summary**

In the following article it is observed the manifestation of some features typical to postmodernic hero in poems of Hovhannes Grigoryan. The hero of grigoryan poetry is expressed with his dereliction and condemnation and as a rule, is situated between the real and the imagined in the closed period of time circle and at the same time displaying an ironical attitude towards life. The presence of above mentioned features is adopted to call a manifestation of postmodernism in literal work.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՂՊԱՎՈՐՈՒՄԸ  
ՄԱՐԿ ՄՈՐՏԵԻ «ԱՐԱՐԱՏԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** հայոց ցեղասպանություն, հոգևոր ճգնաժամ, հոգեբանական բարդույթ, համամարդկային հիմնախնդիր, կորսված մանկություն:

**Ключевые слова и выражения:** армянский геноцид, духовный кризис, психологический комплекс, всечеловеческая проблема, потерянное детство.

**Key words and phrases:** armenian genocide, spiritual crisis, psychological complex, universal problem, lost childhood.

Կատալոնացի լուսանկարիչ և գրող Մարկ Մորտե Ուստարոսը 2008թ. լույս ընծայեց հայոց ցեղասպանության մասին վեպ՝ «Արարատի զավակները», որը գրողական մտահաղացման, կերպարաստեղծման ու գրական երկի գեղարվեստական ձևի առանձնահատկությունների առումով շահեկանորեն առանձնանում է իսպանական գրականության մեջ հայոց ցեղասպանությանն անդրադարձած իր հայրենակիցների ստեղծագործություններից:

Հյուսիսամերիկացի գրող Կելլին Լոնգմանը ցեղասպանությունը վերապրած տիկին Արգոայանի ու նրա ընտանիքի պատմությամբ վերակենդանացնում է առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան Կայսրության տարածքում իրագործված հայոց ցեղասպանության պատմությունը: Արգոայանն այն քիչ վերապրողներից է, ով համարձակվում է խոսել իր տրավմատիկ անցյալի մասին: Գրքում փոքրիկ աղջնակ Արաքսիի պատմությունը և արդեն տարեց Արգոայանի հիշողություն-մտորումները միահյուսվում են (դիպաշարը մասնատված է «տիկին Արգոայան» վերնագրային հատվածներով, որոնցում և տեղ են գտել գլխավոր կերպարի խորհրդածությունները), երբ տարեց կինը տասնամյակների հեռվից փորձում է գնահատել սեփական կյանքը, երկար տարիներ անց դեմ հանդիման կանգնել իր հիշողությունների հետ:

Արդյունքում ութնամյա Արաքսիի պատմությունը դառնում է ոչ միայն Լոնգմանի, այլև Մորտեի գրքի դիպաշարը: Ստացվում է գիրք գրքի մեջ, հետևաբար՝ պլուս է պլուսի մեջ: Վեպի եռամաս բաժանումը կապված է պլուսեում ներկայացված երեք տարբեր միջավայրերի ու իրավիճակների պատկերման հետ: Կոմպոզիցիոն այսպիսի լուծումն արդարացվում է

Թեմատիկ առումով. առաջին մասում ներկայացվում է նախաեղեռնյան հայ գյուղը՝ նախորդ տասնամյակներում իրագործված սպանդի հիշողություններով, հայ ու թուրք բնակչության միջև առկա սառնությամբ ու անջրպետով, ապա տարագրությունն անապատի ճանապարհներով մինչև Դեր-Ձոր և, վերջապես, ուրվականներով լի ապագան, որ վերապրողների համար այդպես էլ մնաց անցյալով երկատված: Դիպաշարի նմանատիպ կառուցումը՝ երեխայի կողմից վաղ անցյալում ապրված իրադարձությունները պատկերող ու տարեց կնոջ ներկայիս կյանքն արտացոլող գլուխների հերթագայությունը, ընթերցողի մոտ կարող է առաջացնել պատումային տրամաբանության խախտման, գործողությունների զարգացման ձգձգման ու ինտրիգի լարվածության մասնատման զգացողություն: Մյուս կողմից՝ ներկայի մեջ միշտ գերակա անցյալի տպավորությունների ու զգացողությունների ներթափանցումները մասնակիորեն առաջացնում են ժամանակատարածային հարթությունների ներթափանցումներ, երբ անցյալում տեղի ունեցած իրադարձություններն այնքան վառ են ու տպավորիչ, որ դրանք անընդհատ ներմուծվում են ներկա: Նույն կերպարի երկու տարբեր ժամանակատարածային հարթություններում հանդես գալը հեղինակը «Ojos de papel» էլեկտրոնային ամսագրին տված հարցազրույցում բացատրում է այսպես. «Օգտագործելով տարեց Արաքսիին՝ կարող էի մոտեցնել կերպարը ներկա ժամանակաշրջանին, բացի այդ, այն թույլ կտար արտահայտել ցավը, որ ապրել են վերապրածներն իրենց կյանքի մնացած մասում»<sup>1</sup>: Մեր համոզմամբ, վեպի կոմպոզիցիան կատարելապես հավասարակշռված է բովանդակության, խրոնոտոպի կառուցման ու գրողի կողմից առաջադրված հիմնախնդիրների ներկայացման հետ:

Եթե նատուրալիստական պատկերները ճշմարտացիությամբ դրվագում են բարբարոսությունը, դժոխային տեսարանները, ապա փոքրիկ աղջնակի հիշողությունները, որոնցում կյանքի երևույթները բեկվում են երեխայի ներքին աշխարհում և մեկնաբանվում փոքրիկ հերոսի ընկալումների ու հոգեբանության շրջանակներում, ներկայացվում են գեղարվեստական ներգործող ուժով ու քնարականությամբ: Հիշենք, որ ցեղասպանության մասին նման մեկնակետից ու գեղարվեստական մեթոդով է գրել մեկ այլ կատալոնացի գրող Մարիա Անգելս Անգլադան, ում կերպավորած հերոսը նույնպես ներկայացնում է այն փոքրիկներին, ովքեր ցեղասպանությունը վերապրեցին ամբողջ դաժանությամբ և մինչև կյանքի վերջ կրեցին սպանդի խարանը, ովքեր մեկ օրում կորցրին իրենց մանկությունը:

<sup>1</sup> Ojos de papel, 04 de febrero de 2008 , <http://www.ojosdepapel.com/Index.aspx?article=2743>

Ինչպես ցեղասպանությունը վերապրած ցանկացածի ու հատկապես մեծամասնության դեպքում սեփական կյանքի դրամայի ամբողջ ողբերգությունն ու ցավը սեփական անձի մեջ ամփոփելն ու չբարձրաձայնելը դառնում է հոգեկան աշխարհի բնութագրիչներից, այս նույնը մենք տեսնում ենք Սորտեի վեպի կերպարների դեպքում: Բայց Արաքսին միակը չէ, այդպիսին է ցեղասպանությունը վերապրածների մեծ մասը, մի ամբողջ սերունդ, ում մանկությունը համընկավ ցեղասպանության ժամանակաշրջանին և իր վրա կրեց այսպես կոչված «կորուսյալ սերնդի» բոլոր տառապանքները, մարդիկ, որ ներքնապես ամայացած էին, ում կյանքը հաշմված էր ցեղասպանության պատճառով: Այդպիսիներից է նաև Վահանը՝ Արաքսիի մանկության ընկերն ու ամուսինը. «Նա երբեք չկարողացավ հաղթահարել այդ ողբերգությունը: Այլևհույն ու ցավը նրան փլուզեցին ներսից՝ հոշոտելով նրա ուժերը և քանդելով նրա անհատականությունը մինչև կյանքի վերջ: Կյանքի վերջին տարիներն անցկացրեց մշտական բթացման վիճակում, կարծես ինչ որ բան կոտրված լիներ նրա ներսում»<sup>2</sup>:

20-րդ դարում աշխարհի, կյանքի հոգևոր դատարկությունից սկիզբ առնող մարդու մենության թեման դրսևորվում է ցեղասպանության վերապրածների մոտ, և ցեղասպանության տրավմաները դառնում են կերպարների հոգևոր ճգնաժամի պատճառ, այդ հերոսները մենություն զգում են երկու մակարդակում՝ հոգևոր (սարսափելի ու անջնջելի հիշողություններ) և ֆիզիկական (ընտանիքի, գերդաստանի կորուստ): Եղեռնից փրկվածները հիշեցնում են Դոստոևսկու հերոսներին, որոնք բացահայտում են հոգեբանական պլանում մարդու քայքայումը<sup>3</sup>: Նրանք պարտված հերոսներ են, որ տանուլ են տվել կյանքը, գրականության մեջ կերպավորված «մարդը դուրս է մղվում աշխարհից, դադարում որպես գոյություն, վերածվում բացակա մարդու դիմակի, որից այն կողմ գործում է սոսկ նրա գիտակցությունը, որի մուտքը սակայն փակված է դեպի աշխարհ»<sup>4</sup>:

Գրքի նորույթը դրական թուրքի կերպարի հաջողված կերտումն է: Իսպանացի գրողը փորձել է հանդես գալ թուրք անձի հոգեբանական ինքնաբացահայտումներով, ներաշխարհում կատարվող տեղաշարժերի

---

<sup>2</sup> M.Morte, Los hijos del Ararat, Barcelona, Ediciones Carena, 2008, էջ 191:

<sup>3</sup> Տե՛ս Ն. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Սարգիս Խաչենց, Փրինթինգտոն հր., Երևան, 2009, էջ172:

<sup>4</sup> Ն. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Սարգիս Խաչենց, Փրինթինգտոն հր., Երևան, 2009, էջ 171:

պատկերմամբ, թուրքի մեջ մարդկայինը հայտնաբերելու հայեցակետով Մորտեն կերտել է թուրք հերոսի կերպար: Հենց սկզբից ստամբուլցի Մեհմետը բացահայտում է այն մեծ սուտը, որ պարտադրվել էր իրեն և մյուս ժանդարմներին. նա հայերին չի կարողանում տեսնել որպես ահաբեկիչներ ու դավաճաններ, նրա համար անհասկանալի էր, թե ինչպես «կարող էր հնարավոր լինել, որ այդ անզեն ընտանիքները կարողանային դաշնակցել ռուսների հետ կամ կատարել սպանություններ, եթե ընդհանրապես չունեն զինամթերք, ոչ էլ ուժ մարտնչելու համար»<sup>5</sup>:

Ստամբուլցի հարուստ ընտանիքի զավակը, ով խոստումնալից զինվորական էր, վերլուծում է իրավիճակն ու պատերազմի հետևանքները՝ գիտակցելով, որ «ոչ ոք չէր փրկվել պատերազմի վտանգավոր ներգործությունից և բոլորը թվում են խելագարված, այդ ժանդարմները՝ չարաշահված իրենց իշխանությունից ու վերածված վայրենի գազանների»<sup>6</sup>: Նրանց «դեմքերն արտացոլում են մարդկայնության բացարձակ բացակայություն, ձեռքից բաց թողած կյանք՝ լի դժբախտություններով, բռնի մանկություն ու աշխարհ, որ փլուզվել է»<sup>7</sup>:

Զգված այդպիսի անգործությունից՝ Մեհմետը փակ աչքերով հետևում է իր շուրջը կատարվող անկարգություններին, որոնք նրան մղձավանջ են հիշեցնում: Թուրք զինվորի հոգեկան տառապանքները շարունակվում են ու նրան փլուզում ներսից, ինչի արդյունքում նա մի գիշեր հարբած ու տենդագին վիճակում բռնաբարում է մի հայ աղջկա: Այդ պահից սկսվում է նրա ապաշխարանքը, ինչը կապված էր տարագրողների խմբում գտնվող փոքրիկ Արաքսիի մեղրագույն աչքերի հետ, որ շարունակ հետապնդում էին Մեհմետին, ու նա փորձում է մաքրվել այդ մեղքերից Արաքսիի միջոցով, ով դառնում է Մեհմետի խիղճը, աղջկա մեղրագույն աչքերը դառնում են հոգևոր ինքնամաքման ու փրկության օղակ:

Բնականաբար սեփական երազանքները կորցնելուց և իրականության հետ դեմ առ դեմ բախվելուց հետո Մեհմետի համար միակ ճանապարհը մնում է Արաքսիին ու նրա ընտանիքին պաշտպանելը՝ դրանով փորձելով փրկել սեփական հոգին, մաքրվելով սեփական մեղքերից ու իր ազգի գործած մեղքերից: Մորտեն վեպը կառուցում է ռեալիզմի ու քնարականության ներհյուսմամբ և կառուցում է դասական վեպ, որի և՛ այուժեն, և՛ կերպարներն ունեն ոչ ուղղագիծ զարգացում: Գրողն իր առաջ նպատակ չի դնում հանդես գալ պատմական ճշմարտության

<sup>5</sup> Mark M., նշվ. աշխ., էջ 151:

<sup>6</sup> Mark M., նշվ. աշխ., էջ 178:

<sup>7</sup> Mark M., նշվ. աշխ., էջ 140:

մեկնաբանությամբ, այլ ջանում է ցեղասպանությունը պատկերել մարդու և պատերազմի փոխհարաբերության համատեքստում: Բանը ոչ միայն առանձին նատուրալիստական տեսարանների դաժանության մեջ է, այլ պատերազմի ու տարագրության այն ընդհանուր «գազանային» ասպեկտի, որում հեղինակը կերպավորում է վեպի թե՛ հայ և թե՛ թուրք հերոսներին: Եթե տարագրության սկզբում գրողը նատուրալիստական պատկերմամբ ներկայացնում է թուրք զինվորների անմարդկային արարքները, որոնք ընթերցողի մոտ զգվանք ու ատելություն են հարուցում, ապա վերջում այդ նույն ճանապարհը կործանիչ է դառնում նաև ժանդարմների համար, և տառապանքը դառնում է համընդհանուր:

Մեհմետի կերպարն օգտագործվում է վեպում՝ բացահայտելու մարդու անձնական դրաման, երբ անհատը բախվում է կյանքի հրեշավորությանն ու ողբերգականությանը, «կյանքի շավիղը» փոխելու անհնարինությունը պատճառ է դառնում հերոսի պարտության, իսկ հերոսի կործանումը արտացոլում է մարդկային արժեքների ու կեցության հիմքերի կազմալուծումը, բարոյական ու մարդասիրական համակարգերի դեֆորմացիան: Սա իր վառ արտահայտությունը գտել է Մեհմետի կողմից հայ աղջնակի համար գերեզմանափոս փորելու դրվագում. «Մեհմետը սկսեց փորել համառորեն՝ կոտրելու համար կարծր ու քարքարոտ հողահատվածի դիմադրությունը: Նրա համար այս գերեզմանը ավելին էր, քան սովորական փոսը, որտեղ կհանգչեն աղջնակի մնացորդները, որ երբեք չվայելեց կյանքը, գերեզման, որտեղ հանգչում էին բոլոր արժեքները, որ մինչ այդ ղեկավարել էին իր կյանքը: Նա (Ալլահը-Ս.Կ.) միակն էր, որ կարող էր հաշտեցնել իր ուժասպառ հոգին՝ կորսված, անընդունակ գտնելու իր ճանապարհը»<sup>8</sup>:

Մեհմետի կերպարը զարգացող, ավարտուն և վերջապես հանգուցային կերպար է: Հերոսը չպետք է լինի «հերոսական» այդ բառի ոչ էպիկական, ոչ ողբերգական իմաստով. նա պետք է միավորի իր մեջ ինչպես դրական, այնպես էլ բացասական գծեր, հերոսը պետք է լինի պատկերված ոչ թե պատրաստ ու անփոփոխ, այլ որպես վերածվող, փոփոխվող, կյանքից դաստիարակված: Դրական թուրք կերպարներ մեր գրականության մեջ գրեթե չկան (չմոռանանք Վարդգես Պետրոսյանի՝ գրական բանավեճերի առիթ դարձած «Կրակե շապիկ» վեպի հերոս Էնիս բեյին) կամ որոշ ստեղծագործություններում դրանք էպիգոդիկ են: Իսկ արդեն օտար հեղինակներից իտալացի Անտոնիա Արսլանը «Արտույտների ազարակը» վեպում կերտում է նմանատիպ կերպար: Տարագրության ճանապարհին հայ

---

<sup>8</sup> Mark M., Նշվ. աշխ., էջ 228:

աղջնակի ու թուրք ժանդարմի սիրո պատմություն է ներկայացնում և այդ սիրո շնորհիվ թուրքի վերափոխվող կերպար է պատկերում ամերիկահայ Մարկ Մուստյանը «Ժանդարմը» վեպում: Համեմատելու դեպքում, չնայած կերպարների որոշակի նմանությանը (խոսքը հայ աղջկա հանդեպ խորը զգացմունքներ ունենալու մասին է), Մեհմետի կերպարը հոգեբանական խորությամբ, կերպարի զարգացման բարդությամբ առանձնանում է: Կերպարը վեր է հանում անհատի գոյության խնդիրը, տրտունջը, որ մարդ զգում է կյանքի հրեշավորությանը բախվելիս: Իրականության հետ անհատի բախումը, բնականաբար, ավարտվում է անհատի կործանումով: Վեպի կոնցեպցիայի համար կարևոր պահն այն է, որ Մեհմետը չի կարողանում հանդուրժել իր ազգակիցների վարքագիծը, նա ինքը դատապարտում է անմարդկային չարագործություններն ու փորձում դեմ դուրս գալ իր ազգակիցներին: Բայց նա մենակ է իր գաղափարների հետ ու հետևաբար սա հանգեցնում է կործանման: Այստեղ է կերպարի հանգուցային պահը. Մեհմետը ոչ թե զուտ դրական կերպար է, որ փորձում է հայ ընտանիքին փրկել, այլ նա դատապարտում է իր ազգակիցների կատարած սպանողը, անմեղ մարդկանց տառապանքը, առհասարակ պատերազմի անհեթեթությունը: Այդ է պատճառը որ բոլոր կերպարները՝ թե՛ Արաքսին, թե՛ Մարգիսը, թե՛ Վահանը, ամբողջ «կորուսյալ սերունդը», Մեհմետը, անզամ տարագրության քարավանի դեկավար Օրկիանն ու թուրք զինվորները պարտված կերպարներ են, որոնց համար ողբերգությունը դառնում է կյանքի կոնցեպցիա, անխուսափելի պարտություն: Եթե Մեհմետի պարագայում պարտությունն անխուսափելի է, քանի որ անհնարին է մենակ պայքարել, իսկ վերջինս հավասարագոր է ինքնասպանության, ապա «կորուսյալ սերունդի» դեպքում խզումը կապված է մարդու և աշխարհի միջև հավասարակշռության խախտման, աստծո հանդեպ ունեցած հավատի ոչնչացման հետ: Այդուհանդերձ, պատերազմն ու անզամ մեծագույն ցավը հաղթահարելու ճանապարհը, ըստ գրողի, սերն ու բարությունն է: Մարգիսը սիրահարվում է և այդ սիրո միջոցով փորձում դեմ դուրս գալ կյանքին, Մեհմետը կյանքին կառչելու հենարան տեսնում է մեղրագույն աչքերով փոքրիկ աղջնակին, բայց երկուսի դեպքում էլ պարտությունն անխուսափելի է, որովհետև նրանք անկարող են մենակ պայքարել:

Գրքի սյուժեն երկպլան է՝ առաջինը ցեղասպանության պատմությունն է տեղայնացված փոքր մասշտաբով, երկրորդը՝ բարոյականը, մարդկայինը, խիղճը չկորցնելու, մարդկային հարաբերություններում ազնիվ լինելու պատմությունը: Այդ երկպլանայությունը դրսևորվում է պատմական իրադարձությունների բացահայտմամբ ու միաժամանակ մարդու ներքին, հոգեբանական մակարդակում տեղի ունեցող երևույթների պատկերմամբ:

Մարկ Մորտեն չի վերցնում կոնկրետ բնակավայր (վեպում գյուղն անորոշ է), այլ պատկերում է Անատոլիայի խորքերում ծվարած մի գյուղ, որը հեռու է մայրաքաղաքից ու ցանկացած քաղաքական ինտրիգից, սակայն եղեռնը ընդգրկում է ամբողջ երկիրն առանց բացառությունների ու հասնում անգամ այդ հեռավոր գյուղակ, որով հեղինակը ցուցադրում է աղետի ամբողջ մասշտաբն ու ողբերգականությունը:

Ինչու՞ «Արարատի զավակները» վերնագիրը: Վեպում Արարատ լեռը հանդես է գալիս որպես կոնցեպտուալ (գաղափարային) պեյզաժ, որն արտացոլում է ազգային ոգին ու գոյությունը: Բացի այդ այն շատ զեղեցիկ ու հարմար խորհրդանիշ է, նպատակին հասնելու փափագ, հավատի խորհրդանիշ, որ որոշ հայեր կորցրել են դժոխային իրավիճակներում, որում տառապել են, իսկ մյուսները փորձում են ձեռքբերել ամեն գնով: Նրանք բոլորը ամբողջ կյանքում իրենց հոգում պահում են իրենց փլուզված մանկության պատկերները, չեն կարողանում ազատվել տրավմատիկ անցյալից, ավելին, նրանք չեն կարողանում դառնալ իրենց ապաստան տված երկրի քաղաքացին, այլ շարունակ հիշողությունների հոսքը նրանց տանում է իրենց մանկությունն ու իրենց կորուսյալ հայրենիք, և չկարողանալով ապրել ներկայով, նրանք մինչև կյանքի վերջ շարունակում են մնալ Արարատի զավակները:

**Ս. Կարապետյան**

**Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Մարկ Մորտեի  
«Արարատի զավակները» վեպում  
Ամփոփում**

Հոդվածում ներկայացված է կատալոնացի գրող Մարկ Մորտեի «Արարատի զավակները» վեպի վերլուծությունը: Աշխարհի, կյանքի հոգևոր դատարկությունից սկիզբ առնող մարդու մենության թեման գրողը քննում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության համատեքստում: Գրողն իր առաջ նպատակ չի դնում հանդես գալ պատմական ճշմարտության մեկնաբանությամբ, այլ ջանում է ցեղասպանությունը պատկերել մարդու և պատերազմի փոխհարաբերության շրջանակում: Գրքի նորույթը դրական թուրքի կերպարի հաջողված կերտումն է:

**С. Карапетян**

**Художественное изображение армянского геноцида в романе Марка  
Морте «Дети Арарата»**

**Резюме**

В статье представляется анализ романа каталонского писателя Марка Морте «Дети Арарата». Писатель исследует тему одиночества человека, которое исходит из жизненной пустоты, в контексте первого геноцида в 20 века. Писатель не взял на себя цель раскрыть историческую правду, а старался изобразить геноцид в рамках отношений человека и войны. Новость книги- успешная изображение положительного турка.

**R. Karapetyan**

**The art projection of the Armenian Genocide in Marc Monte’s novel “The  
children of Ararat”**

The expansion of the Catalanian writer Mark Monte’s poem “The children of Ararat” is presented in the article. The human’s desolation which started to the emptiness of the religious life, world, the writer considers in the text of the Genocide of the first half of 20 century, the writer does not want to write about historical truth, he makesd an effort to represent the Genocide in the article of human and war interrelation. The novelty of the book is the creation of the favorable turkish people.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա  
դասավանդման մեթոդիկայ ամբիոնի հայցորդ  
ՀՏԴ 37.016.811

**ԲԱԶՄԻՍԱՍ ՔԱՅԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** բազմիմաստություն, բազմիմաստ բայեր, իմաստային-թեմատիկ խումբ, բայիմաստ, բայասեռ, փոխաբերական կիրառություն, սովորողակենտրոն ուսուցում, մեթոդ, ԽԻԿ համակարգ:

**Ключевые слова и выражения:** полисемия, полисемичные глаголы, смысло-тематическая группа, значение глагола, залог, метафорическое употребление, личностно-ориентированное обучение, метод, ситема ВОР.

**Key words and phrases:** polysemy, polysemantic verbs, semantic-thematic group, verb meaning, voice, figurative usage, person-oriented education, method, ERR system.

Բայերն աչքի են ընկնում իրենց քերականական կարգերի, հարացուցային և շարակարգային կապերի հարստությամբ. դրանք առանձնանում են նաև ըստ բովանդակության պլանի:

Բայի՝ որպես խոսքի մասի ընդհանրական-իմաստային, ձևաբանական, բառակազմական և շարահյուսական հատկանիշների վերաբերյալ սովորողներին հիմնավոր գիտելիքներ տալուց բացի ուսուցման գործընթացում կարևոր է բառագիտական-իմաստաբանական և քերականական-ձևաբանական գիտելիքների փոխկապակցված ավանդումը: Վերջինիս առումով ուշագրավ է *բազմիմաստ բայերի ուսուցումը*, որի ընթացքում սովորողներն ընդհանուր գաղափար կստանան նրա խոսքիմասային առանձնահատկությունների, ոչ միայն քերականական, այլև ճանաչողական նշանակություն ունեցող իմաստային (թեմատիկ) խմբերի, նրա իմաստային կառուցվածքում առկա փոխաբերության, ինչպես նաև բազմիմաստություն ցուցաբերող հոմանիշ, հականիշ և համանուն բայերի վերաբերյալ: Սովորողներն առանձնակի գիտելիքներ ձեռք կբերեն բայասեռի և բազմիմաստությամբ պայմանավորված կրկնասեռության մասին:

Այս տեսանկյունից, այսօր, արդիական է դառնում բազմիմաստ բայերի ուսուցման հիմնախնդիրը, քանի որ ինչպես լեզվի, այնպես էլ յուրաքանչյուրիս անհատական խոսքի հարստության չափանիշը ոչ թե

լեզվական միավորների քանակով է որոշվում, այլև այդ միավորների բովանդակային կողմին տիրապետելու հմտությամբ: Ինչպես նշում է Ֆ. Գիզոն, «Լեզվի հարստության մասին պետք է դատել ոչ թե բառերի, այլ նրանց իմաստների քանակով: Երեք իմաստ ունեցող բառը հավասարագոր է երեք տարբեր բառերի»<sup>1</sup>: Հավելենք, որ այդ երեք (և ավելի) իմաստների իմացությունը հավասարագոր է երեք (և ավելի) բառերի իմացության: Ուստի սովորողների բառապաշարի հարստացման, խոսք կառուցելու հմտությունների, բառային և քերականական իմաստների վերաբերյալ հիմնավոր գիտելիքների ձեռք բերելու առումով կարևորվում է բազմիմաստ բայերի ուսուցման անհրաժեշտությունը:

Բայիմաստը կարող է ներառել տարբեր նշանակություններ՝ կազմելով իմաստային տարբեր խմբեր (շարժում՝ տեղափոխություն, մտավոր և հոգեկան շարժումներ, գործողություններ տարբեր առարկաների նկատմամբ, հասարակական կյանքին առնչվող գործողություններ, հատկանիշի ձեռքբերում, զգայական ընկալում, վերաբերմունքի դրսևորում և այլն):

Ռուսերենի օրինակով բայի «իմաստային դասերի» քննությամբ է զբաղվել Լ.Մ.Վասիլևը<sup>2</sup>: Ըստ ինդրառության և սեռի դասակարգվող բայերի իմաստային խմբերին է անդրադարձել Ա.Ա.Աբրահամյանը<sup>3</sup>: Բայի իմաստային-թեմատիկ խմբերի ճանաչողական (ոչ քերականական) նշանակության մասին է խոսել Ս.Գ.Աբրահամյանը<sup>4</sup>:

Հոդվածում քննվում են բազմիմաստ բայերը, տրվում են նրանց իմաստային-թեմատիկ խմբերը, բերվում են համապատասխան աղյուսակներ և մեկնաբանվում բազմիմաստ բայերի նշանակությունները: Իմաստային-թեմատիկ խմբերը տրվում են երկու կտրվածքով՝ բայեր, որոնք հանդես են գալիս՝

ա) միայն մեկ իմաստային-թեմատիկ խմբում,

բ) մի քանի իմաստային-թեմատիկ խմբերում:

Յուրաքանչյուր բազմիմաստ բառի, այդ թվում՝ բայի իմաստների արտահայտման համար կարևորվում է խոսքային միջավայրը, որտեղ բազմիմաստ բառը հանդես է գալիս իր իմաստներից մեկով: Խոսքաշարը կարևորվում է թե՛ մենիմաստ, թե՛ բազմիմաստ բառերի իմաստային

<sup>1</sup> . . . , 1987, էջ 209.

<sup>2</sup> Л.Васильев, Семантические классы русских глаголов, Ленинград, 1971, էջ 4.

<sup>3</sup> Ա.Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, 1965, էջ 608-609:

<sup>4</sup> Ս.Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969, էջ 133:

դրսևորման առումով: Ինչպես նշել Ա.Ս.Պոտեբնյան, յուրաքանչյուր բառի իսկական կյանքը լիակատար դրսևորում է ունենում խոսքում<sup>5</sup>:

Ներկայացնենք այս թեմայի ուսուցման դասի նմուշ-օրինակ: Թեմայի ուսուցման համար ուսուցիչը նախագծում է դասի ընթացքը:

**Դասի նպատակը, սովորողները՝**

- կիմանան իմաստային թեմատիկ մեկ խմբում հանդես եկող բազմիմաստ բայերի խմբերը,
- կհամակարգեն դրանք ըստ իմաստների,
- կներկայացնեն դրանց բնութագիրը և գործառնության ոլորտը:

**Դասի ընթացքը՝** (իրականացվում է ԽԻԿ համակարգով)։

**Խթանման փուլ.** Ուսուցիչը ներկայացնում է բայի խոսքիմասային նշանակությունը և առաջարկում է սովորողներին վերհիշել, թե բայերն ըստ կազմության, ըստ սեռի և արտահայտության ինչպիսին են լինում:

Այս հնարը օգտագործվում է ուսուցչի կողմից, որպեսզի սովորողները վերհիշեն իրենց գիտելիքները բայի խոսքիմասային նշանակության, կազմության, սեռի, արտահայտության, շարահյուսական գործառնության, խոսքի մեջ կատարած դերի վերաբերյալ:

Տրված հարցերին պատասխանելուց հետո ուսուցիչն ավելացնում է, որ կան բայեր, որոնք իրենց բոլոր իմաստներով էլ ներառվում են միայն մեկ իմաստային խմբում<sup>6</sup>:

Բայական բազմիմաստ բառերի ուսուցման գործընթացում կարելի է առանձնացնել բայական բառայթի իմաստային- թեմատիկ հետևյալ հիմնական խմբերը, որոնք ցույց են տալիս՝

- ա. շարժում՝ տեղափոխություն,
- բ. գործողություններ տարբեր առարկաների նկատմամբ,
- գ. մտավոր-հոգեկան շարժումներ,
- դ. հասարակական կյանքին վերաբերող գործողություններ,
- ե. առարկայի վիճակն իբրև եղելություն:

**Իմաստի ընկալում.** Այս փուլում ովորողներին հանձնարարվում է ինքնուրույն աշխատանք՝ տրված թեմատիկ խմբերի աղյուսակները լրացնել

<sup>5</sup> А.Подобня, Из записки по русской грамматике, т. 1 М., 1958, 150.

<sup>6</sup> Ինչպես նկատում է Ռ. Դոխոյանը, «Բայի իմաստային կառուցվածքում, բուն իմաստից բացի, կարող են լինել նաև հուզարտահայտչական, գնահատողական և ոճական հավելիմաստային տարրեր: Խոսքաշարը բառին հատուկ հավելիմաստային երանգ է հաղորդում՝ առաջին պլան մղելով բազմիմաստ բայի պատկերային ընկալումը» (Ռ.Դոխոյան, Ասացական բայերի ոճական առանձնահատկությունները, (Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., «Լինգվա» հրատ., 201,,,,,, էջ 130):

համապատասխան բայերով և մեկնաբանել դրանք: Ուսուցչի օգնությամբ կարելի է ստանալ հետևյալ աղյուսակները,

**Աղյուսակ 1.**

**Իմաստային – թեմատիկ մեկ խմբում հանդես եկող բազմիմաստ բայերի խմբերը ըստ իրենց իմաստային նշանակության**

<b>Շարժում՝ տեղափոխություն</b>	<b>Գործողություններ տարբեր առարկաների նկատմամբ</b>	<b>Մտավոր-հոգեկան շարժումներ</b>	<b>Հասարակական կյանքին վերաբերող գործողություններ</b>	<b>Առարկայի վիճակն իբրև եղելություն</b>
<b>Հեղել</b> 1. թափել, 2. ծորել, 3. թափվել, հոսել:	<b>Աշտանակել</b> 1. ուսույունով ձի հեծնել, 2. խթանել /ձին/	<b>Գթալ</b> 1. խղճալ, 2. ողորմել	<b>Ամբաստանել</b> 1. մեկին մեղադրել (դատարանով), 2. գրպարտել, չարախոսել	<b>Կամ</b> 1. գոյություն ունեմ, 2. ներկա եմ, առկա եմ
	<b>Խճողել</b> 1. խառնել, խճճել, 2. ավելորդ բաներ խցկել	<b>Անսալ</b> 1. լսել, կատարել, 2. հնազանդվել	<b>Իրացնել</b> 1. վաճառել, 2. յուրացնել	<b>Վայելել</b> 1. պատշաճ՝ հարմար լինել, 2. հարմար գալ, սագել, 3. մեկին արժան լինել
	<b>Կլանել</b> 1. կուլ տալ, 2. ներծծել	<b>Աղոթել</b> 1. խնդրել, ըղձալ, մաղթել, 2. աղոթք անել	<b>Ուրանալ</b> 1. դավանանքից հրաժարվել, 2. պարտքից հրաժարվել	<b>Աղոտանալ</b> 1. աղոտ դառնալ, սակավալույս դառնալ, 2. փայլը կորցնել, 3. մթազնել, դժգոհել
	<b>Կորզել</b> 1. ուժով խլել, 2. դուրս քաշել, հանել	<b>Մրտմտել</b> 1. բարկանալ, 2. մտատանջվել	<b>Հատուցել</b> 1. վճարել, 2. վրեժ լուծել	<b>Ահագնանալ</b> 1. ահագին դառնալ, մեծանալ, 2. սաստկանալ

	<b>Կռփել</b> 1. քարը հղկել՝ տաշել, 2. մարմինը մարզել դիմացկուն դարձնել և այլն:	<b>Վարանել</b> 1. երկմտել, 2. չվստահել	<b>Մատուցել</b> 1. հրամցնել, 2. հաղորդել	
		<b>Վրդովել</b> 1. հուզել, 2. անհանգրստացնել	<b>Պատասպարել</b> 1. ապաստան տալ, 2. պահպանել, վտանգից պաշտպանել	
		<b>Տատանել</b> 1. վարանել, 2. վախ զգալ և այլն:	<b>Վիճարկել</b> 1. վիճել, առարկել, 2. մրցելով մի բանի հասնել	
			<b>Կնքել</b> 1. մկրտել, 2. անվանակոչել	

Այս առաջադրանքն ավարտելուց հետո, ուսուցիչը հանձնարարում է խմբային աշխատանք. *ուսումնասիրել իմաստային – թեմատիկ տարբեր խմբերում հանդես եկող բազմիմաստ բայերին վերաբերող լեզվական նյութը:*

**Իմաստային- թեմատիկ տարբեր խմբերում հանդես եկող բազմիմաստ բայերի ուսուցումը**

Իմաստային-թեմատիկ տարբեր խմբերում հանդես եկող բազմիմաստ բայերն առավել մեծ հաճախականություն ունեն: Բազմիմաստ բայերի իմաստային ծավալը հնարավորություն է ընձեռում այդպիսի բառերը, ըստ իմաստային առումների, բաշխել իմաստային-թեմատիկ երկու և ավելի խմբերում: Այս առումով Ռ.Դոխոյանը նշում է. «Բայական բառիմաստային խմբերը մշտապես գտնվում են ակտիվ փոխներթափանցումների և հատումների կիզակետում: Հատման գլխավոր պատճառներից մեկը բազմիմաստությունն է, որը հաճախ մեծ դժվարություններ է առաջացնում բայերն այս կամ այն խմբում ներառելու հարցում: Բազմիմաստային խմբերը

սովորաբար հասվում են երկրորդային նշանակությունների հաշվին, երբ վերջիններս, տիպային խոսքաշարային կառույցներում պարբերաբար գործածվելով, դուրս են գալիս այդ բառիմաստային խմբի սահմաններից, որին վերաբերում են իրենց հիմնական նշանակությամբ»<sup>7</sup>:

Սովորողները բաժանվում են տասը խմբի, նրանց տրվում է 25 բույժամանակ, որպեսզի ուսումնասիրեն նյութը և մտածեն, թե արդյոք բայականբազմիմաստ բառի իմաստային ծավալը հնարավորություն ստեղծում է այդպիսի բառերը բաժանել իմաստային – թեմատիկ խմբերի, եթե, այո, ապա համեմատություն անցկացնեն իրենց կազմած աղյուսակի բայերի և դրանց նշանակության հետ, և յուրաքանչյուր խմբից մեկ սովորող այն ներկայացնի դասարանին:

Ստորև ներկայացվում է իմաստային-թեմատիկ տարբեր խմբերում հանդես եկող բայերի դասակարգումը (համապատասխան օրինակներով):

**I խումբ՝ Ֆիզիկական գործողություններ և մտավոր հոգեկան շարժումներ.**

- ածել** – 1. լցնել, 2. նվագել, 3. ձու դնել
- հագենալ** – 1. կշտանալ, 2. համակվել, տոգորվել
- սահմանափակել** – 1. քչացնել, 2. դադարեցնել, չշարունակել
- փարատել** – 1. ցրել, վանել, 2. սփռվել
- բևեռել** – 1. մեխել, սևեռել, գամել, 2. կենտրոնացնել
- թնդացնել** – 1. թունդ դարձնել, 2. խիստ սասուկացնել, ուժեղացնել, 3. բարկացնել, զայրացնել
- կարոտել** – 1. կարոտն զգալ, 2. մի բանի կարիք՝ պահանջ զգալ
- պաշարել** – 1. երկար ժամանակով շուրջը փակել, շրջապատել, 2. ամբողջովին համակել
- պատվել** – 1. պատիվ անել, պատիվ տալ, 2. մեծարել, հյուրասիրել
- քերթել** – 1. ստեղծել, 2. բանաստեղծել, 3. գրի առնել և այլն:

**II խումբ՝ Ֆիզիկական գործողություններ և առարկայի վիճակն իբրև եղելություն.**

- բրդոտել** – 1. բրդով կեղտոտել, 2. բրդոտվել, բրդով պատվել
- կքել** – 1. կորանալ, 2. ծռել, ճկել

<sup>7</sup> Ռ. Դոխտյան, Արդի հայերենի բայական բառապաշարի իմաստաբանության ուսումնասիրման հեռանկարները. Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ (Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2013, էջ 102):

**տոչորել** – 1. կիզել, այրել, 2. ծարավից տանջվել և այլն:

**III խումբ՝ Շարժում՝ տեղափոխություն և առարկայի վիճակն իբրև եղելություն՝**

**բխել** -1. դուրս ցայտել, հոսել, 2. հետնել (միտքը), ծագել

**հառնել** -1. վեր ելնել, 2. վերելք ապրել, 3. պատկերանալ, երևալ և այլն:

**IV խումբ՝ Մտավոր և հոգեկան շարժումներ և հասարակական կյանքին վերաբերող գործողություններ.**

**ավանդել** – 1. դաս տալ, 2. պատիվ տալ, 3. հանձնել՝ փոխանցել ուրիշին

**ակնածել** – 1. պատկառել, մեծարել, 2. ամաչել,

**վստահել** – 1. հավատ ընծայել, վստահ լինել, 2. հավատով մի բան հանձնել

**տիրապետել** – 1. իշխել, իրեն ենթարկել, 2. լավ իմանալ, 3. իրեն զսպել

**դատել** - 1. դատապարտել, դատավճիռ կայացնել, 2. մտածել, կշռադատել և այլն:

**V խումբ՝ Առարկայի վիճակն իբրև եղելություն և հասարակական կյանքին վերաբերող գործողություններ.**

**բարեհաճել** – 1. բարյացակամ լինել, 2. շնորհ անել, ներկայանալ

**նշանավորել** – 1. հանդիսավոր նշել, 2. մի բանի արտահայտությունը լինել և այլն:

**VI խումբ՝ Ֆիզիկական գործողություններ և հասարակական կյանքին վերաբերող գործողություններ.**

**գանձել** - 1. ընդհանուր դրամից փող հետ պահել, 2. անդամավճար վերցնել

**տապալել** – 1. ցած գցել, 2. կործանել, խորտակել և այլն:

**VII խումբ՝ Մտավոր – հոգեկան շարժումներ և առարկայի վիճակն իբրև եղելություն.**

**հակասել** – նախկին բանի հակառակն ասել՝ ժխտել, 2. միմյանց հակառակ՝ հակադիր լինել

**հանգել** - 1. եզրահանգել, եզրակացության գալ, 2. ավարտվել, վերջանալ և այլն:

**VIII խումբ՝ Շարժում՝ տեղափոխություն և հասարակական կյանքին վերաբերող գործողություն.**

**վիժել** - 1. ժայթքել, 2. ձախողել:

**IX խումբ՝ Մտավոր-հոգեկան շարժումներ, ֆիզիկական գործողություններ և հասարակական կյանքին վերաբերող գործողություններ.**

**Թնդացնել** - 1. թնդուն հանել՝ առաջ բերել, 2. արձագանքը տարածել, 3. սիրտը բարբախեցնել, 4. հռչակել, տարփողել

**լուծել** -1. քանդել, 2.արձակել, 3. դրված պայմանը վերադնել, 4. լուծարքի ենթարկել, 5. հեղուկի մեջ տարալուծել, հալեցնել, 6. պարզաբանել, որոշել, 7. խնդիր՝ հարցը վճռել

**շահագործել** – 1. հարստահարել, 2. չարաշահել, 3. օգտագործել

**անօրինել** – 1. ղեկավարել, կարգավորել, 2. հոգալ, 3. գործադրել, կիրառել և այլն:

**X խումբ՝ Առարկայի վիճակն իբրև եղելություն և մտավոր-հոգեկան շարժում.**

**ցնծալ** – 1. սաստիկ ուրախանալ, 2. ուրախությունից թռչկոտել, բացականչություններ արձակել:

**XI խումբ՝ Մտավոր-հոգեկան, ինչպես նաև ֆիզիկական գործողություններ և առարկայի վիճակն իբրև եղելություն.**

**ճգնել** – 1. ճիգ թափել, 2. ճգնավորի կյանք վարել

**վրիպել** – 1. նշանակետին չխփել, 2. աչքից բաց թողնել՝ չնկատել, 3. սխալվել և այլն:

***Կշռադաստան փուլ.***

Այս փուլում սովորողներին հանձնարարվում է իրենց ներկայացրած օրինակների բովանդակությունից ելնելով՝ կազմել 2-ական հարց: Այնուհետև կատարվում է փոխադարձ հարցում. յուրաքանչյուր խմբից մեկ սովորող այդ հարցերը տալիս է հաջորդ խմբի անդամներին, որոնցից մեկը կամ երկուսը պատասխանում են հարցերին:

Այդպես շարունակվում է, մինչև բոլոր հարցերը ստանան իրենց պատասխանը.

Օրինակ.

- Ի՞նչ է բազմիմաստությունը:
- Ինչի՞ հետևանքով է առաջ գալիս բազմիմաստությունը:
- Բազմիմաստության ինչպիսի՞ դրսևորումներ գիտեք:
- Ո՞ր խոսքի մասերին է հատուկ բազմիմաստությունը:
- Ինչպիսի՞ խմբերի են բաժանվում բազմիմաստ բայերը:
- Ի՞նչ է նշանակում բառերի փոխաբերական իմաստ:

Այս մեթոդի շնորհիվ ուսուցիչը ոչ միայն հարստացնում է սովորողների քերականական գիտելիքները, այլև զարգացնում է նրանց կոլեկտիվ, այնպես էլ վերացական մտածողությունը:

Ուսուցիչն ամփոփում է դասանյութը և, իբրև դասի յուրացման ստուգման եղանակ, հանձնարարում է հետևյալ առաջադրանքը. «Գրել ազատ շարադրություն՝ հնարավորինս շատ գործածելով բազմիմաստ բայեր»:

Ընդ որում, բազմիմաստ բայերի իմաստային-թեմատիկ խմբերի ուսուցման հարցում կարևորվում է աշակերտակենտրոն մոտեցումը, սովորողներն ակտիվ մասնակցություն են ունենում բազմիմաստ բայերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման գործում: Այդ գործընթացում կարևոր են բայական բազմիմաստ բառերի գիտակցական քննարկումը, նրանց յուրահատկությունների բացահայտումը և վերլուծական հայեցակետը: Այդպիսի մոտեցումը կարող է խթանել սովորողների տրամաբանական մտածողությունը և նպաստել պատկերավոր խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը:

#### Գ. Ավետիսյան

#### Բազմիմաստ բայերի ուսուցումը Ամփոփում

Հոդվածում քննվում են բազմիմաստ բայերը, տրվում են նրանց իմաստային-թեմատիկ խմբերը, բերվում են համապատասխան աղյուսակներ և մեկնաբանվում բազմիմաստ բայերի նշանակությունները: Իմաստային-թեմատիկ խմբերը տրվում են երկու կտրվածքով՝ բայեր, որոնք հանդես են գալիս ա) միայն մեկ իմաստային-թեմատիկ խմբում, բ) մի քանի իմաստային-թեմատիկ խմբերում:

Հոդվածում առաջարկվում են բազմիմաստ բայերի ուսուցման որոշակի սկզբունքներ, և որպես դասի նմուշ-օրինակ տրվում է այդ կարգի բայերի ուսուցումը ԽԻԿ համակարգով:

#### Г. Аветисян

#### Обучение полисемичным глаголом

#### Резюме

В статье рассматривается проблема обучения полисемичным глаголом, даются их смысло-тематические группы, соответствующие таблицы и объясняется значение полисемичных глаголов. Смысло-тематические группы даются в двух аспектах: а) глаголы, которые выступают в рамках одной смысло-тематической группы, б) глаголы, которые выступают в рамках разных смысловых групп.

Предлагаются определённые принципы для обучения полисемичным глаголом и, как иллюстративный пример, примерный урок обучения по методу ВОР («Вызов – осмысление – размышление

G. Avetisyan

### Teaching of Polysemantic Verbs

#### Summary

The article examines the problem of teaching polysemantic verbs, presents their semantic-thematic groups, appropriate tables and polysemantic, explains the meanings of verbs. Semantic-thematic groups are considered in two aspects: a. verbs functioning only within one semantic-thematic group, b. verbs functioning within different semantic-thematic groups.

The article suggests certain principles of teaching polysemantic verbs, and as illustrative example, a model-lesson teaching verbs on ERR method (Evocation – realization of meaning- reflection).

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ԳՐԻՋԵԼԴԱ ԱՄԻՐՑԱՆ**

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ  
ռեժիսուրայի ամբիոնի դասախոս

**ՀԱԿԻՆԹ ԲԱՂՂԱՍՍԱՐՑԱՆ**

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ  
ռեժիսուրայի ամբիոնի դասախոս

ՀՏԴ 091

**ՎԵՐՋԻՆ ԿԱՆԹԵՂԸ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Ավետարան, Մատենադարան, ձեռագիր, մանրանկարչություն, մագաղաթ, մատյաններ:

**Ключевые слова и выражения:** Евангелие, Матенадаран, рукописи, миниатюры, пергаментная рукопись, Библия.

**Key words and phrases:** Gospel, Matenadaran, manuscript, miniature painting, parchment, registers.

Հայկական վերջին ձեռագիր գրված մատյանները, որոնք արվում էին հիմնականում հոգևոր գրականության բազմազան նպատակով, վերագրվում են 18-րդ դարի մինչև երկրորդ կեսերին, դրանից հետո ձեռագիր մատյաններին փոխարինեցին տպագիրները: Ձեռագիր և դրվագագարդ մատյաններից տպագիրներին անցնելուց հետո Վատիկանը կազմեց ժամանակակից մանրանկարիչների և գրիչների ցուցակը, որտեղ նրանց թիվը չէր գերազանցում մեկ տասնյակը, սակայն այնտեղ գրառվածների մահից հետո արվեստի այդ տեսակը համարվեց ավարտված:

Այդ ժամանակներից անեցել է արդեն երեք դար ու հիմա Հայաստանում կան 21-րդ դարում գրված և նկարագարդված երեք ավետարան մատյաններ:

Լիլիթ Ամիրջանյանը Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի - Մատենադարան ինստիտուտի մանրանկարչության բաժնին վարիչն է, մանրանկարիչ և ամբողջ աշխարհում ներկայումս միակը՝ ով նկարագարդել ու գրել է երեք ամբողջական Ավետարան մատյաններ: Նույնիսկ մեկ Ավետարան նկարագարդելու ու գրելու համար աշխատանքի ծավալի ահռելիությունը ստիպում է մտածել, որ անգամ մարդկային կյանքի տևողությունը հնարավոր է չբավականացնի, սակայն Լիլիթը կարողացել է երեք ավետարաններ պատրաստել: Ավետարանների տեսարանների դրվագումները պատկանում են բացառապես իր երևակայությանն ու տեսած երազներին, իսկ գրվածքները ծաղկատառերով արված են Աստվածաշնչից:

- Ես իմ աշխատանքները հնարավոր է երբեք էլ չվերջացնեի ու դրանք անավարտ մնային, եթե մայրս անընդհատ չհուշեր ժամանակի սղության մասին, նա անգամ տանը ինձ չէր թողում որևէ բան անել, ու ես իսկապես կարողանում էի, ոգեշնչվել նրա ներկայությունից և աշխատել:

Նա համարում է, որ ինքը ավետարանները նկարագարող է Աստծո օրհնությամբ ու աշխատանքները ստեղծվեցին, որպեսզի վկայեն Սուրբ Երրորդության հրաշագործությունները:

Նրա տեքստերում գլխազարդերի տառերը և սուրբ բովանդակության շարադրանքի տառաշարը, թեմատիկ նկարագրումներով հանդերձ, խոսում են նրա բնատուր տաղանդի և աշխատանքի նկատմամբ ունեցած մեծ պատասխանատվության մասին:

Մինչև առաջին Ավետարանը ստեղծելը Լիլիթը դժվար հոգեվիճակում էր՝ հայտնվելով կյանքի և մահվան սահմանագծին: Լիլիթը մտածեց, որ պետք է մանրանկարներ նկարի, սակայն Չայնը թելադրեց, որ պետք է նաև արտագրի տեքստը: Այսպես սկսվեց Լիլիթի ուխտը: Այդ նշանակալից երկխոսությունը տեղի ունեցավ 1995 թվականի օգոստոս ամսին՝ Սբ. Աստվածածնի տոնին ընդառաջ:

Առաջին Գիրքը Լիլիթը սկսեց նույն թվականի նոյեմբերի վերջին և ավարտեց 1997 թվականի ապրիլի 5-ին կամ 6-ին, այսինքն, էլի Սբ. Աստվածածնի հրաշափառ վերափոխման տոնի նախօրեին: Հենց նոր ավարտելով իր առաջին Ավետարան գիրքը, որն օծվեց Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում, նա կրկին տեսիլք ունեցավ: Տեսիլքում նա պարզ տեսավ իր աշխատասենյակը Մատենադարանում, սեղանին՝ ապագա երկրորդ Ավետարանը: Նա սկսեց այն 1997 թվականի հունիսի սկզբին և ավարտեց երեք տարում՝ 2000 թ. հունիսի սկզբին: Շատ կարճ ժամանակ անց նա տեսնում է երրորդ Գրքի ստեղծման տեսիլքը: Թելադրանքն էր այս անգամ գրել երրորդ Գիրքը: 2004-2005 թթ. սկսում է Ավետարանի պատկերագրումը: Երրորդ Գիրքը Լիլիթը ստեղծում է մագաղաթից և բավական դժվար ու բարդ եղանակներով է նոր միայն կարողանում մագաղաթ գտնել: Երրորդ Ավետարանը դեռ անավարտ է, կան նկարագրումները, բայց մագաղաթի սղության պատճառով տեքստը գրված չէ:

Լիլիթ Ամիրջանյանը ինքն է իրականացնում Ավետարանների ստեղծման բոլոր աշխատանքները՝ նկարում, գրում, կարում ու կազմում: Միջնադարում գրչատներում գրքերի ստեղծման ամբողջ աշխատանքները բաժանվում էին մասերի, գրիչն արտագրում էր տեքստն, մանրանկարիչը՝ ստեղծում պատկերագրում դրանք: Իրականում գրիչի և մանրանկարիչի աշխատանքները բավականին տարբեր են: Գրիչը սովորաբար հնարավորություն չի ունենում արտահայտելու իր սեփական

ստեղծագործական տեսակետները գործի մեջ, նույնիսկ բազմացվող տեքստի աննշան փոփոխության տեսքով, բայց պատկերազարդողն ավելի ազատ է սեփական գեղարվեստական մեկանբանություններում՝ պահպանելով իհարկե եղած կանոնները: Ավանդական վարպետը, ինչպես և մանրանկարիչը ոչ պակաս ազատ է ու անկախ, սակայն որոշակի կանոնների սահմաններում: Այդ պատճառով կարելի է ասել, որ Լիլիթ Ամիրջանյանը հետևում է ավանդական մանրանկարչական կանոններին, անկախ այն բանից, որ իր որոշ ավետարանական մեկնություններ կարող են թվալ անսովոր և պարականոն:

Լիլիթը ինքը չի հեռանում այդ կանոններով և կարևոր չէ, որ <<Մատուռայան>> տեսարանում Հուդայի կերպարում նշմարվում են սատանայական կոտորյուններ, ճանկեր ու պոչ՝ իբրև Հուդայի ժողովրդական պատկերացումների արտացոլում: Ավելի կարևոր է, որ Լիլիթը Հուդային պատկերել է կիսադեմով՝ օգտագործելով աստվածայինը և դիվայինը տարբերակելու պարզ և արխայիկ մի հնարք: Ոմանց կարող է թվալ, որ Մասիսի ուրվագծի ի հայտ գալը <<Խաչելության>> պատկերում համադրելի է այսօրվա որոշ հուշանվերային՝ ազգային խորհրդանիշերով հագեցված պատկերաձևերին: Սակայն Լիլիթի պատկերային մեկնությունը առաջին հերթին համադրում է փրկարար Խաչը և փրկարար Արարատ լեռը ավետարանական և աստվածաշնչյան համատեքստում:

Արարատի հայտնվելը Գողգոթայի փոխարեն բացահայտում է ավելի արխայիկ առասպելաբանական շերտեր, որոնք աղերսվում են լեռներում շղթայված հերոսի առասպելի մասնավորապես, դրա մանրամասների հետ:

<<Միշտ էլ անմեկնելի են ստեղծագործողի կամքն ու կոչումը:

Նկարչի ձեռքը հիրավի անմեկնելի, մարդուն ի վերուստ տրված շնորհ է թանկարժեք: Արարիչն այդ պարզևր Լիլիթին է հանձնել շոայլապես: Որդու պատգամին հնազանդ՝ նկարչուհին Աստվածատուր տաղանդը հողում չի թողել և միջնադարյան հրաշագեղ ծաղկողների պես սուրբ նվիրումով, անխոնջ անկոտրում, օրն ի բուն աշխատանքով բազմապատկել ու հայի սեղանին է դրել մեսրոպատառ մագաղաթյա Աստվածաշնչի մեսրոպա մանրանկարչական մեկնությունը:

Լիլիթին ճանաչում եմ ուսանող տարիներից՝ որպես երևելի դիմանկարչի, բարձրարժեք կոլորիստի նկարչուհու:

Լիլիթ Ամիրջանյանի նկարազարդած Աստվածաշունչը ազդարարում է հայկական միջնադարյան գրքարվեստի ավանդույթի վերածնունդը ու նրա նոր՝ երևանյան դպրոցի ծնունդը, հավաստում է հայ գոյությունը: 2000 թվականին Իռլանդիայում կայացած <<Սուրբ Գրքերի պատկերազարդման արվեստը>> միջազգային կոնֆերենսի ժամանակ Լիլիթ Ամիրջանյանի Աստվածաշնչյան պատկերների ձեռագիր Սուրբ Գրքերի ցուցադրությունը

եզակի երևույթ էր Եվրոպական դիտողի համար նկարչուհու կողմից բիրլիական թեմաների մերօրյա մեկնաբանության, վերափոխաստավորման տեսանկյունից, շնորհակալ գործ հայարվեստի այդ ասպարեզի՝ բիրլիական թեմատիկայի նորովի մեկնաբանման, ճանաչման մեջ>>:

Ղուկաս Չուբարյան  
Քանդակագործ ՀՀ ժող. նկարիչ

Լիլիթը եզակի մանրանկարիչներից է, որին անձամբ հոռմի պապն է կոնդակով հրավիրել Վատիկան գեկույցներ ու վարպետության դասեր անցկացնելու համար:

Լիլիթը բազմաթիվ անգամներ է մեր երկրի սահմաններից դուրս իր կարդացած դասախոսություններով ապացուցել և ցույց տվել տարբեր ժողովուրդներին, անգամ թուրքերին, հայ ազգի մանրանկարչական արվեստի վարպետության ու մատյանների նկատմամբ հատուկ արտահայտված ակնածանքի արտահայտությունները: Նա վերջերս հրապարակեց իր հեղինակային գիրքը՝ «Հայկական մանրանկարչություն-աստվածաշնչյան պատկերազարդումներ» վերնագրով: Ժողովածուն երեք ավետարանների ստեղծման ու դրվագումների՝ լուսանկարների, ինչպես նաև մանրանկարչական արվեստի ու ներկայիս խնդիրների մասին է: Նկարչուհին ծագումով Արցախից է, և նա դա պատահական չի համարում, քանի որ հիմա ինքը և իր ղեկավարած խումբը մատյաններ է պատրաստում Գանձասարի մատենադարանի համար, որը շուտով կբացվի: Արդեն հարյուր մատյաններ պատրաստվել և տեղափոխվել են Արցախ, աշխատանքները դեռ շարունակվում են:

## Գ. Ամիրյան Հ. Բաղդասարյան

### Վերջին կանթեղը Ամփոփում

Լիլիթ Ամիրջանյանը Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի-Մատենադարան ինստիտուտի մանրանկարչության բաժնին վարիչն է, մանրանկարիչ և ամբողջ աշխարհում ներկայումս միակը՝ ով նկարագրող է ու գրել է երեք ամբողջական Ավետարան մատյաններ: Հռովածում ներկայացված են ուսումնասիրություններ, ոչ միայն նրա մանրանկարների ու Ավետարան Գրքերի աշխատանքների այլև նրա նկարած գեղանկարների մասին: Նրա մասին գրելու և առավել հավաստի ինֆորմացիա ստանալու համար օգտագործել են առաջին աղբյուրները,

օգտվելով ակադեմիկոսների, նկարիչների, կինոռեժիսորների, գրողների և այլ անվանի մարդկանց կոմից նրա մասին գրվածքների:

**Г. Амирян  
А. Багдасарян**

**Последняя лампа**

**Резюме**

Лилит Амирджанян заведует отделом реставрации института древних рукописей Матенадарана св. М. Маштоца. Является автором миниатюр и до сих пор единственная в мире кто написала и проиллюстрировала три полных рукописи Библии. В статье представлены исследования не только об эскизах миниатюр и работах над Евангелиями но и живописных работах автора. Для написания статьи и получения достоверной информации воспользовалась надежными первоисточниками, изречениями академиков, режиссеров, писателей и других известных людей.

**G. Amiryan  
H. Baghdasaryan**

**Last Lamp**

**Summary**

Lilit Amirjanyan is the Head of the Department of Miniature Painting of Matenadaran - Institute of Ancient Manuscripts named after M. Mashtots; she is a miniature painter and is nowadays the only person in the whole world who has illustrated and written three full Gospels. This Article contains studies not only about her miniature paintings and works on the Gospels, but also about her paintings attached to that. To write and to receive more reliable information about her I have used the first sources by using the works of academicians, painters, film directors, writers and other famous people about her.

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ԳԱՅԱՆԵ ՄԽԻԹԱՐՑԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի  
հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ,  
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ  
ՀՏԴ 811.19

**ՀՐԱՆՈՒՇ ՉԱՔՅԱՆ. Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարժամանակյա քննություն, «Էլդորադո», Գյումրի, 2015, 240 էջ:**

Բայի սեռի քերականական կարգի և մասնավորապես սեռային տեղաշարժերին առնչվող հին հայերենի կրկնասեռ բայերի համակողմանի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն բայիմաստի, շարահյուսական ու ոճական կիրառությունների, այլև լեզվի զարգացման հին շրջանից նորին անցման փուլում լեզվամտածողության զարգացման առանձնահատկությունների բացահայտման առումով: Այդ տեսակետից Հ.Չաքյանի «Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարժամանակյա քննություն» գիրքն արդիական է և ունի գիտագործնական նշանակություն:

Հեղինակի ուսումնասիրության փաստական նյութը հայերենի տարբեր ենթաշրջանների կրկնասեռ բայերն են, որոնց թիվը, ըստ հետազոտողի, գրաբարից արդի հայերեն զարգացման ճանապարհին զգալիորեն նվազում է: Բնագրային օրինակների և լեզվի զարգացման տարբեր փուլերի բառապաշարն ամփոփող բառարանների տվյալների համադրության միջոցով Հ. Չաքյանը փորձել է բացահայտել այն գործոնները, որոնք նպաստել են բայերի սեռային տարարժեքությունից քերականական մենարժեքության անցմանը:

Ներածության մեջ հեղինակն անդրադառնում է «բայական սեռ» և «կրկնասեռություն» ըմբռնումներին, առանձնացնում ուսումնասիրության խնդրո առարկան, նշում քննության նպատակը:

Առաջին գլուխը նվիրված է հայ քերականագիտության մեջ կրկնասեռության ըմբռնմանը: Ըստ էության՝ այն վերաբերում է բայերի խնդրառությանը, մասնավորապես խնդրառական տեղաշարժերին, բայասեռին, սեռային զուգահեռներին և կրկնասեռությանն առնչվող տարաբնույթ հարցերին, որոնց անդրադարձել են բազմաթիվ լեզվաբաններ: Հեղինակը քննությունն իրականացրել է հիմք ընդունելով Գ. Ջահուկյանի՝ գրաբարի քերականության պատմության շրջանաբաժանումը՝ ա) հունատիպ քերականությունների շրջան (5-17-րդ դարի սկզբները), բ) լատինատիպ քերականությունների շրջան (17-րդ դարի սկզբներից մինչև 18-րդ դարի երրորդ քառորդ), գ) ինքնատիպ քերականության շրջան (18-րդ դարի վերջին քառորդից մինչև մեր օրերը): Ըստ այդմ ուշադրության են

արժանացել Դ. Թրակացու, Ֆ. Ռիվոլայի, Կ. Գալանտսի, Ո. Երևանցու, Հ. Հոլովի, Ս. և Հ. Ջուղայեցիների, Խ. Կարնեցու հետազոտությունները:

Համադրելով քերականների՝ բայի համար ընդունած հատկանիշները՝ հեղինակն առանձնացնում է նաև այն հիմնական սկզբունքները, որոնցով առաջնորդվում են նրանք: Օրինակ՝ բայը քննելիս Գալանտսի համար էական է իմաստաբանական և ձևաբանական հատկանիշը, Ո. Երևանցու, Հ. Հոլովի համար՝ իմաստային, Հ. Ջուղայեցու, Խ. Կարնեցու համար՝ ձևաբանական, շարահյուսական և իմաստային սկզբունքները: Փաստերի հետևողական վերլուծությամբ հեղինակը նկատում է, որ թեպետ հայ մատենագրության մեջ վկայված են բազմաթիվ կրկնասեռ բայեր, որոնք համատեղում են ներգործական և չեզոք սեռերի իմաստները, այնուամենայնիվ նշված քերականներից ոչ մեկը չի արձանագրում այդ երևույթը: Ասել է թե՛ *17-րդ դարի քերականություններում* թեպետ նշվում են տարբեր սեռերի բայեր, և բայաշարքերի օրինակներում էլ կան տասնյակ կրկնասեռ բայեր, այդուհանդերձ դեռևս ուշադրության չեն արժանանում բայերի սեռային և խնդրառական առանձնահատկությունները: Պատճառը, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը «Գրաբարի քերականության պատմություն» աշխատության մեջ, Տրոլր լեզուների համար քերականական միևնույն, բոլորի համար սովորական դարձած սխեմաների կիրառումն է!:

Անդրադառնալով *18-րդ դարի քերականների՝* Յ. Շրյոդերի, Ս. Սեբաստացու, Հ. Հոլովի, Պ. Դպիրի երկերում քերականական կարգերի և բայասեռի քննությանը՝ Հ. Ջաքյանը եզրակացնում է, որ թեպետ որոշ հեղինակներ (Ս.Սեբաստացի, Պ. Դպիր) նկատում են բայերի՝ երկու սեռի նշանակությամբ պայմանավորված՝ տարբեր հոլովներով լրացումներ ընդունելու հանգամանքը, սակայն ոչ մեկը դա չի համարում կրկնասեռություն: Գրաբարում կրկնասեռություն և սեռային գուգահեռություն ունեցող բազմաթիվ բայեր կրկին մտնում են միասեռ բայաշարքերի մեջ:

Հեղինակը նկատում է, որ *ինքնատիպ քերականությունների շրջանում* բայասեռի հարցի քննությունը տեղափոխվում է այլ հարթություն: Նա առանձնացնում է հատկապես Ա. Բագրատունու և Ա. Այտընյանի Քերականությունները, որտեղ նրանք նկատում և նկարագրում են կրկնասեռության դրսևորումը միևնույն բառույթում, բայց այդ երևույթին որևէ անվանում չեն տալիս:

*Աշխարհաբարի քերականական աշխատություններին* անդրադառնալիս Հ. Ջաքյանը եզրակացնում է, որ սեռային տեղաշարժերի հարցը լեզվաբաններները քննում են արդի հայերենի շրջանակներում: Այսինքն՝ ուսումնասիրողները կանգ են առել լեզվի պատմական զարգացման մի շրջանի վրա, իսկ որոշ դեպքերում էլ անդրադարձել են գրաբարին՝

խնդրառական տեղաշարժերին առնչվող որևէ հարց հիմնավորելու համար: Հարցի պատմությունից հետո հեղինակը փորձում է պարզել, թե սերը՝ որպես քերականական հատկանիշ, բայիմաստով և խնդրառությամբ պայմանավորված լինելուց բացի, գրաբարում ձևական ի՛նչ ցուցիչներով կարող էր արտահայտվել: Ըստ այդմ, նա մանրամասնորեն բացահայտում է *բայահիմքի*, *լծորդության* և *սեռի* հարաբերակցության հարցերը:

*Երկրորդ գլխում* քննվում են հին հայերենի կրկնասեռ բայերն ըստ լծորդությունների և սկզբնահիմքի կազմության: Հեղինակը նախ ճշտել է գրաբարի կրկնասեռ բայերի ցանկը՝ համադրելով գրաբարի բառարանների տվյալները, ապա կատարել է հինհայերենյան բնագրերի հեղինակային համաբարբառների ուսումնասիրություն: Օգտագործել է նաև ՆՀԲ-ում բերվող բնագրային օրինակներ՝ նպատակ ունենալով հնարավորինս հստակեցնել հին հայերենի կրկնասեռ բայերի հետագա զարգացումը: Բայերն ուսումնասիրելիս փորձել է դրանք խմբավորել ըստ *դասական*, *հետդասական* և *նախամիջին* ենթաշրջանների: Ըստ հեղինակի ուսումնասիրության՝ գրաբարի մատենագրական երկերում շուրջ 500 կրկնասեռ բայ կա, որից, ըստ կատարված քննության, մոտ 180 –ը՝ դասական շրջանում, մոտ 100-ը՝ Աստվածաշնչում: Ս. Գրքում գործածված կրկնասեռ բայերը հեղինակը բաժանել է երկու խմբի՝

ա) *նբ//չբ կրկնասեռություն ունեցող բայեր*, օրինակ՝ *դիրել*, *նբ. հարթ դարձնել*, *հարթել*. «Եւ դիրեցից զճանապարհս քո» (Յես., ԾԵ, 11), *չբ. հանգստութիւն տալ*. «Եթէ կամիցիք դիրել անձանց, եկայք ելէք առ իս» (Յես., ԼԶ, 16): *Ազահել*, *նբ. սաստիկ ցանկանալ*. «Ամենայն ոք ազահէ զազահութիւն» (Երեմ., Ը, 10), *չբ. ազահություն անել*. «Եւ մի՛ ազահիցեն այք ձեր ի կահ ձեր» (Ծն., ԽԵ, 20) և այլն:

բ) *Նբ//չբ սեռային զուգահեռություն ունեցող բայեր*: Սրանց սեռային հակադրությունը պայմանավորված է լծորդի (Ե-Ի) փոփոխությամբ անցողական և անանցողական սեռերի գաղափարն արտահայտելու հանգամանքով, օրինակ՝ *աշակերտել*, *նբ. սովորեցնել*, *կրթել*. «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս» (Մատթ., ԻԸ, 19), *աշակերտիմ չբ. աշակերտ լինել*. «Միքթ եւ դուք կամիք աշակերտել նմա» (Յոհ., Թ, 27): *Օփել*, *նբ. ալեկոծել*. «Որպէս ծփեաց զջուրս Կարմիր ծովուն ի վերայ երեսաց» (Բ Օր., ԺԱ, 4), *ծփիմ*, *չբ. ծփալ*, *ալեկոծվել*. «Մինչեւ ծփեաք ի Հանդրին անդունդս» (Գործք, ԻԷ, 27):

Քննվող բայերը տրվում են այբբենական կարգով և համապատասխան օրինակներով:

Դասական գրաբարի մյուս աղբյուրներից Հ. Զաքյանն առանձնացրել է 70 պարզ բայ: Դրանց գերակշռող մեծամասնությունն ունի սեռային զուգահեռություն, և միայն մի քանիսը, ինչպես ինքն է նշում, «սինթետիկ

կրկնաստեղծություն»: Օրինակ՝ *ճօճել, նք. տարուբերել*։ «Մի՛ ճօճեցես զձեռն քո երկաթագործով» (Եփր.), *չք. տարուբերվել*։ «Բողբոջք խոտոց ճօճին ճեմին» (Վեցոր.)։ *Յարձակել, նք. հարձակվել տալ*։ «...վաղագոյն նոցա զպատերազմն առ յանդիման արարեալ համարձակեցէ յարձակել քան զանսալն յօտար աշխարհին» (ՓԲ, 111), *չք. հարձակվել*։ «...յարձակեցան էլին ի մէջ հօտիցն» (Ագ., 386)։ Պարզ սկզբնահիմքով կրկնաստեղծությունների օրինակներ է բերում նաև լեզվի հին շրջանի հետդասական և նախամիջին ենթաշրջանների աղբյուրներից։ Այնուհետև քննության արդյունքները ներկայացնում է աղյուսակով։

Հեղինակը շարունակում է քննել *հին հայերենի ոչ բայական ածանց ունեցող սկզբնահիմքով կրկնաստեղծությունների* դրանք զուգադրելով ածանցագուրկ բայերին (*խառնակել/խառնել, ստորահոսել/հոսել, փայլակել/փայլել*), և հանգում է որոշակի եզրակացությունների։ Փաստական հարուստ նյութի հիման վրա Հ. Զաքյանը քննում է գրաբարում բարդ, ապա բայաձանցավոր սկզբնահիմքերով, նաև Ա լծորդության կրկնաստեղծությունների։ Անդրադառնալով Ի և Ու լծորդության բայերին՝ նշում է, որ դրանց այնքան էլ բնորոշ չէ կրկնաստեղծությունը և առանձնացնում է ընդամենը հինգ բայ՝ *երդնուլ, հեղուլ, ընկնուլ, ոստնուլ* և *հեղձնուլ* բայը՝ *հեղձել, հեղձանել* // իմ ձևերով։ Ընդհանրացնելով քննության արդյունքները՝ հեղինակը հանգում է համապատասխան եզրակացությունների։

*Երրորդ գլուխը* վերաբերում է հին հայերենի կրկնաստեղծությունների զարգացման հետագա ընթացքին։ Բերելով վիճակագրական տվյալներ՝ Հ. Զաքյանը ներկայացնում է հին հայերենի կրկնաստեղծությունների տարածմանակյա զարգացման պատկերը՝ միաժամանակ փորձելով հիմնավորել կրկնաստեղծության չեզոքացման փաստը։ Այդ ամենը նա ներկայացնում է սեզամենտային դիագրամներով կամ գծապատկերներով։ Հիմք ընդունելով այն փաստը, որ հայերենի բայական համակարգում կատարվել է անցում քերականական տարաբաժանությունից մենարժեքության՝ հեղինակը առանձնացնում է կրկնաստեղծության չեզոքացման երկու հիմունք՝ *իմաստափոխություն* և *նոր բառաձևի անջատում*։ Ընդ որում քերականական իրողությունների ուսումնասիրությունը Հ. Զաքյանը կատարում է հայերենի պատմական զարգացման ֆոնի վրա։ Հետաքրքիր և բազմապիսի օրինակներով ներկայացնում է նաև *գրաբարում սեռային զուգահեռություն ունեցող բառերը հայերենի պատմական զարգացման հետագա ընթացքում*։ Ըստ այդմ, սեռային զուգահեռությունից միաստեղծության անցումները քննում է իմաստափոխության և նոր բառաձևի անջատման հիմունքներով։ Պատմական հայեցակետով է ուսումնասիրում նաև գրաբարի բայերի պարզ և ածանցավոր զուգահեռ ձևերը (*հատել/հատանել, ներկել/ներկանել*,

*տարածել/տարածանել*) և եզրակացնում, որ գրաբարյան –ան– սուկածանց ունեցող տարբերակները հաճախադեպ են արդի հայերենում: Պատճառը, ըստ հեղինակի, պայմանավորված է կրկնաստեռությունից չեզոք սեռի անցած բայերի իմաստային փոփոխություններով: Հ. Զաքյանը քննում է նաև հակառակ դրսևորումները՝ անցում ներգործական սեռի սեռային գուգահեռությունից և կրկնաստեռությունից: Նշում է, որ սեռային գուգահեռությունից ներգործական սեռ անցում կատարած բայերը, եթե արդի հայերենում պահպանում են չեզոք սեռի նշանակությունը, ապա այն դրսևորվում է –վ– ածանցի միջոցով: Բերում է համապատասխան բայերի օրինակներ՝ *այլայլել // այլայլիմ, ալեկոծել // ալեկոծիմ, կազդուրել // կազդուրիմ, տատանել // տատանիմ, ընդմիջել // ընդմիջիմ, քաջալերել // քաջալերիմ:*

Հեղինակը բայասեռը տարբերակելիս որոշ անհամապատասխանություններ է նկատում գրաբարի բառարանների տվյալների միջև (*հմմտ. Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Ե., 2003, Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Ե., 2000*): Երբեմն նշված բառարաններում կրկնասեռ բայերը ՆՀԲ-ում տրվում են իբրև միասեռ: Ինչպես հեղինակն է նկատում, բայը թեպետ ներգործական սեռի է, բայց բառարաններում ընդգրկված օրինակների մեջ կան նաև չեզոք սեռով կիրառություններ: Օրինակ՝ *աւթաստանել*-ը ՆՀԲ-ում և ԳԲ-ում կրկնասեռ է, իսկ *ՀԲԲ-ում*՝ ներգործական, *գեղապարել*-ը ԳԲ-ում չեզոք սեռի է, թեպետ *ՀԲԲ-ն* և *ՆՀԲ-ը* տալիս են որպես ներգործական բայ: Բերած օրինակներից եզրակացնում է, որ այդ իրողությունը կարող է պայմանավորված լինել ինչպես բառարանագրի անհատական մոտեցմամբ, այնպես էլ բառերի գործածության ժամանակաշրջանով (5-11րդ դդ.): Աշխատանքի վերջում հեղինակի ամփոփ եզրակացություններն են:

Հ. Զաքյանի §Հին հայերենի կրկնասեռ բայերը. տարժամանակյա քննություն՝ գիրքը նոր խոսք է լեզվի պատմության ուսումնասիրության՝ մասնավորապես բայասեռի քննության ոլորտում՝ նախատեսված հայոց լեզվի պատմության, պատմական քերականության հարցերով զբաղվող համար:

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

**ԼԻՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի  
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող  
ՀՏԴ 80

**ԱՆՎԱՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԸ, ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ, ԲԱՆԱՍԵՐ-ԲԱՆԱՀԱՎԱԿԸ**



Լրացավ հասարակական գործիչ, հայագետ, գրականագետ, լեզվաբան, բանահավաք, բանասեր, ՀԽՄՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայ նոր բանագիտության հիմնադիր Մանուկ Աբեղյանի ծննդյան 150-ամյակը:

Ներկայացնում ենք մեր թղթակից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Լիյա Հարությունյանի հարցազրույցը անվանի գիտնական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի հետ:

*Լ. Հ. - Ի՞նչ դեր է ունեցել Մանուկ Աբեղյանը Ձեր գիտական կյանքում:*

Ս. Հ. - Առաջնակարգ դեր: Այն, ինչը սովորել եմ հայ գրականությունից, գրական մշակույթից, բանահյուսական մշակույթից, սովորել եմ նրանից: Առհասարակ, գիտական հետազոտություններ կատարելիս միշտ հետևել եմ Մանուկ Աբեղյանի ստեղծած մեթոդաբանությանը, գիտական քննությունների եղանակին:

*Լ. Հ. - Ե՞րբ էք առաջին անգամ կարդացել Աբեղյան, ո՞ր գործը:*

Ս. Հ. - 1934 թվականին, երբ լույս տեսավ նրա «Հայոց լեզվի տաղաչափությունը»: Շատ բարդ աշխատանք էր: Ես մեծ սիրով կարդացի, բայց անկեղծ լինեմ, շատ բան չհասկացա:

---

**Լ. Ն. - Աբեղյանի ո՞ր գործն էք համարում եզակի մեր գիտական կյանքում:**

Ս. Ն. - Բոլոր գործերը: «Տաղաչափությունը», որը մեծագույն նորություն էր: Հետո առաջնային են «Գրական դպրոցները»: Մրանից բացի կարող եմ նշել «Հայոց հին գրականության պատմությունը», որի էջերում Աբեղյանը հին գրականությունը դիտում էր իբրև հասարակական մտքի զարգացման արդյունք:

**Լ. Ն. - Աբեղյանը մեծ է որպես բանագե՞տ, գրականագե՞տ, թե՞ լեզվաբան:**

Ս. Ն. - Այս պարագայում տեղին է Պարույր Սևակի բնութագրականը. «Հայագիտության մեջ դեռևս չի եղել մեկը, ով և՛ գրականագետ լինի, և՛ լեզվաբան. Աբեղյանն այս առումով բացառիկ է»:

Ընդհանրապես լեզվաբաններն Աբեղյանին իրենց կողմն էին քաշում, և ասում, որ նա նախևառաջ լեզվաբան է, գրականագետներն էլ ասում էին, թե նա առաջին հերթին գրականագետ է, բանագետներն էլ նույն կերպ էին վարվում. և այս ամենը Աբեղյանի բացառիկ լինելու պատճառով:

**Լ. Ն. - Ո՞ր լեզուներով է ազատ խոսել Աբեղյանը:**

Ս. Ն. - Հայերեն (ծիծաղում է): Իրականում, Գերմանիայում ուսանելու տարիներին Աբեղյանը զբաղվում է գերմանական գրականությամբ, խորամուխ է լինում նաև փիլիսոփայության մեջ, քաջ տիրապետում գերմաներենին: Գերմանիայից Աբեղյանն անցնում է Ֆրանսիա՝ Փարիզ: Մեկ տարի ուսանում է Սորբոնի համալսարանում, որպես բանասիրության ազատ ունկնդիր: Այստեղ նա հմտանում է ֆրանսերենի մեջ, ուսումնասիրում գրականություն և գրականության տեսություն:

Ստեփան Զորյանն իր հուշերում գրում է, որ երբ Աբեղյանը 1930-ական թվականներին Ծաղկաձորում էր, այնտեղ մի ռուսախոս հայ բժիշկ է եղել, որը մոտեցել է Աբեղյանին «товариш Абе́гян» դիմելով: Աբեղյանն էլ ասել է. «Բժի՛շկ, ինձ հետ միայն հայերեն են խոսում»:

**Լ. Ն. - Մանուկ Աբեղյանի գերագույն երազանքը:**

Ս. Ն. - Աբեղյանն ուզում էր կուսակցություն ստեղծել: Նա շատ հետաքրքիր մարդ էր, բայց նաև պահպանողական էր: Նա գնաց, պտտվեց Վան, Զանգեզուր և այլուր: Հանդես էր գալիս իբրև հայ ժողովրդական վեպը որոնող: Ուզում էր հասկանալ մի՞ թե արևմտահայերից զատ, արևելահայոց մեջ Սասնա Շոերը չի պատմվել: Բայց Կարապետ Մելիք-Օհանջանյանը ինձ հատուկ ասել է, որ Աբեղյանն իրականում գնացել էր Ազգային կուսակցություն ստեղծելու, բայց մինչև նա գալիս է դաշնակները Թիֆլիսում արդեն ստեղծել էին կուսակցություն:

---

---

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Պատկերավոր կայուն կապակցությունների տարբերակները միջին հայերենում 3

**ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ**

Դիմավոր բայի պարզ ժամանակաձևերը Գր. Նարեկացու «Մատենանոցերգութեան» պոեմում 10

**ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Միջինհայերենյան բառակազմական կաղապարներ ֆրանսերենից փոխառյալ հիմքերով 17

**БЕЛЛА ХОДЖУМЯН**

О языковых универсалиях и уникалиях (на материале фразеологизмов русского и армянского языков) 25

**ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Գրաբարի մակբայական կայուն կապակցությունների տարբերակները 30

**НАТАЛЬЯ БАГРАМЯН**

Различия в употреблении синонимичных и вариантных форм фразеологизмов в русском и армянском языках 41

**ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Ածական+գոյական կաղապարով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում 46

**ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Անհոգնական և անեզական գոյականները ժամանակակից պարսկերենում և հայերենում. զուգադրական քննություն 58

**ԼԻԼԻ ՄԻՐՈՒՍՅԱՆ**

Նորաբանությունները Միլվա Կապուտիկյանի հուշագրություններում 66

**ՄԱՍԻԿՈՆ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ**

Կրկնությունը որպես յուրօրինակ ռճական հնարանը  
Սոկրատ Խանյանի ստեղծագործություններում 75

**ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ**

Աշխարհաբար առաջին տպագիր գրքերի լեզվի  
հնչյունական բնութագիրը 83

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**РУЗАН ТАТЕВОСЯН**

Об армянских переводах стихотворения М.Ю.Лермонтова  
“Я не хочу, чтоб свет узнал...” 95

**ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ**

Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»  
(մի քանի դիտարկումներ) 102

**ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՅԱՆ**

Ապոկրիֆային ավետարանի մոտիվները Էրիկ-Էմանուել  
Շմիդտի «Ավետարան ըստ Պիղատոսի» վեպում 117

**ՆԵԼԼԻ ԹԻՐԱԲՅԱՆ**

Նորակազմությունները Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները»  
պոեմում 123

**ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հայաստանի պատկերը Հովեյանի ստեղծագործության մեջ 132

**ԴԻԱՆԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ**

Պոստմոդեռնիստական հերոսը Հովհաննես Գրիգորյանի  
բանաստեղծություններում 140

**ՄԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը  
Մարկ Սորոտեի «Արարատի զավակները» վեպում 153

---

**ՍԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Բազմիմաստ բայերի ուսուցումը **161**

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ԳՐԻՋԵԼԴԱ ԱՄԻՐՅԱՆ, ՀԱԿԻՆԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Վերջին կանթեղը **171**

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ԳԱՅԱՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

Հրանուշ Զաքյան. Հին հայերենի կրկնասեռ բայերը.  
տարժամանակյա քննություն, «Էլդորադո», «Գյումրի», 2015, 240 էջ: **176**

**ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ**

**ԼԻԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Անվանի լեզվաբանը, գրականագետը, բանասեր-բանահավաքը **181**